

ՄԻԱՅՅԱԼ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԵՎՐՈՊԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ (ՄԱԿ ԵՏՀ)

**ՄԱԿ ԵՏՀ ռազմավարական բնապահպանական
գնահատման
Արձանագրության կիրառման օժանդակ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ**



Միացյալ ազգերի կազմակերպություն
ՆյուՅորք, Ժնև, 2012թ.

Նշում

Այս նյութն ընդամենը տեղեկատվական նշանակություն ունի և պաշտոնական իրավաբանական կամ այլ մասնագիտական խորհրդատվություն չի կարող համարվել: Հեղինակները պատասխանատվություն չեն կրում սույն ձեռնարկում ներկայացված տեղեկատվության հիման վրա նախաձեռնված գործողությունների համար: Սույն ձեռնարկը հանրությանը ներկայացվում է «այնպես, ինչպես կա» սկզբունքով, առանց սահմանված կամ ենթադրվող երաշխիքների, այդ թվում՝ առանց սահմանափակումների, իրացնելիության, որոշակի նպատակների համապատասխանելիության և իրավական պարտավորությունների բավարարման երաշխիքների: Միացյալ ազգերի կազմակերպությունը մասնավորապես չի երաշխավորում կամ ապահովում սույն ձեռնարկի ճշգրտությունն ու ամբողջականությունը:

Հեղինակային իրավունք © Միացյալ ազգերի կազմակերպություն և Կենրոնական և Արևելյան Եվրոպայի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն, 2012թ.: Առաջին անգամ հրատարակվել է 2006թ., երկրորդ հրատարակությունը՝ 2012թ.: Բոլոր հեղինակային իրավունքները պաշտպանված են: Սույն ձեռնարկում ներկայացված ոչ մի նյութ չի կարող օգտագործվել, վերարտադրվել էլեկտրոնային, մեխանիկական կամ որևէ այլ միջոցով փոխանցվել հատվածաբար կամ ամբողջությամբ, այդ թվում՝ պատճենահանմամբ, ձայնագրությամբ կամ տեղեկատվության պահպանման ու վերծանման որևէ համակարգի օգտագործմամբ՝ առանց սույն ձեռնարկին և ձեռնարկի հեղինակներին հղումներ կատարելու: Ձեռնարկը կազմելիս հեղինակներն օգտվել են մի շարք աղբյուրներից, որոնք հատուկ տրամադրվել են ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի Ռազմավարական բնապահպանական գնահատման Արձանագրությունն ընդունած կողմերին, սակայն դրանք նաև կարող են օգտագործվել այլ շահագրգիռ անձանց կողմից, եթե ձեռնարկին և ձեռնարկի հեղինակային կազմին համապատասխան հղումներ կատարվեն:

Ձեռնարկում ներկայացված են սույն ձեռնարկի կազմման աշխատանքներին մասնակցած՝ Միացյալ ազգերի կազմակերպության տարբեր աշխատակիցների, խորհրդատուների և խորհրդականների աշխատանքների արդյունքները, մեկնաբանություններն ու եզրահանգումները, որոնք չեն կարող դիտվել որպես Միացյալ ազգերի կազմակերպության կամ ՄԱԿ-ի անդամ պետությունների պաշտոնական դիրքորոշման արտահայտություն:

Հեղինակային կազմ. Սույն ձեռնարկի կազմման հեղինակներն են՝ Նիք Բոնվոլգինը (ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով), Իրժի Դյուսիկը և Օսթրա Յուրկևիայտը (Կենրոնական և Արևելյան Եվրոպայի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն) և Բարրի Մադլերը: Խորհրդատվական ծառայություն է մատուցել Արձանագրությունը ստորագրած պետությունների համաժողովի կողմից հիմնված խմբագրական կազմը, որում ընդգրկված էին Ուրսուլա Պլատցեր-Շնայդերը (Ավստրիա), Մարի վան Դոյնդելը (Նիդերլանդներ), Ռոջեր Գեբբելսը (նախկինում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, հետագայում Եվրոպական հանձնաժողով) և Հենրիետա Մարտոնակովան (ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր): Լրացուցիչ խորհրդատվություն են տրամադրել Մարթինա Ֆրոբենը (Գերմանիա), Տանյա Բուրդեթը (Միացյալ Թագավորություն), Մարկո Մարթուցցին և Մեթթ Սոուրերը (Առողջապահության համաշխարհային կազմակերպություն), Թոմաս Ֆիշերը (Լիվերպուլի համալսարան), Էլսա Ժոան (Մքրաթքլայդի համալսարան), Ալան Բոնդը (Բսթ Անգլիայի համալսարան), Բեն Քեյվը, Փոլ Թոմլինսոնը, Մարթին Սմաթնին, Մարթին Բիրլին, Տրիստան Աուսթինը (Բնապահպանության համեմատական իրավունքի միջազգային կենտրոն, Ֆրանսիա) և այլք:

ECE/MP.EIA/17

ՄԻԱՑՅԱԼ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ISSN 1020-4563

Բովանդակություն

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	7
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	9
0.1 Առաջաբան.....	9
0.2 Նպատակը, նախատեսված լսարանը և կարգավիճակը.....	10
0.3 Կառուցվածքը.....	11
0.4 Ձեռնարկի վերախմբագրումը և վերամշակումը.....	13
ԲԱԺԻՆ Ա: ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ	
ԿԻՐԱՌՈՒՄԸ.....	14
Գլուխ Ա1 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ	
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.....	15
Ա1.1	
Ներածություն.....	16
Ա1.2 Ի՞նչ է ՌԲԳ.....	17
Ա1.3 ՌԲԳ-ի ապահովված օգուտները և անհրաժեշտ ծախսերը.....	19
Ա1.4 ՌԲԳ-ի կիրառման ուղենիշ-սկզբունքներ.....	22
Ա1.5 Մի շարք ընդհանուր նկատառումներ.....	23
Գլուխ Ա2 ՌԲԳ-ի ԸՆԴԳՐԿՈՒՄԸ ՊԼԱՆՆԵՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ	
ԿԱԶՄՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ.....	27
Ա2.1 Ներածություն.....	28
Ա2.2 Պլանների և ծրագրերի կազմման գործընթացը, ՌԲԳ և դրանց փոխկապվածությունը.....	29
Ա2.3 Պլանների և ծրագրերի կազմման գործընթացում ՌԲԳ-ի ընդգրկման գործնական մոտեցումները.....	40
Ա2.4 Պլանների և ծրագրերի կազմման գործընթացում Արձանագրության կիրառման տարբերակները.....	43
Գլուխ Ա3 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ	
ՊԼԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ՌԲԳ-Ի ԿԻՐԱՌՄԱՆ	
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ.....	52
Ա3.1 Ներածություն.....	53
Ա3.2 Իրավական պարտավորություններ.....	54
Ա3.3 Թեսթերի մանրամասն նկարագրություն.....	57
Ա3.4 Հնարավոր գործնական պատրաստություններ.....	69
Գլուխ Ա4 ՊԼԱՆՆԵՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ ՌԲԳ.....	71
Ա4.1 Ներածություն.....	72
Ա4.2 Գործունեության շրջանակների ամրագրում և բնապահպանական զեկույց.....	73

Ա4.3 Հանրության մասնակցություն.....	95
Ա4.4 Խորհրդակցություններ պատասխանատու մարմինների հետ.....	101
Ա4.5 Անդրսահմանային խորհրդակցություններ.....	103
Ա4.6 Որոշումների կայացում.....	106
Ա4.7 Մշտադիտարկում.....	107
Գլուխ Ա5 ՌԲԳ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	110
Ա5.1 Ներածություն.....	111
Ա5.2 ՌԲԳ վերլուծական և մասնակցության գործիքներ.....	112
Ա5.3 Հիմնական վերլուծական գործիքների ամփոփ նկարագրություն.....	115
Ա5.4 Հանրության մասնակցության ապահովման հիմնական գործիքների ամփոփ նկարագրություն.....	119
Գլուխ Ա6 ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ.....	122
Ա6.1 Ներածություն.....	123
Ա6.2 Հնարավոր մոտեցումներ.....	126
ԲԱԺԻՆ Բ: ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂՆԵՐԻ ՈՒՂԵՅՈՒՅՑ.....	131
Գլուխ Բ1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊԵՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ.....	132
Բ1.1 Ներածություն.....	133
Բ1.2 Արձանագրության կիրառման կարողության ամրապնդման քայլերի ծանոթություն.....	135
Բ1.3 Կարողության գնահատում.....	138
Բ1.4 ՌԲԳ կարողության զարգացման ռազմավարություններ մշակելու խրհուրդներ.....	140
Բ1.5 Եզրափակիչ նշումներ.....	140
Գլուխ Բ2 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍՈՒՅՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՕՐԻՆԱԿ.....	142
Բ2.1 Ծանոթություն.....	143
Բ2.2 Կոնկրետ դեպքի ուսումնասիրության շուրջ տարվող աշխատանքի առաջադրանքներ.....	146
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	154
Հավելված Ա1.1ԱՌՈՂՁՈՒԹՅՈՒՆ.....	155
Հավելված Ա1.2 ՌԲԳ-Ի ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ՇՐՋԱԴԱՐՁԱՅԻՆ ՕՐԵՆՔՆԵՐ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	174
ՀավելվածԱ1.3 ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՌԲԳ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԱՆԻՇՆԵՐԸ..	180

Հավելված Ա5.1 ԱՌԱՆՁԻՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	183
Հավելված Ա5.2 ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	201

Հավելված Բ1.1 ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ, ԿՈՎԿԱՍԻ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅԻ ԱՌԱՆՁԻՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՕՐԻՆԱԿ	217
---	-----

Հավելված Բ1.2 ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ, ԿՈՎԿԱՍԻ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅԻ ԱՌԱՆՁԻՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՊԱՐԶ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՕՐԻՆԱԿ	222
--	-----

ՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Նկար Ա2.1 Պլանների և ծրագրերի կազմման հիմնական խնդիրները.....	30
Նկար Ա2.2 Պլաններում և ծրագրերում ՌԲԳ-ի ընդգրկման տարրերը.....	33
Նկար Ա2.3 Պլանների և ծրագրերի կազմման խնդիրների և ՌԲԳ տարրերի տրամաբանական կապերը.....	34
Նկար Ա2.4 ՌԲԳ-ի իրականացումը «ex post» և պլանի կամ ծրագրի կազմման գործընթացից անջատ տարբերակով. ընդհանուր մոտեցում.....	46
Նկար Ա2.5 Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում մասնակիորեն ընդգրկված ՌԲԳ. ընդհանուր մոտեցում.....	47
Նկար Ա2.6 Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում լիովին ընդգրկված ՌԲԳ. ընդհանուր մոտեցում	50
Նկար Ա3.1 Պլանը կամ ծրագիրն Արձանագրության շրջանակներում ՌԲԳ-ի ենթարկելու որոշում կայացնելու ուղեցույց	59
Նկար Ա4.1 Այլընտրանքային տարբերակներ, որոնք կարող են հաշվի առնվել Պլանների և ծրագրերի կազմման գործընթացում	75
Առողջության հիմնական չափորոշիչները.....	157

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ Ա1.1 ՌԲԳ-ի հիմնական խնդիրների, սցիպալական և տնտեսական գնահատումների և կայունության գնահատումների միջև տրամաբանական կապերը.....	25
Աղյուսակ Ա2.1 ՌԲԳ տարրերը.....	32
Աղյուսակ Ա2.2 Պլանների կամ ծրագրերի կազմման գործընթացի, ՌԲԳ-ի, պատասխանատու մարմինների հետ խորհրդակցությունների և հանրության մասնակցության միջև տրամաբանական կապերը.....	37
Աղյուսակ Ա3.1 Հավելված III-ի կիրառման ուղեցույց (կարևորության չափանիշներ).....	69
Աղյուսակ Ա4.1 Բնապահպանական նպատակների հնարավոր մի շարք աղբյուրներ և օրինակներ.....	81
Աղյուսակ Ա4.2 Հաշվետվության բովանդակությունը՝ ըստ Արձանագրության Հավելված IV-ի պահանջների.....	82
Աղյուսակ Ա4.3 Չափանիշներ, որոնք պետք է հաշվի առնել բնապահպանական հաշվետվության բովանդակությունը որոշելիս (հոդված 7.2).....	85

Աղյուսակ Ա4.4 Որակի ապահովման ստուգացուցակ.....	91
Աղյուսակ Ա5.1 Հիմնական վերլուծական գործիքների ամփոփ նկարագրություն.....	118
Աղյուսակ Ա5.2 Հանրության մասնակցության հիմնական գործիքների ամփոփ նկարագրություն.....	120
Աղյուսակ Ա6.1 Կանադական ուղենիշների առանցքային սկզբունքները.....	128
Աղյուսակ Բ1.1 Արձանագրության կիրառման կարողությունների զարգացման շրջանակ.....	134
Աղյուսակ Բ2.1 Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի վերլուծության շրջանակ.....	147
Ֆիզիկական բնապահպանական վտանգների և դրանց առնչվող հիվանդությունների օրինակներ (ԱՀԿ, 2006թ., ԵՏՀ տարածաշրջանի պահանջներին համապատասխանեցված տարբերակ).....	162
Առողջապահական հարցերը ՌԲԳ-ի շրջանակներում իրականացվող Պլանների և ծրագրերի հնարավոր առողջապահական հետևանքները.....	165
Բնապահպանական հաշվետվության շրջանակներում առողջապահական խնդիրների վերլուծության տարբեր մոտեցումներ.....	170

ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Ներդիր Ա4.1 ՌԲԳ-ի այլընտրանքային տարբերակները	76
Ներդիր Ա4.2 Խնդիրներ, մտահոգություններ կամ հարցեր, նպատակներ, թիրախներ, ցուցանիշներ կամ ուղղորդող հարցեր	80
Ներդիր Ա4.3 Աստիճանակարգում.....	80
Ներդիր Ա4.4 Որակ. հնարավոր գործնական նկատառումներ.....	90
Ներդիր Ա4.5 Խորհրդակցություն պատասխանատու մարմինների հետ. հնարավոր գործնական պայմանավորվածություններ.....	102
Ներդիր Ա6.1 Ինտեգրման և թափանցիկության ապահովման ռազմավարություններ	127
Ներդիր Ա6.2 Հանրության մասնակցությունն ըստ Օրհուսի կոնվենցիայի	158
Չեխիայի «Ձեռնարկատիրություն և նորամուծություն» 2007–2013թթ.գործառնական ծրագրի ՌԲԳ-ի շրջանակներում առողջության վրա ազդեցության գնահատում.....	
Սոցիալ-տնտեսական կարգավիճակի չափանիշներ, որոնք առողջության կարևոր նախադրյալներ են.....	159
ՌԲԳ և ԱԱԳ. ընդհանրություններն ու տարբերությունները.....	169

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱԳ	Առողջության վրա ազդեցության գնահատում	HIA
ԱԹՀՎ	առավելություններ, թերություններ, հնարավորություններ, վտանգներ	SWOT
ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն	WHO
ԱՏՀ	Աշխարհագրական տեղեկատվության համակարգ	GIS
ԲԶՎ	Բազմաչափորոշչային վերլուծություն	MCA
ԵՀ	Եվրոպական հանձնաժողով	EC
ԵՄ	Եվրամիություն	EU
ԵՏՀ	ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով, երբեմն՝ ՄԱԿԵՏՀ, UNECE ոչ պաշտոնական հապավմամբ	ECE (UNECE)
Էսպուի կոնվենցիա	«Անդրսահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կոնվենցիա, որն ընդունվել է Էսպուում (Ֆինլանդիա), 1991թ.	Espoo Convention
ԸՊ	Ընդունելու պատրաստակամություն	WTA
ԾՕՎ	Ծախսերի և օգուտների վերլուծություն	CBA
ԿՊԳ	Կյանքի պարբերաշրջանի գնահատում	LCA
ՄԱԿ ԲԾ	ՄԱԿ-ի Բնապահպանական ծրագիր	UNEP
ՄԱԿ ԶԾ	ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր	UNDP
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում	EIA
ՇՄԱԳ հրահանգ	«Շրջակա միջավայրի վրա որոշակի հանրային և մասնավոր ծրագրերի ազդեցության գնահատման վերաբերյալ» 27-րդ հոկտեմբերի, 1985թ. ԵՄ հրահանգ թիվ 85/337/EEC, որը փոփոխվել է 3 մարտի, 1997թ. Եվրախորհրդի հրահանգ թիվ 97/11/EC-ով	EIA Directive
ՈԿԿ	Ոչ կառավարական կազմակերպություն	NGO
ՌԲԳ	Ռազմավարական բնապահպանական գնահատում	SEA
ՌԲԳ Արձանագրություն	Էսպուի կոնվենցիայի ռազմավարական բնապահպանական գնահատման Արձանագրություն	SEA Protocol

ՌԲԳ հրահանգ	«Շրջակա միջավայրի վրա որոշակի Պլանների և ծրագրերի ազդեցության գնահատման վերաբերյալ» ԵՄ հրահանգթիվ 2001/42/ԵՄ	SEA Directive
ՎՊ	Վճարելու պատրաստականություն	WTP
ՏԲԿ	Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի Տարածաշրջանային բնապահպանական կենտրոն	REC
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն	OECD
Օրհուսի կոնվենցիա	«Բնապահպանական հարցերի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության, որոշումների կայացման գործընթացում հանրության մասնակցության և արդարադատության հասանելիության մասին» Միացյալ ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կոնվենցիա, որն ընդունվել է Օրհուսում (Դանիա), 1998թ.	Aarhus Convention

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

0.1 ԱՌԱՋԱԲԱՆ

1. «Անդրսահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիային (Էսպուի կոնվենցիային) առնչված ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) ռազմավարական բնապահպանական գնահատման Արձանագրությունն ընդունվել է 2003թ. Կիևում: Արձանագրությունն ուժի մեջ է մտել 2010թ. հունիսին և, 2011թ. կեսի դրությամբ, Արձանագրությանն անդամակցում են 22 պետություններ և Եվրամիությունը: Արձանագրության ներկա կարգավիճակի մասին տեղեկություններ կարելի է գտնել ԵՏՀ-ի http://www.unece.org/env/eia/sea_protocol.html կայքէջում: Արձանագրությանն անդակամակցության շրջանակը չի սահմանափակվում ԵՏՀ տարածաշրջանով. Միացյալ ազգերի կազմակերպության ցանկացած անդամ պետություն կարող է հաստատման դեպքում անդամակցել Արձանագրությանը¹:
2. Ռազմավարական բնապահպանական գնահատման Արձանագրության կիրառման օժանդակ նյութատեխնիկական այս ձեռնարկը (Ձեռնարկը) մշակվել է Արձանագրությանն անդամակցող պետությունների համաժողովի 2004թ. հունիսի որոշման համաձայն:
3. Սույն ձեռնարկը չի հանդիսանում պաշտոնական իրավաբանական կամ այլ մասնագիտական խորհրդատվություն, սակայն կարող է ուղեցույց ծառայել Արձանագրությունը կիրառողների կամ նրանց աջակցող անձանց համար:

¹Տերմինների բացատրության համար տե՛ս Միացյալ ազգերի կազմակերպության համաձայնագրերի վավերացման ձեռնարկը, որը զետեղված է հետևյալ էջում՝ http://treaties.un.org/pages/Publications.aspx?pathpub=Publication/TH/Page1_en.xml :

0.2 ՆՊԱՏԱԿԸ, ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԼՍԱՐԱՆԸ ԵՎ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

4. Սույն ձեռնարկը.
 - առանձնացնում է ռազմավարական բնապահպանական գնահատման (ՌԲԳ) Արձանագրության գլխավոր պահանջները
 - ամփոփում է գործնականում Արձանագրության կիրառման հիմնական խնդիրները
 - նյութեր է տրամադրում վերապատրաստման դասընթացների և Արձանագրության կիրառման կարողության ամրապնդման ծրագրերի համար:
5. Ձեռնարկը նախատեսված է.
 - այն անձանց համար, ում հետաքրքրում է Արձանագրության և դրա կիրառման տեսության մասին տեղեկատվությունը, այդ թվում՝ Արձանագրության կիրառման համար պատասխանատու պետական և այլ պաշտոնյաների, ռազմավարական բնապահպանական գնահատումներ (ՌԲԳ-ներ) իրականացնող մասնագետների և ՌԲԳ գործընթացին մասնակցելու ցանկություն ունեցող շահառուների համար.
 - այն անձանց համար, ովքեր ցանկանում են Արձանագրության պահանջների և ՌԲԳ-ի կիրառման վերաբերյալ խորհրդատվական աշխատանք և վերապատրաստման դասընթացներ կազմակերպել:
6. Ձեռնարկի կառուցվածքն արտացոլում է նախատեսված լսարանի երկու խմբերը (տե՛ս ստորև):
7. ԵՏՀ տարածաշրջանում ընդգրկված են Եվրամիության (ԵՄ) անդամ պետությունները: «Շրջակա միջավայրի վրա որոշակի Պլանների և ծրագրերի ազդեցության գնահատման վերաբերյալ» ԵՄ հրահանգ թիվ 2001/42/ԵՄ, որը հայտնի է նաև ՌԲԳ հրահանգ համառոտ անվանմամբ, պետք է մինչև 2004թ. հուլիսն իրագործվեր: Արձանագրության պարտադիր դրույթները հիմնականում համապատասխանում են ՌԲԳ հրահանգի դրույթներին, և հեղինակները փորձել են այս ձեռնարկի շրջանակներում վերհանել տարբերությունները: ՌԲԳ հրահանգի իրականացման գործում ԵՄ անդամ երկրներին աջակցելու նպատակով 2003թ. Եվրահանձնաժողովը (ԵՀ) հրատարակեց «Շրջակա միջավայրի վրա որոշակի Պլանների և ծրագրերի ազդեցության գնահատման մասին» թիվ 2001/42/ԵՄ հրահանգի իրականացման մասին փաստաթուղթը: Սույն Ձեռնարկի համապատասխան հատվածները, որոնք գործնականում վերաբերում են ՌԲԳ-ի կիրառման հարցերին, կարող են հետաքրքրել ՌԲԳ հրահանգի իրականացմանը հետամուտ անձանց:
8. **Ձեռնարկն, այնուամենայնիվ, ՌԲԳ Արձանագրության կամ ՌԲԳ հրահանգի պաշտոնական մեկնաբանության ուղեցույց չէ:**
9. Ձեռնարկի շրջանակներում հղումներ են արվում «Բնապահպանական հարցերի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության, որոշումների կայացման գործընթացում հանրության մասնակցության և արդարադատության հասանելիության մասին» կոնվենցիային:
10. Ձեռնարկը կազմվել է անգլերեն և ռուսերեն տարբերակներով: Քանի որ ֆրանսերենը ԵՏՀ-ի պաշտոնական լեզուներից է, ապա ձեռնարկը կթարգմանվի նաև ֆրանսերեն, երբ հնարավոր լինի լրացուցիչ միջոցներ հայթայթել: Ակնկալվում է, որ ձեռնարկը կթարգմանվի նաև այլ լեզուներով կամ ներկա տարբերակով, կամ տվյալ երկրի յուրահատուկ պահանջներին համապատասխանող փոփոխություններով (տե՛ս ստորև բերված Հատված 0.4-ը):

0.3 ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

11. Ձեռնարկը բաժանված է երկու մասի, ինչը համապատասխանում է նախատեսված լսարանի երկու խմբերին՝

- **Բաժին Ա** –նախատեսված է Արձանագրությունը կիրառողների համար
- **Բաժին Բ** –նախատեսված է վերապատրաստողների և Արձանագրության կիրառման կարողությանն աջակցողների համար

12. Այս երկու բաժիններից յուրաքանչյուրը բաղկացած է առանձին, սակայն փոխշաղկապված գլուխներից, որտեղ հղումներ են արվում այլ նյութերի: Կոնվենցիայի կայքում զետեղված է յուրաքանչյուր գլխին վերաբերող էլեկտրոնային ներկայացում (պրեզենտացիա): Ձեռնարկի երկմաս կառուցվածքի նկարագրությունը բերված է ստորև՝

Բաժին Ա: Արձանագրության կիրառումը

- **Գլուխ Ա1** ներկայացնում է ՌԲԳ նպատակները և ամփոփում ՌԲԳ հասկացությունները, դերակատարումը և աստիճանական զարգացումը (էվոլյուցիան):

Հաջորդող չորս գլուխները ներկայացնում են պլաններում և ծրագրերում Արձանագրության կիրառման աջակցմանն ուղղված տեղեկատվություն.

- **Գլուխ Ա2** առանձնացնում է ՌԲԳ-ի և պլանների ու ծրագրերի կազմման գործընթացի ընդհանուր կապերը:
- **Գլուխ Ա3** նկարագրում է Արձանագրության պահանջներին համապատասխան ՌԲԳ իրականացնելու անհրաժեշտությունը որոշելու գործընթացը:
- **Գլուխ Ա4** ամփոփում է Արձանագրության շրջանակներում պլանների և ծրագրերի ՌԲԳ-ների վարումը:
- **Գլուխ Ա5** ներկայացնում է գործնականում ՌԲԳ իրականացնելու ընթացքում կիրառվող հիմնական գործիքների ամփոփ նկարագրությունը:
- **Գլուխ Ա6** նկարագրում է Արձանագրության կիրառումը տարբեր քաղաքականությունների և օրենքների շրջանակներում:

Բաժին Բ: Վերապատրաստողների ուղեցույց

- **Գլուխ Բ1** ամփոփում է Արձանագրության կիրառման կարողության զարգացման առանցքային գաղափարները:
- **Գլուխ Բ2** ներկայացնում է առաջադրանքների ձևաչափ, որը կարող է օգտագործվել ՌԲԳ վերապատրաստման դասընթացների և Արձանագրության կիրառման կարողության ամրապնդմանն ուղղված նախաձեռնությունների շրջանակում կոնկրետ դեպքերի ուսումնասիրության գործնական աշխատանք նախագծելիս:

13. Հավելվածները լրացուցիչ նյութեր են ներկայացնում՝ լրացնելով վերոնշյալ գլուխների բովանդակությունը:

14. Ի լրումն ՌԲԳ Արձանագրության, սույն ձեռնարկում հղումներ են արվում հետևյալ փաստաթղթերին.

Միջազգային փաստաթղթեր և ուղեցույցներ՝

- «Անդրսահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» ԵՏՀ կոնվենցիա (Էսպուլի կոնվենցիա):
- «Բնապահպանական հարցերի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության, որոշումների կայացման գործընթացում հանրության մասնակցության և արդարադատության հասանելիության մասին» ԵՏՀ կոնվենցիա (Օրիուսի կոնվենցիա):
- «Շրջակա միջավայրի վրա որոշակի պլանների և ծրագրերի ազդեցության գնահատման վերաբերյալ» ԵՄ հրահանգ թիվ 2001/42/ԵՄ (ՌԲԳ հրահանգ):

- «Շրջակա միջավայրի վրա որոշակի պլանների և ծրագրերի ազդեցության գնահատման վերաբերյալ» 2001/42/ԵՄ հրահանգի կիրարկում (ԵՄ ուղեցույց):
- Ռազմավարական բնապահպանական գնահատման շրջանակներում առողջապահության վրա ազդեցության գնահատում, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ)²:

ՌԲԳ գործողությունների օրինակներ

- Այս բաժինը ժամանակի ընթացքում կհամալրվի տարբեր երկրների տրամադրած օրինակներով:

15. Վերոնշյալ նյութերը, առաջարկվող ընթերցացանկը և ձեռնարկի յուրաքանչյուր հատվածի վերաբերյալ լրացուցիչ օգտակար նյութեր են տեղադրված ձեռնարկի կայքէջում (http://www.unece.org/env/eia/sea_manual/welcome.html):

²Ք.Հ. Բրիգ և Ք. Լոք, խմբ., • Ռազմավարական բնապահպանական գնահատման շրջանակներում առողջապահության վրա ազդեցության գնահատում. առողջապահության վրա ազդեցության գնահատման հասկացությունների վերանայում, ՌԲԳ Արձանագրության շրջանակներում առողջապահության հարցերի բավարար ընդգրկման ապահովմանն ուղղված մեթոդներ և գործողություններ (ԱՀԿ, 2001թ.). Ձեռնարկված է հետևյալ կայքէջում՝ http://www.who.int/hia/network/en/HIA_as_part_of_SEA.pdf.

0.4 ՁԵՌՆԱՐԿԻ ՎԵՐԱԽՄԲԱԳՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԸ

16. Ձեռնարկը ենթակա է Արձանագրությունը ստորագրած պետությունների, իսկ հետագայում նաև Արձանագրությանն անդամակցող պետությունների կողմից վերանայման և փոփոխման:

17. Ձեռնարկի էլեկտրոնային տարբերակները զետեղված են տարբեր կայքէջերում և կարող են նաև տրամադրվել CD-ROM-ով: Սա հնարավորություն է ընձեռում տեքստը հետագայում համալրել տարբեր կայքէջերով, երբ լրացուցիչ նյութեր մշակվեն: Ակնկալվում է, որ նոր նյութերի շարքում կընդգրկվեն ուղեցույց, մեթոդներ, կոնկրետ դեպքերի վերլուծություններ և օրինակելի գործելակերպի օրինակներ:

18. Ի լրումն վերոնշյալի, հեղինակները խրախուսում են տարբեր համատեքստերին ձեռնարկի բովանդակության համապատասխանեցումը: Օրինակ՝ 2005թ. սույն ձեռնարկի նախնական տեքստի ազգային տարբերակներ են մշակվել Վրաստանի, Ուկրաինայի և Մոլդովայի Հանրապետության կողմից:

19. Ձեռնարկի բովանդակության նպատակային վերամշակման մտադրություն ունեցող անձանց խորհուրդ ենք տալիս ուշադրություն դարձնել հետևյալ խնդիրներին.

- Մինչև ձեռնարկի բովանդակության փոփոխմանն ու համապատասխանեցմանը հետամուտ լինելը հարկավոր է ամենայն մանրամասնությամբ քննել նախագծերի, ծրագրերի, քաղաքականությունների և գործող օրենսդրության բնապահպանական գնահատման գործող համակարգերը և հետո միայն փոփոխել և համապատասխանեցնել ձեռնարկի տեքստը:
- Ձեռնարկի տեքստի փոփոխումը թարգմանությամբ սահմանափակելու խնդիր չի դրվում, փոխարենը թույլատրվում է ձեռնարկի տեքստը համալրել տեղական պայմաններին ու համապատասխան կարևոր հարցերին նվիրված լրացուցիչ գլուխներով ու հատվածներով, ինչպես նաև չընդգրկել տվյալ համատեքստում ավելորդ համարվող նյութերը:
- Ձեռնարկը թիրախային լսարանին առավել դյուրընկալելի և համապատասխան դարձնելու նպատակով կարող են բերվել օրինակներ տվյալ տարածաշրջանից կամ երկրից:
- Թե՛ Արձանագրությունը և թե՛ ՌԲԳ հրահանգը իրավական փաստաթղթեր են այն երկրներում, որտեղ դրանք ուժի մեջ են, հարկավոր է զգուշություն ցուցաբերել ու ձեռնպահ մնալ այդ փաստաթղթերի դրույթները սխալ ներկայացնելուց:

20. Փոփոխված նյութերում անհրաժեշտ է հղումներ կատարել ձեռնարկի համապատասխան հատվածներին և հեղինակներին:

ԲԱԺԻՆ Ա. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Գլուխ Ա1

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ՀԱՄԱՌՈՏ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Ա1.1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արձանագրությունում անընդմեջ կրկնվում է «շրջական միջավայրի, այդ թվում՝ առողջության վրա» տերմինը: Կրկնողությունից խուսափելու համար ձեռնարկում նշվում է միայն շրջակա միջավայրը, սակայն բոլոր դեպքերում միշտ ենթադրվում է, որ սա ներառում է առողջությունը:

Առողջապահական խնդիրների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար, ընթերցե՛ք հատված Ա1.1:

1. Պատասխանելով «ի՞նչ է ՌԲԳ-ն» հարցին (հատված Ա1.2), այս գլուխը ներկայացնում է ռազմավարական բնապահպանական գնահատման (ՌԲԳ) ամփոփ ծանոթություն, մանրամասնում է ՌԲԳ-ից ակնկալվող արդյունքները, համեմատականներ անցկացնում նախագծերի բնապահպանական գնահատման համար լայնորեն կիրառվող գործիքի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության (ՇՄԱԳ) հետ:
2. Գլուխն այնուհետև անդրադառնում է ՌԲԳ ծախսերի և օգուտների վերլուծությանը (հատված Ա1.3) և ՌԲԳ մի շարք ուղենիշ սկզբունքներին (հատված Ա1.4):
3. Գլխի վերջին հատվածում արծարծվում են առավելապես ընդհանուր հարցադրումներ (հատված Ա1.5), այդ թվում՝
 - ՌԲԳ որպես կայունության ապահովման գործիք
 - ՌԲԳ-ի և գնահատման այլ գործիքների փոխկապվածությունը
 - ՌԲԳ որոշումների կայացման ռազմավարական մակարդակում:

Ա 1.2 ԻՆՉ Է ՌԲԳ

4. Սույն թեմային վերաբերող օրենսդրության, քաղաքականության կամ գրականության մեջ հանդիպում են ՌԲԳ-ի տարբեր սահմանումներ: ՌԲԳ-ն ընդհանուր առմամբ հասկացվում է որպես կանխարգելիչ բնույթի համակարգված գործընթաց, որի միջոցով կատարվում է շրջակա միջավայրի վերաբերյալ առաջարկվող նախագծերի, պլանների, ծրագրերի կամ այլ ռազմավարական գործողությունների ազդեցության վերլուծություն և ստացված արդյունքներն ու եզրահանգումներն ընդգրկվում են որոշումների կայացման գործընթացում:
5. Սույն ձեռնարկում «ՌԲԳ» տերմինն օգտագործվում է ՌԲԳ Արձանագրությունում ամրագրված սահմանմանը համահունչ իմաստով, այն է՝

Ծրագրվող աշխատանքների հնարավոր բնապահպանական, այդ թվում՝ առողջապահական ազդեցության գնահատում, որի միջոցով սահմանվում են բնապահպանական հաշվետվության բովանդակության և նախապատրաստման շրջանակները, հանրության մասնակցության և հանրային խորհրդակցության կազմակերպումը և իրականացվելիք պլանում կամ ծրագրում բնապահպանական հաշվետվության, հանրության մասնակցության ու հանրային խորհրդակցությունների արդյունքների ընդգրկումը (հոդված 2, պարբերություն 6):

Ա 1.2.1 ԻՆՉ Է ՌԲԳ-ի նպատակը

6. Տերմինի ընդհանուր սահմանմամբ, ՌԲԳ-ի նպատակն է՝ հետևել, որ բնապահպանական նկատառումները հաշվի առնվեն և ընդգրկվեն ռազմավարական որոշումների կայացման գործընթացում՝ ապահովելով բնապահպանական կայունության սկզբունքներին համահունչ զարգացում: Մասնավորապես, ՌԲԳ գործընթացը պլանների և ծրագրերի իրականացման պատասխանատու մարմիններին, ինչպես նաև որոշումներ կայացնողներին խրախուսում է հաշվի առնել՝
 - այն գլխավոր բնապահպանական ուղղությունները, հնարավորություններն ու սահմանափակումները, որոնք կարող են ազդել տվյալ պլանի կամ ծրագրի վրա կամ ազդեցություն կրել ծրագրվող աշխատանքների հետևանքով.
 - տվյալ պլանին կամ ծրագրին առնչվող բնապահպանական նպատակներն ու ցուցանիշները.
 - շրջակա միջավայրի վերաբերմամբ առաջարկվող տարբերակների և պլանի կամ ծրագրի իրականացման հավանական զգալի ազդեցությունները.
 - անցանկալի ազդեցությունները կանխելուն, նվազեցնելուն կամ մեղմելուն և դրական ազդեցությունները շեշտադրելուն նպատակաուղղված միջոցառումները.
 - համապատասխան պատասխանատու մարմինների, հանրության և համապատասխան դեպքերում՝ ծրագրվող աշխատանքների արդյունքում ազդեցություն կրող պետությունների տեսակետներն ու տրամադրած տեղեկատվությունը:

1.2.2 ԻՆՉ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆ Է ԱՊԱՀՈՎՈՒՄ ՌԲԳ-ն ՇՄԱԳ-ի ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ

7. ՌԲԳ-ն հիմնականում ձևավորվել է որպես ՇՄԱԳ-ի սկզբունքների, գործընթացների և ընթացակարգերի շարունակություն, ինչը ճիշտ է նաև ՌԲԳ Արձանագրության դեպքում (այս բնագավառի զարգացումը պայմանավորող հիմնական օրենքների և քաղաքականությունների շրջադարձային որոշումների մասին տե՛ս [հավելված Ա1.2](#)): ՌԲԳ-ն, այնուամենայնիվ, նախագծերի ՇՄԱԳ-ի համեմատությամբ, ապահովում է մի

շարք առավելություններ: Այս առավելությունները բխում են պլանների և ծրագրերի կազմման առավել բարձր մակարդակում ՌԲԳ-ի կիրառման փաստից, որի արդյունքում որոշվում են ՇՄԱԳ-ի ենթակա և շրջակա միջավայրի վրա ազդող գործոններ ներառող բազմաթիվ այլ գործողությունների շրջանակները: Այս մակարդակում ՌԲԳ-ն պահանջում է բնապահպանության արմատական խնդիրների (ինչու, որտեղ և ինչ բնույթի զարգացում) քննարկում՝ ընդամենը առանձին նախագծի կազմման մանրամասնություններին անդրադառնալու փոխարեն: ՇՄԱԳ-ի համեմատությամբ, ՌԲԳ-ն բնապահպանական օգուտների ապահովման առավել մեծ ներուժ ունի:

8. Այս տեսանկյունից, պլանների և ծրագրերի ՌԲԳ-ն ապահովում է հետևյալ առավելությունները՝

- Համեմատած նախագծային փուլի հետ, տվյալ մակարդակում առկա այլընտրանքների առավել լայն շրջանակի քննարկման հնարավորություն:
- Տվյալ հատվածում (սեկտորում) կամ տարածաշրջանում զարգացումների վրա ազդեցություն գործելու հնարավորություն՝ առանձին նախագծի կազմման ու տեղորոշման առավել սահմանափակ հարցերին անդրադառնալու փոխարեն:
- Նախագծի բաղադրիչի մակարդակով սահմանափակվելու փոխարեն՝ պլանների և ծրագրերի ժամանակային ու տարածքային ընդգրկման սահմաններում կուտակումային (կումուլյատիվ) և խոշորամասշտաբ ազդեցություններին անդրադառնալու առավել հզոր կարողություն:
- Կայուն զարգացման միջոցառումների իրականացման առավել բարձր մակարդակի ապահովում՝ համապատասխան ռազմավարությունների, քաղաքականությունների ու պարտավորությունների հետ պլանների և ծրագրերի նպատակներն ու այլընտրանքները ներդաշնակեցնելու միջոցով:
- «Աստիճանավորման» (տե՛ս՝ Ներդիր Ա4.3-ը) միջոցով նախագծի բաղադրիչի ՇՄԱԳ-ի համապատասխանեցում ՌԲԳ հաշվետվությանը և վերջինիս շրջանակներում դրա կշռի շեշտադրում, ինչի շնորհիվ հնարավոր է խուսափել բնապահպանական նկատառումներից ելնելով ներկայացված տեղեկատվության հիման վրա որոշված հարցերին (արդյոք, որտեղ և ինչ բնույթի զարգացում պետք է տեղի ունենա) անդրադառնալուց:

Ա1.3 ՌԲԳ-Ի ԱՊԱՀՈՎԱԾ ՕԳՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԾԱԽՍԵՐԸ³

Ա1.3.1 ՌԲԳ-ի ապահովված օգուտները

9. ՌԲԳ-ի կիրառման անմիջական օգուտներից են կշռադատված որոշումների հիմք ծառայող տեղեկատվության ապահովումը և բնապահպանության ու կայուն զարգացման բնագավառներում նման որոշումներով պայմանավորված ձեռքբերումները: Կարելի է նաև առանձնացնել այլ երկրորդական օգուտները, որոնք պայմանավորում են ՌԲԳ Արձանագրության պահանջներին համապատասխան մասնակցային սկզբունքը կարևորող մոտեցումները և թափանցիկ ընթացակարգերը: ՌԲԳ գործընթացը ճիշտ իրականացնելու դեպքում այն պետք է՝

- ապահովի շրջակա միջավայրի պահպանման բարձր մակարդակ.
- բարելավի պլանների և ծրագրերի կազմման որակը.
- բարձրացնի որոշումների կայացման արդյունավետության մակարդակը.
- հեշտացնի զարգացման նոր հնարավորությունների բացահայտումը.
- ծառայի ծախսատար սխալներից խուսափելու ջանքերին.
- ամրապնդի կառավարչության հիմքերը.
- խրախուսի անդրսահմանային համագործակցությունը:

ՌԲԳ ապահովում է շրջակա միջավայրի պահպանման բարձր մակարդակ

10. Շրջակա միջավայրի պահպանման բարձր մակարդակի ապահովման պահանջը ՌԲԳ Արձանագրությունում ամրագրված նպատակներից է (հոդված 1) և ՌԲԳ-ի իրականացման հիմնավորումն է: Շրջակա միջավայրի պահպանման բարձր մակարդակի ապահովումը կարող է տարբեր կերպ մեկնաբանվել, սակայն ՌԲԳ առնվազն պետք է կանխի շրջակա միջավայրին անդառնալի կամ խիստ վնաս հասցնող գործողությունները, պահպանի հատուկ պահպանության կարգավիճակ ունեցող վայրերն ու տարածքները, ինչպես նաև՝ վտանգված կենսավայրերն ու կենսաբազմազանության պահպանման համար կարևոր այլ տարածքները:

ՌԲԳ բարելավում է պլանների և ծրագրերի կազմման որակը

11. Անկախ նրանից, թե ՌԲԳ իրականացվում է որպես պլանի կամ ծրագրի կազմման անքակտելի բաղադրիչ, թե դրան զուգահեռ, ՌԲԳ կարող է բարելավել կամ ամրապնդել պլանի կամ ծրագրի որակը՝ ապահովելով առավել նշանակալից արդյունքներ: ՌԲԳ այս առավելություններն ապահովում է տարբեր ճանապարհներով, սակայն մասնավորապես օգնում է, որպեսզի գործընթացը լինի առավել նպատակաուղղված, խստապահանջ, հաշվի առնի այլընտրանքները և հնարավոր ազդեցությունների ու զարգացման կայուն ուղիների բացահայտման ամբողջական շրջանակը:

ՌԲԳ բարձրացնում է որոշումների կայացման արդյունավետության մակարդակը

12. ՌԲԳ համակարգում է որոշումների կայացման գործընթացը՝ ամրագրելով տարբեր փուլերում և աստիճաններում բնապահպանական խնդիրներին հետևողականորեն անդրադառնալու պահանջը: Ենթադրվում է, որ ՌԲԳ-ի դեպքում ժամանակի

³Ըստ ՏԲԿ և ՄԱԿ ԶԳ (2003), Ռազմավարական բնապահպանական գնահատման ապահովված օգուտները վերտառությամբ ձեպագրի (բրիֆինգ-գեկույց), որը գետեղված է <http://archive.rec.org/REC/Programs/EnvironmentalAssessment/pdf/BenefitsofSEAeng.pdf> կայքէջում, և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ)/Զարգացման աջակցության հանձնաժողով (2006թ.), «Ռազմավարական բնապահպանական գնահատման կիրառում. Զարգացումը խթանող համագործակցության օրինակելի պրակտիկա (կիրառույթ)», որը գետեղված է <http://www.oecd-ilibrary.org/content/book/9789264026582-en> կայքէջում:

արդյունավետությունը (հետևաբար նաև ծախսերի արդյունավետությունը) բարձրանում է պլանների և ծրագրերի մակարդակում առավել համահունչ և փոխկապակցված որոշումների շնորհիվ, որի արդյունքում կրճատվում են դատական հայցերի թիվը և գործառնական կամ ՇՄԱԳ-ի մակարդակում լայնածավալ քննարկումներ անցկացնելու անհրաժեշտությունը: Ի վերջո, ՌԲԳ խթանում է որոշումների կայացումը նախագծային մակարդակում, քանի որ դրանց հիմքում կարող են դրվել նախկինում լավարկված (օպտիմալացված) նախագծեր և ծրագրեր: Պլանավորման տարբեր փուլերում ի մի բերված տեղեկատվության համատեղ օգտագործման շնորհիվ բարձրանում է որոշումների կայացման արդյունավետությունը:

ՌԲԳ հեշտացնում է զարգացման նոր հնարավորությունների բացահայտումը

13. ՌԲԳ-ն ապահովում է բնապահպանական նկատառումներով պայմանավորված սահմանափակումների առավել մանրազնի քննարկումը պլանների և ծրագրերի ձևակերպման շրջանակներում: Այն խրախուսում է այլընտրանքների քննարկումը և փոխշահավետ տարբերակների որոնումը, որոնք բացում են էկոհամակարգերի տարողունակության շրջանակներում նոր զարգացումների հնարավորություններ:

ՌԲԳ նպաստում է ծախսատար սխալներից խուսափելուն

14. ՌԲԳ տալիս է բնապահպանական կայունության սկզբունքներին չհամապատասխանող զարգացման տարբերակների վաղ ազդանշաններ: Հետևաբար, ՌԲԳ-ի խիստ կիրառումը կարող է սահմանափակել խուսափելի վնասների շտկման կամ վերականգնողական ծախսատար գործողությունների վտանգը, ինչպիսիք են տարբեր արտադրական շինությունների տեղափոխումը նոր վայր կամ դրանց վերանախագծումը: ՌԲԳ նաև նպաստում է պլանների և ծրագրերի կազմման գործընթացում օգտագործվող մարդկային (կադրային) և ֆինանսական ռեսուրսների խնայողությանը, քանի որ անիրագործելի կամ զարգացման անկայուն հիմք ունեցող տարբերակները բացառվում են վաղ շրջանից:

ՌԲԳ ամրապնդում է կառավարչության հիմքերը

15. ՌԲԳ նպաստում է ռազմավարական որոշումների կայացման գործընթացի ընդհանուր թափանցիկության ապահովմանը և խրախուսում է պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում ներգրավված կարևոր շահառուների կարծիքների քննարկումը այդ գործընթացի վաղ փուլերում: Պահանջներին համապատասխան և հաշվետվության սկզբունքներին համահունչ իրականացված ՌԲԳ ամրապնդում է պլանների և ծրագրերի վստահելիությունը: Այն կարող է որպես հանրության հավանության ամրագրման գործիք ծառայել: Որոշումների կայացման գործընթացում հանրության արժեքները, կարծիքները, տեսակետներն ու գիտելիքները հաշվի առնելու արդյունքում պլաններն ու ծրագրերը կարող են առավել արդյունավետ լինել:

ՌԲԳ խրախուսում է անդրսահմանային համագործակցությունը

16. ՌԲԳ կարող է ծառայել որպես տարածաշրջանային համագործակցության կարևոր ասպարեզ, որտեղ կարող են արձարծվել դժվար լուծելի հարցեր, ինչպիսիք են, օրինակ, բնության հատուկ պահպանվող վայրերը, ջրուղիների, տրանսպորտային հանգույցները, որոնք ենթակա են համատեղ օգտագործման կամ որտեղ առկա են միջսահմանային աղտոտման խնդիրներ:

Ա.1.3.2 ՌԲԳ-ի անհրաժեշտ ծախսերը

17. ՇՄԱԳ-ի ծախսերի ու օգուտների ԵՀ ուսումնասիրությունը⁴ ցույց է տվել, որ տարածաշրջանային և տեղական հողօգտագործման պլանավորման գործընթացում ՌԲԳ-ի

⁴Եվրոպական հանձնաժողով (1996), «ՇՄԱԳ/ՌԲԳ-ի ծախսերի և օգուտների ուսումնասիրություն» : Այս նյութն այլևս չի տպագրվում, սակայն ամփոփագիրը գետեղված է <http://ec.europa.eu/environment/eia/eia-studies-and-reports/eiacosts-benefit-en.htm> կայքէջում:

կիրառումը սովորաբար պլանավորման ծախսերն ավելացնում է 5-10 տոկոսով: Այս ուսումնասիրությունը նաև բերում է պլանավորման ծախսերի մինչև 5 տոկոս բարձրացում ներառող ՌԲԳ-ի գերադասելի օրինակներ, սակայն ծախսերը կախված են այլընտրանքային տարբերակների թվից և դրանց գնահատման մանրամասնության աստիճանից: Միացյալ Թագավորությունում ՌԲԳ հրահանգի կիրառման առաջին տարվա արդյունքներն ամփոփող մի այլ հաշվետվություն,⁵ որի շրջանակներում ՌԲԳ իրականացրած 201 պատասխանատու մարմինների շրջանում հետհարցումներ են կատարվել, հաստատել է, որ հիմնականում ՌԲԳ-ի իրականացման համար պահանջվում է մոտավորապես 70–80 օրվա աշխատանք (շուրջ կեսը՝ գործողությունների ընդգրկման շրջանակների որոշման, իսկ մյուս կեսը՝ բնապահպանական հաշվետվության պատրաստման համար): Մինևույն ժամանակ, ուսումնասիրության շրջանակներում հարցվողների գերակշիռ մասը համաձայն կամ անվերապահորեն համաձայն էր հետևյալ պնդման հետ՝ «ՌԲԳ-ն ժամանակի և միջոցների արդյունավետ օգտագործում է»:

18. ՌԲԳ համակարգի կիրառման հիմնական ծախսերը գրանցվում են ՌԲԳ-ի կիրառման սկզբնական փուլում, երբ փորձարկվում են համապատասխան մոտեցումներն ու գործիքները և երբ կատարվում է հիմնական տվյալների շարքերի խմբավորում: Հետագա փուլերում ՌԲԳ-ների իրականացումն առավել քիչ ծախսատար է, քանի որ հնարավոր է հենվել նախորդ փորձի վրա և ընդամենը ստանդարտ վերլուծական աշխատանքի և գործընթացների կառավարման անհրաժեշտություն կարող է լինել: (Իրոք, վերոնշյալ հարցման մասնակիցները հաստատել են, որ ակնկալում են, որ հետագա ՌԲԳ-ն էականորեն ավելի քիչ ժամանակ կպահանջի): Այս ծախսերը, պլանների և ծրագրերի ընդհանուր ծախսերի համեմատությամբ, չնչին են:

⁵ Ռ. Թերիվել և Ֆ. Ուոլշ (2005թ.), «Ռազմավարական բնապահպանական գնահատման հրահանգի կիրառումը Միացյալ Թագավորությունում. Արդյունքների ամփոփում մեկ տարի անց», հանձնված է տպագրության «Environmental Impact Assessment Review» ամսագրում:

Ա1.4 ՌԲԳ-Ի ԿԻՐԱՌՄԱՆ ՈՒՂԵՆԻՇ-ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

19. Սույն ձեռնարկում առաջին հերթին մեր ուշադրության կենտրոնում են ՌԲԳ Արձանագրության, իսկ երկրորդ հերթին՝ ՌԲԳ հրահանգի, կիրառման կոնկրետ պահանջները: Այնուամենայնիվ, առանձնացվում են ՌԲԳ-ի կիրառման մի շարք ընդհանուր ուղենիշ-սկզբունքներ, որոնք կարող են օգտակար լինել: Դրանց շարքում են ազգային ուղեցույցներում կամ այս բնագավառի գրականության մեջ ամրագրված տարբեր դրույթներ: Ի լրումն այդ դրույթների, հղումներ են արվում Ազդեցության գնահատման միջազգային ընկերակցության (International Association for Impact Assessment) կողմից մշակված բարձրորակ ՌԲԳ գործընթացի կատարողական չափանիշներին (տե՛ս [հավելված Ա1.3](#)):
20. Չնայած որոշ տարբերություններին, ՌԲԳ հիմնարար սկզբունքների և դրանց արդյունավետ կիրառման համար պահանջվող գործողությունների միջև համապատասխանությունը նկատելի է: Ընդհանրությունների շարքում են՝
- ՌԲԳ պետք է իրականացվի պլանի կամ ծրագրի պատասխանատու մարմնի կողմից: Ցանկալի է, որ ՌԲԳ-ն ընդգրկվի պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում և համապատասխանի դրա ներքին տրամաբանությանը:
 - ՌԲԳ պետք է կիրառվի որոշումների կայացման հնարավորինս վաղ փուլում, երբ այլընտրանքային տարբերակները դեռևս կարող են հաշվի առնվել և քննարկվել:
 - ՌԲԳ պետք է կենտրոնացված լինի պլանի կամ ծրագրի կազմման համապատասխան փուլի կարևորագույն խնդիրների շուրջ, ինչի շնորհիվ գործընթացը կլինի առավել ծախսարդյունավետ, վստահելի և հաստատված ժամանակացույցին համապատասխան:
 - ՌԲԳ պետք է գնահատի այլընտրանքների բավականին լայն, սակայն ողջամիտ շրջանակ, այդ շրջանակը կախված կլինի որոշումների կայացման փուլերից: Այն պետք է հնարավորության սահմաններում հաստատի շրջակա միջավայրի պահպանման տեսանկյունից լավագույն իրագործելի տարբերակը:
 - ՌԲԳ պետք է գլխավոր շահառուների և հանրության մասնակցության հնարավորություններ ընձեռի՝ սկսած գործընթացի վաղ փուլերից և Արձանագրության հստակ սահմանված դրույթներին համապատասխան: Ցանկալի է, որ կիրառվեն թիրախային խմբերի պահանջները բավարարող խորհրդակցային դյուրօգտագործելի մեթոդներ:
 - ՌԲԳ պետք է իրականացվի վերլուծությանը համապատասխան և ըստ ծախսարդյունավետ մեթոդաբանության և միջոցների: Այն պետք է առկա տեղեկատվության, ժամանակացույցի և միջոցների սահմաններում բավարարի ամրագրված պահանջները. հավաքվող տեղեկատվության շրջանակներն ու ծավալը չպետք է գերազանցեն հիմնավորված որոշումների կայացման համար անհրաժեշտ պարամետրերը:
21. Այս ուղենիշ-սկզբունքները պետք է կիրառվեն համատեղ՝ փաթեթային տարբերակով, ՌԲԳ-ի վերը նկարագրված օգուտներն ու նպատակներն ապահովելու համար: Այս կերպ կիրառվելու դեպքում, նշված ուղենիշ-սկզբունքներն ապահովում են բարձրորակ գործընթաց, որը համապատասխանում է ՌԲԳ Արձանագրության տրամաբանությանը և բավարարում դրանում ամրագրված պահանջները: Իրավական դրույթներն անշուշտ հույժ կարևոր են ՌԲԳ գործընթացի նախագծման և կիրառման աշխատանքների ուղղորդման համար:

Ա1.5 ՄԻ ՇԱՐՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

22. Որպես եզրափակում հարկ է նշել, որ ՌԲԳ-ի դերի և շրջանակների տարբեր մեկնաբանություններ կան, որոնք գերազանցում են ՌԲԳ Արձանագրության սահմանները, թեև դրանք համընդհանուր համաձայնության առարկա չեն: Այստեղ դրանք ամփոփ ներկայացվում են այն պատճառով, որ դրանք այս ասպարեզում ընթացող քննարկման կամ վիճաբանության առարկա են և որ գործընթացների ձևավորման կամ որոշ երկրներում և միջազգային կազմակերպություններում առաջարկությունների հիմք են ծառայում:

Ա1.5.1 ՌԲԳ որպես կայունության ապահովման գործիք

23. Գլխավոր և վիճահարույց խնդիրներից մեկն այն է, թե արդյոք ՌԲԳ պետք է անմիջականորեն անդրադառնա պլանների և ծրագրերի (կամ այլ ռազմավարական գործողությունների) իրականացման կայունության հարցերին, թե կենտրոնանա միայն բնապահպանական հարցերի շուրջ: Առաջին դիրքորոշման դեպքում նշված մոտեցումն իրականացնելու վերաբերյալ մի շարք հիմնարար հարցադրումներ կան: Մույն ձեռնարկի համատեքստում հարկ էնք համարում առանձնացնել այս խնդիրների դիտարկման երկու ընդհանուր մոտեցում (նշված երկու ծայրակետերի միջև կարծիքների մեծ բազմազանություն կա).
- (1) ՌԲԳ պետք է միայն կամ հիմնականում անդրադառնա շրջակա միջավայրի վրա ազդեցություններին և կենտրոնանա օրենքի պահանջներին և հանրության կողմից ընդունված օրինակելի պրակտիկայի սկզբունքներին համապատասխան՝ արդեն համաձայնեցված գործողությունների իրականացման խնդիրների շուրջ: Այս կերպ գործընթացն առավելագույնս կնպաստի կայուն զարգացմանը: Սա կարելի է անվանել տիրապետող կամ գերակա դիրքորոշումը, որին հետևում են շատ ՌԲԳ վարչարարներ և կիրարկողներ: Այս դիրքորոշման տարբերակներից է շրջակա միջավայրի պահպանման համատեքստում որոշակի սոցիալական հարցերի ընդգրկումը: Որոշակի սոցիալական հարցեր, օրինակ առողջությունը և նյութական ունեցվածքը (բնակարանային պայմանները) արդեն իսկ շրջակա միջավայրի մասն են համարվում:
- (2) ՌԲԳ-ն ուղղակիորեն «առավելագույն փորձ» պետք է կատարի շրջակա միջավայրի վրա ազդեցություններից բացի կայունության ապահովման խնդիրներին անդրադառնալու ուղղությամբ, նույնիսկ հաշվի առնելով այս մոտեցման սահմանափակումները: Այս համատեքստում ներկայացվել են առաջարկներ ՌԲԳ-ի շեշտադրումը վերասահմանելու երկու հիմնական ուղղվածությամբ.
- Առաջարկված նախագծերի, ծրագրերի և այլ ռազմավարական գործողությունների բնապահպանական կայունության ապահովում, օրինակ՝ ազդեցության կարևորությունը գնահատելով մի կողմից նախագուշակական սկզբունքների շրջանակներում, իսկ մյուս կողմից՝ ապահով նվազագույն կամ շեմային չափանիշների հետ բաղդատման միջոցով: Ամրագրվում է հասցված վնասի (մնացորդային ազդեցության) փոխհատուցման կամ չեզոքացման ապահովման պահանջ: Այս մոտեցմանը, որը մշակվել է բնապահպանական գնահատման արդյունավետության միջազգային ուսումնասիրության շրջանակներում, հարում է սահմանափակ փոքրամասնություն, թեև դրա տարբեր բաղադրիչներ կիրառվում են ազգային և միջազգային մակարդակներում:
 - Առաջարկվող նախագծերի, պլանների, ծրագրերի և այլ ռազմավարական գործողությունների բնապահպանական, տնտեսական ու սոցիալական ազդեցության վերլուծությունը կամ կայունության ապահովմանն առնչվող հարցերի գնահատումը իրականացվում է այն ձևով, ինչպես այժմ, օրինակ, Միացյալ Թագավորությունում

տարածաշրջանային ու տեղական հողօգտագործման պլանավորման⁶ և քաղաքականության ու կանոնակարգման նախաձեռնությունների ազդեցությունների գնահատման ԵՀ ներքին գործընթացի շրջանակներում: Միացյալ Թագավորությունում կիրառվող մոտեցումը ՌԲԳ հրահանգի դրոշմների կիրառմանն ուղղված պլանավորման գործընթացի լայնածավալ բարեփոխման մասն է կազմում: Դա կարելի է դիտել որպես ՌԲԳ-ի և կայունության գնահատման միջև կապի գործնական ամրագրում:

Ա1.5.2 ՌԲԳ-ի և գնահատման համանման գործիքների միջև տրամաբանական կապերը

24. Չնայած վերջին զարգացումներին, Պլանների և ծրագրերի կայունության գնահատումը ներկայացնում է մի շարք ինստիտուցիոնալ և մեթոդաբանական դժվարություններ, որոնք հիմնականում սույն ձեռնարկի շրջանակներից դուրս են: Բայցևայնպես, ՌԲԳ Արձանագրությունն ամրագրում է սոցիալ-տնտեսական գնահատման հետ մի շարք կապեր՝ ընդգծելով, որ դրանք բխում են նույն վերլուծական, անալիտիկ տրամաբանությունից, թեև տարբեր բովանդակային շեշտադրումներ ունեն: ՌԲԳ Արձանագրությունը նաև համահունչ է կայուն զարգացման ինտեգրացված գնահատմանն ու պլանավորման հիմնարար սկզբունքներին, որոնք ամրագրված են Միացյալ Ազգերի Կազմակերպության Բնապահպանական ծրագրի (ՄԱԿ ԲԾ)⁷ կողմից մշակված շրջանակում: Այս շրջանակի փորձարկման նպատակով նախաձեռնված մի շարք փորձնական նախագծերի իրականացումը հստակեցրել է գնահատման տարբեր գործիքների փոխկապակցման հնարավորությունները: Դրանք ընդհանուր գծերով ներկայացված են ստորև բերված Աղյուսակ Ա1.1-ում, որտեղ ցույց է տրվում, թե ՌԲԳ ինչպես կարելի է փոխկապակցել սոցիալ-տնտեսական կամ կայունության գնահատումների հետ: Այս համատեքստում, իհարկե, նման մոտեցման շրջանակներում նախաձեռնված ՌԲԳ գործընթացը պետք է լիովին համապատասխանի ՌԲԳ Արձանագրության հիմնարար նպատակին և պահանջներին:

Ա1.5.3 ՌԲԳ որոշումների կայացման ռազմավարական մակարդակում

25. Որոշումների կայացման ռազմավարական մակարդակներում ՌԲԳ-ի կիրառման անհրաժեշտությունն ու մեթոդաբանությունը շարունակում է մնալ վիճահարույց: Գրականությունում ներկայացվել են խիստ փաստարկներ առ այն, որ ՌԲԳ կիրառվի ռազմավարական նշանակության առաջարկների բոլոր տեսակների նկատմամբ՝ սկսած քաղաքականության ձևակերպման բարձրագույն մակարդակից և, մասնավորապես, եթե դա կազմում է պլանների ու ծրագրերի ընդհանուր համատեքստ կամ շրջանակ: Այնուամենայնիվ, այս դիրքորոշման շուրջ համընդհանուր համաձայնություն չկա: ՌԲԳ կիրառող բազմաթիվ մասնագետների փորձը ցույց է տալիս, որ ընդհանրապես առանձին երկրներում մասնավորապես այս գործընթացը խաթարող գործնական և ինստիտուցիոնալ խոչընդոտներ կան: Քաղաքականության մշակման տարբեր փուլերում ՌԲԳ-ի կիրառման վերաբերյալ կարծիքների բազմազանություն կա: Առանձնացվում է այն փաստը, որ նախագծի և ծրագրի կազմման համեմատությամբ, այս գործընթացը հաճախ կրկնողական բնույթի է և ճկուն:

⁶ Միացյալ Թագավորություն, «Տարածաշրջանային տարածքային ռազմավարությունների կայունության գնահատում և տեղական զարգացման փաստաթղթեր» (Լոնդոն, փոխվարչապետի գրասենյակ, 2005թ.): Ձեռնարկված է <http://www.communities.gov.uk/documents/planningandbuilding/pdf/practicalguidesea.pdf> կայքէջում:

⁷ ՄԱԿ ԲԾ (2004թ) «Ինտեգրացված գնահատում և կայուն զարգացման պլանավորում. Փորձնական նախագծերի ուղեկիշներ», ՄԱԿ ԲԾ, Ժնև, զետեղված է <http://www.unep.ch/etb/events/Events2005/midTermReview/IAPGuidePilPro.pdf> կայքէջում:

26. ՌԲԳ Արձանագրությունը խրախուսում է, սակայն Արձանագրությունն ընդունած կողմերին չի պարտադրում հետևել, որ շրջակա միջավայրի պահպանման հարցերը հավուր պատշաճի ընդգրկվեն քաղաքականության և օրենքների մշակման գործընթացներում՝ հաշվի առնելով դրանց սկզբունքներն ու բովանդակային տարրերը (լրացուցիչ տեղեկատվության համար տե՛ս գլուխ Ա6): ԵՏՀ մի շարք անդամ պետություններ, ինչպես նաև ԵՀ, արդեն կիրառում են ՌԲԳ համակարգեր կամ դրան գրեթե համարժեք գնահատման գործընթացներ, որոնք վերաբերում են քաղաքականության ու օրենքների մշակման գործընթացներին: Այս ուղղությամբ փորձը նույնքան ծավալուն չէ, որքան պլանների ու ծրագրերի ՌԲԳ իրականացման ուղղությամբ, սակայն աննշան էլ չէ: Առանձին երկրներում քաղաքականության մակարդակում ՌԲԳ-ի կիրառման օրինակների նկարագրությունը տրված է Չեխիայի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից պատրաստված հատորում, որը ներկայացվում է որպես տվյալ ձեռնարկի հավելում⁸: Հատորում նաև ընդգրկված է հասկացությունների ամփոփ անդրադարձ, որը ցույց է տալիս, թե ՌԲԳ Արձանագրության հիմնական բաղադրիչներն ինչպես կարող են կիրառվել քաղաքականության կամ օրենսդրության համատեքստում, ինչպես նաև այլ հնարավոր մոտեցումներ: Այս նյութը և մասնավորապես ԵՏՀ յոթ անդամ պետությունների ազգային փորձի վերլուծությունները կարող են հետաքրքրել նրանց, ովքեր ուզում են առավել լայն համատեքստում ՌԲԳ Արձանագրության պահանջների կիրարկման մասին պատկերացում կազմել:

Աղյուսակ Ա.1.1 ՌԲԳ-ի հիմնական խնդիրների, սոցիալական և տնտեսական գնահատումների և կայունության գնահատումների միջև տրամաբանական կապերը⁹

ՌԲԳ	Սոցիալական և տնտեսական գնահատումներ	Կայունության գնահատում
Շրջակա միջավայրի նախնական վիճակ	Սոցիալական և տնտեսական նախնական վիճակ	Ջարգացման ընթացիկ ուղղությունների և ձևերի կայունության գնահատում
Շրջակա միջավայրի պահպանման համապատասխան նպատակների ամրագրում և պլանների ու ծրագրերի կազմման շրջանակներում դրանց ընդգրկման գնահատում	Համապատասխան սոցիալական և տնտեսական նպատակների ամրագրում և պլանների ու ծրագրերի կազմման շրջանակներում դրանց ընդգրկման գնահատում	Կայունության համապատասխան նպատակների ու սկզբունքների ամրագրում և պլանների ու ծրագրերի կազմման շրջանակներում դրանց ընդգրկման գնահատում
Շրջակա միջավայրի վրա առաջարկվող տարբերակների ազդեցությունների գնահատում և դրանց լավարկման (օպտիմալացման)	Առաջարկվող տարբերակների տնտեսական և սոցիալական ազդեցությունների գնահատում և դրանց լավարկման (օպտիմալացման)	Առաջարկվող տարբերակների տնտեսական, սոցիալական և բնապահպանական ազդեցությունների գնահատում՝ հաշվի առնելով

⁸ Բ. Սադլեր, խմբ., «Ռազմավարական բնապահպանական գնահատումը քաղաքականության մակարդակում. վերջերս գրանցված առաջընթաց, ներկա կարգավիճակ և ապագայի հեռանկարներ» (Պրագա, Չեխիայի Հանրապետության բնապահպանության նախարարություն, 2005թ.): Ձեռնեղված է <http://www.unece.org/env/eia/documents/PolicySEA/SEA of Policies volume.pdf> կայքէջում:

⁹ Համանման կապերի առավել ընդարձակ քննարկման համար տե՛ս «Ռազմավարական բնապահպանական գնահատման կիրառում» վերտառությամբ ՏՀԶԿ հրատարակությունը, հղում 3:

միջոցների սահմանում	միջոցների սահմանում	կայուն զարգացման միտումները և նվազագույն պահանջները, առաջարկելով շահավետ կամ նվազագույն խնդիրների հանգեցնող տարբերակներ
Զգալի բացասական ազդեցությունների նվազեցման միջոցառումների և պլանի կամ ծրագրի իրականացման ընթացքում դրանց իրականացման մշտադիտարկման ամփոփ նկարագիր	Զգալի բացասական ազդեցությունների նվազեցման միջոցառումների և պլանի կամ ծրագրի իրականացման ընթացքում դրանց իրականացման մշտադիտարկման ամփոփ նկարագիր	Զգալի բացասական ազդեցությունների նվազեցման միջոցառումների և պլանի կամ ծրագրի իրականացման ընթացքում դրանց իրականացման մշտադիտարկման ամփոփ նկարագիր

Գլուխ Ա2

ՌԲԳ-ի ԸՆԴԳՐԿՈՒՄԸ ՊԼԱՆՆԵՐԻ ԵՎ
ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ա2.1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արձանագրության տեքստում օգտագործվում է «շրջակա միջավայրը, այդ թվում՝ առողջությունը» տերմինը: Կրկնողությունից խուսափելու նպատակով սույն ձեռնարկում նշվում է միայն շրջակա միջավայրը, սակայն պետք է համարել, որ այդ հասկացության մեջ ընդգրկված է նաև առողջությունը: Առողջապահական հարցերի շուրջ լրացուցիչ տեղեկատվության համար, տե՛ս հավելված Ա.1.1:

1. Այս գլխում անդրադարձ է կատարվում, թե պլանի կամ ծրագրի ՌԲԳ ինչպես կարելի է միավորել կամ փոխկապակցել պլանի կամ ծրագրի կազմման գործընթացին:
2. Այս գլխում, հետևաբար, դիտարկման առարկա են կոնկրետ պլանի կամ ծրագրի կազմման համատեքստում Արձանագրության կիրառման հիմնական հարցերը: Գլուխը բաղկացած է երեք հատվածից՝
 - **Հատված Ա2.2**-ում տրված է պլանի կամ ծրագրի կազմման տիպիկ գործընթացի նկարագրությունը: Այնուհետև անդրադարձ է կատարվում Արձանագրությունում ամրագրված ՌԲԳ հիմնական բաղադրիչներին, ուսումնասիրվում է Արձանագրության արդյունավետ կիրառման համար պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում ՌԲԳ ընդգրկելու անհրաժեշտության հարցը (ընդգրկման արդյունքում ստացված օգուտները առավել մանրամասն քննարկվում են քաղաքականության և օրենսդրության հարցերին նվիրված **գլուխ Ա6**-ում): Այս հատվածի եզրափակիչ մասում ներկայացվում են պլանի կամ ծրագրի կազմման գործընթացների և ՌԲԳ-ի միջև տրամաբանական կապերը: Այս ընդհանուր կապերը դիտվում են որպես այս երկու գործընթացները համակարգելու և ՌԲԳ-ն պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում ներառելու հնարավորության ելակետեր:
 - **Հատված Ա2.3**-ում քննարկվում է, թե այս կապերն ինչպես կարելի է որոշել պլանի կամ ծրագրի կազմման ոչ թե տեսական, այլ գործնական գործընթացում: Ի մի են բերվում նաև ՌԲԳ պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում ընդգրկելու մի շարք գործնական պատճառներ:
 - Գլխի եզրափակիչ **հատված Ա2.4**-ում քննարկվում է ՌԲԳ-ի ինտեգրման երեք տարբերակ՝ ապահիտեգրում, մասնակի ինտեգրում և լիակատար ինտեգրում:


Ա2.2 ՊԼԱՆՆԵՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ, ՌԲԳ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

3. Այս հաստատումը քննարկվում է նախագծի և ծրագրի կազմման գործընթացի սովորական գործողությունները, այնուհետև՝ պլանների և ծրագրերի ՌԲԳ հիմնական բաղադրիչները: Հատվածի եզրափակիչ մասում ուսումնասիրվում են մի կողմից պլանի և ծրագրի կազմման առաջադրանքների միջև տրամաբանական կապերը, իսկ մյուս կողմից՝ ՌԲԳ բաղադրիչները: Հատված Ա2.3 և Հատված Ա2.4 այս կապերը վերլուծում են առավել խորությամբ, քննարկվում են ՌԲԳ պլանի և ծրագրի կազմման գործընթացում ընդգրկելու ուղիներ:

Ա2.2.1 Պլանի և ծրագրի կազմման գործընթացի սովորական առաջադրանքները

4. Նախագծի և ծրագրի կազմման գործընթացը ստովորաբար կրկնողական բնույթ ունի և ներառում է հետևյալ առաջադրանքները (տե՛ս ստորև տրված նկար Ա2.1-ը).
 - **Պլանի կամ ծրագրի ընդգրկման շրջանակները սովորաբար հաստատվում են** սկզբնական փուլում, երբ որոշվում են համապատասխան պլանի կամ ծրագրի ակնկալվող բնույթը, ընդհանուր նպատակները և լուծելիք խնդիրները:
 - **Համատեքստի և սկզբնական վիճակի վերլուծությունը** սովորաբար ներառում է զարգացման կարևոր ընթացիկ միտումների, հետագա զարգացման սահմանափակումների ու հնարավորությունների և պլանի ու ծրագրի շրջանակներում լուծվելիք կոնկրետ խնդիրների ուսումնասիրությունը:
 - Պլանի կամ ծրագրի այլընտրանքային տարբերակների մշակումը և համեմատությունը հաճախ կատարվում է պլանի կամ ծրագրի ոչ պարտադիր կամ այլընտրանքային նպատակների, պլանի կամ ծրագրի շրջանակներում առաջարկված այլընտրանքային առաջնահերթությունների, այդ նպատակների իրագործման գործողությունների տարբերակների կամ իրականացման տարբեր ձևաչափերի (օրինակ՝ համապատասխան գործողությունների հաստատման չափորոշիչներ, հետագա գնահատումների տեխնիկական առաջադրանքի տվյալներ և այլն) ուսումնասիրության միջոցով:
 - Փաստաթղթերի ձևակերպման շրջանակներում սահմանվում են պլանի կամ ծրագրի իրականացման պատասխանատվության ու դերերի, ինչպես նաև մշտադիտարկման ձևաչափի մանրամասները:
 - Համապատասխան պատասխանատու մարմինների և հանրության հետ խորհրդակցությունը:
 - Պլանի կամ ծրագրի նախնական տարբերակն այնուհետև վերջնական տեսքի է բերվում համապատասխան որոշմամբ հաստատվելու համար:
5. Վերոնշյալ առաջադրանքներն ընդամենը բերված են որպես օրինակ և հստակ սահմանված քայլերի հաջորդականություն չեն ներկայացնում: Իրականում տարբեր քայլեր կարող են միատեղվել կամ հաստատված իրականացվել ըստ տվյալ պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի կամ ֆորմալ ընթացակարգային փուլերի տրամաբանական պահանջների: Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի ներքին տրամաբանությունը, առաջադրանքները և ֆորմալ փուլերը որոշվում են պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի վերլուծության միջոցով, ինչպես ամփոփ ներկայացվում է ստորև բերված [ենթակետ Ա2.3.1](#)-ում:

Նկար Ա.2.1: Պլանի և ծրագրի կազմման սովորական առաջադրանքները



Ա.2.2.2 Պլանների և ծրագրերի ՌԲԳ բաղադրիչները

6. Արձանագրությունը պլանների և ծրագրերի ՌԲԳ-ի իրականացման գործընթացը սահմանում է Հոդվածներ 6-12-ի շրջանակներում.
 - Բնապահպանական հաշվետվության բովանդակային ընդգրկումը որոշելու նպատակով աշխատանքների շրջանակների սահմանում, **Scoping** (հոդված 6):
 - Բնապահպանական հաշվետվություն (հոդված 7):
 - Հանրության մասնակցություն (հոդված 8):
 - Բնապահպանության և առողջապահության հարցերի պատասխանատու մարմինների հետ խորհրդակցություն (հոդված 9):
 - Անդրասահմանային խորհրդակցություններ (հոդված 10):
 - Պլանի կամ ծրագրի հաստատման որոշում (հոդված 11):
 - Ազդեցությունների մշտադիտարկում (հոդված 12):
7. Թեև սույն ձեռնարկում տրված նկարագրությունը երբեմն կենտրոնացված է գործընթացի իրականացման հարցերի շուրջ, վերևում տրված բաղադրիչները պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում ընդգրկված տարրեր են (ինչպես նկարագրվում է այս գլխի հետագա հատվածներում) և ոչ թե զուգահեռ գործընթացներ:
8. Այս ինտեգրումն անհրաժեշտություն է, հակառակ դեպքում ՌԲԳ-ն պլանի կամ ծրագրի մշակման վրա ազդող գործիք չի լինի, ինչպես ամրագրված է Արձանագրությունում:

- Արձանագրության առաջաբանում ամրագրված է «ռազմավարական բնապահպանական գնահատումը պետք է կարևոր դեր խաղա պլանների, ծրագրերի և համապատասխան դեպքերում, նաև քաղաքականությունների և օրենսդրությունների մշակման ու ընդունման գործընթացներում» դրույթը:
- Հոդված 1-ում նշվում է, որ Արձանագրության նպատակն է՝ «ապահովել շրջակա միջավայրի, այդ թվում՝ առողջապահության բարձր մակարդակ ... պլանների և ծրագրերի մշակման գործընթացում համապատասխան բնապահպանական, այդ թվում՝ առողջապահական հարցերի մանրագնի ուսումնասիրության միջոցով»:
- Հոդված 2.6¹⁰-ը ՌԲԳ սահմանում է որպես գործընթաց, որը չի սահմանափակվում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների պարզ գնահատմամբ և հաշվի է առնում «պլանի կամ ծրագրի շրջանակներում նախաձեռնված բնապահպանական հաշվետվության, հանրության մասնակցության և խորհրդակցությունների արդյունքները»:
- Հոդված 11-ն ամրագրում է պահանջն առ այն, որ Արձանագրությունն ընդունած յուրաքանչյուր կողմ պետք է հետևի, որ նախագիծը կամ ծրագիրն ընդունելիս հաշվի առնվեն բնապահպանական հաշվետվության եզրակացությունները, սակայն «բնապահպանական հաշվետվության եզրակացություններ» տերմինի սահմանումը տրված չէ: Բնապահպանական հաշվետվությունը կարող է տարբեր եզրակացություններ պարունակել, օրինակ՝ պլանի կամ ծրագրի շրջանակներում շրջակա միջավայրի նախնական վիճակի, պլանի կամ ծրագրի բնապահպանական նպատակների, շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունների կանխման, նվազեցման կամ չեզոքացման միջոցառումների, պլանի կամ ծրագրի այլընտրանքային տարբերակների ընտրության հիմնավորման և մշտադիտարկման վերաբերյալ եզրակացություններ: Դժվար է պատկերացնել, թե ինչպես կարելի է այս բոլոր տարատեսակ եզրակացությունները հաշվի առնել և ներառել պլանի կամ ծրագրի վերջում կայացվող մեկ որոշման, այսինքն՝ պլանի կամ ծրագրի կազմման գործընթացը եզրափակող ֆորմալ որոշման մեջ: Հետևաբար, առաջարկում ենք, որ բնապահպանական հաշվետվության տարբեր եզրակացությունները, ըստ դրանց ներկայացման ժամանակացույցի, հաշվի առնվեն պլանի կամ ծրագրի մշակման գործընթացում, ինչպես նաև՝ պլանը կամ ծրագիրն ընդունելիս դրանց համապատասխան կշիռ տրվի: ՌԲԳ հրահանգի դրույթներն այս դեպքում ավելի հստակ են ձևակերպված. հրահանգի Հոդված 8-ն ամրագրում է պահանջն առ այն, որ բնապահպանական հաշվետվության և խորհրդակցության արդյունքները պետք է հաշվի առնվեն «պլանի կամ ծրագրի նախապատրաստման ընթացքում և մինչև դրա ընդունումը կամ օրենսդրական հաստատման ներկայացումը»:

9. ՌԲԳ բաղադրիչներն ամփոփ ներկայացված են ստորև տրված Աղյուսակ Ա2.1-ում և դրան հաջորդող նկար Ա2.2-ում: Այս բաղադրիչների առավել մանրամասն նկարագրությունը տրված է **Գլուխ Ա4**-ում, որտեղ ուշադրությունը կենտրոնացված է պլանների և ծրագրերի ՌԲԳ-ի շուրջ: Այս գլխում ուսումնասիրվում է, թե այս բաղադրիչներն ինչպես կարելի է ընդգրկել նախագծի և ծրագրի կազմման գործընթացում:


¹⁰Սույն ձեռնարկում հղվող հոդվածների X.Y (կամ հոդված X.Y) ձևաչափում, X-ը հոդվածն է, իսկ Y-ը՝ պարբերությունը:

Աղյուսակ Ա2.1: ՌԲԳ բաղադրիչները

Բաղադրիչ	Նկարագրություն
Պլանի կամ ծրագրի շրջանակների որոշում, (Scoping)	Պլանը կամ ծրագիրը ՌԲԳ-ի ենթակա լինելու փաստն ամրագրելուց հետո առաջին քայլը բնապահպանական հաշվետվության շրջանակների որոշումն է: Հաշվետվության շրջանակների որոշումը նաև ենթադրում է հաշվետվության նախապատրաստման համար անհրաժեշտ վերլուծությունների շրջանակների սահմանում: Շրջանակների սահմանումը հնարավորություն է ընձեռում հաշվետվությունը կենտրոնացնել կարևորագույն հարցերի շուրջ՝ այն դարձնելով հանրությանը, պատասխանատու մարմիններին և որոշումներ կայացնողներին առավել օգտակար: Հաշվետվության շրջանակների հետագա փոփոխությունները չեն բացառվում, եթե դրանց անհրաժեշտությունն ակնհայտ դառնա հետագա փոփոխում: Բնահապանության և առողջապահության պատասխանատու մարմինները, հաշվետվության շրջանակները որոշելիս, պետք է պարտադիր հրավիրվեն խորհրդակցությունների: Մասնակցության հնարավորություն կարող է ընձեռվել նաև հանրությանը:
Բնապահպանական հաշվետվություն	Երկրորդ բաղադրիչը բնապահպանական հաշվետվության նախապատրաստումն է (հաստատված շրջանակներին համապատասխան): Հաշվետվությունը շրջակա միջավայրի վրա պլանի կամ ծրագրի ազդեցությունների մասին տեղեկատվություն է տրամադրում հանրությանը և խորհրդակցություններին մասնակցած պատասխանատու մարմիններին:
Հանրության մասնակցություն	Երրորդ բաղադրիչը հանրության մասնակցությունն է: Հանրության մասնակցությունը կարելի է ապահովել նույնիսկ բնապահպանական հաշվետվության շրջանակների որոշման փուլում կամ էլ տվյալ պլանի կամ ծրագրի նկատմամբ Արձանագրության համաձայն ՌԲԳ-ի կիրառման անհրաժեշտությունը որոշելիս (տե՛ս Գլուխ Ա3): Պլանի կամ ծրագրի նախնական տարբերակը և բնապահպանական հաշվետվությունը պետք է ներկայացվեն հանրությանը, առարկություններ կամ վերապահումներ ունեցող անձինք պետք է հրավիրվեն խորհրդակցության և նրանց պլանի կամ ծրագրի նախնական տարբերակի և բնապահպանական հաշվետվության վերաբերյալ կարծիք հայտնելու հնարավորություն ընձեռվի:
Խորհրդակցություն	Չորրորդ բաղադրիչը բնապահպանության և առողջապահության պատասխանատու մարմինների հետ խորհրդակցությունն է: Այս մարմիններին պետք է հնարավորություն ընձեռվի պլանի կամ ծրագրի նախնական տարբերակի և բնապահպանական հաշվետվության վերաբերյալ իրենց կարծիքը հայտնել: Խորհրդակցությունը և հանրության մասնակցությունը կարող են կազմակերպվել նույն ժամանակահատվածում (հանրության և պատասխանատու մարմինների խորհրդակցությունը կազմակերպվում է համատեղ՝ համաձայն ՌԲԳ հրահանգի հոդված 6-ի):
Անդրսահմանային խորհրդակցություններ	Եթե պարզվում է, որ նախագիծը կամ ծրագիրը կարող է եսկան անդրսահմանային (Արձանագրությունն ընդունած այլ երկրի վրա) ազդեցություններ ունենալ կամ եթե հնարավոր ազդեցությունների ենթակա երկիրը պահանջում է, ապա համապատասխան կողմը կամ կողմերը պետք է այդ մասին ծանուցվեն և հրավիրվեն խորհրդակցությունների: Այս անդրսահմանային խորհրդակցությունները, որոնք պետք է կազմակերպվեն նույն ժամանակահատվածում, ինչ հանրության մասնակցությունը և պատասխանատու մարմինների հետ խորհրդակցությունները, պետք է հնարավորություն ընձեռեն վերապահումներ ունեցող հանրությանը և ազդեցությունների ենթակա երկրի բնապահպանության և առողջապահության պատասխանատու մարմիններին արտահայտելու

	<p>պլանի կամ ծրագրի նախնական տարբերակի և բնապահպանական հաշվետվության մասին իրենց կարծիքը:</p>
Որոշման կայացում	<p>Վեցերորդ բաղադրիչը պլանի կամ ծրագրի ընդունման որոշման կայացումն է: Այս որոշումը պետք է հաշվի առնի բնապահպանական հաշվետվությունը և վերապահումներ ունեցող անձանց ու թե՛ ներքին և թե՛ Արձանագրությունը ստորագրած և տվյալ պլանի կամ ծրագրի ազդեցությունը կրող այլ երկրի պատասխանատու մարմինների արտահայտած կարծիքները: Որոշում կայացնողը պետք է ներկայացնի ծանուցագիր, որտեղ պետք է ամփոփ բացատրի, թե այդ տեղեկատվությունն ինչպես է հաշվի առնվել նախապատրաստական գործընթացներում և թե ինչու է պլանը կամ ծրագիրն ընդունվել տվյալ տեսքով՝ իրագործելի, ողջամիտ այլընտրանքների առկայության դեպքում: Ընդունված նախագիծը կամ ծրագիրը, որոշումն ու հիմնավորումը պետք է հասանելի լինեն հանրությանը:</p>
Մշտադիտարկում	<p>Վերջին բաղադրիչը մշտադիտարկումն է: ՌԲԳ չի եզրափակվում պլանի կամ ծրագրի ընդունման որոշմամբ: Պլանի կամ ծրագրի իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա նշանակալի ազդեցությունները պետք է ենթակա լինեն մշտադիտարկման, որպեսզի անկանխատեսելի բացասական ազդեցություններ գրանցելու դեպքում իրավիճակը շտկելու համապատասխան գործողություններ նախաձեռնվեն: Մշտադիտարկման արդյունքները պետք է հասանելի լինեն պատասխանատու մարմիններին և հանրությանը:</p>


Նկար Ա2.2: Պլանների և ծրագրերի ՌԲԳ բաղադրիչները




Ա2.2.3 Նախագծի և ծրագրի կազմման և Արձանագրության պահանջների միջև տրամաբանական կապերը

10. Ստորև բերված պարզեցված և իդեալականացված գծապատկերը (Նկար Ա2.3) ցույց է տալիս ՌԲԳ-ի և պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում հաճախ իրականացվող առաջադրանքների միջև հնարավոր տրամաբանական կապերը: Բայցնայնպես, այս գծապատկերն ընդամենը ցուցադրական օրինակ է, քանի որ պլանի կամ ծրագրի կազմման բազմաթիվ գործընթացների դեպքում առաջադրանքների հաջորդականությունը նույնքան հստակ սահմանված չէ: Իրականում նշված առաջադրանքներից մի քանիսը կարող են անտեսվել, կամ այս գծապատկերում չընդգրկված լրացուցիչ առաջադրանքներ ավելացվեն: Բացի այդ, գծապատկերը լիարժեք կերպով չի ներկայացնում խորհրդակցություններն ու հանրության մասնակցությունը, քանի որ վերջիններս կարող են կազմակերպվել որպես պլանի կամ ծրագրի մշակման անկապտելի մաս, կամ էլ՝ որպես ՌԲԳ գործընթացի շրջանակներում Արձանագրությամբ հստակ սահմանված փուլեր:
11. Թեև պլանի կամ ծրագրի կազմման գործընթացը և ՌԲԳ բնականորեն տարբեր նպատակներ են հետապնդում, այսինքն պլանի կամ ծրագրի կազմման նպատակը պլանի կամ ծրագրի մշակումն է, իսկ ՌԲԳ նպատակաուղղված է բարելավման նպատակով պլանի կամ ծրագրի վերլուծությանը, երկու գործընթացների հիմքում էլ ընկած է նույնանման վերլուծական մտածելակերպ: Ըստ էության, թե՛ պլանի կամ ծրագրի մշակման և թե՛ ՌԲԳ-ի իրականացման գործընթացները պետք է՝
- որոշեն այս հիմնական հարցերի շրջանակը, որոնք պետք է հաշվի առնվեն պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում,
 - վերլուծեն պլանի կամ ծրագրի համատեքստը և հնարավոր հետագա միտումները, եթե տվյալ նախագիծը կամ ծրագիրը չիրականացվի,
 - առաջարկեն օպտիմալ այլընտրանքային տարբերակներ,
 - առաջարկեն մշտադիտարկման և կառավարման օպտիմալ համակարգեր,
 - համապատասխան մարմիններին, հանրությանը և որոշումներ կայացնողներին տրամադրեն պլանի կամ ծրագրի և դրա հնարավոր ազդեցությունների մասին տեղեկատվություն:

Նկար Ա2.3: Պլանների ու ծրագրերի կազմման խնդիրների և ՌԲԳ տարրերի տրամաբանական կապերը





Նշում. հանրության մասնակցությունը, պատասխանատու մարմինների և անդրսահմանային խորհրդակցությունները լիարժեք ձևով ներկայացված չեն այս պարզեցված գծապատկերում

12. Ստորև բերված Աղյուսակ Ա.2.2 ամփոփ ներկայացնում է պլանի կամ ծրագրի կազմման և ՌԲԳ-ի իրականացման միջև հիմնական տրամաբանական կապերը:
13. Պլանի և ծրագրի կազմման գործընթացների և գնահատման համակարգերի ձևավորումը տարբեր ուղիներով են ընթացել Արևելյան Եվրոպայում, Կովկասում և Կենտրոնական Ասիայում: Մի կողմից, Արձանագրության համաձայն՝ ՌԲԳ-ի կիրառման, իսկ մյուս կողմից՝ այս ենթատարածաշրջանում պլանների ու ծրագրերի կազմման գործընթացների և գնահատման համակարգերի միջև կապերի ուսումնասիրությունն ամփոփված է Միացյալ Ազգերի Կազմակերպության Զարգացման ծրագրի (ՄԱԿ ԶԾ), Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (ՏԲԿ) և ԵՏՀ-ի համատեղ ուժերով հրատարակված նյութում¹¹: Արևմտյան Եվրոպայում ևս նկատվում է պլանների և ծրագրերի կազմման համակարգերի մեծ բազմազանություն:

¹¹Ձ. Դյուսիք, Չերփ, Ա. Յուրքևիքյութե, Հ. Մարթոնակովա և Ն. Բոնվոյզին, «ՌԲԳ Արձանագրություն. Նախկին Խորհրդային Միության առանձին երկրներում կարողության ամրապնդման սկզբնական շրջան» (ՏԲԿ, 2006թ.): Ձեռնդրված է http://www.unece.org/env/eia/documents/SEA_CBNA/UNDP-REC-UNECE_SEAbulletin_no.2_en.pdf կայքէջում:

Աղյուսակ Ա.2.2 Պլանների կամ ծրագրերի կազմման գործընթացի, ՌԲԳ-ի, պատասխանատու մարմինների հետ խորհրդակցությունների և հանրության մասնակցության միջև տրամաբանական կապերը

Քայլ	Պլանի կամ ծրագրի կազմման սովորական առաջադրանքները	Տրամաբանորեն համապատասխանող ՌԲԳ առաջադրանքները	ՌԲԳ շրջանակներում պատասխանատու մարմինների հետ խորհրդակցություններ, հանրությանը տեղեկատվության մատչելիության ապահովում և հանրության մասնակցություն
		ՌԲԳ իրականացնելու անհրաժեշտությունը կարելի է որոշել՝ հենվելով օրենքով ամրագրված պահանջների (օրինակ՝ պլանների և ծրագրերի ցանկ, որոնց դեպքում պարտադիր պահանջվում է ՌԲԳ-ի իրականացում) կամ Արձանագրության համաձայն ՌԲԳ-ի ենթակա պլանի կամ ծրագրի անհատական վերլուծության (տե՛ս Գլուխ Ա.3-ը) վրա:	Բնապահպանության և առողջապահության համապատասխան մարմինների հետ խորհրդակցում և հանրությանը տեղեկատվության տրամադրում
Շրջանակների որոշում	<p>Պլանի կամ ծրագրի շրջանակը (հաճախ հստակեցվում է պլանի կամ ծրագրի ֆորմալ մեկնարկման փուլում) պետք է որոշվի համաձայն օրենսդրության և այլն՝ կոնկրետ ուղեցույցների կամ խորհրդակցությունների միջոցով սահմանելով՝</p> <ul style="list-style-type: none"> • պլանի կամ ծրագրի ընդհանուր նպատակները • պլանի կամ ծրագրի և այլ նախագծերի ու ծրագրերի միջև կապերը • պլանի կամ ծրագրի շրջանակներում լուծվելիք ընդհանուր հարցերը 	<p>ՌԲԳ շրջանակները սահմանվում են հետևյալ կետերի հիման վրա.</p> <ul style="list-style-type: none"> • Պլանի կամ ծրագրի հավանական բովանդակությունն ու հիմնական նպատակները և տվյալ պլանի կամ ծրագրի կապերն այլ պլանների կամ ծրագրերի (հնարավոր է նաև՝ քաղաքականությունների) հետ¹² • տվյալ պլանին կամ ծրագրին առնչվող բնապահպանական խնդիրներ¹³ • տվյալ պլանին կամ ծրագրին առնչվող՝ միջազգային, ազգային և այլ մակարդակներում սահմանված բնապահպանական նպատակներ¹⁴ • Ուսումնասիրված այլընտրանքային տարբերակները և դրանց ընտրության ամփոփ հիմնավորումը¹⁵ • Շրջակա միջավայրի վրա՝ գնահատման ենթակա ազդեցությունների նախնական ցանկ¹⁶ 	<p>Խորհրդակցություններում ընդգրկվելիք պատասխանատու մարմինների և մասնակից հանրության որոշում</p> <p>Բնապահպանության և առողջապահության համապատասխան մարմինների հետ խորհրդակցում</p> <p>Ոչ պարտադիր պայման՝ Հանրության հետ խորհրդակցում</p>
Քայլ	Պլանի կամ ծրագրի կազմման սովորական առաջադրանքները	Տրամաբանորեն համապատասխանող ՌԲԳ առաջադրանքները	ՌԲԳ շրջանակներում պատասխանատու մարմինների հետ խորհրդակցություններ, հանրությանը տեղեկատվության

¹² ՌԲԳ Արձանագրություն, Հավելված IV, պարբերություն 1:

¹³ ՌԲԳ Արձանագրություն, Հավելված IV, պարբերություն 4:

¹⁴ ՌԲԳ Արձանագրություն, Հավելված IV, պարբերություն 5:

¹⁵ ՌԲԳ Արձանագրություն, Հավելված IV, պարբերություն 8:

¹⁶ ՌԲԳ Արձանագրություն, Հավելված IV, պարբերություն 6:

			մատչելիության ապահովում, հանրության մասնակցություն
Համատեքստի և նախնական վիճակի վերլուծություն	Համապատասխան պլանների ու ծրագրի և նախնական վիճակի տվյալների (գարգացման համապատասխան միտումների բնորոշ հատկանիշների) վերլուծում: Հետագա գարգացման հնարավորությունների և սահմանափակումների որոշում:	Շրջանակների որոշման փուլում առանձնացված հարցերի շուրջ նախնական վիճակի վերլուծությունների կենտրոնացում և հետևյալի վերլուծում. <ul style="list-style-type: none"> Նշանակալի ազդեցության ենթակա վայրերի բնապահպանական բնութագիր¹⁷ Շրջակա միջավայրի ներկա վիճակը և պլանը կամ ծրագիրը չիրականացնելու դեպքում շրջակա միջավայրի հավանական էվոյուցիան¹⁸ <i>Ոչ պարտադիր պայման՝</i> Հետագա փուլերում գնահատման շրջանակների լրացուցիչ հղկում	<i>Ոչ պարտադիր պայման՝</i> Համատեքստի և համապատասխան հարցերի շուրջ պատասխանատու մարմինների և հանրության հետ խորհրդակցում և ներկայացված կարծիքների արձանագրում
Այլընտրանքային տարբերակների մշակում և համեմատություն	Այլընտրանքային տարբերակների մշակումն ու համեմատությունը սովորաբար հենվում են հետևյալի վրա. <ul style="list-style-type: none"> կոնկրետ նպատակներ, որ տվյալ պլանը կամ ծրագիրը պետք է ապահովի այդ նպատակների իրագործմանն ուղղված գործողություններ առանձին գործողությունների իրագործումն օպտիմալացնելու միջոցառումներ 	Այլընտրանքային տարբերակների որոշման գործընթացում բնապահպանական նպատակների և այլ բնապահպանական նկատառումների քննարկման նկարագրում: Շրջակա միջավայրի վրա հավանական ազդեցությունների, այդ թվում՝ նշանակալի անդրահամայն ազդեցությունների գնահատում (տարբեր մեթոդներով, տե՛ս Գլուխ Ա.5) ¹⁹ : ՌԲԳ կարող է օգնել տարբերակների մշակման և համեմատության գործում՝ շրջակա միջավայրի վրա տվյալ պլանի կամ ծրագրի նշանակալի ազդեցությունների հիման վրա համապատասխան այլընտրանքային տարբերակները գնահատելու միջոցով: Նման գնահատումը կարող է հաստատել այլընտրանքային օպտիմալ տարբերակները և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխելու, նվազեցնելու կամ չեզոքացնելու գործողությունները ²⁰ : Այս գնահատումը կարող է նաև բացահայտել քննարկվող տարբերակներից նախընտրելի այլընտրանքային տարբերակները:	<i>Ոչ պարտադիր պայման՝</i> Այլընտրանքային տարբերակների շուրջ համապատասխան մարմինների և հանրության հետ խորհրդակցում և ներկայացված կարծիքների արձանագրում

¹⁷ ՌԲԳ Արձանագրություն, Հավելված IV, պարբերություն 3

¹⁸ ՌԲԳ Արձանագրություն, Հավելված IV, պարբերություն 2

¹⁹ ՌԲԳ Արձանագրություն, Հավելված IV, պարբերություններ 6 և 10

²⁰ ՌԲԳ Արձանագրություն, Հավելված IV, պարբերություն 7

Քայլ	Պլանի կամ ծրագրի կազմման սովորական առաջադրանքները	Տրամաբանորեն համապատասխանող ՌԲԳ առաջադրանքները	ՌԲԳ շրջանակներում պատասխանատու մարմինների հետ խորհրդակցություններ, հանրությանը տեղեկատվության մատչելիության ապահովում և հանրության մասնակցություն
Փաստաթղթերի ձևակերպում	<p>Պլանի կամ ծրագրի նախնական տարբերակի կազմում, այդ թվում՝</p> <ul style="list-style-type: none"> • իրականացման և մշտադիտարկման առաջարկվող ձևաչափը • պլանի կամ ծրագրի նախնական տարբերակի նկարագրությունը • պլանի կամ ծրագրի նախնական տարբերակի փաստաթղթային փաթեթը 	<p>Պլանի կամ ծրագրի նախնական տարբերակին կից բնապահպանական հաշվետվության նախապատրաստում և հրատարակում.</p> <p><input type="checkbox"/> այլընտրանքների մշակման գործընթացի արձանագրում</p> <p><input type="checkbox"/> գնահատման անցկացման, այդ թվում՝ գրանցված դժվարությունների արձանագրում</p> <p><input type="checkbox"/> պլանի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունների մշտադիտարկման միջոցառումների սահմանում²¹</p> <p>Սյս տեղեկատվության ոչ տեխնիկական տերմիններով ամփոփում և ներկայացում²²</p>	
Համապատասխան մարմինների և հանրության հետ խորհրդակցություններ	Խորհրդակցություն	Հանրության մասնակցություն, համապատասխան մարմինների հետ խորհրդակցություն և անդրսահմանային խորհրդակցություններ	<p>Պլանի կամ ծրագրի նախնական տարբերակի և բնապահպանական հաշվետվության տրամադրում հանրությանը և պատասխանատու մարմիններին:</p> <p>Պլանի կամ ծրագրի նախնական տարբերակի և բնապահպանական հաշվետվության հարցերի շուրջ պատասխանատու մարմինների և վերապահումներ ունեցող հանրության հետ խորհրդակցությունների կազմակերպում</p> <p>Ըստ անհրաժեշտության, Արձանագրությունը ստորագրած համապատասխան երկրների ծանուցում և խորհրդակցություն:</p> <p>Արտահայտված կարծիքների արձանագում՝ որոշումներ կայացնելիս դրանք հաշվի առնելու նպատակով:</p>

Քայլ	Պլանի կամ ծրագրի կազմման սովորական առաջադրանքները	Տրամաբանորեն համապատասխանող ՌԲԳ առաջադրանքները	ՌԲԳ շրջանակներում պատասխանատու մարմինների հետ խորհրդակցություններ,
------	---	--	--

²¹ ՌԲԳ Արձանագրություն, Հավելված IV, պարբերություն 9

²² ՌԲԳ Արձանագրություն, Հավելված IV, պարբերություն 11

			հանրությանը տեղեկատվության մատչելիության ապահովում և հանրության մասնակցություն
Որոշումների կայացում	Պլանի կամ ծրագրի վերաբերյալ պաշտոնական որոշումներ կայացնելիս հաշվի առնել բնապահպանական հաշվետվության և պատասխանատու մարմինների և հանրության կողմից արտահայտված կարծիքները		Համապատասխան մարմիններին (այդ թվում՝ բնապահպանության և առողջապահության պատասխանատու մարմիններին) և հանրությանը որոշման ծանուցում
Մշտադիտարկում	Պլանի կամ ծրագրի իրականացման մշտադիտարկում	Շրջակա միջավայրի մշտադիտարկում	Մշտադիտարկման արդյունքների տրամադրում հանրությանը և պատասխանատու մարմիններին

Ա2.3 ՊԼԱՆԻ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՈՒՄ ՌԲԳ-Ի ԸՆԴՊՐԿՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

14. Հատված Ա2.2-ում քննարկվում են տեսական իրավիճակներ: Այս հատվածում անդրադարձ է կատարվում պլանների և ծրագրերի կազմման գործնական հարցերին և պլանների ու ծրագրերի կազմման գործընթացներում ՌԲԳ-ի ընդգրկման որոշ գործնական հիմնապատճառներին:

Ա2.3.1 Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի և ՌԲԳ-ի միջև գործող կապերի որոշում

ՊԼԱՆՆԵՐԻ ԿԱՍ ԾՐԱԳՐԵՐԻ կազմման գործընթացի վերանայում

15. Ինչպես նշվում է Հատված Ա2.2-ում, յուրաքանչյուր պլանի կամ ծրագրի կազմման գործընթաց տարբեր է, որոշ դեպքում գործընթացները կազմակերպվում են ըստ Արձանագրության հստակ սահմանված դրույթների (օրինակ՝ տարածքի օգտագործման պլանավորում, գետավազանային կառավարում, մերձափնյա գոտիների կառավարում), սակայն պլանների և ծրագրերի կազմման այլ գործընթացների (օրինակ՝ թափոնների կառավարում, էներգետիկ ռեսուրսների պլանավորում) հիմքում կարող են դրվել ոչ նույնքան հստակ ձևով սահմանված մոտեցումներ:
16. Հետևաբար, պլանների և ծրագրերի կազմման գործընթացներում ՌԲԳ-ի ընդգրկման օպտիմալ կետերը դժվար է առանձնացնել առանց տվյալ պլանի կամ ծրագրի կազմման գործընթացների այն համակարգերի մանրամասն տվյալների իմացության, որոնց ՌԲԳ պետք է համահունչ լինի: Համապատասխան տվյալների իմացությունը կարելի է ապահովել պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի վերանայման, վերաքննության միջոցով, ինչը կարող է կազմակերպվել երկու տարբեր մակարդակներում.
- Ընթացակարգերի (օրինակ՝ պլանների կամ ծրագրերի կազմման տվյալ ոլորտում գործող ընթացակարգային և մեթոդաբանական պահանջների) վերանայումը կարող է օգտակար լինել պլանների կամ ծրագրերի կազմման ձևաչափերի տարածվածության մակարդակը որոշելու հարցում: Այն կարող է օգտակար լինել, օրինակ, որոշակի պլանի կամ ծրագրի կազմման ընթացակարգի համար ՌԲԳ կոնկրետ ուղենիշներ մշակելու գործում:
 - Կոնկրետ պլանի կամ ծրագրի (օրինակ անտառային տնտեսության պլանի) կազմման գործընթացի վերանայումը կարող է օգտակար լինել նույնօրինակ պլանների և ծրագրերի կազմման շրջանակներում ՌԲԳ-ի կիրառման կոնկրետ մոտեցում մշակելու համար:

Վերանայման շրջանակներում շեշտադրվող հարցերի առաջադրում

17. Որոշակի պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում ՌԲԳ-ի ընդգրկման սկզբնակետերը որոշելու համար նախընտրելի է վերանայել հետևյալը՝
- Պլանի կամ ծրագրի կազմման ֆորմալ կամ ոչ ֆորմալ տրամաբանությունը և պլանի կամ ծրագրի կազմման գլխավոր առաջադրանքների հաջորդականությունը
 - Պլանի կամ ծրագրի կազմման տվյալ գործընթացի շրջանակներում սովորաբար կիրառվող բնապահպանական վերլուծություններ
 - Պլանի կամ ծրագրի կազմման շրջանակներում բնապահպանության և առողջապահության պատասխանատու մարմինների հետ խորհրդակցություն
 - Տեղեկատվության մատչելիությունը և պլանի կամ ծրագրի կազմման ընթացքում հանրության մասնակցության ներգրավման դրույթները:
18. Նման վերանայումը կարող է օգտակար լինել տվյալ իրավիճակին համապատասխանեցված այնպիսի ՌԲԳ գործընթացների մշակման համար, որոնք

գործնականում հենվում են առկա պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի առաջադրանքների վրա՝ դրանց փոխարինելու կամ կրկնօրինակելու փոխարեն:

Ա2.3.2 Նախագծի և ծրագրի կազմման գործընթացում ՌԲԳ-ի ընդգրկման գործնական հիմնապատճառներ

19. ՌԲԳ-ի ընդգրկումը Պլանների և ծրագրերի կազմման գործընթացում տարբեր գործնական հիմնավորումներ ունի, որոնք ներկայացված են **Գլուխ Ա4**-ում՝ պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի վաղ փուլում ՌԲԳ-ի արդյունավետ կիրառման իրավական պահանջի շրջանակներից դուրս:
20. Որոշումների կայացման բարդ գործընթացի համար անհրաժեշտ է կիրառել արդյունավետ գործիքներ, որոնք օգնում են պլանների և ծրագրերի մշակման գործում՝ այդ գործընթացը էլ ավելի բարդացնելու փոխարեն: Ընդհանուր առմամբ, ՌԲԳ գործընթացները խիստ արդյունավետ են համարվում հետևյալ պահանջների բավարարման դեպքում.
 - **Պլանի և ծրագրի մշակման ընթացքում բնապահպանական խնդիրների արդյունավետ քննարկման հնարավորություն է ընձեռում:** Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում բնապահպանական խնդիրների ընդգրկման ՌԲԳ կարողությունը հիմնականում կախված է պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում ՌԲԳ բաղադրիչների ամփոփման ժամանակացույցից և ձևաչափից: Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի համապատասխան փուլերում ընդգրկված ՌԲԳ գործառնական խորհուրդներն ու նախագուշացումները, բնականաբար, ավելի արդյունավետ են, քան ex post²³ (փաստերի արձանագրումից հետո) կամ առանձին իրականացված գնահատումները:
 - **Իրարամերձ կարծիքների և շահերի բախում ենթադրող հարցերի շրջանակի բացահայտում և դրա շնորհիվ որոշումների կայացման գործընթացի վստահելիության առավել բարձր մակարդակի ապահովում:** Սա նպաստում է խնդիրների ողջամիտ քննարկմանը և դրանց հանգուցալուծմանը, ինչպես նաև շահառուների միջև վստահության ամրապնդմանը:
 - **Անհիմն ձևով չեն երկարացնում պլանի կամ ծրագրի կազմման գործընթացը:** ՌԲԳ Արձանագրության պահանջների կիրառման համար լրացուցիչ ժամանակ է անհրաժեշտ, ինչը կարելի է նվազագույնի հասցնել պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի շրջանակներում ՌԲԳ գործողությունների մանրամասն պլանավորման միջոցով:
 - **Անհիմն թանկ, ծախսատար չեն:** ՌԲԳ Արձանագրության պահանջների համաձայն բնապահպանական հաշվետվության նախապատրաստման և պատասխանատու մարմինների ու հանրության հետ խորհրդակցությունների կազմակերպման համար լրացուցիչ ծախսեր են պահանջվում: Լրացուցիչ ծախսերը կարող են սահմանափակ լինել, եթե ՌԲԳ-ն իրականացվում է պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի հետ համատեղ և հենվում է պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում արդեն իսկ նախատեսված տվյալների հավաքման, վերլուծության և խորհրդակցությունների կազմակերպման համար նախատեսված միջոցների վրա:
21. Վերևում տրված ամփոփ նկարագիրը ցույց է տալիս, թե որքան կարևոր է պլանի կամ ծրագրի մշակման գործընթացի և ՌԲԳ-ի հավուր պատշաճի համակարգումը: Այս ամենի նպատակն է հետևել, որ ՌԲԳ-ն ապահովի պլանի կամ ծրագրի մշակման գործընթացում բնապահպանական հարցերի լիարժեք քննարկումը՝ պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում կանխատեսելի խնդիրների մասին նախագուշացնելու միջոցով (տե՛ս Արձանագրության Հոդված 1 (ա)-ն):

²³ «Ex post» նշանակում է «սպասվող արդյունքների փոխարեն փաստացի արդյունքների վրա հիմնված կամ դրանց հիման վրա սահմանված, հետահայաց հաշվարկների վրա հիմնված»: Տերմինի հակառակն է «ex ante», որը նշանակում է «կանխատեսվող կամ սպասվող արդյունքների վրա հիմնված»: Աղբյուր՝ Oxford English Dictionary (United Kingdom, Oxford University Press, 2011թ.):

22. Իրականում ՌԲԳ կիրարկողների առջև պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի շրջանակներում ՌԲԳ-ի արդյունավետ համակարգման և, ի վերջո, ընդգրկման գործում կարող են ծառանալ բազմաթիվ խնդիրներ:

Ա2.3.3 Հարցեր, որոնք հարկավոր է հաշվի առնել

23. Մի կողմից պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի առաջադրանքների, իսկ մյուս կողմից՝ ՌԲԳ առաջադրանքների միջև տրամաբանական կապի ճիշտ օգտագործմանը կարող է օգնել ՌԲԳ Արձանագրության նպատակներից մեկը՝ «ապահովել պլանների կամ ծրագրերի կազմման գործընթացում շրջակա միջավայրի, այդ թվում՝ առողջապահական հարցերի լիարժեք քննարկումը» (Հոդված 1 (ա)).

24. Պլանների կամ ծրագրերի կազմման և ՌԲԳ-ի միջև տրամաբանական կապերը հնարավոր է առանձնացնել միայն այն դեպքում, երբ գործնական կապերն ամրագրված են հետևյալ մակարդակներում՝

- Պլանի կամ ծրագրի մշակում և բնապահպանական հաշվետվության նախապատրաստում,
- պատասխանատու մարմինների հետ խորհրդակցություններ,
- հանրության մասնակցություն:

25. Պլանների կամ ծրագրերի մշակման և բնապահպանական հաշվետվության միջև կապերի օգտագործման արդյունքում կարելի է ապահովել՝

- տվյալների համատեղ օգտագործում
- համապատասխան այլընտրանքային տարբերակների մշակման համար միջոցների համատեղ օգտագործում.
- այլընտրանքների համեմատության նպատակով մոդելավորման համատեքստում պլանների և ծրագրերի կազմման գործընթացի և բնապահպանական խնդիրների (եթե կան այդպիսիք) լուծում և այլն:

26. Պատասխանատու մարմինների հետ խորհրդակցային փուլերի փոխկապակցման արդյունքում հնարավոր է ապահովել՝

- իշխանությունների հետ համատեղ խորհրդակցությունների կազմակերպում
- ներկայացված կարծիքների համատեղ ուսումնասիրություն և այլն:

27. Հանրային մասնակցության գործընթացների շաղկապման արդյունքում կարելի է ապահովել՝

- համապատասխան փաստաթղթերի հանրային մատչելիության ապահովման միասնական համակարգ
- հանրության հետ խորհրդակցությունների միասնական համակարգ
- ներկայացված կարծիքների ուսումնասիրության միասնական համակարգ և այլն:

Ա2.4 ՆԱԽԱԳԾԻ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

28. Այս հասվածում քննարկվում են պլանների և ծրագրերի մշակման ընթացքում ՌԲԳ նախաձեռնելու արդյունքում ստեղծվող մի շարք հնարավոր իրավիճակներ: Ենթադրվում է, որ իրական կյանքում այս ծայրահեղ իրավիճակների տարբեր բաղադրիչներ պարունակող տարբերակներ կարող են պատահել: Ստորև բերված ամփոփ ուսումնասիրությունը ցուցադրական օրինակ է. դրա նպատակն է՝ առանձնացնել յուրաքանչյուր տարբերակի ուժեղ և թույլ կողմերը և դրանց ներդրումը ՌԲԳ Արձանագրությունում ամրագրված պարտավորությունների կատարման գործում:

Ա2.4.1 Խնդրահարույց կիրառման դեպքեր. ՌԲԳ-ի իրականացումը «ex post» և պլանի կամ ծրագրի կազմման գործընթացից անջատ տարբերակով

29. Երբեմն պատահում է, որ ՌԲԳ-ն իրականացվում է «ex post» տարբերակով և պլանի կամ ծրագրի կազմման գործընթացից տարանջատ, օրինակ, երբ ՌԲԳ-ն նախաձեռնվում է պլանի կամ ծրագրի նախնական տարբերակի հաստատումից հետո (տես նկար Ա2.4): Նման իրավիճակը կարող է պայմանավորված լինել հետևյալ գործոններով՝


- Պլանի կամ ծրագրի անհատական ուսումնասիրության միջոցով դրանց շրջանակներում ՌԲԳ-ի կիրառման անհրաժեշտությունը պարզելու համար պահանջվում է առաջարկվող պլանի կամ ծրագրի չափազանց մանրամասն նկարագրություն: Շրջակա միջավայրի վրա հավանական հետևանքների չափը որոշելու նպատակով առաջարկվող պլանի կամ ծրագրի բովանդակային բնույթն ամենայն մանրամասնությամբ նկարագրելու պահանջները պատասխանատու մարմիններին կարող են դրդել ներկայացնելու պլանի կամ ծրագրի բավականին մշակված (կամ ավարտուն) նախնական տարբերակը՝ դիմումի անհատական ուսումնասիրության միջոցով ՌԲԳ-ի անհրաժեշտությունը պարզելու համար: Գործնականում, որևէ պլանի կամ ծրագրի հավանական էական ազդեցությունների շրջանակի որոշումը պետք է հնարավոր լինի պլանի կամ ծրագրի նախաձեռնման սկզբնական փուլից, որը սովորաբար սահմանում է պլանի կամ ծրագրի բովանդակային բնույթն ու ընդհանուր նպատակները:
- Պատասխանատու մարմինները և պլանի կամ ծրագրի մշակողները խուսափում են գործընթացի վաղ փուլերում ՌԲԳ նախաձեռնելու գաղափարից, քանի որ կարող են անտեղյակ լինել վաղ փուլերում ՌԲԳ-ի կիրառմամբ պայմանավորված բազմաթիվ առավելություններին: Իրականում այս մոտեցումը կարող է պայմանավորված լինել քաղաքական դրդապատճառներով կամ պարզապես ՌԲԳ-ի արժեքը չգիտակցելու փաստով: Այնուամենայնիվ, նման դեպքերի թիվը խիստ սահմանափակ է և դրանք կարել է կանխել բախումների կանխման և ժամանակի ու դրամական միջոցների խնայողություններ ապահովելու գործում ՌԲԳ-ի կիրառմամբ պայմանավորված օգուտների մասին իրազեկելու միջոցով:
- ՌԲԳ-ի պատասխանատու անձինք չեն ցանկանում կամ պատրաստ չեն գնահատել թերի պլաններ և ծրագրեր: Նման իրավիճակ կարող է ստեղծվել այն երկրներում կամ հաստատություններում, որտեղ ՌԲԳ-ի կիրառման փորձը սահմանափակ է: Գրանցվել են դեպքեր, որք ՌԲԳ-ի իրականացման համար պատասխանատու անձինք միտումնավոր կերպով հետաձգել են ՌԲԳ-ի կիրառումը՝ առաջ քաշելով այն փաստարկը, որ անհնար է գնահատել գոյություն չունեցող կամ ոչ հստակ սահմանված ծրագրային առաջարկների ազդեցությունները: Սա կարող է պայմանավորված լինել նախագծերի մակարդակում կիրառվող ՇՄԱԳ-ի սկզբունքները կոշտությամբ կիրառելու փորձերով՝ առանց դրանք պլանների կամ ծրագրերի շրջանակներում ընդգրկված հարցերի մասշտաբներին և պլանների կամ ծրագրերի կազմման գործընթացի բնույթին համապատասխանեցնելու:

30. Այս դեպքերում ՌԲԳ-ն կարող է ընկալվել որպես պլանի կամ ծրագրի վերջնական որակի ստուգում, որի նպատակն է ապահովել պլանի կամ ծրագրի նախագծի շուրջ որոշման կայացման համար անհրաժեշտ տեղեկատվությունը:

Նկար Ա2.4: ՌԲԳ-ի իրականացումը «ex post» և պլանի կամ ծրագրի կազմման գործընթացից անջատ տարբերակով. ընդհանուր մոտեցում

Պլանի կամ ծրագրի մշակում

ՌԲԳ



Նշում. հանրության մասնակցությունը, պատասխանատու մարմինների հետ և անդրասահմանային խորհրդակցությունները լիարժեք ձևով ներկայացված չեն այս պարզեցված գծապատկերում:

31. Այնուամենայնիվ, պլանի կամ ծրագրի կազմման գործընթացից առանձին ՌԲԳ-ի իրականացումն ունի մի շարք անվիճելի թերություններ.
- «Ex post» տարբերակով կամ առանձին ՌԲԳ-ի իրականացումը չի ազդում պլանի կամ ծրագրի մշակման գործընթացի վրա: Այս դեպքում ՌԲԳ քննում է պլանի կամ ծրագրի կազմման վերջնարդյունքը և չի ազդում պլանի կամ ծրագրի մշակման գործընթացում կատարվող կարևոր ընտրությունների վրա: Պատասխանատու մարմինները առավել քիչ հակված կլինեն ՌԲԳ-ի առաջարկների ընդունմանը, քանի որ պլանը կամ ծրագիրը կարող է մշակման առավել բարձր փուլում լինել: Նման կերպ իրականացված ՌԲԳ-ներն ապահովում են բնապահպանական առավելությունների նվազագույն մակարդակ:
 - Պլանի կամ ծրագրի նախագծի հաստատումից հետո ՌԲԳ-ի նախաձեռնումը կարող է հանգեցնել այլընտրանքային տարբերակների մշակման, դրանց վերլուծության և համեմատության աշխատանքներում կրկնակի ջանքերի վատնման:
 - ՌԲԳ-ի շրջանակներում կազմակերպվող խորհրդակցությունները պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում նախաձեռնվող խորհրդակցություններից տարանջատումը


կարող է ներկայացվող կարծիքների ու մեկնաբանությունների գործընթացում կրկնությունների, ինչպես նաև մասնակցող մարմինների և հանրության շրջանում թյուրիմացությունների տեղիք տալ:

- Նման ՌԲԳ, որպես կանոն, էականորեն երկարաժամկետ է պլանի կամ ծրագրի կազմման գործընթացը: ՌԲԳ-ի անհրաժեշտության որոշումը, գնահատման շրջանակների սահմանումը, հաշվետվության նախապատրաստումը, պատասխանատու մարմինների հետ խորհրդակցությունները և հանրության մասնակցության կազմակերպումը ևս կարող են բավականին ժամանակատար լինել, ինչը կարող է երկարաձգել պլանի կամ ծրագրի կազմման գործընթացը:
- Վերջապես, ամենակարևորը. այս մոտեցումը կարող է հակասել Արձանագրությունում ամրագրված մի շարք դրույթների (տե՛ս առաջաբանը, ՌԲԳ-ի նպատակներն ու սահմանումը) և վտանգ կա, որ այն չի ապահովում Արձանագրության և ՌԲԳ Հրահանգի պահանջներին համապատասխան ՌԲԳ-ի իրականացում:

Ա2.4.2 Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում մասնակիորեն ընդգրկված ՌԲԳ

32. Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում ՌԲԳ-ի մասնակի ընդգրկման (տե՛ս նկար Ա2.5) հիմքում դրված է այն գաղափարը, որ տվյալ պլանի կամ ծրագրի նախնական տարբերակը, որպես կանոն, բավարար հիմք է ՌԲԳ-ի կիրառման անհրաժեշտությունը և դրա շրջանակները որոշելու համար:

Նկար Ա2.5 Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում մասնակիորեն ընդգրկված ՌԲԳ. ընդհանուր մոտեցում



33. Պլանի կամ ծրագրի նախնական տարբերակի շրջանակներում սովորաբար հստակեցվում են պլանի կամ ծրագրի մշակմանն առնչվող իրավական, վարչարարական կամ կանոնադրական պահանջները, որոշվում են դրա նպատակների բնույթն ու նախատեսվող շեշտադրումները: Այս տեղեկատվությունը, որպես կանոն, պետք է բավարար հիմք լինի տվյալ պլանի կամ ծրագրի շրջանակներում ՌԲԳ-ի իրականացման անհրաժեշտությունը և

այդ համատեքստում վերլուծության ենթակա խնդիրների շրջանակները որոշելու համար: ՌԲԳ-ի անհրաժեշտության և պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի վաղ փուլում գործողությունների շրջանակի որոշումը բարենպաստ պայմաններ է ստեղծում պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում ՌԲԳ-ի իրականացման համար:

34. Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում ՌԲԳ-ի մասնակի ընդգրկման դեպքում ՌԲԳ իրականացվում է պլանի կամ ծրագրի մշակմանը զուգահեռ: ՌԲԳ իրականացնող թիմը և պլանի կամ ծրագրի կազմման համար պատասխանատու թիմն աշխատում են առանձին-առանձին, սակայն սերտ կապի մեջ են մնում՝ պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում ՌԲԳ-ի արդյունքները պատշաճ ձևով ընդգրկելու համար:

35. Այս մոտեցման առանցքն են կազմում պլանների ու ծրագրերի կազմման գործընթացի և ՌԲԳ-ի միջև տրամաբանական կապերը և ՌԲԳ թիմին հնարավորություն է ընձեռում՝

- նույնօրինակ խնդիրները լուծել պլանների կամ ծրագրերի կազմման համար պատասխանատու թիմի հետ նույն ժամանակահատվածում
- կազմել, վերլուծել և համեմատել այլընտրանքային տեսակետներ և տարբերակներ
- բարենպաստ պայմաններ ստեղծել պլանի կամ ծրագրի կազմման յուրաքանչյուր քայլում ՌԲԳ արդյունքները հաշվի առնելու համար:

36. Պլանի կամ ծրագրի, ինչպես նաև բնապահպանական հաշվետվության նախնական տարբերակները կարծիքներ արտահայտելու նպատակով կարող են պատասխանատու մարմինների և շահագրգիռ հանրության ուշադրությանը ներկայացվել կարծիքների հարցման կամ վերանայման միասնական համակարգի միջոցով, որը միավորում է պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում և ՌԲԳ իրականացման շրջանակներում խորհրդակցություններ կազմակերպելու պահանջները:

37. ՌԲԳ թիմը վերջնական բնապահպանական հաշվետվության շրջանակներում կարող է նաև պարզաբանել, թե ՌԲԳ եզրակացություններն ինչպես են ընդգրկվել պլանի կամ ծրագրի նախնական տարբերակում՝ մատնանշելով չլուծված խնդիրները, այսպիսով աջակցելով պատասխանատու մարմիններին՝ կատարելու Հոդված 11.2-ում իրենց ամրագրված պարտավորությունները: Արձանագրությունը ստորագրած կողմերը պարտավոր են հանրությանը, բնապահպանության պատասխանատու մարմիններին և խորհրդակցություններին հրավիրված կողմերին ներկայացնել «հայտարարագիր, որտեղ ամփոփվում են գործընթացում բնապահպանական, այդ թվում՝ առողջապահական հարցերի ընդգրկման ուղիներն ու միջոցները, Հոդվածներ 8-ից 10-ի պահանջների համաձայն ստացված կարծիքների քննարկման մանրամասները և ուսումնասիրված իրագործելի այլընտրանքային տարբերակներից տվյալ պլանի կամ ծրագրի ընդունման հիմնավորումները»: Համանման ամփոփագրի պատրաստումը կարող է նաև օգտակար լինել բնապահպանական հաշվետվության և պատասխանատու մարմինների և հանրության կողմից պլանի կամ ծրագրի նախնական տարբերակի գնահատման դեպքում:

38. Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում ՌԲԳ-ի մասնակի ընդգրկումը կարող է ապահովել հետևյալ առավելությունները

- էապես **նվազեցնում է ձգձգումների հավանականությունը**, քանի որ ՌԲԳ իրականացվում է պլանի կամ ծրագրի մշակմանը զուգահեռ,
- **խնայում է ՌԲԳ-ի համար պահանջվող միջոցները**, քանի որ ՌԲԳ թիմը կարող է մասնակցել տվյալների հավաքման գործողություններին և ներդրում ունենալ, որպես կանոն, պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի շրջանակներում նախաձեռնվող վերլուծություններին (տե՛ս **Հատված Ա1.3**-ը ՌԲԳ ծախսերի և օգուտների առավել մանրամասն քննարկման համար):
- ՌԲԳ թիմի և պլանի կամ ծրագրի կազմման համար պատասխանատու թիմի միջև հաճախակի խորհրդակցությունները նպաստում են **վաղ փուլերում տարբեր կարծիքների քննարկմանը** և հետևաբար՝ հետագա փուլերում անակնկալներից և

բախումներից խուսափելուն: Այս քննարկումներն օգտակար են ինչպես պլանի կամ ծրագրի կազմման համար պատասխանատու թիմին (որը կարող է օգտվել ՌԲԳ տարբեր բաղադրիչներից), այնպես էլ՝ ՌԲԳ թիմին (որը կարող է անմիջապես արձագանք ստանալ կատարված առաջարկությունների վերաբերյալ):

- Պլանի կամ ծրագրի կազմման համար պատասխանատու թիմի և ՌԲԳ թիմի միջև խորհրդակցությունների շրջանակներում համապատասխան դեպքերում **կարող են ընդգրկվել նաև բնապահպանության և առողջապահության պատասխանատու մարմինները և շահագրգիռ հանրությունը**: Նման խորհրդակցությունները շրջանակների պարբերական վերասահմանման և պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի յուրաքանչյուր փուլին առնչվող հիմնական խնդիրների վերանայման հնարավորություն են ընձեռում: Նման խորհրդակցությունները կարող են առավել արդյունավետ դառնալ համապատասխան մարմինների և հանրության կողմից արժարժված խնդիրներն արձանագրելու և հանգուցալուծելու գործում, քան նախնական փուլում շրջանակների սահմանման ընթացքում կազմակերպվող խորհրդակցությունները, ինչպես նաև պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի վերջում պլանի կամ ծրագրի նախագծի և բնապահպանական հաշվետվության եզրափակիչ գնահատումը:
- Վերջապես, և ամենակարևորը, այս մոտեցումը համապատասխանում է Արձանագրությունում ամրագրված մի շարք դրույթների (տե՛ս առաջաբանը, ՌԲԳ-ի նպատակներն ու սահմանումը) և կարող է ապահովել Արձանագրության և ՌԲԳ Հրահանգի պահանջներին համապատասխան ՌԲԳ-ի իրականացում:


39. Միևնույն ժամանակ, հարկ է նշել ՌԲԳ-ի կիրառման այս ձևաչափի հնարավոր թույլ կողմերը: Այս մոտեցումն ընդհանրապես ընդլայնում է ՌԲԳ թիմի աշխատանքային ծավալը, քանի որ բնապահպանական հաշվետվություն պատրաստող փորձագետները պետք է հետևեն պլանի կամ ծրագրի կազմման ողջ գործընթացին, որն իրականում գծային գործընթաց չէ և ոչ միշտ է ընթանում ըստ հաստատված ժամանակացույցի և փոխարենը կարող է բավականին ձգձգվել: Եթե ՌԲԳ թիմը նախատեսում է մասնակցություն ունենալ պլանի կամ ծրագրի մշակման բոլոր հիմնական փուլերին, ապա պետք է իր աշխատանքային պլանում ձևակերպել ցուցաբերի՝ աշխատելով պլանի կամ ծրագրի մշակման գործընթացի փոփոխություններին համընթաց (սա կարող է դժվարություններ առաջացնել, եթե ՌԲԳ առաջադրանքները հանձնարարված են կապալառու արտաքին կազմակերպությունների):

U2.4.3 Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում լիովին ընդգրկված ՌԲԳ. Ընդհանուր մոտեցում

40. Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում ՌԲԳ-ի լիովին ընդգրկման (նկար U2.6) հիմքում դրված է այն գաղափարը, որ ՌԲԳ փորձագետները և պլանի կամ ծրագրի կազմման մասնագետները կարող են աշխատել որպես միասնական թիմ, որի նպատակը պլանի կամ ծրագրի մշակումն է: Պլանի կամ ծրագրի կազմման և ՌԲԳ-ի իրականացման այս ձևաչափով առաջնորդվելիս, որպես կանոն, կլոր սեղանի շուրջ կազմակերպվում են համատեղ աշխատանքային խմբերի պլանի կամ ծրագրի կազմման հարցերին նվիրված քննարկումներ, որոնց կարող են ներգրավվել համապատասխան մարմինների ներկայացուցիչներ և հասարակության հետաքրքրված անձինք: Համատեղ աշխատելու դեպքում բոլոր կողմերը (պլանի կամ նախագծի կազմման մասնագետները, ՌԲԳ փորձագետները և համապատասխան մարմինների ներկայացուցիչներն ու հասարակության հետաքրքրված անձինք) օգտվում են տեղեկատվության ազատ հոսքի առավելություններից՝ նույն տեղեկատվությունը ստանալով միևնույն ժամանակահատվածում, կիսելով իրենց գիտելիքներն ու մտահոգությունները, մշակելով և վերլուծելով հիմնական այլընտրանքային տարբերակները և, այսպիսով, համատեղ ուժերով կազմելով պլանի կամ ծրագրի նախնական տարբերակը: Այսպիսով, բնապահպանական հաշվետվության նախապատրաստումը և համապատասխան

մարմինների ու հասարակության հետաքրքրված անձանց հետ խորհրդակցությունների կազմակերպումը դառնում են պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի անքակտելի բաղադրիչները:

- 41. Խորհրդակցությունների արդյունքներն արտացոլող միջանկյալ հաշվետվությունները, ըստ դրանց նախապատրաստման ժամանակացույցի, կարող են ներկայացվել հանրության առավել լայն քննարկմանը: Այնուամենայնիվ, ելնելով վարչարարական և միջոցների արդյունավետ տնօրինման նկատառումներից, լայն հասարակայնությանը պլանի կամ ծրագրի կազմման և գնահատման գործընթացներում անմիջականորեն մասնակցության իրավունք չի վերապահվում:
- 42. Այս ձևաչափով աշխատելը պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի շրջանակներում պատրաստված միջանկյալ հաշվետվությունների ընթացիկ գնահատումների և դրանց շուրջ խորհրդատվություններ կազմակերպելու հնարավորություն է ընձեռում: Բնապահպանական հաշվետվությունում ներառված տեղեկատվությունը կարող է ամբողջությամբ ընդգրկվել համապատասխան պլանի կամ ծրագրի շրջանակներում: Վերջնական բնապահպանական հաշվետվությունում ներկայացվում է, թե պլանի կամ ծրագրի մշակման և ՌԲԳ-ի համակցված գործընթացի շրջանակներում ինչպես են տարբեր վերլուծություններ իրականացվել, ինչպես նաև կարող է տրամադրվել լրացուցիչ տեղեկատվություն, որն այլապես ուղղակիորեն ընդգրկված չէր պլանում կամ ծրագրում:
- 43. Նկար Ա2.6 Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում լիովին ընդգրկված ՌԲԳ. ընդհանուր մոտեցում



44. Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում ՌԲԳ-ի լիարժեք ընդգրկումը, որպես կանոն, ապահովում է նույն առավելությունները, ինչ պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում ՌԲԳ-ի մասնակի ընդգրկումը: Այս ձևաչափով աշխատելու դեպքում նվազում է աշխատանքների ձգձգումների հավանականությունը, քանի որ ՌԲԳ շրջանակներում իրականացված վերլուծությունները դառնում են պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի անբաժանելի մասը: Այս ձևաչափը կարող է նվազեցնել ՌԲԳ-ի ծախսերը, քանի որ պլանը կամ ծրագիրը կազմող փորձագետները և ՌԲԳ մասնագետները համատեղ ուժերով են հավաքում տվյալները և միասին աշխատում պլանի կամ ծրագրի մշակման ուղղությամբ: Նրանց համատեղ աշխատանքը թույլ է տալիս անմիջականորեն քննարկել իրենց մտահոգությունները և, այդպիսով, խուսափել հետագա փուլերում տարբեր անակնկալներից: Վերջապես, այն բարենպաստ պայմաններ է ստեղծում Արձանագրությունում և ՌԲԳ Հրահանգում ամրագրված պարտականությունները կատարելու համար:
45. Նման մոտեցման լրացուցիչ առավելություններից է այն, որ պլանի կամ ծրագրի կազմման գործընթացին մասնակցող բոլոր կողմերի համատեղ աշխատանքը ստեղծում է համագործակցության օպտիմալ միջավայր և նպաստում է որպես կանոն տարբեր վերաբերմունք և արժեքներ ունեցող շահառուների միջև վստահության ամրապնդմանը: Սա կարող է կարևոր գործոն լինել պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի մասնակցային բնույթը խթանելու գործում:
46. Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում ՌԲԳ-ի լիարժեք ընդգրկման տարբերակի շուրջ հնարավոր մտահոգությունները բխում են այն վտանգից, որ պլանի կամ ծրագրի կազմման թիմում ընդգրկված ՌԲԳ փորձագետները կարող են լիովին ներքաշվել պլանի կամ ծրագրի մշակման աշխատանքներում, կամ մեկուսացվել (ունենալով միայն սահմանափակ ազդեցություն) կամ կարող են գնալ այնպիսի փոխզիջումների, որոնք հրապարակայնորեն չեն քննարկվի: Այդ մտահոգությունների հիմքում ընկած է հետևյալ տրամաբանությունը՝
- Ցանկացած հավաքական աշխատանքի արդյունքները, որպես կանոն, կախված են խմբում ընդգրկված կազմից: Այս մոտեցումը հաջողություն կարող է ապահովել միայն այդ դեպքում, եթե ՌԲԳ փորձագետները և պլանի կամ ծրագրի կազմման մասնագետները համագործակցելու պատրաստակամություն են դրսևորում:
 - Եթե ՌԲԳ փորձագետները, համապատասխան բնապահպանական և առողջապահական մարմինների ներկայացուցիչների և հասարակության շահագրգիռ անձանց հետ միասին, պլանը կամ ծրագիրը մշակող ողջ թիմի ընդամենը մի փոքր հատվածն են կազմում, ապա վտանգ կա, որ ներքին քննարկումների ընթացքում նրանց տեսակետները պատշաճ կերպով հաշվի չեն առնվի: Այս մոտեցումը կգործի միայն այն դեպքում, եթե իրականացվում է թիմային աշխատանքի համակարգում՝ հետևելով, որ պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում ընդհանուր թիմի կազմում ընդգրկված որևէ շահային խմբավորում գերակշիռ ազդեցություն չունենա:
 - Վերջին մտահոգությունը վերաբերում է այն փաստին, որ այս համատեղ թիմային աշխատանքը կարող է հանգեցնել ներքին այնպիսի պայմանավորվածությունների և փոխզիջումների, որոնք արտաքին շահառուների տեսանկյունից թափանցիկ գործընթացների արդյունք չեն կարող համարվել: ՌԲԳ փորձագետներից կարող է ակնկալվել, որ հիմնավորեն ամբողջ թիմի եզրակացությունները: Այս առումով, կարևոր է ընդգծել, որ ՌԲԳ մասնագետներից պահանջվում է նախապատրաստել բնապահպանական հաշվետվություն, որտեղ ամփոփ ներկայացված են բոլոր հիմնական խնդիրները (ազդեցությունը, այլընտրանքային տարբերակների ուսումնասիրության առաջարկներ և այլն), որոնք ՌԲԳ-ի շրջանակներում պետք է լուծում ստանան: Այս հաշվետվությունը կարող է պատրաստվել որպես առանձին փաստաթուղթ, կամ որպես պլանի կամ ծրագրի հստակ տարբերակելի մաս: Անկախ

ընդհանուր թիմերում ձեռք բերված վերջնական ներքին պայմանավորվածություններից, հաշվետվությունը պետք է արձանագրի ՌԲԳ-ի շրջանակներում քննարկված բոլոր էական հարցերը և ընդունված փոխզիջումները:

47. Այս մտահոգությունները կարող են անտեղի լինել պլանի կամ ծրագրի մշակման լավ կառավարվող և թափանցիկ գործընթացների դեպքում, սակայն հիմնավորված՝ պլանների և ծրագրերի մշակման թերի մեխանիզմների դեպքում:

Ա2.4.4 Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում ՌԲԳ-ի ընդգրկման թեմայի քննարկման վերջաբան

48. Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի շրջանակներում ՌԲԳ-ի կիրառման լավագույն մոտեցում գոյություն չունի, բայցևայնպես պլանի կամ ծրագրի կազմման գործընթացից առանձին և «ex post» ձևաչափով ՌԲԳ-ի իրականացումը ամենաքիչ արդյունավետություն ապահովող տարբերակն է և անհավանական է, որ Արձանագրությունում ամրագրված պարտավորությունների կատարման բավարար հիմք ընդունվի:
49. Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում ՌԲԳ-ի մասնակի կամ լիարժեք ընդգրկումն Արձանագրության կիրառման բավարար շրջանակ կարող է ապահովել: Մոտեցման ընտրությունը կախված է պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի կոնկրետ պայմաններից: Որոշ դեպքերում ՌԲԳ-ի մասնակի ընդգրկումն առավել արդյունավետ է, քան ՌԲԳ-ի լիարժեք ընդգրկումը, իսկ այլ դեպքերում՝ հակառակը:

ԳԼՈՒԽ ԱՅ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ

ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱԶՄՎՈՂ

ՊԼԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ

ՌԲԳ-Ի ԿԻՐԱՌՄԱՆ

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Ա.3.1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արձանագրության տեքստում օգտագործվում է «շրջակա միջավայրը, այդ թվում՝ առողջությունը» արտահայտությունը: Կրկնողությունից խուսափելու նպատակով սույն ձեռնարկում նշվում է միայն շրջակա միջավայրը, սակայն պետք է համարել, որ այդ հասկացության մեջ ընդգրկված է նաև առողջությունը: Առողջապահական հարցերի շուրջ լրացուցիչ տեղեկատվության համար, տե՛ս հավելված Ա.1.1-ը:

1. Այս գլխում ներկայացվում է, թե, ըստ ՌԲԳ Արձանագրության, ինչպես որոշել տվյալ պլանի կամ նախագծի շրջանակներում ՌԲԳ-ի իրականացման անհրաժեշտությունը: Գլուխ Ա.4-ում այս քննարկումն ընդլայնվում է՝ ներառելով ՌԲԳ-ի կիրառման եղանակները:
2. Սույն գլուխը սկսվում է օրենքով ամրագրված պահանջների ամփոփ քննարկմամբ (Հատված Ա.3.2), որին հաջորդում է ՌԲԳ-ի կիրառման անհրաժեշտության որոշման մի շարք թեստերի մանրամասն նկարագրություն (Հատված Ա.3.3) (բաժին Ա.3.3): Գլուխը եզրափակվում է հնարավոր գործնական ձևաչափերի քննարկմամբ (Հատված Ա.3.4):

Ա3.2 ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմնական դրույթներ

3. Համաձայն Արձանագրության՝ ՌԲԳ-ի անհրաժեշտությունը որոշելու համար առաջին հերթին հարկավոր է որոշել, թե տվյալ պլանը կամ ծրագիրը համապատասխանում է Արձանագրության մեջ ամրագրված պլանի կամ ծրագրի սահմանմանը (Հոդված 2.5) և Արձանագրության կիրառույթի շրջանակներում է, թե ոչ (Հոդված 4): Որոշ պլանների և ծրագրերի դեպքում (տե՛ս ստորև) անհրաժեշտ է պարզել շրջակա միջավայրի վրա դրանց հնարավոր ազդեցությունների **կարևորությունը** (Հոդված 5, Ստուգագնում): Արձանագրության Հոդվածներ 4-ը և 5-ը միասին, ընդհանուր առմամբ, համարժեք ՌԲԳ Հրահանգի Հոդված 3-ին (Շրջանակների որոշում):
4. Արձանագրության համաձայն տվյալ պլանի կամ ծրագրի շրջանակներում ՌԲԳ-ի կիրառման անհրաժեշտությունը որոշելու հիմք հանդիսացող Արձանագրությունում ամրագրված դրույթներն են.
 - Հոդված 2.5, «պլանների և ծրագրերի» սահմանումը
 - Հոդված 4, պլանների և ծրագրերի նկատմամբ կիրառույթի շրջանակներ
 - Հավելված I, Հոդված 4, պարբերություն 2-ում նշված նախագծերի ցանկ
 - Հավելված II, Հոդված 4, պարբերություն 2-ում նշված այլ նախագծերի ցանկ
 - Հոդված 5, Ստուգագնում
 - Հավելված III, Հոդված 5, պարբերություն 1-ում նշված՝ շրջակա միջավայրի վրա նշանակալի հավանական ազդեցությունների որոշման չափանիշներ:

Ա3.2.1 Հոդվածներ 2.5 և 4, Հավելվածներ I և II

5. Որևէ պլանի կամ ծրագրի նկատմամբ, Արձանագրության համաձայն, ՌԲԳ-ի կիրառման առաջին նախապայմանն այն է, որ համապատասխանի պլանների և ծրագրերի սահմանման երկու ենթապարբերություններում ամրագրված պահանջներին (հոդված 2.5): Այլ կերպ ասած, դա պետք է «կազմված և/կամ ընդունված լինի պատասխանատու մարմնի կողմից կամ կազմված լինի պատասխանատու մարմնի կողմից և ենթակա լինի խորհրդարանի կամ կառավարության կողմից ֆորմալ Արձանագրությունով ընդունման» և «սահմանված լինի օրենսդրական, կանոնակարգող կամ վարչարարական դրույթների համաձայն»: Հոդված 4-ում ամրագրված են լրացուցիչ պահանջներ, որոնք սահմանում են, թե Հոդված 2.5-ի պահանջները բավարարող որ պլանների և ծրագրերի դեպքում է պահանջվում իրականացնել ՌԲԳ: Հոդված 4-ը նաև թվարկում է մի շարք չափանիշներ, որոնք պետք է հաշվի առնել. այդ չափանիշները բավարարելու դեպքում պահանջվում է իրականացնել ՌԲԳ (ՌԲԳ Հրահանգի համարժեք դրույթներն ամրագրված են Հոդված 3, պարբերություններ 1-4 և 8-9-ում):
6. Պլաններ և ծրագրեր անվանվող շատ նախաձեռնությունների համար ՌԲԳ իրականացնելու անհրաժեշտություն կարող է չլինել, իսկ քաղաքականություն, ռազմավարություն, նախագիծ, հայեցակարգ, օրենք, կանոնակարգ և այլն կոչվող նախաձեռնությունների դեպքում կարող է պահանջվել ՌԲԳ: Այս հատվածում ներկայացված նյութի նպատակն է՝ օգնել որոշելու, թե քննարկման առարկա նախաձեռնությունը Արձանագրությունում ամրագրված իմաստով պլան կամ ծրագիր է, թե՛ ոչ, և արդյոք ՌԲԳ-ի կիրառման անհրաժեշտություն կա:
7. Արձանագրության շրջանակներում ՌԲԳ-ի կիրառման անհրաժեշտությունը որոշելիս հարկավոր է հաշվի առնել հետևյալը.
 - «պլան և ծրագիր» բնորոշումը բավարար հիմք չէ
 - ոչ բոլոր պլանների և ծրագրերի դեպքում է պահանջվում ՌԲԳ, միայն որոշակի պայմաններին բավարարողների դեպքում

- որպես քաղաքականություն, ռազմավարություն և հայեցակարգ ներկայացվող որոշ նախաձեռնություններ համապատասխանում են Արձանագրությունում ամրագրված և ՌԲԳ պահանջող պլանի կամ ծրագրի սահմանմանը: Նույնիսկ հնարավոր է, որ որոշ օրենքներ և կանոնակարգեր Արձանագրության կիրառության շրջանակներում լինեն, եթե բավարարում են ամրագրված պայմաններին:
 - ՌԲԳ պահանջող պլանի կամ ծրագրի որոշման համար մանրամասն թեսթերի կարիք կարող է զգացվել:
8. Արձանագրության շրջանակներում ՌԲԳ-ի կիրառման անհրաժեշտությունը որոշելու համար առաջարկվող պլանի կամ ծրագրի, ինչպես նաև պլանի կամ ծրագրի փոփոխման առաջարկի (տե՛ս **պարբերություն 23**) վերաբերյալ կատարվում են մի շարք հարցադրումներ՝ սկսած հետևյալից.
- Արդյոք պլանի կամ ծրագրի միակ նպատակն **ազգային պաշտպանությանը կամ քաղաքացիական արտակարգ իրավիճակներին** ծառայելն է: Կամ արդյոք դա **ֆինանսական կամ բյուջետային** պլան կամ ծրագիր է: Եթե այո, ապա ՌԲԳ չի պահանջվում:
 - Արդյոք պլանը կամ ծրագիրը պատրաստվում է գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնաբուծության, էներգետիկայի, արդյունաբերության, այդ թվում՝ հանքարդյունաբերության, տրանսպորտի, տարածաշրջանային զարգացման, աղբահանության, ջրային ռեսուրսների կառավարման, հեռահաղորդակցության, զբոսաշրջության, քաղաքային և գյուղական վայրերի պլանավորման կամ հողօգտագործման համար: Եթե ոչ, ապա ՌԲԳ-ի կիրառման պահանջ չկա, բայց տե՛ս ստորև բերված **պարբերություն 11-ը**:
9. Եթե առաջին հարցի պատասխանն այո է, իսկ երկրորդինը՝ ոչ, ապա երկու լրացուցիչ հարց է տրվում՝
- Արդյոք տվյալ պլանը կամ ծրագիրը Արձանագրության Հավելված I-ում թվարկված հետագա նախագծերի իրականացման համաձայնեցման մեխանիզմ է հաստատում, թե՛ ոչ:
 - Արդյոք տվյալ պլանը կամ ծրագիրը Արձանագրության Հավելված II-ում թվարկված հետագա բոլոր այլ նախագծերի իրականացման համաձայնեցման մեխանիզմ է հաստատում, թե՛ ոչ, և արդյոք համապատասխան նախագծերի դեպքում, ըստ ազգային օրենսդրության, պահանջվում է իրականացնել ՇՄԱԳ:
10. Եթե այս երկու հարցերից որևէ մեկի պատասխանն «այո» է, ապա, որպես կանոն, Արձանագրության համաձայն ՌԲԳ-ի իրականացումը պարտադիր պահանջ է: Սակայն եթե տվյալ պլանը կամ ծրագիրը որոշում է **տեղական մակարդակում փոքր տարածքի օգտագործումը** կամ պլանի կամ ծրագրի **աննշան փոփոխություն** է ենթադրում (հոդված 4.4), ապա ՌԲԳ իրականացնելու պահանջը գործում է միայն այն դեպքում, եթե պլանը կամ ծրագիրը, ըստ հոդված 5-ի (Ստուգագնեում), շրջակա միջավայրի վրա նշանակալի ազդեցություններ է ենթադրում:
11. Ի լրումն վերը նկարագրված կարգով ՌԲԳ-ի ենթակա պլանների և ծրագրերի, նաև այն պլանները կամ ծրագրերը, որոնք համաձայն Արձանագրության Հոդված 4, պարբերություն 3-ի ենթակա են ՌԲԳ-ի, եթե հետագա նախագծերի իրականացման համաձայնության մեխանիզմ են հաստատում և, Հոդված 5-ի համաձայն՝ շրջակա միջավայրի վրա նշանակալի ազդեցությունների հավանականություն են պարունակում:

Ա3.2.2 Հոդված 5 և Հավելված III

12. Նշանակալի ազդեցությունների որոշման պահանջն ամրագրված է Հոդված 5-ում և կարող է իրականացվել հետևյալ կերպ.
- Պլանի կամ ծրագրի անհատական ուսումնասիրությամբ

- Պլանի կամ ծրագրի տեսակների սահմանման միջոցով
- Վերը նկարագրված տարբերակների համատեղման միջոցով:

ՌԲԳ Հրահանգի համարժեք դրույթները գետեղված են Հոդված 3, պարբերություններ 5–7-ում:

13. Համապատասխան որոշումը պետք է կայացվի Հավելված III-ում (համարժեք է ՌԲԳ Հրահանգի Հավելված II-ին) ամրագրված չափանիշների հիման վրա:
14. Պահանջվում է, որ շրջակա միջավայրի վրա նշանակալի ազդեցությունների որոշման ժամանակ հաշվի առնվեն բնապահպանության և առողջապահության համապատասխան մարմինների հետ խորհրդակցությունների արդյունքները (հոդված 5.2), հանրությանը տրվեն մասնակցելու հնարավորություններ (հոդված 5.3): Այնուամենայնիվ, մեծ թվով պլաններ և ծրագրեր ենթակա չեն շրջակա միջավայրի վրա նշանակալի ազդեցությունների որոշման գնահատման, քանի դեռ ի սկզբանե պարզ չէ, թե ՌԲԳ-ի ենթակա են, թե ոչ:
15. Ըստ Հոդված 5.4-ի, պատասխանատու մարմինները պետք է հանրությանը մատչելի դարձնեն նշանակալի ազդեցությունների որոշման արդյունքները (այսինքն, ըստ Հոդված 5-ի) կամ պլանների ու ծրագրերի տեսակների ցանկի պատրաստման (տե՛ս ստորև), կամ գործերի անհատական ուսումնասիրության ընթացքում: Պահանջվում է հանրությանը ներկայացնել հետևյալը՝
 - Կիրառված թեստերի արդյունքները, այսինքն՝ արդյոք տվյալ պլանը և ծրագիրը, կամ պլանի և ծրագրի տեսակը ենթակա է ՌԲԳ-ի, թե՛ ոչ:
 - ՌԲԳ-ից ձեռնպահ մնալու հիմնավորումը, եթե նման որոշում է կայացվել:
16. ՌԲԳ-ի անհրաժեշտությունը որոշելու այս գործընթացը հնարավոր է ավելի արդյունավետ դարձնել սովորաբար ՌԲԳ-ի ենթակա պլանների և ծրագրերի տեսակների ցուցակի հետ համեմատությունների միջոցով: Նման ցուցակների կազմումը քննարկվում է ստորև տրված [Հատված Ա3.4-ում](#):


Ա3.3 ԹԵՍԹԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

17. Այս ենթաբաժնում քննարկվում է պլանների կամ ծրագրերի նկատմամբ ՌԲԳ կիրառելու անհրաժեշտությունը որոշելու եղանակների դասակարգումը, ներկայացվում են Արձանագրության կիրառության շրջանակներն ամրագրող հոդվածներում (Հոդված 2.5 և Հոդված 4) սահմանվող ինը թեսթ: Պլանի կամ ծրագրի իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա նշանակալի ազդեցությունների հավանականությունը որոշելու համար կարող է պահանջվել նաև տասներորդ թեսթը (շրջակա միջավայրի վրա նշանակալի ազդեցությունների որոշում, Հոդված 5):

18. Հաջորդ էջում տրված Նկար Ա3.1-ում ցույց է տրվում, թե համապատասխան դրույթներն ինչպես կարող են օգտագործվել տվյալ պլանը կամ ծրագիրը ՌԲԳ-ի ենթարկելու անհրաժեշտությունը որոշելու նպատակով ամբողջական մեթոդ մշակելու համար: Այս հատվածում ներկայացվում է նկարում տրված թեսթերի մանրամասն նկարագրությունը:

Պլանի կամ ծրագրի սահմանումը (Հոդված 2.5)	
Թեսթ 1	Արդյոք տվյալ պլանի կամ ծրագրի իրականացումը (կամ դրա փոփոխությունը) պահանջվում է օրենսդրական, կանոնակարգող կամ վարչարարական դրույթներով, թե՛ ոչ (Հոդված 2.5 (ա)):
Թեսթ 2	Արդյոք տվյալ պլանը կամ ծրագիրը պետք է կազմված և/կամ ընդունված լինի պատասխանատու մարմնի կողմից կամ կազմված լինի պատասխանատու մարմնի կողմից և ենթակա լինի խորհրդարանի կամ կառավարության կողմից ֆորմալ Արձանագրությունով ընդունման(Հոդված. 2.5 (բ)):
ՌԲԳ կիրառելու պահանջից ազատված պլան կամ ծրագիր (Հոդված 4.5)	
Թեսթ 3	Արդյոք պլանի կամ ծրագրի միակ նպատակն ազգային պաշտպանությանը կամ քաղաքացիական արտակարգ իրավիճակներին ծառայելն է (Հոդված 4.5):
Պարտադիր կիրառում (Հոդված 4.2)	
Թեսթ 4	Արդյոք պլանը կամ ծրագիրը պատրաստվում է գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնաբուծության, էներգետիկայի, արդյունաբերության, այդ թվում՝ հանքարդյունաբերության, տրանսպորտի, տարածաշրջանային զարգացման, աղբահանության, ջրային ռեսուրսների կառավարման, հեռահաղորդակցության, զբոսաշրջության, քաղաքային և գյուղական վայրերի պլանավորման կամ հողօգտագործման համար (Հոդված 4.2):
Թեսթ 5	Արդյոք տվյալ պլանը կամ ծրագիրը Արձանագրության Հավելված I-ում թվարկված հետագա նախագծերի իրականացման համաձայնեցման մեխանիզմ է հաստատում, թե՛ ոչ (Հոդված 4.2):
Թեսթ 6	Արդյոք տվյալ պլանը կամ ծրագիրը Արձանագրության Հավելված II -ում թվարկված հետագա բոլոր այլ նախագծերի իրականացման համաձայնեցման մեխանիզմ է հաստատում, թե՛ ոչ (Հոդված 4.2):
Թեսթ 7	Արդյոք Արձանագրության Հավելված II -ում ներկայացված սահմանմանը համապատասխանող տվյալ նախագիծը, ըստ ազգային օրենսդրության, ենթակա է ՇՄԱԳ-ի, թե՛ ոչ (Հոդված 4.2):
Ոչ պարտադիր կիրառում (Հոդվածներ 4.3 և 4.4)	
Թեսթ 8	Արդյոք տվյալ պլանը կամ ծրագիրը հետագա նախագծերի իրականացման համաձայնեցման մեխանիզմ է հաստատում՝ անկախ նրանից, թե այն համապատասխանում է Հավելվածներ I-ում և II-ում թվարկված նախագծերի տեսակներին, թե՛ ոչ (Հոդված 4.3):
Թեսթ 9	Արդյոք պլանը կամ ծրագիրը որոշում է տեղական մակարդակում փոքր տարածքի օգտագործումը կամ որևէ պլանի կամ ծրագրի աննշան փոփոխություն է ենթադրում (Հոդված 4.4):
Շրջակա միջավայրի վրա նշանակալի ազդեցությունների որոշում (Հոդված 5.1)	
Թեսթ 10	Արդյոք պլանը կամ ծրագիրը շրջակա միջավայրի վրա նշանակալի ազդեցություններ (ըստ Հավելված III-ում տրված չափանիշների) կարող է ունենալ, թե՛ ոչ (Հոդված 5.1)

Նկար Ա3.1 Պլանը կամ ծրագիրն Արձանագրության շրջանակներում ՌԲԳ-ի ենթարկելու որոշում կայացնելու ուղեցույց



Թեյթ 1 Արդյոք տվյալ պլանի կամ ծրագրի իրականացումը (կամ դրա փոփոխությունը) պահանջվում է օրենսդրական, կանոնակարգող կամ վարչարարական դրույթներով, թե՛ ոչ (Հոդված 2.5 (ա)):

19. Եթե քննության առարկա հանդիսացող պլանը կամ ծրագիրը չի անցնում առաջին թեսթը, ապա Արձանագրությամբ ՌԲԳ չի պահանջվում: Եթե բավարարում է առաջին թեսթը, ապա հարկավոր է անցնել թեսթ 2-ին:
20. Առաջին հերթին, պետք է ի հայտ բերել Արձանագրության սահմանմանը համապատասխանող պլանները կամ ծրագրերը: Ակնհայտ է, որ անվանումն ինքնին բավարար հիմք չէ. պլան կամ ծրագիր կոչվող ամեն առաջարկ չէ, որ համապատասխանում է Արձանագրությունում ամրագրված սահմանմանը և, հետևաբար, ենթակա չի լինի Արձանագրության դրույթների պահանջներին:
21. Նույն ձևով, ոչ բոլոր պլաններն ու ծրագրերն են այդպես կոչվում. «քաղաքականություն», «նախագիծ», «ուղեցույց» և «ռազմավարություն» տերմինները պլաններին կամ ծրագրերին հաճախ կցվող պիտակների օրինակներ են: Արձանագրությունում ամրագրված սահմանմանը քննության առնվող պլանի կամ ծրագրի համապատասխանությունը ճիշտ որոշելու համար, անհրաժեշտ է խուսափել կանխակալ կարծիքներից: Ստորև բերված են ԵՀ Ուղեցույցից վերցված ցուցումներ՝
- Որպես ելակետ ընդունեք Արձանագրության կիրառության լայն շրջանակներն ու ընդհանուր նպատակը
 - Քննության առեք շրջակա միջավայրի վրա տվյալ նախաձեռնության հավանական ազդեցության չափը²⁴
 - Ուշադրություն դարձրեք առաքելության տեսական ձևակերպումներից դուրս գործնական նշանություն ունեցող և հետագայում նախաձեռնվելիք գործողության իրականացման Արձանագրությունը նկարագրող պաշտոնական հայտարարություններին
 - Պլանների օրինակներ՝
 - Որևէ ծրագիր կամ քաղաքականություն իրականացնելու մեխանիզմը բացատրող փաստաթուղթ
 - Հողօգտագործման պլաններ և զարգացման չափանիշներ
 - Թափոնների կառավարման պլաններ
 - Ջրային ռեսուրսների պլաններ
 - Տրանսպորտային միջոցների պլաններ
 - Նախատեսվող ծրագիրը տվյալ տարածքում իրականացվելիք մի շարք ծրագրեր կարող է պարունակել, օրինակ՝ քաղաքի որևէ թաղամասի վերականգնման ծրագիր, որում ընդգրկված են մի շարք առանձին շինարարական նախագծեր:
22. Մի կողմից պլանների, իսկ մյուս կողմից ծրագրերի միջև տարբերակումների կարիք չի զգացվում, քանի որ Արձանագրությունում դրանք նույն կշիռն ու գործառնություններն ունեն:
23. Արձանագրությունը նաև վերաբերում է պլանների և ծրագրերի **փոփոխություններին**: Նման փոփոխության հարմար ցուցադրական օրինակ է հողօգտագործման առկա ծրագիրը, որը պարբերաբար վերանայվում է (ենթադրենք, յուրաքանչյուր հինգ տարին մեկ): Վերանայված պլանն այս դեպքում, որպես կանոն, ենթակա կլինի ՌԲԳ-ի: Հնարավոր է, որ պլանի կամ ծրագրի աննշան փոփոխությունները (օրինակ՝ առանձին նախագծերում փոփոխություններ, որոնք էականորեն չեն փոխում շրջակա միջավայրի վրա ամբողջական պլանի կամ ծրագրի ազդեցությունները) ազատվեն ՌԲԳ պահանջներից՝ չնչին տարբերությունների հիմնապատճառի վկայակոչմամբ, սակայն ամեն դեպքում ՌԲԳ պահանջներից ազատման ցանկացած դեպք պետք է ուսումնասիրվի ամենայն

²⁴ԵՀ Ուղեցույցի պարբերություն 3.4:

ուշադրությամբ: Բոլոր դեպքերում, վճռորոշ հարցն այն է, թե կատարված փոփոխությունը շրջակա միջավայրի վրա նշանակալի ազդեցություն կարող է ունենալ, թե՛ ոչ:

24. Պլանի կամ ծրագրի փոփոխությունը կարող է շրջակա միջավայրի վրա դեռևս չգնահատված նշանակալի ազդեցությունների պատճառ դառնալ: Այդ ազդեցությունները կարող են պայմանավորված լինել փոփոխության բնույթով կամ շրջակա միջավայրում տեղ գտած փոփոխություններով:
25. Արձանագրությունն ընդունած կողմերին խորհուրդ է տրվում քննության առնել նաև այն դեպքերը, երբ պատասխանատու մարմինների գիտելիքները (աշխատանքների, շրջակա միջավայրի կամ դրա վրա ազդեցությունների վերաբերյալ) պլանի կամ ծրագրի ընդունումից ի վեր ընդլայնվել են կամ երբ որոշակի պլաններ կամ ծրագրեր ՌԲԳ-ի չեն ենթարկվել այն պատճառով որ դրանց ընդունման ժամանակ ՌԲԳ օրենսդրությունը դեռևս ուժի մեջ չէր:
26. Ձեռնարկում օգտագործվող «պլան կամ նախագիծ» հասկացությունը նաև ընդգրկում է դրանց փոփոխությունները:
27. Տվյալ պլանի կամ ծրագրի (կամ դրա փոփոխության) իրականացումը պահանջվում է օրենսդրական, կանոնակարգող կամ վարչարարական դրույթներով: Հետևաբար, երկրները կարող են ձեռնպահ մնալ ՌԲԳ-ն այն պլանների կամ ծրագրերի նկատմամբ կիրառելուց, որոնք պարտադիր են ըստ այդ դրույթների: «Վարչական դրույթները որոշակի գործողությունների իրականացման պաշտոնական պահանջներ են, որոնք սովորաբար չեն ընդունվում նույն Արձանագրություններով, ինչ նոր օրենքները և որոնք պարտադիր չեն, որ լիարժեք իրավական ուժ ունենան» (ԵՀ Ուղեցույց, պարբերություն 3.16): Այսպիսով, թեև վարչական դրույթներն իրավական ուժ չունեն, վարչական դրույթներով պահանջվող պլանները կամ ծրագրերը ներառվում են ՌԲԳ Արձանագրության կիրառության շրջանակներում: ՌԲԳ Հրահանգի՝ Միացյալ Թագավորության գործնական ուղեցույցում²⁵ նշվում է.

«Վարչական դրույթները» հանրությանը հասանելի, շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցություններ ներառող, ֆորմալ Արձանագրությունով հաստատված դրույթներ են: Վարչական դրույթը պետք է ունենա բավարար պաշտոնական բնույթ, որպեսզի «դրույթ» համարվի: Այն պետք է ձևակերպված լինի այնպես, որ որևէ պլանի կամ ծրագրի կազմումը հստակ պահանջ լինի՝ խրախուսական հորդորանքի փոխարեն:

Թեյթ 2 Արդյոք տվյալ պլանը կամ ծրագիրը պետք է կազմված և/կամ ընդունված լինի պատասխանատու մարմնի կողմից կամ կազմված լինի պատասխանատու մարմնի կողմից և ենթակա լինի խորհրդարանի կամ կառավարության կողմից ֆորմալ Արձանագրությունով ընդունման (Հոդված. 2.5 (բ)):

28. Եթե նախատեսվող պլանը կամ ծրագիրը չի բավարարում երկրորդ թեյթը, ապա Արձանագրությամբ ՌԲԳ չի պահանջվում: Եթե բավարարում է երկրորդ թեյթը, ապա հարկավոր է անցնել թեյթ 3-ին:

²⁵ «Ռազմավարական բնապահպանական գնահատման Հրահանգի գործնական ուղեցույց» (Միացյալ Թագավորություն, փոխվարչապետի գրասենյակ, 2005թ.), պարբերություն 2.6: Ձեռնդրված է <http://www.communities.gov.uk/publications/planningandbuilding/practicalguidesea> կայքէջում:

29. Պլանը կամ ծրագիրը պետք է կազմված և/կամ ընդունված լինի պատասխանատու մարմնի կողմից: ԵՃ Ուղեցույցում (պարբերություններ 3.11–3.13) այս արտահայտությունը պարզաբանող դրույթներից են՝

- Պատասխանատու մարմնի կողմից կազմված կամ ընդունված լինելու պայմանը բավարարում է այս թեսթը
 - Որևէ մեկ պատասխանատու մարմնի կողմից կազմված, սակայն մեկ այլ մարմնի կողմից ընդունված պլանը կամ ծրագիրը միևնույն է բավարարում է այս թեսթը:
 - Պատասխանատու մարմինը սահմանվում է որպես.
Ցանկացած իրավական ձև ունեցող և ցանկացած մակարդակում (ազգային, տարածքային կամ տեղական) լիազորություններով օժտված մարմին, որը սովյալ պետության կողմից ընդունված կարգով պատասխանատու է պետության վերահսկողության ներքո հանրային ծառայության մատուցման համար և, հետևաբար, օժտված է հատուկ լիազորություններով, որոնք գերազանցում են ֆիզիկական անձանց միջև հարաբերությունները կարգավորող սովորական կանոններով սահմանված լիազորությունները (ԵՃ Ուղեցույց, պարբերություն 3.12)²⁶:
- Այս սահմանմանը համապատասխանող օրինակ կարող է լինել սեփականաշնորհված կոմունալ սպասարկման ընկերությունը, երբ այն պատրաստում է այնպիսի պլան, որը «չսեփականաշնորհված ռեժիմի դեպքում կիրականացվեր պետական մարմինների կողմից», սակայն ոչ այն դեպքում, երբ իր սեփական առևտրային նպատակները հետապնդելով կազմում է պլաններ, որոնք կապված չեն պետական մարմնի գործառույթի կատարման հետ:

30. «Պատասխանատու մարմնի կողմից կազմված և/կամ ընդունված» լինելու փոխարեն նախատեսվող պլանը կամ ծրագիրը կարող է «կազմված լինել պատասխանատու մարմնի կողմից և ենթակա լինել խորհրդարանի կամ կառավարության կողմից ֆորմալ Արձանագրությունով ընդունմանը» (ՌԲԳ Արձանագրություն, հոդված 2.5 (բ)), ինչպես ընդունված է որոշ երկրներում: Արձանագրությունում «խորհրդարան» և «կառավարություն» բառերը որոշյալ հոդով չեն օգտագործված, ինչից պարզ է դառնում, որ Արձանագրության դրույթները վերաբերում են որոշ երկրում տարբեր վարչատարածքային մակարդակներում գործող (օր.՝ ազգային, տարածքային, նահանգային, տեղական)՝ մեկից ավելի խորհրդարաններին կամ կառավարություններին: (Տե՛ս նաև ԵՃ Ուղեցույց, պարբերություն 3.14.)

Թեսթ 3 Արդյոք պլանի կամ ծրագրի միակ նպատակն ազգային պաշտպանությանը կամ քաղաքացիական արտակարգ իրավիճակներին ծառայելն է (Հոդված 4.5), արդյոք նախատեսվող գործողությունները ֆինանսական կամ բյուջեի պլան կամ ծրագիր են ենթադրում:

31. Եթե նախատեսվող պլանը կամ ծրագիրը բավարարում է երկրորդ թեսթը, ապա Արձանագրությամբ ՌԲԳ չի պահանջվում: Եթե չի բավարարում երկրորդ թեսթը, ապա հարկավոր է անցնել թեսթ 4-ին:
32. ԵՃ Ուղեցույցից (պարբերություններ 3.62–3.63) քաղված՝ այս թեսթին վերաբերող կարևորագույն պարզաբանումներից են՝

²⁶ Տե՛ս նաև Արդարադատության եվրոպական դատարանի կողմից «Ֆոսթերը և այլոք ընդդեմ Բրիթիշ գազ ընկերության» գործի վերաբերյալ դատավճիռը, գործի հերթական համարը՝ C-188/89, գետեղված է հետևյալ կայքէջում՝ http://eurlex.europa.eu/smartapi/cgi/sga_doc?smartapi!celexplus!prod!CELEXnumdoc&lg=en&numdoc=61989J0188.

- ՌԲԳ-ից ազատման դրույթը վերաբերում է այն պլաններին և ծրագրերին, որոնց միակ նպատակը ազգային պաշտպանության և քաղաքացիական արտակարգ իրավիճակներին ծառայելն է: Այս արտոնությունը չի վերաբերում նման նպատակներին ծառայող բաղադրիչ կամ բաղադրիչներ պարունակող պլաններին ու ծրագրերին:
- Քաղաքացիական արտակարգ իրավիճակների թվին են դասվում մարդածին և բնական աղետները: Նախատեսվող պլանը կամ ծրագիրը պետք է կազմված լինի փաստացի արտակարգ իրավիճակին ի պատասխան և ոչ որպես կանխարգելիչ միջոցառում (օրինակ՝ անտառային հրդեհների կանխման միջոցառումների պլանավորում):
- Բյուջեի պլան կարող են համարվել կառավարության կամ իշխանությունների տարբեր մակարդակներում քննարկվող բյուջեները: Ֆինանսական պլանների թվին են դասվում նախագծերի ֆինանսավորման և ֆինանսական միջոցների բաշխման համալիր նախաձեռնությունները:

Թեւթ 4 Արդյոք պլանը կամ ծրագիրը պատրաստվում է գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնաբուծության, էներգետիկայի, արդյունաբերության, այդ թվում՝ հանքարդյունաբերության, տրանսպորտի, տարածաշրջանային զարգացման, աղբահանության, ջրային ռեսուրսների կառավարման, հեռահաղորդակցության, զբոսաշրջության, քաղաքային և գյուղական վայրերի պլանավորման կամ հողօգտագործման համար (Հոդված 4.2):

33. Եթե նախատեսվող պլանը կամ ծրագիրը հասել է այս թեսթին, ապա այն համապատասխանում է Արձանագրության հոդված 2.5-ում ամրագրված պլանի կամ ծրագրի սահմանմանը: 4-րդ, 5-րդ և 6-րդ թեսթերը միասին կիրառում են Արձանագրության Հոդված 4.2-ի պահանջները: Եթե նախատեսվող պլանը կամ ծրագիրը չի բավարարում այս թեսթը, ապա անցեք 8-րդ թեսթին, քանի որ սա չի նշանակում, որ նախատեսվող պլանը կամ ծրագիրը ենթակա չէ ՌԲԳ-ի, Հոդված 4.3-ի հիման վրա այն դեռևս կարող է հաստատվել որպես ՌԲԳ-ի ենթակա պլան կամ ծրագիր: Եթե նախատեսվող պլանը կամ ծրագիրը բավարարում է 4-րդ թեսթը, ապա անցեք 5-րդ թեսթին:
34. Այս թեսթում հարց է տրվում, թե թվարկված ոլորտներից որին է պատկանում նախատեսվող պլանը կամ ծրագիրը: «Քաղաքային կամ գյուղական վայրերի պլանավորում» կամ «հողօգտագործման պլանավորում» տերմինները կիրառվում են տարբեր երկրներում և կարող են օգտագործվել փոխարինաբար (տե՛ս ԵԽ Ուղեցույցը, պրբ. 3.31)

Թեւթ 5 Արդյոք տվյալ պլանը կամ ծրագիրը Արձանագրության Հավելված I-ում թվարկված հետագա նախագծերի իրականացման հաստատման մեխանիզմ սահմանում է, թե ոչ (Հոդված 4.2):

35. Այս թեսթով հարցադրում է արվում, թե նախատեսվող պլանը կամ ծրագիրը Հավելված I-ում թվարկված նախագծերի շրջանակ հաստատում է, թե՛ ոչ: Եթե նախատեսվող պլանը կամ առաջարկը չի բավարարում այս թեսթը, ապա անցեք 6-րդ թեսթին, որպեսզի պարզեք, թե այն համապատասխանում է Հավելված II-ում ընդգրկված բնութագրին, թե ոչ: Եթե պլանը կամ ծրագիրը բավարարում է այս թեսթը, ապա անցեք 9-րդ թեսթին:
36. Նախատեսվող պլանը կամ ծրագիրը Արձանագրության Հավելված I-ում թվարկված հետագա նախագծերի իրականացման հաստատման մեխանիզմ պետք է սահմանի: ԵԽ Ուղեցույցից (պարբերություններ 3.23–3.28) քաղված այս ձևակերպմանը վերաբերող կարևորագույն պարզաբանումներից են՝
- «**Հետագա նախագծերի հաստատման մեխանիզմի սահմանում**» ձևակերպման իմաստը խիստ կարևոր է Հրահանգի պահանջների ճիշտ մեկնաբանության համար, թեև տեքստում սահմանում տրված չէ: Այս ձևակերպումը մեկնաբանվում է առ այն, որ պլանում կամ նախագծում ընդգրկված են չափանիշներ կամ պայմաններ, որոնք հաստատող պատասխանատու մարմնի որոշած կարգով ուղղորդում են հետագա նախագծերի հաստատման գործընթացը: Այս չափանիշները կարող են

սահմանափակել տվյալ տարածքում թույլատրվող գործունեության կամ գործողությունների տեսակները կամ կարող են պարտադրել պայմաններ, որոնք պետք է բավարարվեն նախքան առաջարկվող գործունեության թույլտվության հաստատումը, կամ նպատակաուղղված լինեն որոշակի տարածքի առանձնահատկությունների պահպանմանը (օրինակ, հողօգտագործման տեսակների համատեղում՝ տարածքի տնտեսական կենսունակությունը խթանելու նպատակով) (պրբ. 3.23):

- Նույն ձևակերպումն օգտագործվում է Հավելված III-ում (պարբերություն 2), որտեղ նաև տրված են աշխատանքների շրջանակը հաստատելու մեխանիզմների ցանկը՝ տարածք, բնույթ, ծավալ և գործառնական պայմաններ կամ միջոցների, ռեսուրսների բաշխում: ԵՃ Ուղեցույցում նշվում է, որ Հրահանգում բերված համապատասխան ցուցակը «ցուցադրական նպատակ ունի և սպառիչ չէ»: «Ռեսուրսները» կարող են նշանակել բնական, մարդկային կամ ֆինանսական միջոցներ, թեև ֆինանսական և բյուջեի պլանների ու ծրագրերի մասին (Հոդված 4.5) չպետք է մոռանալ: ԵՃ Ուղեցույցում նաև նշվում է, որ «ֆինանսական ռեսուրսների ընդհանրացված բաշխումը բավարար չէ շրջանակի սահմանման համար» (պրբ. 3.25): Շրջանակի սահմանման պահանջը բավարարելու համար ռեսուրսների բաշխումը պետք է նախատեսվող գործողություններ կամ սահմանափակող պայմաններ ամրագրելու միջոցով սահմանի գործողությունների կամ աշխատանքների հաստատման պայմանները:
- Ինչպես նշվում է ԵՃ Ուղեցույցում, «հողօգտագործման պլանները սովորաբար ներառում են չափանիշներ, որոնց հիման վրա որոշվում են, թե ինչ բնույթի աշխատանքներ են թույլատրվում առանձին տարածքում և հետագա նախագծերի հաստատման շրջանակ սահմանող պլանների տիպիկ օրինակ են ծառայում» (պրբ. 3.26). Նման պլանը պետք է ամրագրի հետագա նախագծերը հաստատելու առնվազն մեկ հստակ սահմանված կամ առանցքային (ոչ տրիվիալ) պայման:
- Պլանները կամ ծրագրերը կարող են պայմաններն ամրագրել կամ վերևում նշված ձևով, կամ ընդունվելու դեպքում՝ ուղղակիորեն հաստատել նախատեսվող նախագծերը: Օրինակ, քաղաքային թաղամասի վերականգնման ծրագիրը կարող է պարունակել մի շարք առանձին շինարարական նախագծեր, որոնք բավարարում են ծրագրի շրջանակներում ամրագրված պայմաններին:
- Տարբեր ոլորտների (սեկտորների զարգացման) պլաններն ու ծրագրերը կարող են սահմանել հետագա զարգացման նախագծերի տեղագրական կամ տեխնիկական պայմանները: Օրինակ՝ տրանսպորտային միջոցների ոլորտի զարգացման պլանում կամ ծրագրում կարող են ընդհանուր գծերով նշվել, թե որտեղ պետք է կենտրոնացվի տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացումը և տրանսպորտի ինչ միջոց պետք է օգտագործվի:

37. Արձանագրության Հավելված I-ում տրված ցուցակը, ընդհանուր առմամբ, նման է, սակայն ամբողջովին չի համընկնում ՌԲԳ Հրահանգում տրված համապատասխան ցուցակին (Հավելված I, «Շրջակա միջավայրի վրա որոշակի հանրային և մասնավոր ծրագրերի ազդեցության գնահատման վերաբերյալ» 27 հունիսի, 1985թ., ԵՄ հրահանգ թիվ 85/337/EEC, որը փոփոխվել է 3 մարտի, 1997թ. Եվրախորհրդի հրահանգ թիվ 97/11/EC (ՇՄԱԳ Հրահանգ))): ԵՄ անդամ պետությունները նաև պետք է կիրառեն Կենսավայրերի մասին հրահանգի²⁷ թեսթը, որը քննարկվում է ԵՄ Ուղեցույց-ի պարբերություն 3.32-ում:

Թեսթ 6 Արդյոք տվյալ պլանը կամ ծրագիրը Արձանագրության Հավելված II -ում թվարկված հետագա բոլոր այլ նախագծերի իրականացման համաձայնեցման մեխանիզմ հաստատում է, թե՛ ոչ (Հոդված 4.2):

Թեսթ 7 Արդյոք Արձանագրության Հավելված II -ում ներկայացված սահմանմանը համապատասխանող տվյալ նախագիծը, ըստ ազգային օրենսդրության, ենթակա է ՇՄԱԳ-ի, թե՛ ոչ (Հոդված 4.2)

38. Այս երկու թեսթերը կարելի է կիրառել միասին: Եթե նախատեսվող պլանը կամ ծրագիրը չի բավարարում թեսթերից մեկին, ապա անցեք 8-րդ թեսթին: Եթե նախատեսվող պլանը կամ ծրագիրը երկու թեսթերին էլ բավարարում է, ապա անցեք 9-րդ թեսթին:
39. 6-րդ թեսթը նման է 5-րդ թեսթին: Արձանագրության հավելված II-ը նույնպես նման է ՌԲԳ Հրահանգի համապատասխան ցուցակին, սակայն նույնական չէ: 7-րդ թեսթն ընդգծում է Արձանագրության և Հրահանգի միջև մի կարևոր տարբերություն. Արձանագրության հավելված II-ում թվարկված այն նախագծերը, որոնք, համաձայն ազգային օրենսդրության, ՇՄԱԳ չեն պահանջում, քննության շրջանակներում չեն ընդգրկվում: Ի տարբերություն այս դրույթի, ՌԲԳ Հրահանգի համապատասխան ցուցակում ընդգրկված բոլոր նախագծերը քննության առարկա են, անկախ նրանից, թե ազգային օրենսդրության պահանջների համաձայն ենթակա են ՇՄԱԳ-ի, թե ոչ:

Թեսթ 8 Արդյոք տվյալ պլանը կամ ծրագիրը հետագա նախագծերի իրականացման համաձայնեցման մեխանիզմ է հաստատում՝ անկախ այն բանից, համապատասխանում է Հավելվածներ I-ում և II-ում թվարկված նախագծերի տեսակներին, թե՛ ոչ (Հոդված 4.3):

40. Եթե նախատեսվող պլանը կամ ծրագիրը չի բավարարում 4-րդ, 6-րդ կամ 7-րդ թեսթը, ապա 8-րդ կամ շրջակա միջավայրի վրա նշանակալի ազդեցությունների (10-րդ) թեսթը բավարարելու դեպքում դեռևս կարող է ենթակա լինել ՌԲԳ-ի: Եթե պլանը կամ ծրագիրը չի բավարարում 8-րդ թեսթը, ապա Արձանագրությունով ՌԲԳ չի պահանջվում:
41. Հոդված 4.3-ն ընդլայնում է Արձանագրության կիրառույթի շրջանակները, դրանցում ընդգրկելով հետագա նախագծերի հաստատման շրջանակ սահմանող և շրջակա միջավայրի վրա նշանակալի ազդեցություն գործող պլաններ ու ծրագրեր: Այս դրույթում ընդգրկված են Հոդված 4.2-ում չընդգրկված ոլորտների նախագծեր (թեսթ 4), ինչպես նաև այնպիսի նախագծեր, որոնք նշված ոլորտներին են պատկանում, սակայն թվարկված չեն հավելվածներում (5-րդ, 6-րդ և 7-րդ թեսթ):

Թեսթ 9 Արդյոք պլանը կամ ծրագիրը որոշում է տեղական մակարդակում փոքր տարածքի օգտագործումը կամ որևէ պլանի կամ ծրագրի աննշան փոփոխություն է ենթադրում (Հոդված 4.4):

42. Եթե նախատեսվող պլանը կամ ծրագիրը չի բավարարում այս թեսթը, ապա Արձանագրության համաձայն ՌԲԳ է պահանջվում: Նույնիսկ եթե նախատեսվող պլանը կամ ծրագիրը բավարարում է այս թեսթը, այն ինքնաբերաբար չի ազատվում ՌԲԳ-ի պահանջից, քանի որ դեռևս անհրաժեշտ է որոշել շրջակա միջավայրի վրա դրա նշանակալի ազդեցությունները (10-րդ թեսթ):
43. ԵՄ Ուղեցույցից վերցված (տե՛ս պարբերություններ 3.33–3.36)՝ այս թեսթին վերաբերող համապատասխան պարզաբանումներից են՝
- «Փոքր» հատկորոշումը պետք է «հիմնված լինի զգույշ դատողության վրա» և տարբեր երկրներում և միևնույն երկրի տարբեր վայրերում տարբեր իմաստ կարող է ունենալ: Օրինակ՝ «փոքր» հատկորոշումը տարբեր ձևով կարող է մեկնաբանվել պատմական քաղաքի և մեկտրացիայի (հողաբարելավման) ենթարկված գյուղատնտեսական տարածքի դեպքում: ԵՄ Ուղեցույցում բերված է օրինակ, որում «կառուցապատման պլանը» ամրագրում է սահմանափակ տարածքում շինարարական աշխատանքների իրականացման կոնկրետ պայմանները:

- «Տեղական»-ի փոխարեն «տեղական մակարդակ» հասկո՞րոշիչի օգտագործումը վերաբերում է տեղական իշխանությունների մակարդակին: «Տեղական մակարդակում փոքր տարածք» ձևակերպումը կարող է նպատակաուղղված լինել տեղական իշխանությունների վերահսկողության տակ գտնվող ողջ տարածքը ՌԲԳ-ի պահանջից ազատելու (այսինքն, 9-րդ թեսթը բավարարելու դեպքում) հնարավորության կանխմանը:
- «Աննշան փոփոխություններ» ձևակերպումը պետք է դիտարկել շրջակա միջավայրի վրա նշանակալի ազդեցությունների և ոչ թե պլանում կամ ծրագրում տեղ գտած փոփոխությունների աստիճանի համատեքստում:
- Շրջակա միջավայրի վրա նշանակալի ազդեցությունների կշիռը 8-րդ և 9-րդ թեսթերի շրջանակներում գերակա, առաջնային սկզբունքն է:

Թեսթ 10 Արդյոք պլանը կամ ծրագիրը շրջակա միջավայրի վրա նշանակալի ազդեցություններ (ըստ Հավելված III-ում տրված չափանիշների) կարող է ունենալ, թե՛ ոչ (Հոդված 5.1)

44. Ահրաժեշտ է միայն ստուգել շրջակա միջավայրի վրա նախատեսվող պլանի կամ ծրագրի այն զգալի ազդեցությունները, որոնք ընկնում են Արձանագրությունում ամրագրված սահմանման շրջանակներում (հոդված 2.5, թեսթեր 1 և 2), **և** որոնք դեռևս որպես ՌԲԳ-ի ենթակա պլան կամ ծրագիր հստակորեն չեն հաստատվել պլանների և ծրագրերի տեսակների ցուցակների հետ համեմատության հիման վրա **և** որոնք բավարարում են ստորև բերված պայմաններից մեկին՝
- Սահմանված սեկտորների, հատվածների շրջանակում է և թվարկված է Հավելված I-ում կամ Հավելված II-ում (և պահանջվում է ազգային օրենսդրությամբ) (Հոդված 4.2, թեսթեր 4–7), բայց տեղական մակարդակում սահմանում է փոքր տարածքի օգտագործումը կամ աննշան փոփոխություն է ենթադրում (հոդված 4.4, թեսթ 9), կամ
 - Սահմանում է հետագա նախագծերի հաստատման շրջանակ, անկախ նրանից, թե այդ նախագծերն ընդգրկված են Հավելված I-ում կամ Հավելված II-ում (հոդված 4.3, թեսթ 8), թե ոչ:
45. Այս թեսթի հիմնական առանձնահատկություններն են (Հոդված. 5)՝
- Ըստ ազդեցությունների լրջության չափանիշների վերլուծություն (Հավելված III, որը նման է ՌԲԳ Հրահանգի Հավելված II-ին)
 - Պարտադիր խորհրդակցություն պատասխանատու մարմինների հետ
 - Հանրության մասնակցություն (ոչ պարտադիր պահանջ)
 - Արդյունքների հրապարակում, հանրային հասանելիության ապահովում
46. Եթե նախորդող թեստերը (1-9 թեստերի կիրառույթի շրջանակ) կարող են իրականացվել ներքին կարգով՝ պատասխանատու մարմնի շրջանակներում, ապա 10-րդ թեսթը (էական ազդեցությունների որոշումը) առնվազն պահանջում է, որ բնապահպանական և առողջապահական մարմինների հետ խորհրդակցություններ կազմակերպվեն: Թեսթ 10-ը նաև ուղղակիորեն նախատեսում է գործընթացին հանրության մասնակցություն, սակայն այս դրույթը պարտադիր չէ (ՌԲԳ Հրահանգը ևս նման պահանջ չի ամրագրում): Հանրության մասնակցության և համապատասխան մարմինների հետ խորհրդակցությունների մանրամասն նկարագրությունները բերված են համապատասխանաբար **Գլուխ Ա4-ում**, **հատվածներ Ա4.3-ում** և **Ա4.4-ում**:
47. Արձանագրությունը պահանջում է, որ շրջակա միջավայրի վրա նշանակալի ազդեցությունների որոշման արդյունքները հրապարակվեն և հասանելի լինեն հանրությանը, ի տարբերություն նախորդող թեսթերի: Սա քննարկվում է վերը ներկայացված **պարբերություն 15-ում** և ստորև բերված **պարբերություն 55-ում**:

48. Այս թեսթի շրջանակներում, պետք է հաշվի առնվեն պլանի կամ ծրագրի առանձնահատկությունների չափանիշները և Հավելված III-ում ներկայացված՝ շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցությունների (կամ «կարևորության») չափանիշները:
- Նպաստում կայուն զարգացմանը
 - Ինչ չափով է հետագա նախագծերի շրջանակ հաստատում
 - Այլ պլանների կամ ծրագրերի վրա ազդեցությունը
 - Համապատասխան բնապահպանական խնդիրներ
 - Խնդիրների բնույթը, դրանց անդրսահմանային ազդեցությունները
 - Վտանգները
 - Արժեք ներկայացնող կամ զգայուն տարածքների վրա ազդեցություն:
49. Այս բոլոր չափանիշները կարելի է դիտարկել որպես համախումբ, դրանք կիրառելիս փորձագիտական դատողությունների հիման վրա որոշում է կայացվում, թե արդյոք այդ չափանիշներին նախատեսվող պլանը կամ ծրագիրը համապատասխանում է, թե ոչ: Եթե հնարավոր չէ պարզել, թե արդյոք նախատեսվող պլանը կամ ծրագիրը շրջակա միջավայրի վրա նշանակալի ազդեցություն կարող է ունենալ, թե ոչ, ապահովության համար խորհուրդ է տրվում ՌԲԳ կիրառել:
50. ԵՆ Ուղեցույցում նշում է, որ ՌԲԳ Հրահանգի համարժեք դրույթների կիրառման շրջանակներում շրջակա միջավայրի վրա ազդեցության կարևորության չափանիշների հիման վրա պլանների կամ ծրագրերի տեսակների նկատմամբ որակական չափորոշիչներ կամ շեմեր կիրառելիս, «նպատակահարմար է խուսափել նախատեսվող պլանում կամ ծրագրում ընդգրկված նախագծերի՝ ընդամենը ծավալային կամ ֆինանսական շեմերի կամ ընդգրկված ֆիզիկական տարածքների նկատմամբ ... [ազդեցությունների կարևորության ստուգման համակարգեր] կիրառելուց» (պրբ. 3.47):
51. ԵՆ Ուղեցույցում նաև բերվում են օրինակներ, որոնք ցույց են տալիս, թե ինչու այս մոտեցումը խորհուրդ չի տրվում²⁸: «Նույնիսկ փոքրածավալ նախագիծը շրջակա միջավայրի վրա կարող է ունենալ էական ազդեցություն, եթե այն իրականացվում է այնպիսի տեղանքում, որտեղ շրջակա միջավայրի գործոնները ... զգայուն են չնչին փոփոխությունների նկատմամբ: Նույն տրամաբանությամբ համարվում է, որ տվյալ նախագիծը բավարարում է զգալի ազդեցությունների պայմանին, եթե ելնելով նախատեսվող գործողությունների բնույթից՝ կարող է այնքան լուրջ բնապահպանական հետևանքներ ունենալ, որ շրջակա միջավայրում զգալի կամ անդառնալի փոփոխությունների պատճառ դառնալու վտանգ ներկայացնի՝ անկախ իրականացվող աշխատանքների ծավալից» (պարբերություն 3.60):
52. Հավելված III-ի կարևորության չափանիշներն ամփոփված են ստորև Ա3.1 Աղյուսակում: Ազդեցությունների կարևորությունը կարելի է ստուգել նաև այլ չափանիշների կիրառմամբ: Հոդվածում 2.7-ում նշված «բնապահպանական ռեցեպտորներ» հասկացությունը և Հավելված IV-ում բերված տեղեկատվությունը կարող են օգտակար լինել կուտակումային կամ կայուն ազդեցությունների տարբերակման գործում: Այս առումով, օրինակ, թե արդյոք բարդություններ ամենայն հավանականությամբ կուտակային են կամ մշտական: Բացի այդ, ՌԲԳ Հրահանգը ներառում է երկու լրացուցիչ չափանիշներ, որոնք նշված չեն Արձանագրությունում, սակայն կարող են օգտակար լինել ազդեցությունների կարևորությունը որոշելու գործում.
- Ազդեցությունների կուտակումային, կուտույատիվ բնույթը

²⁸ ՇՄԱԳ-ի վերաբերյալ համապատասխան դատական գործի վերաբերյալ Արդարադատության եվրոպական դատարանի դատավճռի գեկույց (Հանձնաժողովն ընդդեմ Իռլանդիայի, 1999թ. սեպտեմբերի 21, գործի հ/հ C-392/96). Դատավճիռը գետեղված է հետևյալ կայքէջում՝ http://eurlex.europa.eu/smartapi/cgi/sga_doc?smartapi!celexplus!prod!CELEXnumdoc&lg=en&numdoc=61996J0392

- Տեղանքի կարևորությունն ու զգայունությունը, որոնք պայմանավորված են հետևյալ գործոններով՝
 - Առանձնահատուկ բնական հատկանիշներ կամ մշակութային ժառանգություն
 - Բնապահպանական որակի գերազանցված չափանիշներ կամ սահմանային արժեքներ
 - Ինտենսիվ հողօգտագործում:

53. Հավելված III-ում տրված՝ շրջակա միջավայրի ազդեցությունների կարևորության չափանիշների հաջորդականությունը պայմանավորված չէ դրանց կշռի նկատառումներով, սակայն դրանք կարել է խմբավորել. Շնորհանուր առմամբ, 1-4 պարբերությունները վերաբերում են պլանի կամ ծրագրի առանձնահատկություններին, իսկ 5 - 8 պարբերությունները՝ ազդեցություններին:

54. Եթե որևէ չափանիշի կիրառման դեպքում պարզվում է, որ նախատեսվող պլանը կամ ծրագիրը կարող է զգալի ազդեցություն ունենալ, ապա կարիք չկա շարունակել ազդեցությունների կարևորության վերլուծությունը, քանի որ մեկ չափանիշի բավարարումն արդեն հաստատում է ՌԲԳ-ի անհրաժեշտությունը: Այնուամենայնիվ, շատ պլանների և ծրագրերի դեպքում կարող է դժվար լինել վստահությամբ որոշելու, թե արդյոք դրանք կարող են ունենալ էական ազդեցություն շրջակա միջավայրի վրա, թե ոչ: Ազդեցության «հնարավոր, հավանական» բնորոշումն ընդունվում է որպես հիմք, քանի որ ընդամենը պահանջվում է ցույց տալ, որ զգալի ազդեցություն կարելի է ակնկալել ողջամիտ հավանականության չափով:

Աղյուսակ Ա.3.1 Հավելված III-ի (կարևորության չափանիշների) կիրառման ուղեցույց

Հավելված III-ի պարբերություն	Ուղեցույց (ԵՇ Ուղեցույցից)
1. Պլանում կամ ծրագրում բնապահպանական, այդ թվում՝ առողջապահական հարցերի ընդգրկման նպատակահարմարությունը, հաշվի առնելով կայուն զարգացման խթանման անհրաժեշտությունը	Նախատեսվող պլանը կամ ծրագիրը որքանով կարող է նպաստել շրջակա միջավայրի վնասակար ազդեցությունների նվազեցմանը: Շրջակա միջավայրի վրա մեծ ազդեցություն գործելու ներուժ ունեցող պլանը կամ ծրագիրը ենթակա է ՌԲԳ-ի: ՌԲԳ-ի շնորհիվ կարող է նաև ավելի զգալի դառնալ պլանի կամ ծրագրի ներդրումը կայուն զարգացմանը (պարբերություններ. 3.53–3.54):
2. Մանրամասնության աստիճանը, որով պլանը կամ ծրագիրը սահմանում է նախագծերի և այլ գործողությունների շրջանակը ինչպես աշխատանքների կատարման վայրի, բնույթի, ծավալների ու գործառնական պայմանների, այնպես էլ՝ միջոցների բաշխման առումով	Որքան ճիշտ է սահմանված լինում պլանի կամ ծրագրի գործողությունների շրջանակը, այնքան ավելի հավանական է ՌԲԳ-ի իրականացման անհրաժեշտությունը: Իրավական փաստաթղթի կարգավիճակ ունեցող պլանների ու ծրագրերի դեպքում, որպես կանոն, առավել խիստ մոտեցում է ցուցաբերվում գործողությունների շրջանակների որոշմանը, քան նման կարգավիճակ չունեցողների դեպքում: Գործողությունների շրջանակներն ամենայն խստությամբ են հաստատվում նաև այն պլանների կամ ծրագրերի դեպքում, որոնց միակ կամ հիմնական նպատակը տարբեր նախագծերի շրջանակ ստեղծելն է, սովորաբար մի շարք ծրագրերի համար կարող է նաև սահմանվել ամուր շրջանակ (պարբերություն 3.51):
3. Տվյալ պլանի կամ ծրագրի՝ այլ պլանների և ծրագրերի վրա, այդ թվում՝ ավելի բարձր դասակարգում ունեցող աշխատանքների վրա ազդեցության աստիճանը	Եթե որևէ պլան կամ ծրագիր մեծապես ազդում է մեկ այլ պլանի կամ ծրագրի վրա, ապա շրջակա միջավայրի վրա այդ պլանի կամ ծրագրի ազդեցությունները կարող են ավելի լայնածավալ (կամ խորը) լինել: Հիերարխիկ դասավորվածության դեպքում, առավել բարձրակարգ աստիճան և ընդհանուր բնույթ ունեցող պլաններն ու ծրագրերը կարող են ազդել ավելի ցածր օղակներում գտնվող և առավել մանրամասն ձևակերպված պլանների ու ծրագրերի վրա: Համակցող պլանները կամ ծրագրերը, որոնք ուղղակիորեն իրականացվում են այլ պլանների կամ ծրագրերի միջոցով, կարող են մեծ ազդեցություն ունենալ: Այնուամենայնիվ, տարբեր պլանների և ծրագրերի փոխկապվածության յուրաքանչյուր դեպք պետք է ամենայն ուշադրությամբ քննության առնվի (պարբերություն 3.52):
4. Բնապահպանության, այդ թվում՝ առողջապահության խնդիրներ, որոնք առնչվում են տվյալ պլանին կամ ծրագրին:	Այս համախմբում ընդգրկված են այն դեպքերը, երբ պլանները կամ ծրագրերը բնապահպանական խնդիրների պատճառ կարող են դառնալ կամ սրել առկա խնդիրները, բնապահպանական նկատառումները կարող են կաշկանդել դրանց իրականացման աշխատանքները կամ ազդել դրանց վրա, ինչպես նաև այն դեպքերը, երբ նախատեսվող աշխատանքները կարող են լուծել կամ կրճատել բնապահպանական խնդիրները կամ օգնել խուսափել դրանցից: Ամեն դեպքում, անհրաժեշտ է պարզել տվյալ պլանին կամ ծրագրին առնչվող բնապահպանական խնդիրների բնույթն ու կարևորությունը (պարբերություն 3.55):
5. Շրջակա միջավայրի, այդ թվում՝ առողջության վրա այնպիսի ազդեցությունների բնույթը, ինչպիսիք են դրանց հավանականությունը, տևողությունը, հաճախականությունը, վերացման հնարավորությունները, ուժգնությունը և չափը (օրինակ, գործողությունների հետևանքները կրող բնակչության աշխարհագրական տարածքը կամ թիվը)։	Այս հարցում շատ անորոշություններ կան, ոչ բավարար կամ անհայտ տվյալների և անբավարար գիտելիքների պայմաններում դժվար է որոշել նշանակալի ազդեցությունների շրջանակը: Բայցնայնպես, ենթադրվում է, որ հնարավոր է կատարել ազդեցությունների մոտավոր գնահատում (պարբերություն 3.57): Հնարավոր ազդեցությունների բնույթն ու առանձնահատկությունները հաշվի են առնվում գնահատման ենթակա համատեքստում դրանց կարևորությունը գնահատելիս, օրինակ՝ արդյոք ազդեցությունների հավանականությունը կամ հաճախականությունը ցածր արժեք ունեն (պատահականություն), թե ազդեցությունները շարունակական բնույթ ունեն: Որքան ավելի բարդ (օրինակ, համախմբման կամ կուտակման արդյունքում), առավել տարածված կամ ավելի լուրջ են հետևանքները, այնքան ավելի հավանական է, որ դրանք որակվեն որպես «զգալի, նշանակալի» (պարբերություն 3.58):
6. Բնապահպանական, այդ թվում՝ առողջապահական վտանգները	
7. Ազդեցությունների անդրահամանային բնույթը	Նույնքան կարևոր է հաշվի առնել այն տարածքը, որտեղ նախատեսվում է իրականացնել աշխատանքները և որոնք, հետևաբար, ազդեցություն կարող են կրել նախատեսվող պլանի կամ ծրագրի իրականացման դեպքում: Արդյունքում հարկ է ուշադրություն դարձնել ոչ միայն այն տարածքներին, որոնք ունեն հատուկ պաշտպանության կարգավիճակ: Ազդեցությունների ենթարկվող տարածքի նշանակությունը և զգայունությունը հաշվի առնելով՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունների կարևորությունը կարող է ավելի մեծ արժեք վերագրվել (պարբերություն 3.59):
8. Հատուկ արժեք ներկայացնող կամ զգայուն այնպիսի տարածքների վրա, ինչպիսիք են հատուկ պահպանվող տարածքի ճանաչված ազգային կամ միջազգային կարգավիճակ ունեցող լանդշաֆտների վրա տվյալ պլանի կամ ծրագրի ազդեցության աստիճանը	

ԱՅ.4 ՀՆԱՆԱԿԱՅԻ ԱՊՏՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արդյունքների ներկայացումը հանրությանը

55. Շրջակա միջավայրի վրա նշանակալի ազդեցությունների որոշման արդյունքները հանրությանը ներկայացնելիս խորհուրդ է տրվում նշել, թե ըստ սահմանված կարևորության չափանիշների, տվյալ պլանը կամ ծրագիրը (կամ դրա տեսակը) ինչ գնահատական է ապահովել:

56. Արձանագրությամբ առաջարկվում է տեղեկատվությունը հանրությանը մատչելի դարձնել «հանրային ծանուցագրերի կամ համապատասխան այլ միջոցներով, օրինակ՝ հաղորդակցման էլեկտրոնային միջոցներով»: Հարկ է միջոցներ ձեռնարկել, որպեսզի տեղեկատվությունը հասանելի լինի հասարակության սովոր գանգվածին:

Պլանների և ծրագրեր տեսակների ցուցակներ

57. Թեև Արձանագրությամբ նման պահանջ չի ներկայացվում, սակայն Արձանագրությունն ընդունած երկրներին խորհուրդ է տրվում կազմել ՌԲԳ-ի ենթակա պլանների և ծրագրերի տեսակների տիպերի ցանկեր՝ սահմանելով, թե որ տեսակների դեպքում է ՌԲԳ պարտադիր, կամ սահմանել ցուցանաչային ցանկ: Օրինակ, եթե որևէ պլան կամ ծրագիր համապատասխանում է պլանների կամ ծրագրերի տեսակների (կամ այլ) ցուցակին, ապա տվյալ պլանի կամ ծրագրի շրջանակներում ՌԲԳ-ի անհրաժեշտության որոշման մանրամասն Արձանագրությանն հետևելու կարիք չկա:

58. Օրինակ, կարելի է կազմել համապատասխան պարտադիր ցուցակ, որտեղ նշված կլինեն ՌԲԳ-ի ենթակա պլանների և ծրագրերի տեսակները: Պլանների և ծրագրերի տեսակների օրինակ են պարբերաբար վերանայման ենթակա հողօգտագործման կամ զարգացման պլանները (որոնք որոշ երկրներում կազմվում են կառավարության տարբեր մակարդակներում), թափոնների կառավարման պլանները և տրանսպորտային ենթակառուցվածքների պլաններն ու ծրագրերը:

59. Ի լրումն պարտադիր ցուցակի, կարելի է նաև պատրաստել հայեցողական ցուցակ, որում կընդգրկվեն պլանների և ծրագրերի այն տեսակները, որոնց դեպքում պետք է պարտադիր անհատական պլանի կամ ծրագրի ուսումնասիրություն կատարվի (հոդված 4), այդ թվում՝ համապատասխան դեպքերում, շրջակա միջավայրի վրա նշանակալի ազդեցության որոշման համար (հոդված 5):

60. Բացասական (բացառող) ցուցակների օգտագործման դեպքում հարկ է ամենայն ուշադրությամբ հետևել, որ զգայուն տարածքների վրա ազդող կամ ընդհանրապես շրջակա միջավայրի վրա հնարավոր նշանակալի ազդեցության ունեցող պլանները կամ ծրագրերը սխալմամբ չազատվեն ՌԲԳ-ի պահանջներից:

61. Մովորաբար, կառավարությունը կամ այլ մարմիններ կարող են պատրաստել պլանների և ծրագրերի տեսակների մեկ կամ ավելի ցուցակներ՝ ՌԲԳ-ի անհրաժեշտությունը պարզելու համար, դրանց նկատմամբ կիրառելով Արձանագրության Հոդված 4-ում (կիրառույթ) ամրագրված պահանջները:

Տեսակների ցուցակները կարող են տարածվել ուղեցույցի ձևաչափով կամ ներառվել ազգային օրենսդրության և կանոնադրության շրջանակներում: Արձանագրությունն ընդունած երկրները, պլանների և ծրագրերի տեսակների ցուցակներն առաջին անգամ կազմելիս, պետք է հաշվի առնեն բնապահպանության և առողջապահության պատասխանատու մարմինների հետ խորհրդակցության կազմակերպելու պահանջը: Նրանք նաև պետք է խորհրդակցեն հանրության հետ, թեև Արձանագրությունում նման պահանջ ուղղակիորեն չի սահմանվում: Այնուամենայնիվ, շատ երկրներում առաջադրված ազգային ուղեցույցների, օրենսդրական և կանոնադրական ակտերի շուրջ խորհրդակցության պահանջ դրվում է:

ԳԼՈՒԽ Ա4

ՊԼԱՆՆԵՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ ՌԲԳ

Ա.4.1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արձանագրության տեքստում օգտագործվում է «շրջակա միջավայրը, այդ թվում՝ առողջությունը» արտահայտությունը: Կրկնողությունից խուսափելու նպատակով սույն ձեռնարկում նշվում է միայն շրջակա միջավայրը, սակայն պետք է համարել, որ այդ հասկացության մեջ ընդգրկված է նաև առողջությունը: Առողջապահական հարցերի շուրջ լրացուցիչ տեղեկատվության համար, տե՛ս հավելված Ա.1.1-ը:

1. Այս գլխում տրվում է [Հատված Ա2.2](#)-ում նկարագրված ձևով պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում ընդգրկվելիք ՌԲԳ բաղադրիչների բացատրությունը: Դրանք են՝
 - Շրջանակների որոշում և բնապահպանական զեկույց ([Հատված Ա4.2](#)).
 - Հանրության մասնակցություն ([Հատված Ա4.3](#)).
 - Պատասխանատու մարմինների հետ խորհրդակցություն ([Հատված Ա4.4](#)).
 - Անդրսահմանային խորհրդակցություններ ([Հատված Ա4.5](#)).
 - Որոշումների կայացում ([Հատված Ա4.6](#)).
 - Մշտադիտարկում ([Հատված Ա4.7](#)).
2. Ներկայացվում են յուրաքանչյուր բաղադրիչին վերաբերող իրավական պարտավորությունները և հնարավոր գործնական նկատառումները:

Ա.4.2 ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄ և ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

3. Այս բաժնում ներկայացվում են Արձանագրության համաձայն նախաձեռնվող ՌԲԳ-ի շրջանակների որոշման (հոդված 6) և բնապահպանական զեկույցի (հոդված 7) մանրամասները: Նշված երկու դրույթներն այստեղ քննարկվում են միասին, սակայն երկրներն ըստ իրենց հայեցողության կարող են դրանք դիտել և կիրառել որպես ՌԲԳ-ի առանձին բաղադրիչներ:
4. Ի լրումն համապատասխան իրավական պարտավորությունների ամփոփման, այս հատվածում ներկայացվում են այլընտրանքային տարբերակներ և այլ հնարավոր գործնական նկատառումներ:

Ա.4.2.1 Օրենքով սահմանված պարտավորություններ

5. Պլանների կամ ծրագրերի ՌԲԳ գործընթացի առաջին բաղադրիչը գործողությունների շրջանակի որոշումն է (Հոդված 6): ՌԲԳ Հրահանգի համարժեք դրույթները զետեղված են Հոդված 5.4-ում:
6. Գործողությունների շրջանակի որոշումն օգնում է սահմանել բովանդակային ծավալները թե՛ ընդգրկվելիք թեմաների և թե՛ յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ ներկայացվող տեղեկատվության խորության ու մանրամասների առումով: Այսպիսով, գործողությունների շրջանակի որոշման նպատակն է՝ հետևել, որ բնապահպանական հաշվետվությունն ունենա համապատասխան շեշտադրումները, բավարար տեղեկատվություն ներկայացնի կարևորություն ներկայացնող հարցերի շուրջ և անտեղի ու անկարևոր մանրամասնություններով ծանրաբեռնված չլինի: «Շրջակա միջավայրի վրա աննշան ազդեցությունների կամ ոչ կարևոր հարցերի շուրջ չափազանց մանրամասն տեղեկատվության ներկայացումը հաշվետվությունը դարձնում է դժվարընկալելի և կարող է կարևոր տեղեկությունների անտեսման պատճառ հանդիսանալ» (ԵՄ, պարբերություն 5.19):
7. Գործողությունների շրջանակների որոշման փուլում բնապահպանության և առողջապահության պատասխանատու մարմինների հետ խորհրդակցումը պարտադիր է (Հոդված. 6.2), հանրությանը կարող են ընձեռվել մասնակցության հնարավորություններ (Հոդված 6.3):
8. Բնապահպանական զեկույցում ընդգրկվող տեղեկատվությունը պետք է լինի արդիական (Հոդված 6.1) և բավարարի Հոդված 7.2-ում ամրագրված չափանիշները (ՌԲԳ Հրահանգում նշված վերջին երկու չափանիշները բացակայում են) (տե՛ս ստորև):
9. ՌԲԳ գործընթացի երկրորդ բաղադրիչը ՌԲԳ-ի ենթակա պլանի կամ ծրագրի բնապահպանական զեկույցի պատրաստումն է՝ համապատասխան պահանջների համաձայն (Հոդված 7): ՌԲԳ Հրահանգի համարժեք դրույթները զետեղված են Հոդվածներ 2 (գ), 5.1,5.2, 5.3 և 12.2-ում:
10. Այս բաղադրիչում ընդգրկված են պատասխանատու մարմինների հետ խորհրդակցումը, հանրության մասնակցությունը և հնարավոր է՝ անդրսահմանային մարմինների ծանուցումը և նրանց հետ խորհրդակցումը, ինչպես նկարագրված է այս գլխի հետագա հատվածներում:

11. Բնապահպանական զեկույցը պետք է սահմանի, բնութագրի և գնահատի շրջակա միջավայրի վրա պլանի կամ ծրագրի իրականացման հավանական ազդեցությունները և պլանի կամ ծրագրի իրագործելի այլընտրանքային տարբերակները (Հոդված 7.2): Պատրաստի զեկույցից օգտվում են որոշում կայացնողները (տե՛ս [հատված Ա4.6-ը](#)): Ձեկույցը պետք է ներկայացնի մշտադիտարկման ձևաչափի մանրամասները ([հատված Ա4.7](#)):
12. Ձեկույցի բովանդակությունը պետք է համապատասխանի շրջանակների որոշման արդյունքներին (Հոդված 6), սակայն հիմնված լինի Արձանագրության Հավելված IV-ում գետեղված ցուցակի վրա (ՌԲԳ Հրահանգի համարժեք դրույթները գետեղված են Հավելված I-ում) և հաշվի առնի սահմանված չորս չափանիշները (Հոդված 7.2):
13. Վերջապես, Արձանագրության պահանջները բավարարելու համար բնապահպանական զեկույցը պետք է բավարար որակ ունենա (Հոդված 7.3):


Ա4.2.2 Այլընտրանքային տարբերակներ

14. Բնապահպանական զեկույցի կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ պլանի կամ ծրագրի նախնական տարբերակը և դրա իրագործելի տարբերակները պետք է քննարկվեն նույն ձևով: Այս հատվածում արծարծվում են այլընտրանքային տարբերակների քննարկման գործնական խնդիրներ: Լրացուցիչ հնարավոր գործնական նկատառումներ են ներկայացվում ստորև տրված [Հատված 4.2.3](#)-ում:
15. Պլանների կամ ծրագրերի նախապատրաստման գործընթացը, որպես կանոն, ենթադրում է հետևյալ տարբերակների քննարկումը (տե՛ս նկար Ա4.1-ը).
 - Պլանի կամ ծրագրի առանձին **նպատակներ** (որոնք Արձանագրությունում սահմանված են որպես «հիմնական նպատակներ») և **առաջնահերթություններ**: Որպես կանոն, դրանք սահմանում են զարգացման պահանջներին համապատասխանող օպտիմալ տարբերակները, ինչպես նաև զարգացման ցանկալի մակարդակին հասնելու գործողությունների հիմնական ուղղությունները, օր.՝ զարգացման սցենարներ:
 - Պլանի կամ ծրագրի հաստատված նպատակների և առաջնահերթությունների կատարման համար անհրաժեշտ **գործողություններ**: Այս տարբերակները կարող են առաջարկել նպատակների իրականացման տարատեսակ եղանակներ՝ տարբեր տեխնիկական լուծումների (այն է՝ գործողությունների իրականացման տեխնոլոգիաներ, գործընթացներ ու ձևաչափեր), առաջարկվող գործողությունների տարբեր վայրերի կամ իրագործման տարբեր ժամանակահատվածների կամ հաջորդականության ընտրության միջոցով:
 - Առաջարկվող գործողությունների իրականացման այլընտրանքային **պայմաններ**: Այս տարբերակները սահմանում են, թե ինչ միջոցներ է հարկավոր ձեռնարկել, որպեսզի նախատեսված պլանի կամ ծրագրի դրական ազդեցություններն առավելագույնի հասցվեն, իսկ բացասական կողմնակի հետևանքները՝ նվազագույնի (հետևանքների կանխում, մեղմում կամ վերացում): Նման պայմաններ կարող են ամրագրվել, օրինակ, նախատեսվող գործողությունների մասին որոշումների կայացման չափանիշներում կամ տվյալ պլանի կամ ծրագրի շրջանակներում նախատեսվող հետագա պլանների, ծրագրերի կամ նախագծերի բնապահպանական գնահատումների ընդհանուր տեխնիկական առաջադրանքում:
16. Տվյալ պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի շրջանակներում քննարկման ենթակա ոչ բոլոր այլընտրանքներն են սահմանվում հենց նույն գործընթացի շրջանակներում: Օրինակ, որևէ պլանում կամ ծրագրում կարող են ամրագրվել առավել մեծ կարևորության պլանների, ծրագրերի և քաղաքականությունների նպատակներ և առաջնահերթություններ: Կարող են նաև ընդգրկվել տարբերակներ, որոնք ուսումնասիրվել են պլանի կամ ծրագրի կազմման գործընթացից առաջ իրականացված հետազոտության շրջանակներում (օր.՝ հաջորդական պլանների միջանկյալ ժամանակահատվածում մշակված սցենարներ, որոնք պաշտոնական, ֆորմալ Արձանագրությունով քննարկվում են պլանավորման միայն

հաջորդ պարբերաշրջանում): Անկախ նրանից, թե ստեղծվում են նման իրավիճակներ, թե ոչ, ՌԲԳ պարտադիր պետք է անդրադառնա ամբողջ պլանի կամ ծրագրի (այսինքն, դրա նպատակների, այդ նպատակներն իրագործելու համար անհրաժեշտ գործողությունների և դրանց նախաձեռնման պայմանների) ազդեցություններին՝ հստակեցնելով շրջակա միջավայրի վրա ամբողջական պլանի կամ ծրագրի ազդեցությունների համայնապատկերը:

17. Անկախ նրանից, թե ինչ ակունքից են բխում այս այլընտրանքային տարբերակները, դրանք պետք է քննարկվեն և համեմատվեն հետևյալ առանցքներով՝
- Նպաստում պլանի կամ ծրագրի համապատասխան նպատակների իրականացման գործին.
 - Դրանց կոնկրետ ազդեցությունները
18. ՌԲԳ կարող է գործնական ներդրում ունենալ պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի առանցքային բաղադրիչների այլընտրանքային տարբերակների մշակման գործում հետևյալ ուղղություններով՝
- Պլանի կամ ծրագրի համատեքստի և նպատակների հստակեցում.
 - Հետագա զարգացման այլընտրանքային տարբերակների մշակում.
 - Պլանի կամ ծրագրի նպատակների իրագործման այլընտրանքային ուղիների սահմանում.
 - Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կանխելու մեղմելու կամ վերացնելու այլընտրանքային միջոցներ:

Նկար Ա4.1 Այլընտրանքային տարբերակներ, որոնք կարող են հաշվի առնվել Պլանների և ծրագրերի կազմման գործընթացում



19. Արձանագրությունը նույն կարգն է սահմանում պլանի կամ ծրագրի և դրա այլընտրանքների համար. պահանջվում է, որ հաշվետվությունը լիարժեք ձևով անդրադառնա այլընտրանքային տարբերակներին: Հետևաբար, խորհուրդ է տրվում, որ բոլոր այլընտրանքները հավասարապես քննության առնվեն, պետք է համարել, որ ընդամենը մի շարք այլընտրանքներ կան, և ոչ թե՝ մի պլան կամ ծրագիր՝ գումարած մի շարք այլընտրանքային տարբերակներ: Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի ուղին հետևյալն է՝
- (1) Այլընտրանքային տարբերակների նախնական համախումբ (որը սահմանվում է գործողությունների շրջանակի որոշման ընթացքում)
 - (2) Ընտրում և վերանայում, նախընտրելի տարբերակների առանձնացում
 - (3) Հաստատում, վերջնական պլանի կամ ծրագրի ընդունում

20. Հաշվի առնելով ներքև նշվածը՝ խորհուրդ է տրվում այլընտրանքների ուսումնասիրությունը սկսել գործողությունների շրջանակների որոշման փուլում:
21. ԵՄ ուղեցույցում նշված է, որ ՌԲԳ Հրահանգը «պահանջում է [այլընտրանքների] առավել մանրագնին գնահատում, քան ՇՄԱԳ Հրահանգը» (պարբերություն 5.6): Ստորև տրված ներդիր տեքստ Ա4.1-ում տրվում է ԵՄ ուղեցույցի հիման վրա կազմված լրացուցիչ ուղեցույց:

Ներդիր Ա4.1 ՌԲԳ-ի այլընտրանքային տարբերակները

Արձանագրությունը նույն պահանջներն է ներկայացնում այլընտրանքային տարբերակներին, ինչ պլանի կամ ծրագրի նախնական տարբերակի դեպքում: Ինչպես ամրագրված է ԵՄ Ուղեցույցում՝ «կարևոր է շրջակա միջավայրի վրա պլանի կամ ծրագրի և դրա այլընտրանքային տարբերակների հավանական էական ազդեցությունները ճշտել, նկարագրել և գնահատել համեմատելի ձևով» (պարբերություն 5.12): ԵՄ Ուղեցույցում նաև նշվում է. «խիստ կարևոր է, որ պլանի կամ ծրագրի ընդունման համար պատասխանատու մարմինն կամ խորհրդարանին, ինչպես նաև խորհրդակցություններին հրավիրված մարմիններին ու հանրության ներկայացուցիչներին ներկայացվի խելամիտ այլընտրանքային տարբերակների մասին ճիշտ պատկեր, ինչպես նաև լավագույն տարբերակի ընտրության հիմնավորումը: Ընտրված այլընտրանքային տարբերակներից յուրաքանչյուրի համար հարկավոր է հայթայթել [հավելվածում] ընդգրկված տեղեկատվությունը:

«Այլընտրանք» տերմինի սահմանումն Արձանագրությունում (կամ Հրահանգում) տրված չէ: Հնարավոր են այլընտրանքների մի քանի կատեգորիաներ, դասակարգեր՝

- Ի սկզբանե առաջարկված պլանի կամ ծրագրի այլընտրանքային տարբերակ, որը, հնարավոր է, նույն նպատակներն է հետապնդում
- Որևիցե պլանի կամ ծրագրի բաղադրիչի այլընտրանքային տարբերակ, որը, հնարավոր է, նույն նպատակներն է հետապնդում:

Այլընտրանքային տարբերակների տեսակների շարքում կարող են ներառվել նաև այլընտրանքային վայրեր, հողի օգտագործման տեսակներ, տեխնոլոգիաներ, ժամկետներ, զարգացման ուղիներ կամ նույնիսկ նպատակների համախումբ:

Խելամիտ տարբերակներն առանձնացնելիս կարող են հաշվի առնվել աշխարհագրական, ֆինանսական կամ այլ սահմանված նպատակների գործոնները (օրինակ, սահմանված նպատակների հետ անհամատեղելի այլընտրանքային տարբերակը չի կարող ողջամիտ ընտրություն համարվել):

Այլընտրանքը պետք է իրատեսական լինի. «կանխամտածված ձևով՝ նախատեսված պլանի կամ ծրագրի հաստատման հավանականությունը մեծացնելու նպատակով, ըստ գնահատման շրջակա միջավայրի վրա ավելի լուրջ հետևանքներով հղի այլընտրանքային տարբերակի ընտրությունը չի համապատասխանում սույն դրույթի սահմանված նպատակին: Իսկական համարվելու համար այլընտրանքները նույնպես պետք է լինեն համապատասխան իրավասու մարմնի իրավական կամ աշխարհագրական իրավասության շրջանակներում» (պարբերություն 5.14):

Ա4.2.3 Այլ հնարավոր գործնական նկատառումներ Գործողությունների շրջանակների որոշման և բնապահպանական գեկույցի պատրաստման պատասխանատվությունը


22. Արձանագրությունը չի նշում, թե ով է կրում պլանի կամ ծրագրի նախնական տարբերակի մշակման պատասխանատվությունը: Այս խնդրին տարբեր լուծումներ կարող են տրվել՝ կախված պլանի կամ ծրագրերի կոնկրետ առաջարկից և համապատասխան վարչական մակարդակից: Բնապահպանական հաշվետվության պատրաստման, ինչպես նաև դրան նախորդող՝ ստուգագնման ու շրջանակների որոշման պատասխանատվությունը «դեպքերի գերակշիռ մասում պետք է ստանձնի պլանի կամ ծրագրի նախապատրաստման համար պատասխանատու իրավասու մարմինը կամ ֆիզիկական կամ իրավաբանական

անձը» (ԵՄ Ուղեցույց, պարբերություն 5.8), սակայն այդ պատասխանատվությունը կարող է ամրագրվել ազգային օրենսդրությամբ:

Գործողությունների շրջանակների որոշման և բնապահպանական զեկույցի պատրաստման առաջարկվող քայլեր

23. Ինչպես նշվում է ԵՄ ուղեցույցում, բնապահպանական զեկույցը պլանների և ծրագրերի նախապատրաստման և ընդունման գործընթացներում բնապահպանական նկատառումներ ընդգրկելու կարևոր գործիք է, քանի որ դրա շնորհիվ առանձնացվում, գնահատվում և որոշումներ կայացնելիս հաշվի են առնվում շրջակա միջավայրի վրա դրանց հնարավոր էական ազդեցությունները: Բնապահպանական զեկույցի նախապատրաստումը և պլանների ու ծրագրերի կազմման գործընթացում բնապահպանական նկատառումների ընդգրկումը ձևավորում են կրկնողական գործընթաց, որը նպաստում է բնապահպանական տեսանկյունից առավել կայուն որոշումների կայացմանը (պարբերություն 5.2): ԵՄ Ուղեցույցը (համապատասխանում է Հրահանգի հոդված 4.1-ին), այսպիսով, սահմանում է կրկնողական գործընթացը:
24. Արձանագրությունը հստակորեն չի սահմանում կրկնողական գործընթացի կամ զեկույցների նախնական տարբերակների պատրաստման անհրաժեշտությունը, սակայն խորհուրդ է տրվում զեկույցի նախապատրաստումը դիտել որպես կրկնողական գործընթաց, որը կազմակերպվում է տարբեր գործողությունների, քայլերի միջև և դրանց շրջանակներում՝ հնարավորություն ընձեռելով, ըստ անհրաժեշտության, անդրադառնալ նախորդ փուլի առաջադրանքներին ու խնդիրներին:

- | | |
|--------|--|
| Քայլ 1 | Որոշել շրջանակը |
| Քայլ 2 | Վերլուծել համատեքստը և նախնական վիճակը |
| Քայլ 3 | Ամբողջացնել այլընտրանքային տարբերակների մշակման և համեմատության աշխատանքները |
| Քայլ 4 | Պատրաստել բնապահպանական զեկույցը |
| Քայլ 5 | Խորհրդակցել |



25. Առաջարկվող քայլերն առավել մանրամասն քննարկվում են ստորև, որտեղ առանձնացվում են ՌԲԳ-ի շրջանակներում նախաձեռնվելիք պարտադիր մեթոդաբանական և գործընթացային խնդիրները՝ Արձանագրությունում ամրագրված պարտավորությունները բավարարելու նպատակով, ինչպես նաև լրացուցիչ, ոչ պարտադիր առաջադրանքներ, որոնք համարվում են օրինակելի պրակտիկա: Մեթոդաբանական խնդիրների լուծման արդյունքում, Հավելված IV-ի պահանջների համաձայն, պատրաստվում է բնապահպանական զեկույցում ընդգրկվելիք տեղեկատվությունը և ապահովվում է այդ տեղեկատվության հրապարակումը: **Մեթոդաբանական և գործընթացային խնդիրները պարտադիր են ամբողջությամբ վերցված ՌԲԳ-ի շրջանակներում և ոչ թե որևիցե քայլի շրջանակներում: Այս առաջադրանքների հաջորդականությունն ընդամենը հանձնարարական բնույթ ունի և, ինչպես նշված է վերևում՝ գործընթացը կրկնողական է, օրինակ՝ շրջանակների որոշումը շարունակվում է բնապահպանական զեկույցի պատրաստմանը զուգընթաց:**
26. Ստորև նկարագրված քայլերը մատնանշում են, թե հանրության մասնակցությունը և հանրության ներկայացուցիչների հետ խորհրդակցումը երբ կարող են տեղի ունենալ: Արձանագրությունը պահանջում է, որ թե՛ հասարակությունը և թե՛ իրավասու մարմինները հնարավորություն ունենան արտահայտելու բնապահպանական զեկույցի մասին իրենց կարծիքը (հոդվածներ 8.1 և 9.3), հետևաբար, նման հնարավորություն պետք է ընձեռվի զեկույցը վերջնական տեսքի բերելուց հետո: Այնուամենայնիվ,

Արձանագրությունը նաև պահանջում է, որ «հանրությանը ընձեռվեն արդյունավետ հնարավորություններ՝ մասնակցելու գործընթացի վաղ փուլերում, երբ բոլոր տարբերակները բաց են» (հոդված 8.1, իրավասու մարմինների հետ խորհրդակցման նույնօրինակ պահանջ կա հոդված 9.3-ում): Հետևաբար, որոշ իրավիճակներում, կարող է օգտակար լինել զեկույցի նախապատրաստման վաղ փուլերում կամավոր հիմունքներով հավելյալ հնարավորությունների տրամադրումը:

Քայլ 1. Շրջանակների որոշումը

Մեթոդաբանական առաջադրանքներ	Գործընթացային առաջադրանքներ	Լրացուցիչ, ոչ պարտադիր առաջադրանքներ
<ul style="list-style-type: none"> Նկարագրել պլանի կամ ծրագրի բովանդակությունը (Հավելված IV, պրբ1) Սահմանել պլանի կամ ծրագրի հիմնական նպատակները (Հավելված IV, պրբ1) Առանձնացնել նախատեսվող աշխատանքներին առնչվող բոլոր այլ պլաններն ու ծրագրերը և բացատրել, թե դրանք նախատեսվող պլանի կամ ծրագրի հետ ինչպես են հարաբերվում (Հավելված IV, պրբ 1) Հավաքել տվյալ պլանին կամ ծրագրին առնչվող բնապահպանական, այդ թվում՝ առողջապահական, խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն (Հավելված IV, պրբ 4) Սահմանել տվյալ պլանի կամ ծրագրի բնապահպանական, այդ թվում՝ առողջապահական, նպատակները (Հավելված IV, պրբ 5) Ներկայացնել ընտրված տարբերակի հիմնավորումը (Հավելված IV, պրբ 8) 	<ul style="list-style-type: none"> Վերլուծել բնապահպանական նպատակների և պլանի կամ ծրագրի առաջարկվող նպատակների միջև փոխկապվածությունը Հաստատել բնապահպանական և առողջապահական մարմինների ցուցակը, որոնք պետք է ներգրավվեն խորհրդակցություններում (հոդված 9.1, տես նաև հատված Ա4.4-ը) Համապատասխան մարմինների հետ խորհրդակցել բնապահպանական զեկույցում ընդգրկվելիք տեղեկատվության շուրջ (հոդված 6.2, տե՛ս նաև հատված Ա4.4) Որոշել բնապահպանական զեկույցում ընդգրկվելիք տեղեկատվության շրջանակը (հոդված 7.1) 	<ul style="list-style-type: none"> Սահմանել համապատասխան քաղաքականությունները և բացատրել, թե նախատեսվող պլանը կամ ծրագիրն ինչպես է հարաբերվում դրանց Առանձնացնել գնահատման ենթակա հնարավոր ազդեցությունները Սահմանել գործընթացում ընդգրկվելիք հանրության հատվածները, այդ թվում համապատասխան հասարակական կազմակերպությունները (ՀԿ-ները) (պետք է արվի քայլ 5-ում), (հոդված 8.3, տե՛ս հատված Ա4.3-ը) Կազմակերպել հանրության մասնակցությունը, որոշել բնապահպանական զեկույցում ընդգրկվելիք տեղեկատվության շրջանակը (հոդված. 6.3) Համապատասխան դեպքերում ծանուցել նախատեսվող աշխատանքներից տուժող այլ երկրների և խորհրդակցել այդ երկրների հետ (տե՛ս Հատված Ա4.5-ը)

27. Առաջին քայլով պահանջվում է կատարել շրջանակագրում՝ բնապահպանական զեկույցում ընդգրկվելիք համապատասխան տեղեկատվության շրջանակների որոշում: Ինչպես նշված է վերևում, շրջանակագրումը կարելի է դիտարկել կամ ՌԲԳ գործընթացի առանձին բաղադրիչ, կամ որպես բնապահպանական հաշվետվության սկզբնական քայլերից մեկը: Այս հատվածում քննարկվում է վերջին մոտեցումը: Գործնականում շրջանակագրումը և բնապահպանական զեկույցի նախապատրաստումը նույն կրկնողական գործընթացի մասն են կազմում:

28. Շրջանակագրումը պետք է պատասխանի մի շարք հարցերի, այդ թվում՝

- Ո՞ր աշխարհագրական վայրերն են ընդգրկվելու զեկույցում:
- Ի՞նչ բնապահպանական հարցեր (մարդու առողջության, բուսական, կենդանական աշխարհ, կենսաբազմազանության, հողային ռեսուրսներ և այլն) պետք է ուսումնասիրվեն:
- Ի՞նչ ժամանակահատված պետք է ընդգրկի զեկույցը:
- Ի՞նչ մեթոդներ (տվյալների հավաքման, ազդեցությունների գնահատման, հասարակության մասնակցության, իրավասու մարմինների հետ խորհրդակցությունների վարման և այլն) պետք է կիրառվեն, ի՞նչ խորությամբ և մանրամասնությամբ:
- Ի՞նչ տվյալներ են անհրաժեշտ:

- Ի՞նչ այլընտրանքային տարբերակներ պետք է ուսումնասիրվեն:

29. Վերոնշյալ հարցադրումներին պատասխանելու համար շրջանակագրումը պետք է նաև պատասխանի հետևյալ հարցերին (ինչպես տրված է վերևում ներկայացված Քայլ 1-ի Աղյուսակում)՝

- Որո՞նք են պլանի կամ ծրագրի հիմնական նպատակները:
- Պլանին կամ ծրագրին առնչվող ի՞նչ բնապահպանական նպատակներ կարելի է առանձնացնել և ինչպե՞ս են դրանք առնչվում պլանի կամ ծրագրի նպատակներին:
- Ի՞նչ այլ պլաններ կամ ծրագրեր են առնչվում նախատեսվող պլանին կամ ծրագրին և ի՞նչ փոխազդեցություն կարող է լինել դրանց միջև:
- Նախատեսվող պլանի կամ ծրագրի շրջանակներում ի՞նչ բնապահպանական խնդիրներ կարելի է առանձնացնել:

30. Ո՛չ Արձանագրությունը և ո՛չ էլ ՌԲԳ Հրահանգն ուղղակիորեն չեն պահանջում, որ նպատակները մանրամասն քննարկվեն, բայց երկուսն էլ պահանջում են միջազգային, ազգային և այլ մակարդակներում սահմանված նպատակների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն ընդգրկել բնապահպանական գեկույցում և ներկայացնել, թե դրանք ինչպես են հաշվի առնվել պլանի կամ ծրագրի նախապատրաստման գործընթացում (Հավելված IV, պարբերություն 5):

Ավելին, նախատեսվող գործողությունների միջոցով սահմանված նպատակների իրագործման լիարժեքության գնահատումը ՌԲԳ-ի շրջանակներում այլընտրանքների համեմատության ընդունված միջոց է:

Այս գլխում նկարագրվող ՌԲԳ գործընթացում առաջարկվում է առանձնացնել նպատակների երկու տեսակ, դրանք երկուսն էլ կարևոր են.

- Նախատեսվող պլանի կամ ծրագրի հիմնական նպատակները
- Նախատեսվող պլանին կամ ծրագրին առնչվող բնապահպանական նպատակները:

31. Ստորև բերված ներդիր Ա4.2-ում և Աղյուսակ Ա4.1-ում ներկայացված է բնապահպանական նպատակների և դրանց առնչվող համապատասխան հասկացությունների քննարկում: Կարող է օգտակար լինել այն հարցի ուսումնասիրությունը, թե այդ նպատակներն ինչպես են հարաբերվում պլանի կամ ծրագրի նպատակներին և արդյոք համատեղելի են դրանց հետ:

32. Ինչպես քննարկվում է ՌԲԳ գործիքների ուսումնասիրությանը նվիրված [Գլուխ Ա5](#)-ում, պլանի կամ ծրագրի մշակման գործընթացի ամենավաղ փուլում նպատակների սահմանման, պլանի կամ ծրագրի գաղափարների հղկման, իրավասու մարմինների ու հանրության ներգրավման տարբեր մեթոդներ կարող են կիրառվել: Իրավասու մարմինները կարող են գլխավորել նախատեսվող պլանին կամ ծրագրին առնչվող այլ համապատասխան պլանների ու ծրագրերի, շրջակա միջավայրի ներկա վիճակի և հավանական փոփոխությունների, տվյալ տարածքի առանձնահատկությունների և առկա խնդիրների, ինչպես նաև շահառուների (իրավասու մարմինների և հասարակության) վերաբերյալ տեղեկությունների հավաքման աշխատանքները:

33. Նախատեսվող պլանին կամ ծրագրին առնչվող այլ պլանների ու ծրագրերի թիվը և դրանց միջև փոխկապակցվածության չափը որոշելիս կարող է օգտակար լինել պլանների և ծրագրերի համապատասխան հիերարխիայի ուսումնասիրությունը (տես ստորև գետեղված «աստիճանակարգում» վերտառությամբ ներդիր Ա4.3-ը):

34. Շրջանակագրումը ներառում է իրավասու մարմինների հետ խորհրդակցությունների կազմակերպումը (տես [հատված Ա4.4](#)-ը) և, ըստ ընտրության, հանրության ներկայացուցիչների մասնակցությունը ([հատված Ա4.3](#)): Իրավասու մարմինների հետ

շիման և հանրության մասնակցության միջոցների վերաբերյալ գործնական ցուցումներ ներկայացված են Ձեռնարկի Գլուխ Ա5-ում:

35. Եթե անդրսահմանային էական ազդեցությունների հավանականություն կա, ապա խորհուրդ է տրվում շրջանակագրման ընթացքում ոչ ֆորմալ անդրսահմանային խորհրդակցություններ նախաձեռնել, որպեսզի գործընթացը համակարգված լինի (տես **Ենթաբաժին Ա4.5.2-ը**)։ Եթե շրջանակագրման ընթացքում նման խորհրդակցություններ չեն կազմակերպվում, ապա վտանգ կա, որ հետագա փուլերում նման խորհրդակցությունները կարող են լրացուցիչ խնդիրներ բացահայտել՝ ստեղծելով այս բաղադրիչը վերանայելու անհրաժեշտություն:
36. Վերջապես, քայլ 1-ով որոշվում են բնապահպանական հաշվետվությունում ընդգրկվելիք համապատասխան տեղեկատվության շրջանակները: Ինչպես նշված է այս հատվածի սկզբում, Արձանագրությունը շրջանակագրման այս գործընթացն ուղղորդում է տեղեկատվության (Հավելված IV) և մի շարք չափանիշների (հոդված 7.2) ցուցակներով, որոնք համապատասխանաբար քննարկվում են ստորև բերված երկու Աղյուսակներում՝ Ա4.2 և Ա4.3:

Ներդիր Ա4.2 Խնդիրներ, մտահոգություններ կամ հարցեր, նպատակներ, թիրախներ, ցուցանիշներ կամ ուղղորդող հարցեր

Բնապահպանական **նպատակները** կարող են բխեցվել տարբեր աղբյուրներից, օրինակ՝ կայուն զարգացման ռազմավարություններից, քաղաքականություններից, օրենքներից, ինչպես նաև այլ պլաններից և ծրագրերից: Դրանք կարող են նաև ակներև լինել առաջարկվող պլանի կամ ծրագրի համատեքստում, օրինակ շրջակա միջավայրի պահպանման տեղական **խնդիրներ, մտահոգություններ կամ հարցեր**:

Զարգացման և բնապահպանական նպատակները կարող են համալրվել այլ **թիրախներով**, իսկ վերջիններս էլ, իրենց հերթին, կամ քանակական **ցուցանիշներով**, կամ էլ որակական **ուղղորդիչ հարցերով** (օրինակ՝ ազատ պատասխան պահանջող, ոչ քննադատական հարցադրումներ, որոնք ուսումնասիրությունը կենտրոնացնում են կոնկրետ թեմայի շուրջ և խթանում են խնդիրների հանգամանալից ըմբռնման որոնումը, սակայն առաջատար հարցեր չեն): Օրինակ, սահմանված նպատակներից կարող է լինել ջերմոցային գազերի արտանետումների կրճատումը, թիրախը՝ էլեկտրաէներգիայի արտադրության հետևանքով արտազատվող ածխածնի երկօքսիդի ծավալների կրճատումը, իսկ ցուցանիշներից մեկը՝ տնտեսությունների կողմից էլեկտրաէներգիայի սպառումը՝ տարեկան կվտ/ժամ արտահայտությամբ:

ՌԲԳ Հրահանգի կիրառման Միացյալ Թագավորության ուղեցույցը բնապահպանական նպատակների և ցուցանիշների օրինակներ է ներկայացնում: ՌԲԳ Հրահանգի կիրառման Իռլանդիայի ուղեցույցում ընդգրկված են ցուցանիշների օրինակներ՝ բնապահպանական նպատակների լրացուցիչ աղբյուրների (խղանդակային, թեև բնորոշ է շատ երկրներում գործող համակարգերին, Եվրամիության և միջազգային) հետ միասին: Աղյուսակում Ա4.1-ում զետեղված են նման աղբյուրների օրինակներ: Հավելյալ օրինակներ կարելի է գտնել Արձանագրության կայքում²⁹:

Կարևոր է, որ բոլոր բնապահպանական խնդիրներին համապատասխան նպատակներ սահմանվեն: Այնուհետև զեկույցի նախապատրաստման գործընթացում կարող են օգտագործվել այն ցուցանիշները (հոդված 7), որոնք ուղղություն կտան նախնական վիճակի մասին տեղեկատվության հավաքման և ըստ սահմանված նպատակների այլընտրանքային տարբերակների ազդեցությունների գնահատման աշխատանքներին: Ավելին, կարելի է իրականացնել ցուցանիշների մշտադիտարկում՝ պլանի իրականացման արդյունավետությունը գնահատելու և անկանխատեսելի հետևանքները բացահայտելու համար (հոդված 12):

Հետևաբար, ցուցանիշները հարկավոր է ընտրել ամենայն զգուշությամբ, որպեսզի առավելագույնի հասցվի սահմանված նպատակների հիման վրա տարբերակների ազդեցությունների գնահատման արդյունավետությունը և միևնույն ժամանակ կրճատվեն ՌԲԳ գործընթացի ընդհանուր ծախսերը:

Ներդիր Ա4.3 Աստիճանակարգում

²⁹ Եվրոպական բնապահպանական գործակալությունը բազմաթիվ ցուցանիշների վերաբերյալ տրամադրում է մանրամասն տեղեկատվություն: Տե՛ս <http://www.eea.europa.eu/data-and-maps/indicators/>

ՌԲԳ Հրահանգում, բայց ոչ Արձանագրությունում, նշվում է, որ պլանները և ծրագրերը կարող են որոշումների հիերարխիայի մաս կազմել՝ որոշումների կայացման համար անհրաժեշտ տեղեկատվության համատեղ օգտագործման դեպքում ստեղծելով միջոցների խնայողության հնարավորություններ, սա կոչվում է «աստիճանակարգում» (լրացուցիչ տեղեկատվության համար ԵՄ Ուղեցույցի պարբերություններ 4.5-4.7): Այնուամենայնիվ, հիերարխիկ դասակարգված որոշումների կայացման գործընթացներում տեղեկատվության համատեղ օգտագործումը հարկավոր է ուսումնասիրել քննադատաբար, քանի որ հիերարխիայի դեպքում որոշումները սովորաբար ընդունվում են տարբեր ժամանակահատվածներում և տարբեր պայմաններում:

Արձանագրությունում, Հավելված III-ում (պարբերություն 3) հիերարխաներին վերաբերող նշումից բացի, աստիճանակարգման հնարավորություններ չեն քննարկում: Այնուամենայնիվ, այլընտրանքային պլանների և ծրագրերի մշակման ընթացքում կարող է նպատակահարմար լինել հաշվի առնել որոշումների կայացման աստիճանակարգված համակարգում տվյալ պլանի կամ ծրագրի դիրքը: Որոշ պլաններ և ծրագրեր կարող են ներառել ռազմավարական պլանավորման բոլոր տարրերը, իսկ այլ պլանների և ծրագրերի դեպքում դրանց առնչվող նախաձեռնությունները կարող են սահմանափակել դրանց ծավալները:

Աղյուսակ Ա4.1 Բնապահպանական նպատակների հնարավոր մի շարք աղբյուրներ և օրինակներ

	Միջազգային	Ազգային	Այլ (ներերկրային) մակարդակներ, օղակներ
Օրենսդրություն	<ul style="list-style-type: none"> ՄԱԿ-ի բնապահպանական միջազգային համաձայնագրեր, այդ թվում՝ ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիային կից Կիոտոյի արձանագրություն «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրություն «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիա «Անապատացման դեմ պայքարի մասին» կոնվենցիա <p>ԵՏՀ բնապահպանական համաձայնագրեր Եվրամիության բնապահպանական հրահանգներ</p>	<ul style="list-style-type: none"> Թափոնների կառավարման մասին օրենքների Ջրի որակի սպառնալուծման մասին օրենքների Օդի որակի սպառնալուծման մասին օրենքների նպատակները 	Թափոնների կառավարման, ջրի և օդի որակի սպառնալուծման վերաբերյալ տեղական մարմինների հրամանագրերի նպատակներ
Քաղաքականություն	Կայուն զարգացման համաշխարհային զագաթաժողովի որոշումների իրականացման պլան (Յոհանեսբուրգի իրականացման պլան) «Օրակարգ-21» «Առողջություն բոլորի համար մինչև 2000թ.» «21-րդ դարում առողջություն բոլորի համար» քաղաքականության (Առողջություն 21-րդ դարում) «Շրջակա միջավայրի և առողջության մասին» Լոնդոնի հռչակագիր	Կայուն զարգացման ազգային ռազմավարություն, Ջարգացման ազգային պլան, Տեղանքի տնօրինման ազգային ռազմավարություն, Կլիմայի փոփոխության դեմ պայքարի ազգային ռազմավարություն, Կենսաբազմազանության պահպանման ազգային պլան, Թափոնների կառավարման ազգային	Թափոնների կառավարման տարածքային պլան Հանքային ռեսուրսների կառավարման տարածքային պլան

		ռազմավարություն, Հանքային ռեսուրսների ազգային ռազմավարություն, Էներգետիկայի ազգային ռազմավարություն	
--	--	--	--

Աղյուսակ Ա4.2 Հաշվետվության բովանդակությունը՝ ըստ Արձանագրության
Հավելված IV-ի պահանջների

Արձանագրության Հավելված IV-ի պարբերություն	Ուղենիշներ (վերցված են ԵՄ Ուղեցույցից, համառոտ տարբերակ)
<p>1. Պլանի կամ ծրագրի բովանդակությունն ու հիմնական նպատակները և դրանց կապը այլ պլանների կամ ծրագրերի հետ</p>	<p>Այլ պլանների և ծրագրերի հետ փոխկապվածության մասին տեղեկատվության ամփոփումը հնարավորություն է տալիս տվյալ պլանը կամ ծրագիրը դիտարկել ավելի լայն համատեքստում: Նման պլանները և ծրագրերը կարող են որոշումների կայացման նույն հիերարխիայի մասը կազմել (օրինակ, հողօգտագործման պլաններ, որոնք քննարկվում են տարբեր վարչական մակարդակներում) կամ պատկանել տարբեր ոլորտների, սակայն ազդեցություն ունենալ նույն կամ հարակից տարածքների վրա (պարբերություն 5.20):</p>
<p>2. Շրջակա միջավայրի, այդ թվում՝ առողջապահության, ներկա վիճակը և դրանց հավանական էվոլյուցիան, եթե նախատեսվող պլանը կամ ծրագիրը չիրականացվի</p>	<p>Այս երեք պահանջները (2-4րդ կետեր) կարող են համընկնել, սակայն դրանք փոխհամաձայնեցված են և նպատակաուղղված պլանում կամ ծրագրում ընդգրկված տարածքների բնապահպանական պայմանների և նախատեսված գործողությունների հետևանքով շրջակա միջավայրի վրա էական ազդեցությունների տարբեր կողմերի: 3-րդ և 4-րդ կետերը լրացնում են 2-րդ կետում տրված տեղեկատվությունը: 2-րդ և 3-րդ պարբերություններում քննարկվում են համապատասխան խնդիրները, արժեքներն ու ակտիվները, իսկ 4-րդ կետում ուշադրությունը կենտրոնացվում է միայն խնդիրների շուրջ: Կարող է նպատակահարմար լինել 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված տեղեկատվությունը դիտարկել համատեղ: 2-րդ և 4-րդ կետերում հանդիպող «համապատասխան» որոշիչը վերաբերում է շրջակա միջավայրի վրա նախատեսվող պլանի կամ ծրագրի հնարավոր էական ազդեցություններին (պարբերություն 5.21):</p>
<p>3. Նախատեսվող աշխատանքների իրականացման արդյունքում էական ազդեցությունների ենթակա տարածքում շրջակա միջավայրի, այդ թվում՝ առողջապահական հարցերի հատկանիշները</p>	<p>2-րդ կետում նշվող համապատասխան հարցերը կարող են լինել թե՛ դրական և թե՛ բացասական բնույթի: Ներկայացվող տեղեկատվությունը պետք է լինի հնարավորինս ստույգ և արդիական: Համապատասխան հարցերի հավանական էվոլյուցիայի նկարագրությունը (նախատեսված պլանը կամ ծրագիրը չիրականացնելու դեպքում) կարող է որպես գնահատման օգտակար ելակետ ծառայել. սա համարժեք է ՇՄԱԳ-ի համակարգում «գրոյական այլընտրանքին»: Էվոլյուցիայի նկարագրությունը պետք է ընդգրկի մոտավորապես նույն ժամանակահատվածը, ինչ նախատեսվում է առաջարկվող պլանի կամ ծրագրի իրականացման համար: Շրջակա միջավայրի վերաբերյալ ընդունված այլ պլանների և ծրագրերի կամ կայացված որոշումների հետևանքները, որոնք կարող են ազդել քննարկվող պլանի կամ ծրագրի իրականացման տեղանքի վրա, պետք է հնարավորության սահմաններում</p>
<p>4. Նախատեսվող պլանին կամ ծրագրին առնչվող բնապահպանական, այդ թվում՝ առողջապահական</p>	<p>2-րդ կետում նշվող համապատասխան հարցերը կարող են լինել թե՛ դրական և թե՛ բացասական բնույթի: Ներկայացվող տեղեկատվությունը պետք է լինի հնարավորինս ստույգ և արդիական: Համապատասխան հարցերի հավանական էվոլյուցիայի նկարագրությունը (նախատեսված պլանը կամ ծրագիրը չիրականացնելու դեպքում) կարող է որպես գնահատման օգտակար ելակետ ծառայել. սա համարժեք է ՇՄԱԳ-ի համակարգում «գրոյական այլընտրանքին»: Էվոլյուցիայի նկարագրությունը պետք է ընդգրկի մոտավորապես նույն ժամանակահատվածը, ինչ նախատեսվում է առաջարկվող պլանի կամ ծրագրի իրականացման համար: Շրջակա միջավայրի վերաբերյալ ընդունված այլ պլանների և ծրագրերի կամ կայացված որոշումների հետևանքները, որոնք կարող են ազդել քննարկվող պլանի կամ ծրագրի իրականացման տեղանքի վրա, պետք է հնարավորության սահմաններում</p>

<p>խնդիրները</p>	<p>հաշվի առնվեն (պարբերություն 5.22):</p> <p>3 -րդ կետում ուշադրություն է դարձվում գնահատման համար հատուկ հետաքրքրություն ներկայացնող տարածքներին, այսինքն՝ այն տարածքներին, որոնք նախատեսվող պլանի կամ ծրագրի իրականացման հետևանքով կարող են էական ազդեցությունների ենթարկվել: Այդ տարածքների բնորոշ հատկանիշների նկարագրությունը պարտադիր է: Նպատակահարմար է նկարագրել բնորոշ հատկանիշները, քննարկել՝ հղումներ կատարելով վերևում նշված բնապահպանական հարցերին: Տարածքների բնորոշ հատկանիշների օրինակներ են թթվայնացման նկատմամբ հատուկ զգայունություն դրսևորող, բարձր բուսաբանական արժեք ներկայացնող կամ խիտ բնակեցված տարածքները: Նման վայրերը կարող են գտնվել պլանի կամ ծրագրի շրջանակներում անմիջականորեն ընդգրկված տարածքի հարևանությամբ: Եթե տարածքը հարում է այլ երկրի տարածքին կամ եթե հետևանքների ազդեցությունը մեծ ուղեծիր ունի և այլ երկրներին պատկանող տարածքի համար էական հետևանքներ կարող է ունենալ, ապա անդրսահմանային խորհրդակցությունների կազմակերպումը պարտադիր է (պարբերություն 5.23):</p> <p>4 -րդ կետը պահանջում է պլանին կամ ծրագրին առնչվող ներկա խնդիրների մասին տեղեկատվություն ներկայացնել, գնահատել նախատեսվող պլանի կամ ծրագրի վրա այդ խնդիրների ազդեցությունը և քննել, թե արդո՞ք նախատեսվող պլանի կամ ծրագրի իրականացումը առկա խնդիրները կարող է սրել, նվազեցնել կամ դրանց վրա որևէ կերպ ազդել: Հարկավոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ աննշան ազդեցությունները, առկա խնդիրների հետ համակցության արդյունքում կարող են էական ազդեցությունների պատճառ դառնալ: Հնարավոր է, որ նույնիսկ անհրաժեշտ լինի անդրադառնալ պլանում կամ ծրագրում ընդգրկված այն հարցերին, որոնք բնապահպանական ազդեցություններ չունեն: Պարտադիր չէ, որ այս խնդիրները լուրջ բնույթ կրեն կամ հատուկ առնչվեն նախատեսվող պլանի կամ ծրագրի իրականացման տարածքին: Բնապահպանական հատուկ նշանակություն ունեցող տարածքները կարող են լինել շրջակա միջավայրի պահպանման տեսանկյունից բարձրարժեք վայրեր, այդ թվում՝ ազգային օրենսդրությամբ սահմանված հատուկ պահպանվող տարածքներ (պարբերություն 5.24):</p>
<p>5. Միջազգային, ազգային և այլ մակարդակներում սահմանված բնապահպանական, այդ թվում՝ առողջապահական նպատակներ, որոնք առնչվում են նախատեսվող պլանին կամ ծրագրին: Ձեկույցի նախապատրաստման ընթացքում, ինչպես նաև այլ բնապահպանական,</p>	<p>Քննարկման առարկա հանդիսացող բնապահպանական նպատակները պետք է առնվազն ներառեն բնապահպանական ազդեցությունների սահմանման համապատասխան կետերը. «ցանկացած ազդեցություն շրջակա միջավայրի վրա, այդ թվում՝ մարդու առողջության, ֆլորայի, ֆաունայի, կենսաբազմազանության, հողի, կլիմայի, օդի, ջրի, լանդշաֆտների, բնության հուշարձանների, նյութական ունեցվածքի, մշակութային ժառանգության և այս գործոնների փոխկապվածության վրա» (հոդված 2.7): Միջազգային եւ տարածաշրջանային (ԵՏՀ) նպատակները հաճախ ներառվում են ազգային, տարածքային և տեղական մակարդակներում սահմանվող նպատակների շարքում և սա շատ դեպքերում ինքնին կարող է բավարար լինել: Նպատակները պետք է անդրադառնան նախատեսվող պլանի կամ ծրագրի հնարավոր էական ազդեցություններին և դրանցից բխող խնդիրներին: Իրավասու մարմինների հետ խորհրդակցությունները կարող են օգտակար լինել այս անհրաժեշտ տեղեկատվությունը համալրելու գործում (պարբերություն 5.25):</p>

<p>այդ թվում՝ առողջապահական նպատակների ընդգրկման ուղիները</p>	
<p>6. Հնարավոր էական բնապահպանական, այդ թվում՝ առողջապահական ազդեցությունները*/ ինչպես սահմանված է հոդված 2-ի 7-րդ պարբերությունում</p> <p>*/ Այս ազդեցությունների շարքում պետք է ընդգրկվեն երկրորդական, կուտակումային, սիներգիկ, կարճաժամկետ, միջնաժամկետ, երկարաժամկետ, կայուն և ժամանակավոր, բացասական և դրական ազդեցությունները</p>	<p>Ազդեցությունների սահմանման շրջանակներում առանձնացվող հարցերի ցանկը (տե՛ս վերևում) սպառիչ չէ և կարող են լինել գործին առնչվող այլ հարցեր: Հաստատված շրջանակներում մարդու առողջություն հասկացությունը պետք է առնվազն դիտարկել ցանկում նշված և առողջության վրա ազդող շրջակա միջավայրի հատկորոշիչների (օրինակ՝ ուսումնասիրության ենթակա հարցեր են երթևեկության աղմուկի կամ օդի աղտոտիչների ազդեցությունը մարդու առողջության վրա) համատեքստում (պարբերություն 5.26):</p> <p>Ցուցակում նշված գործոնների միջև կապերի նկարագրությունը կարևոր է, քանի որ գործոնների համախումբ դիտարկելիս հնարավոր է մատնանշել ավելի լուրջ էական հետևանքներ, քան գործոններից յուրաքանչյուրն առանձին ուսումնասիրելու դեպքում: Այսպիսով, օդի որակի և կլիմայական գործոնների վրա զգալի ազդեցությունները կարող են էական վնաս հասցնել բուսական և կենդանական աշխարհին ու կենսաբազմազանությանը: Անհրաժեշտ է գործոնների և դրանց փոխկապվածության վերաբերյալ ընդհանուր և համապարփակ տեղեկատվություն ներկայացնել: Կարևոր է նկարագրել դրական ազդեցությունները՝ ներկայացնելով պլանի կամ ծրագրի ներդրումը շրջակա միջավայրի պահպանության և կայուն զարգացման գործին (պարբերություն 5.26):</p>
<p>7. Պլանի կամ ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի, այդ թվում՝ առողջության վրա վնասակար զգալի հետևանքների կանխման, նվազեցման կամ մեղմացման գործողություններ</p>	<p>Այս կետի նպատակն է՝ հետևել, որ զեկույցում ներկայացվեն նկարագրվող նշանակալի բացասական հետևանքները մեղմելու գործողությունները: Նախատեսվող միջոցառումների մասին լրացուցիչ տեղեկատվություն չի տրվում. դրանք կարող են լինել պլանի կամ ծրագրի շրջանակներում նախատեսվող կամ պահանջվող միջոցառումներ կամ զեկույցում ներկայացվող գործողություններ: Հարկավոր է մտապահել, որ մեղմացուցիչ միջոցառումները ևս կարող են բացասական բնապահպանական հետևանքները ունենալ և անհրաժեշտ է բացահայտել դրանք: Կան ՇՄՍԳ-ի շրջանակներում կիրառվող մեղմացուցիչ մեթոդներ, որոնք կարող են օգտակար լինել պլանների կամ ծրագրերի գնահատման համար (պրբ. 5.27):</p>
<p>8. Քննարկվող այլընտրանքային տարբերակների ընտրության հիմնավորում և գնահատման անցկացման նկարագրություն, որտեղ անդրադարձ է կատարվում տրամադրվող</p>	<p>Այլընտրանքների ընտրության վերաբերյալ տեղեկատվությունը կարևոր է, պարզելու համար, թե ինչու են տվյալ այլընտրանքները գնահատվել և բացատրելու դրանց կապը նախատեսվող պլանի կամ ծրագրի հետ: Գնահատման շրջանակներում կիրառված մեթոդների նկարագրությունը օգտակար է տեղեկատվության ու եզրահանգումների որակի ուսումնասիրման, ինչպես նաև դրանց հուսալիության աստիճանը որոշելու համար: Գնահատման ընթացքում ծառայած դժվարությունների նկարագրությունը լրացուցիչ պարզաբանումներ կարող է տալ: Համապատասխան դեպքերում խորհուրդ է տրվում նաև ընդգրկել այդ դժվարությունների հաղթահարման միջոցների մասին տեղեկատվությունը (պրբ. 5.28):</p>

<p>տեղեկատվության խնդիրներին, օրինակ՝ տեխնիկական թերություններ կամ սահմանափակ գիտելիքներ</p>	
<p>9. Առաջարկվող պլանի կամ ծրագրի իրականացման հետևանքով բնապահպանական, այդ թվում՝ առողջապահական էական ազդեցությունների մշտադիտարկման նախատեսված գործողություններ</p>	<p>Համաձայն Արձանագրության հոդված 12-ի, պլանի կամ ծրագրի իրականացման զգալի բնապահպանական հետևանքները պետք է վերահսկվեն և, քանի որ այդ ազդեցությունները նշված են 6-րդ կետում, հաշվետվությունում պետք է ներկայացվի, թե մշտադիտարկումն ինչպես է իրականացվելու: Եթե պետք է կիրառվի մշտադիտարկման գործող համակարգը, ապա անհրաժեշտ է ընդգրկել դրա նկարագրությունը: Խորհուրդ է տրվում նկարագրել, թե մշտադիտարկման արդյունքներն ինչպես են հրապարակվելու՝ հոդված 12-ի պահանջներին համապատասխան: Անկհայտ է, որ մշտադիտարկման ձևաչափն այս փուլում ընդամենը նախնական է, սակայն զեկույցում պետք է ամրագրվի վերջնական ձևաչափի բավականին մանրամասն նկարագրություն (պարբերություն 5.29):</p>
<p>10. Հնարավոր անդրսահմանային զգալի բնապահպանական, այդ թվում՝ առողջապահական ազդեցություններ</p>	<p>ՌԲԳ Հրահանգում առանձին չի նշվում (ոչ էլ՝ ԵԽ Ուղեցույցում), սակայն անուղղակիորեն հասկացվում է:</p> <p>Խորհուրդ է տրվում այս տեղեկատվությունը ներկայացնել առանձին բաժնում, նույնիսկ եթե կրկնօրինակում է վերևում տրված 6-րդ կետով սահմանված տեղեկատվությունը: Սա կհեշտացնի այլ երկրների հետ խորհրդակցությունների համար անհրաժեշտ տեղեկատվության համալրումը և այդ տեղեկատվության թարգմանումը:</p>
<p>11. Ներկայացված տեղեկատվության ոչ տեխնիկական ամփոփագիր</p>	<p>Ոչ տեխնիկական ամփոփագրի նպատակը զեկույցի հիմնական հարցերն ու եզրակացությունները հանրությանն ու համապատասխան իրավասու մարմիններին ներկայացնելն է՝ մատչելի և դյուրընկալելի ձևաչափով: Ամփոփագիրը կարող է զեկույցի մասը կազմել (սովորաբար զետեղվում է զեկույցի սկզբում), սակայն կարող է նաև ներկայացվել որպես առանձին փաստաթուղթ՝ այն առավել լայն շրջանակներում տարածելու նպատակով: Չեկույցի եզրակացություններն ու արդյունքները կարելի է ամփոփել մեկ ընդհանուր Աղյուսակում՝ դրանց բովանդակությունը պարզեցված ձևով ներկայացնելու համար (պարբերություն 5.30):</p>

Աղյուսակ Ա4.3 Չափանիշներ, որոնք պետք է հաշվի առնել բնապահպանական հաշվետվության բովանդակությունը որոշելիս (հոդված 7.2)

Չափանիշ	Նշումներ
Գիտելիքներ և գնահատման մեթոդներ	Շրջակա միջավայրի և դրա վրա մեր գործողությունների ազդեցությունների մասին մեր գիտելիքների ներկա մակարդակը կարող է սահմանափակել գնահատման ստույգությունը:
Պլանի կամ ծրագրի բնույթը (թե ի՞նչ)	Ռազմավարական որոշումների դեպքում, երբ շատ մանրամասներ չեն ներկայացվում, չափազանց մանրամասն վերլուծությունը ոչ հնարավոր

բովանդակությունի ունի նախատեսվող պլանը կամ ծրագիրը, որքան մանրամասն է այն և որոշումների կայացման գործընթացի ու ր փուլում է)	է, ոչ էլ՝ նպատակահարմար: Օրինակ, «չի պահանջվում, որ ազգային պլանի բնապահպանական հաշվետվության շրջանակներում գնահատվեն երկրի յուրաքանչյուր գետի վրա տվյալ պլանի ազդեցությունները, սակայն քաղաքային պլանին կից ներկայացվող բնապահպանական հաշվետվությունը պետք է պարտադիր անդրադառնա տվյալ քաղաքում կամ դրա հարևանությամբ գտնվող գետերի կամ ջրային այլ ծավալների վրա ազդեցություններին» (ԵՄ Ուղեցույց, պարբերություն 5.16):
Հանրության շահերը	Հանրությունը կարող է պահանջել հասարակության համար կարևոր հարցերի բավարար և դյուրընկալելի գնահատում, որտեղ հաշվի են առնված հանրության կարծիքներն ու շահերը:
Որոշումներ կայացնող մարմինն անհրաժեշտ տեղեկատվությունը	Որոշումներ կայացնող մարմինը պետք է ուսումնասիրի գնահատումը և կարող է պահանջել, որ որոշակի խնդիրներ սահմանված կարգով լուծումներ ստանան:

37. Արձանագրությունում շրջանակների որոշման հաշվետվության պատրաստման պահանջ չի ներկայացվում: Այնուամենայնիվ, կարող է նպատակահարմար լինել արձանագրել շրջանակների որոշման արդյունքները, հնարավոր է՝ համապատասխան հաշվետվության տեսքով, որը բնապահպանական հաշվետվությունը նախապատրաստելիս կարող է ծառայել որպես իրականացվելիք գործողությունների և դրանց ժամանակացույցի ամփոփագիր: Իրավասու մարմինները կարող են որոշել այդ հաշվետվությունը մատչելի դարձնել հանրությանը, որպես օրինակելի կիրառույթի դրսևորում: Սա կարող է նաև պարտադիր պահանջ լինել Օրհուսի կոնվենցիայի (կամ դրան համապատասխանող ԵՄ Հրահանգ 2003/4/EC-ի) համաձայն նման հաշվետվությունները հանրությանը ներկայացնելու դրույթի հիման վրա:
38. Վարչական տեսանկյունից պարտադիր չէ, որ շրջանակների որոշման գործընթացը բնապահպանական զեկույցի պատրաստման աշխատանքներից առանձին լինի, քանի որ շրջանակների որոշման հաշվետվությունը պատրաստելու կամ դրա արդյունքների վերաբերյալ վարչական որոշում կայացնելու ոչ մի պահանջ չկա: Սակայն բնապահպանական հաշվետվության շրջանակների վերաբերյալ իրավասու մարմինների հետ խորհրդակցությունը պարտադիր պահանջ է: **Հաշվետվության կազմման գործընթացում շրջանակների որոշման գործողությունների ընդգրկումը և զեկույցը պատրաստելուց հետո միայն խորհրդակցումը իրավասու մարմինների հետ՝ բավարար չեն այս պայմանի համար:**
39. Իրավասու մարմինը կարող է որոշել **ՌԲԳ-ի որոշակի բաղադրիչների կատարման համար** վարձել **արտաքին կազմակերպության** (պետական կամ մասնավոր), սակայն առանց որոշումներ կայացնելու իրավասության փոխանցման: Շրջանակների որոշման հաշվետվությունը կարող է տվյալ կազմակերպությանը հանձնարարվող տեխնիկական առաջադրանքի հիմք ծառայել: Հնարավոր է կապալառուին հանձնարարել նաև շրջանակների որոշման աշխատանքները: Տեխնիկական առաջադրանքի օրինակներ կարելի է գտնել զարգացման խթանման ուղղությամբ համագործակցության ԵՄ թևի *Բնապահպանական ինտեգրման ձեռնարկում*³⁰:
40. Կապալառուներին աշխատանքի հանձնարարումը չի նշանակում, որ ՌԲԳ անպայման տարանջատվում է պլանավորման գործընթացից. ՌԲԳ-ի համար պատասխանատու

³⁰ Զետեղված է http://ec.europa.eu/europeaid/infopoint/publications/europeaid/4a_en.htm կայքէջում:

կապալառուները կարող են սերտորեն համագործակցել պլանը կամ ծրագիրը մշակողների հետ (տե՛ս գլուխ Ա2-ը)։

41. Նախագծերի կառավարման վերաբերյալ լրացուցիչ խորհրդատվության համար տե՛ս ՄԱԿ ԲԾ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ուսուցողական ձեռնարկը (երկրորդ հրատարակություն), թեմա 12 (ՇՄԱԳ նախագծի կառավարում)³¹

Քայլ 2 Համատեքստի և նախնական վիճակի վերլուծություն

Մեթոդաբանական առաջադրանքներ	Գործընթացային առաջադրանքներ	Լրացուցիչ, ոչ պարտադիր առաջադրանքներ
<ul style="list-style-type: none"> Հավաքել տեղեկատվություն շրջակա միջավայրի, այդ թվում՝ առողջության ներկա վիճակի և նախատեսվող պլանը կամ ծրագիրը չիրականացնելու դեպքում դրանց հնարավոր զարգացումների մասին (Հավելված IV, պրբ 2) հավաքել տեղեկատվություն ազդեցության ենթարկվող տարածքներում շրջակա միջավայրի, այդ թվում՝ առողջապահական վիճակի և հետևանքների վերաբերյալ (Հավելված IV, պարբերություն 3) 	(չկա)	<ul style="list-style-type: none"> իրավասու մարմինների հետ խորհրդակցել և կազմակերպել հանրության մասնակցությունը համատեքստի, նպատակների և նախնական վիճակի հարցերի շուրջ, Ըստ անհրաժեշտության, ոչ պաշտոնական ծանուցում տալ ազդեցության ենթարկվող (ազդակիր) կողմերին և խորհրդակցել նրանց հետ (տե՛ս Հատված Ա4.5-ը) Նկարագրել իրավասու մարմինների և հանրության շահագրգիռ ներկայացուցիչների հաստատման մեթոդաբանությունը Գնահատել հավաքված տեղեկատվության որակը և արդիականությունը

42. Ձեկույցի նախապատրաստման գործընթացի երկրորդ քայլը համապատասխան տեղեկատվություն հավաքելն է, որի վերաբերյալ ցուցումներ են ներկայացված վերևում բերված՝ զեկույցի բովանդակության բաղադրիչներն ամփոփող Աղյուսակ Ա4.2-ում (Հավելված IV)։ Նպատակահարմար է գրանցել տեղեկատվությունը հավաքելու ժամանակ առաջացած դժվարությունները և նշել տվյալների սահմանափակության մանրամասները, քանի որ հետագա փուլերում այս տեղեկատվությունը պետք է ընդգրկվի բնապահպանական զեկույցում։

43. Արձանագրությունը չի պահանջում, որ խորհրդատվությունները և հանրության մասնակցությունը կազմակերպվեն այս վաղ փուլում։ Հանրության ներկայացուցիչները և իրավասու մարմինները կարող են պատասխանատու մարմինն օգնել հավաքված տեղեկատվությունը գնահատելու, շրջանակագրումը վերանայելու և նպատակները քննարկելու գործում, սակայն զեկույցի նախապատրաստման բոլոր քայլերում խորհրդակցությունների և հանրության մասնակցության կազմակերպման անհրաժեշտությունը կախված է հանգամանքներից։ Համաձայն Արձանագրության, խորհրդակցությունների և հանրության մասնակցության կազմակերպումը պարտադիր է միայն բնապահպանական հաշվետվության վերջնական տարբերակի ներկայացման փուլում (այսինքն՝ քայլ 5-ում), և բոլոր փուլերում խորհրդակցությունների և հանրության մասնակցության կազմակերպումը կարող է ավելորդ և անարդյունավետ լինել։

³¹ ՄԱԿ ԲԾ, June 2002թ., հունիս։ Ձետեղված է http://www.unep.ch/etu/publications/EIAMan_2edition_toc.htm կայքէջում։

Քայլ 3 Նպաստում զարգացմանը և այլընտրանքների համեմատություն

Մեթոդաբանական առաջադրանքներ	Գործընթացային առաջադրանքներ	Լրացուցիչ, ոչ պարտադիր առաջադրանքներ
<ul style="list-style-type: none"> Նկարագրել, թե շրջակա միջավայրի, այդ թվում՝ առողջապահական նպատակները և այլ բնապահպանական, այդ թվում՝ առողջապահական նկատառումները ինչ ձևով են հաշվի առնվել նախատեսվող պլանի կամ ծրագրի, այդ թվում՝ դրա այլընտրանքային տարբերակների մշակման (Հավելված IV, պարբերություն 5) ժամանակ Գնահատել այլընտրանքային տարբերակները՝ առանձնացնելով, նկարագրելով և գնահատելով (մեթոդների մասին տես Գլուխ U5-ը) շրջակա միջավայրի, այդ թվում՝ առողջության վրա նշանակալի հնարավոր ազդեցությունները (հոդված 7.2 և Հավելված IV, պրբ 6-10-ը) Նկարագրել գնահատման մեթոդաբանությունները (Հավելված IV, պրբ 8) Առաջարկել շրջակա միջավայրի, այդ թվում՝ առողջության վրա նշանակալի հնարավոր ազդեցությունները կանխելու, նվազեցնելու կամ մեղմելու միջոցառումներ (Հավելված IV, պրբ 7) 	<ul style="list-style-type: none"> (չկա) 	<ul style="list-style-type: none"> Առաջարկել բնապահպանական օգուտներն առավելագույնի հասցնելու միջոցներ Աջակցել այլընտրանքային տարբերակների մշակմանը՝ փորձելով առավելագույնի հասցնել բնապահպանական նպատակների կատարման գործում պլանի կամ ծրագրի ներդրումը և հաշվի առնել այլ բնապահպանական նկատառումներ, այդ թվում՝ բացասական հետևանքները Արձանագրել մշակված այլընտրանքային տարբերակները Ըստ անհրաժեշտության, այլընտրանքային տարբերակների շուրջ խորհրդակցել իրավասու մարմինների հետ և կազմակերպել հանրության մասնակցությունը Ըստ անհրաժեշտության, խորհրդակցել ազդակիր կողմերի հետ (տես U4.5-ը) Հիմնավորել մեթոդաբանությունների ընտրությունը և ներկայացնել դրանց սահմանափակումները

44. Չեկույցի նախապատրաստման գործընթացի երրորդ քայլը սկսվում է այն պահից, երբ սկսվում է պլանների կամ ծրագրերի այլընտրանքային տարբերակների մշակումը, իսկ համատեքստն ու նախնական վիճակն արդեն որոշված են և, ըստ անհրաժեշտության, քննարկվել են շահառուների հետ: Պլանների կամ ծրագրերի այլընտրանքային տարբերակների մշակման գործընթացը պետք է ամփոփ ներկայացվի զեկույցում, հետևաբար, բուն գործընթացի ժամանակ կարևոր է գրավոր նշումներ կատարել: Հնարավոր է, որ անհրաժեշտ լինի այս քայլում նշված առաջադրանքները հաջորդաբար կրկնել այնքան անգամ, որքան կպահանջվի՝ բավարար չափով հղկված այլընտրանքային տարբերակներ մշակելու և դրանք գնահատելու համար: Այս տարբերակները պետք է մանրամասն ներկայացվեն բնապահպանական զեկույցում:

45. Պլանների կամ ծրագրերի (կամ դրանց առանձին բաղադրիչների) այլընտրանքային տարբերակների գնահատման մոտեցումներից է նպատակների ուսումնասիրումը և դրանց դասակարգումը սահմանված նպատակների այլընտրանքային տարբերակների համատեղելիության Աղյուսակում: Այս մոտեցման վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն է տրվում ՌԲԳ գործիքներին անդրադարձող [Գլուխ Ա5](#)-ում: Այլընտրանքային տարբերակները մշակելու, հղկելու և դրանց թիվը կրճատելու դեպքում գնահատումը կարող է չափազանց մանրամասն լինել և ի վերջո ներառել շրջակա միջավայրի վրա չանտեսված խելամիտ այլընտրանքային տարբերակների հնարավոր էական ազդեցությունների բացահայտման, նկարագրության և գնահատման մանրամասները: Այլընտրանքային տարբերակների մշակման այլ ուղի չկա:

46. Անհրաժեշտ է արձանագրել ազդեցությունների կանխատեսման և գնահատման գործում ծագած դժվարությունները:

47. Բացասական հետևանքների կանխման, նվազեցման կամ մեղմման գործողությունները կարելի է սահմանել միայն ընտրված պլանի կամ ծրագրի համար, սակայն բոլոր խելամիտ

այլընտրանքային տարբերակների համար նման գործողությունների բացահայտումը կարող է պատկերացում տալ հնարավոր հետևանքների (այսինքն՝ գործողությունների տվյալ ռեժիմի ազդեցությունների) մասին՝ դրանով իսկ նպաստելով առավել կշռադատված պլանի կամ ծրագրի մշակմանը:

48. Խորհուրդ է տրվում այս փուլում ներգրավել հանրությանը և հանրության հետ խորհրդակցություններ կազմակերպել՝ քննարկվող այլընտրանքային տարբերակները հղկելու նպատակով:

Քայլ 4 Բնապահպանական զեկույցի պատրաստում

Մեթոդաբանական առաջադրանքներ	Գործընթացային առաջադրանքներ	Լրացուցիչ, ոչ պարտադիր առաջադրանքներ
<ul style="list-style-type: none"> Առաջարկել մշտադիտարկման ռեժիմ (Հավելված IV, պարբերություն 9) Բացահայտել և նկարագրել այլընտրանքային տարբերակների գնահատման ընթացքում ծագած դժվարությունները, սահմանափակումները, անորոշությունները և ռիսկերը, այդ թվում՝ պակասող տվյալները (Հավելված IV, պարբերություն 8) Կազմել տեղեկատվության ոչ տեխնիկական ամփոփագիր (Հավելված IV, պարբերություն 11) 	<ul style="list-style-type: none"> Նախապատրաստել բնապահպանական զեկույցը (հոդված 7.1) 	<ul style="list-style-type: none"> Մշտադիտարկման ռեժիմ առաջարկելիս փորձել լուծել պակասող տվյալների, տվյալների որակական ու քանակական խնդիրները Ըստ անհրաժեշտության վերանայել ընտրված այլընտրանքային տարբերակները և բնապահպանական զեկույցը Արձանագրել, թե ՌԲԳ ինչպես է ազդել նախատեսվող պլանի կամ ծրագրի և այլընտրանքային տարբերակների մշակման գործընթացների վրա Գրանցել պլանավորման և ՌԲԳ թիմերի շփումները Առաջարկել հետագա գործողություններ, այդ թվում՝ ներկայացնել առաջարկներ այլ պլանների, ծրագրերի կամ նախագծերի վերաբերյալ

49. Բնապահպանական հաշվետվությունը կազմելու համար անհրաժեշտ ողջ տեղեկատվությունն պետք է արդեն պատրաստ լինի այս փուլում: Ոչ տեխնիկական ամփոփագիրը հարկավոր է բերել վերջնական տարբերակի. համապատասխան դեպքերում դրա նախնական տարբերակները կարող են նախորդող փուլերում օգտագործված լինել հանրության մասնակցությունը և խորհրդակցությունը խթանելու նպատակով:

50. ԵՄ ուղեցույցում նշվում է, որ բնապահպանական զեկույցը պետք է ունենա «միասնական տեքստ կամ տեքստեր» և կարող է կազմված լինել հավելվածում թվարկված վերնագրերի հաջորդականության հիման վրա: Մակայն պլանի կամ ծրագրի կազմում ընդգրկելու դեպքում այն պետք է «հստակ տարբերակելի լինի որպես պլանի կամ ծրագրի առանձին մաս, ձևակերպված լինի հանրությանը և իրավասու մարմիններին ընկալելի շարադրանքով և ընդգրկված լինի այն հատվածում, որը հեշտ է գտնել» (ԵՄ ուղեցույց, պարբերություն 5.4): ԵՄ Ուղեցույցը նաև սահմանում է կայունության գնահատման շրջանակներում զեկույցի ընդգրկման հնարավորությունը, կայունության գնահատումն իր հերթին կարող է ընդգրկվել պլանի կամ ծրագրի կազմում (պարբերություն 5.5):

Զեկույցի որակը

51. Այս հատվածի մնացած մասում քննարկվում է բնապահպանական զեկույցի որակը, որը պետք է բավարարի Արձանագրությամբ սահմանված պահանջները (հոդված 7.3 և

Հրահանգի հոդված 12.2): Հնարավոր գործնական նկատառումների համար տե՛ս ստորև բերված ներդիր Ա4.4:

52. Որակի ապահովման պատասխանատվությունը կախված է տվյալ երկրում գործող ինստիտուցիոնալ պայմանավորվածություններից: Բնապահպանական զեկույցի կազմման համար պատասխանատու մարմինը կարող է նաև պատասխանատու լինել որակի ապահովման համար: Ուղենիշների մշակման համար պատասխանատվություն կրող իրավասու մարմինը կարող է նաև ստանձնել որակի վերահսկողության դերը, կամ անկախ հանձնաժողով ձևավորվել կամ էլ գործող աուդիտորական հանձնաժողովի իրավասությունները կարող են ընդլայնվել:
53. Բնապահպանական զեկույցի որակը գնահատելիս հարկավոր է ուշադրություն դարձնել հետևյալին՝
- «Բավարար որակ» արտահայտությունը ենթադրում է դրույթների պատշաճ կիրառում՝ թե՛ բովանդակության և թե՛ Արձանագրության առումով, ինչպես նաև Արձանագրության պահանջներին համապատասխան լիարժեք և վստահելի տեղեկատվության ընդգրկում
 - Պատասխանատու մարմինը պետք է որոշի, թե զեկույցը բավարար որակ ապահովում է, թե ոչ՝ մասնավորապես հիմք ընդունելով Հոդված 7-ում և Հավելված IV-ում ներկայացված պահանջները
 - Եթե զեկույցը բավարար որակ չի ապահովում, ապա հնարավոր է, որ հաշվետվությունը փոփոխելու, ընդլայնելու կամ ՌԲԳ-ի առաձին բաղադրիչները կրկնելու անհրաժեշտություն լինի՝ կախված ՌԲԳ-ի ազգային համակարգի պահանջներից
 - Եթե զեկույցը բարարար որակ չի ապահովում, ապա կասկածի տակ կարող է դրվել ՌԲԳ-ի արդյունքների հիման վրա ընդունված տարբեր որոշումների հիմնավորվածությունը
 - Արձանագրությունը սահմանում է նվազագույն չափանիշը, սակայն առավել բարձր մակարդակ ապահովելու համար տարբեր միջոցներ կան, օրինակ՝ անկախ գնահատումներ, Արձանագրությունային կամ առարկայական պահանջների վերաբերյալ ուղենիշներ, անկախ հաստատությունների կողմից վերանայումներ, բողոքների կամ իրավական բողոքարկումների համակարգ:
 - Որակի շարունակական ապահովման տարբեր մեթոդներ կան, օրինակ՝ գործընթացի քայլերի ստուգացուցակ: Ստորև բերված Աղյուսակ Ա4.4-ում ներկայացվում է Միացյալ Թագավորությունում օգտագործվող ստուգացուցակի օրինակ (ստուգացուցակը ՌԲԳ ամբողջական գործընթացի, ոչ թե միայն բնապահպանական զեկույցի, որակի ապահովման գործիք է):

Ներդիր Ա4.4 Որակ. հնարավոր գործնական նկատառումներ

Բնապահպանական հաշվետվությունը պետք է ներկայացնի Արձանագրությունում ամրագրված պահանջներին բավարար չափով համապատասխանող ամբողջական և հավաստի տեղեկատվություն: Արձանագրությունում չի պարզաբանվում, թե «բավարար որակը» ինչ է ենթադրում, սակայն քանի որ ՌԲԳ գործընթացի և բնապահպանական հաշվետվության սահմանումներն ամրագրված են Արձանագրությունում, համապատասխան դրույթների պատշաճ կիրառումը, թե՛ բովանդակության և թե՛ սահմանված կարգի առումով, կհամապատասխանի բավարար որակ ապահովելու պահանջին:

Հաճախ համապատասխան իրավասու մարմինը, նախքան պլանի կամ ծրագրի ընդունումը, պետք է որոշի, թե արդյոք բնապահպանական զեկույցը բավարար որակի է, թե՛ ոչ, և թե ինչ գործողություններ պետք է ձեռնարկել թերությունները շտկելու համար: Կարող են բնապահպանական հաշվետվությունը փոփոխելու կամ ընդլայնելու կամ նույնիսկ ՌԲԳ առանձին բաղադրիչները կամ ամբողջ գործընթացը կրկնելու առաջարկներ ներկայացվել: Հաստատելով բավարար որակի նշանակությունը՝ պլանի կամ ծրագրի համար պատասխանատվություն կրող մարմինը պետք է ուշադրությամբ ուսումնասիրի Արձանագրության ամրագրված պահանջները,

ինչպես սահմանված է Արձանագրության 7-րդ հոդվածում և Հավելված IV-ում:
Պատասխանատու մարմինը նաև պետք է ամենայն մանրամասնությամբ քննի իրավասու մարմինների հետ խորհրդակցությունների և հանրության մասնակցության արդյունքները:
Պատասխանատու մարմինը պետք է հաշվի առնի, որ թերի հաշվետվությունը կարող է կասկածի տակ դնել նախատեսված գործողությունների կամ որոշումների հիմնավորվածությունը:

Արձանագրության սուբստանտիվ և Արձանագրային պահանջների պատշաճ իրականացումը և կիրառումը համարվում է բնապահպանական զեկույցների որակի ապահովման նվազագույն չափանիշը: Կողմերն իրենք պետք է որոշեն լրացուցիչ միջոցներ ձեռնարկելու նպատակահարմարությունը և դրանց բնույթը: ՇՄԱԳ-ի շրջանակներում կիրառվող շատ միջոցներ կարող են նաև նպատակահարմար լինել Արձանագրության շրջանակներում, օրինակ՝ անկախ գնահատումները (որոնք իրականացվում են բնապահպանական հաշվետվությունում ընդգրկվող տեղեկատվության որակի վերաբերյալ խորհրդատվություն մատուցելու համար պատասխանատու վերանայող կամ պետական հանձնաժողովի կողմից), ուղեցույցները, որոնք պլանավորման համար պատասխանատու մարմինն խորհուրդներ են տալիս նախատեսված Արձանագրությունային կամ սուբստանտիվ պահանջները բավարարելու համար, անկախ հաստատության ներգրավումը (բնապահպանական հաշվետվության մանրամասնության աստիճանի և շրջանակների որոշման փուլում), կամ պարզապես իրավական բողոքարկումների համակարգի կիրառումը:

Ի լրումն բնապահպանական զեկույցով եզրափակվող ՌԲԳ գործընթացի յուրաքանչյուր փուլի բավարար որակի ապահովման գործառնության, կարելի է կիրառել նաև այլ մեթոդներ, որոնք նպատակաուղղված կլինեն ամբողջական գործընթացի որակի ապահովմանը, օրինակ՝ ստուգացուցակի օգտագործումը, որը հստակ ներկայացնում է, թե արդյոք յուրաքանչյուր փուլն իրականացվել է պատշաճ ձևով, թե ոչ:

(Աղբյուրը՝ ԵՆ Ուղեցույցից վերցված տարբերակ, պարբերություններ 6.2–6.6)

Աղյուսակ Ա.4.4 Որակի ապահովման ստուգացուցակ³²

Նպատակներ և համատեքստ
<ul style="list-style-type: none"> • Հստակեցվում են պլանի կամ ծրագրի նպատակները և խնդիրները • Նպատակներն ու թիրախները սահմանելիս հաշվի են առնվում բնապահպանական հարցերն ու սահմանափակումները, այդ թվում՝ միջազգային և ԵՀ բնապահպանական նպատակները • Հստակեցվում են ՌԲԳ նպատակները և, ըստ անհրաժեշտության, շաղկապվում համապատասխան ցուցանիշներին և թիրախներին • Բացահայտվում և բացատրվում են համապատասխան այլ պլանների կամ ծրագրերի հետ կապերը • Բացահայտվում և բացատրվում են ՌԲԳ նպատակների միջև, ՌԲԳ նպատակների և պլանի նպատակների միջև, ինչպես նաև ՌԲԳ նպատակների և այլ պլանների նպատակների միջև եղած հակասությունները
Շրջանակների որոշում
<ul style="list-style-type: none"> • Սահմանված կարգի և ժամանակացույցի շրջանակներում բնապահպանական զեկույցի բովանդակության և շրջանակների շուրջ խորհրդակցել բնապահպանության, այդ թվում՝ առողջապահության հարցերի համար պատասխանատվություն կրող համապատասխան իրավասու մարմինների հետ • Գնահատումը կենտրոնացվում է էական ազդեցությունների շուրջ

³² Փոփոխված տեքստ ՌԲԳ Հրահանգի գործնական ուղեցույցի հավելված 9-ից (Միացյալ Թագավորություն, 2005թ.)

<ul style="list-style-type: none"> • Քննարկվում են առաջացած տեխնիկական, Արձանագրությունային և այլ դժվարությունները, անհրաժեշտ է հստակ ներկայացնել համապատասխան ենթադրությունները և հնարավոր անորոշությունները • Հիմնավորել հետագա քննարկումներից տարբեր հարցերի բացառման որոշումները
<p>Այլընտրանքներ</p> <ul style="list-style-type: none"> • Քննարկել հիմնական հարցերի լուծման իրատեսական այլընտրանքային տարբերակները և գրանցել դրանց ընտրության հիմնավորումները • Այլընտրանքային տարբերակների շարքում հարկավոր է ընդգրկել «նվազագույն գործողությունների» և/կամ «անկախ ամեն ինչից սովորական աշխատանքային ռեժիմի պահպանման» տարբերակները • Բացահայտել յուրաքանչյուր այլընտրանքային տարբերակի բնապահպանական ազդեցությունները (բացասական և դրական) և համեմատականներ անցկացնել դրանց միջև • Բացահայտել և բացատրել այլընտրանքային տարբերակների և համապատասխան այլ պլանների, ծրագրերի կամ քաղաքականությունների միջև եղած հակասությունները • Հիմնավորել այլընտրանքային տարբերակների ընտրությունը կամ բացառումը
<p>Նախնական վիճակի տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> • Նկարագրել շրջակա միջավայրի ներկա վիճակը և դրա հնարավոր էվոլյուցիան՝ պլանը կամ ծրագիրը չիրականացնելու դեպքում • Նկարագրել հնարավոր զգալի ազդեցությունների ենթակա տարածքների բնապահպանական հատկանիշները, այդ թվում՝ պլանով ազդեցության ենթարկվող տարածքի ֆիզիկական սահմաններից դուրս հարակից տարածքների բնապահպանական հատկանիշները • Բացատրել ծագած տարբեր դժվարությունները, օրինակ՝ տեղեկատվության կամ մեթոդների թերի կողմերը
<p>Շրջակա միջավայրի վրա հավանական զգալի ազդեցությունների կանխատեսում և գնահատում</p> <ul style="list-style-type: none"> • Բացահայտել ազդեցություններն ըստ Արձանագրությունում թվարկված տեսակների (մարդու առողջության, ֆլորայի, ֆաունայի, կենսաբազմազանության, հողի, կլիմայի, օդի, ջրի, լանդշաֆտների, բնության հուշարձանների, նյութական ունեցվածքի, մշակութային ժառանգության վրա ազդեցություններ), ըստ անհրաժեշտության, առանձնացվում են նաև այլ հնարավոր բնապահպանական ազդեցությունները • Ուսումնասիրել թե՛ դրական և թե՛ բացասական ազդեցությունները և դրանց տևականությունը (կարճաժամկետ, միջնաժամկետ, երկարաժամկետ) • Հնարավորության դեպքում առանձնացնել հնարավոր երկրորդական, կուտակումային և սիներգիկ հետևանքները • Հնարավորության դեպքում ուսումնասիրել հետևանքների միջև փոխազդեցությունը • Ազդեցությունների կանխատեսման և գնահատման համար կիրառել ընդունված համապատասխան չափանիշները, կանոնակարգերը և շեմային ցուցանիշները • Նկարագրել ազդեցությունների գնահատման մեթոդները
<p>Մեղմացուցիչ միջոցառումներ</p> <ul style="list-style-type: none"> • Առանձնացնել պլանի կամ ծրագրի իրագործման արդյունքում զգալի հետևանքների կանխմանը, նվազեցմանը և մեղմացմանն ուղղված նախատեսվող գործողությունները • Բացահայտել այն հարցերի շրջանակը, որն անհրաժեշտ է հաշվի առնել նախագծերի հաստատման գործընթացում
<p>Բնապահպանական զեկուլյ</p> <ul style="list-style-type: none"> • Ձեկուլյցի ձևաչափը և ներկայացման ձևը պետք է հստակ և հակիրճ լինեն • Ձեկուլյցը պետք է շարադրված լինի պարզ լեզվով, գերծ լինի տեխնիկական տերմիններից կամ ներառի դրանց բացատրությունը • Համապատասխան դեպքերում ներկայացնի քարտեզներ և այլ պատկերազարդումներ • Բացատրի օգտագործված մեթոդաբանությունը • Ներկայացնի, թե ովքեր են մասնակցել խորհրդակցությանը և խորհրդակցության ինչ մեթոդներ են կիրառվել • Նշի տեղեկատվության, այդ թվում՝ դատողությունների և արտահայտված կարծիքների

<p>աղբյուրները</p> <ul style="list-style-type: none"> Ներառի ոչ տեխնիկական լեզվով գրված ամփոփագիր, որտեղ ներկայացվեն ՌԲԳ-ի ընդհանուր մոտեցումը, պլանի նպատակները, քննարկված հիմնական այլընտրանքները և ՌԲԳ-ի արդյունքում պլանում ներմուծված փոփոխությունները
<p>Խորհրդակցում</p> <ul style="list-style-type: none"> ՌԲԳ քննարկել որպես պլանի մշակման գործընթացի անքակտելի բաղադրիչ Խորհրդակցել բնապահպանական (այդ թվում՝ առողջապահական) հարցերի համար պատասխանատու համապատասխան մարմինների և հանրության (պլանով կամ ծրագրով հետաքրքրված, կամ ազդեցության ենթարկվող անձանց) հետ, կիրառելով այնպիսի կարգ և ժամանակացույց, որոնք սահմանված ժամկետներում արդյունավետ հնարավորություն են տալիս վաղ փուլերում արտահայտելու իրենց կարծիքները պլանի նախագծի և բնապահպանական զեկույցի վերաբերյալ
<p>Որոշումների կայացում և որոշման մասին տեղեկատվության տրամադրում</p> <ul style="list-style-type: none"> Պլանի կամ ծրագրի վերջնական տարբերակը պատրաստելիս և ընդունելիս հաշվի առնել բնապահպանական զեկույցի եզրակացությունները և խորհրդակցությունների շրջանակներում ներկայացված կարծիքները Բացատրել, թե դրանք ինչպես են հաշվի առնվել Հիմնավորել քննարկված խելամիտ այլընտրանքային տարբերակների շրջանակից ընդունված պլանի կամ ծրագրի ընտրությունը
<p>Մշտադիտարկման միջոցառումներ</p> <ul style="list-style-type: none"> Մշտադիտարկման առաջարկված միջոցառումները պետք է լինեն հստակ սահմանված, իրագործելի և համապատասխանեն ՌԲԳ-ում ընդգրկված նպատակներին և ցուցանիշներին Համապատասխան դեպքերում պլանի կամ ծրագրի իրականացման ընթացքում մշտադիտարկումը կարելի է օգտագործել նախնական վիճակով ՌԲԳ-ում ընդգրկված տվյալների թերությունները շտկելու համար Մշտադիտարկումը հնարավորություն է ընձեռում վաղ փուլում բացահայտել չնախատեսված վնասակար հետևանքները (հարկավոր է նշել հետևանքների այն կանխատեսումները, որոնք հետագա հետազոտման արդյունքում հերքվել են) Զգալի բացասական հետևանքներին ի պատասխան ձեռնարկվող գործողությունների առաջարկներ ներկայացնել

Քայլ 5 Խորհրդակցում

Մեթոդաբանական առաջադրանքներ	Գործընթացային առաջադրանքներ	Լրացուցիչ, ոչ պարտադիր առաջադրանքներ
(չկա)	<ul style="list-style-type: none"> Հաստատել հանրության շահագրգիռ ներկայացուցիչներին այդ թվում՝ համապատասխան չԿ-ներին (եթե քայլ 1-ում չի արվել) (հոդված 8.3, տե՛ս հատված Ա4.3-ը) Բնապահպանական զեկույցը ներկայացնել իրավասու մարմիններին և հանրությանը (հոդված 8.2, տե՛ս հատված Ա4.3 և հոդված 9.2, տե՛ս հատված Ա4.4-ը) Ըստ անհրաժեշտության, պաշտոնապես ծանուցել ազդակիր կողմերին (հոդված 10, տե՛ս հատված Ա4.5) Բնապահպանական զեկույցի և դրա այլընտրանքային տարբերակների շուրջ խորհրդակցել իրավասու մարմինների հետ և կազմակերպել հանրության մասնակցությունը Ըստ անհրաժեշտության, խորհրդակցել 	<ul style="list-style-type: none"> Նկարագրել խորհրդակցությունների և հանրության մասնակցության գործընթացները Գրանցել, թե ովքեր են ընդգրկվել «հանրություն» և «հանրության շահագրգիռ ներկայացուցիչներ» հասկացությունների շրջանակներում

	<p>ազդակիր կողմերի հետ</p> <ul style="list-style-type: none"> • Ընդունել որոշումների կայացման գործընթացում հաշվի առնվող կարծիքները • Ջեկույցը պաշտոնապես հանձնել որոշումներ կայացնող մարմնին (հոդված 11, տե՛ս հատված Ա4.6) 	
--	--	--

54. Այս փուլում անհրաժեշտ է կազմակերպել խորհրդակցություններ (Հատված Ա4.4) և ապահովել հանրության մասնակցությունը (Հատված Ա4.3). իրավասու մարմինները և հասարակության շահագրգիռ ներկայացուցիչներն իրենց կարծիքներն են ներկայացնում զեկույցի և պլանի կամ ծրագրի նախագծի այլընտրանքային տարբերակների շուրջ: Նախատեսվող պլանը կամ ծրագիրը հաստատելիս այս կարծիքները պետք է հաշվի առնվեն, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է դրանք արձանագրել:

55. Հնարավոր անդրսահմանային ազդեցությունները որոշելուց հետո անհրաժեշտ է կազմակերպել անդրսահմանային խորհրդակցություններ: Ազդակիր կողմը ևս կարող է խորհրդակցությունների կազմակերպման պահանջ ներկայացնել: Տե՛ս հատված Ա4.5-ը ստորև:

56. Ջեկույցը և պլանի կամ ծրագրի այլընտրանքային տարբերակները, նախքան որոշում կայացնող մարմին հանձնելը, կարող են, ըստ անհրաժեշտության, փոփոխությունների ենթարկվել՝ հաշվի առնելով ներկայացված կարծիքները: Գլուխ Ա2-ում քննարկվում է այն հարցը, թե այս փաստաթղթերն ինչ կշիռ ունեն որոշումների կայացման գործընթացում:

Ա4.3 ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

57. Այս հատվածում քննարկվում է Արձանագրության համաձայն ՌԲԳ շրջանակներում հանրության մասնակցությունը (հիմնականում հոդված 8):

Ա4.3.1 Իրավական պարտավորություններ

58. Հոդված 8-ը պահանջում է, որ հանրությանը պլանների և ծրագրերի ՌԲԳ-ներին մասնակցելու արդյունավետ հնարավորություններ ընձեռվեն գործընթացի վաղ փուլերում, երբ բոլոր տարբերակները դեռևս բաց են (հոդված 8.1): Պլանի կամ ծրագրի նախագծի և բնապահպանական հաշվետվության հանրային մատչելիության ապահովումը պարտադիր է (հոդված 8.2):

59. Հարկավոր է սահմանել **հանրության շահագրգիռ ներկայացուցիչների**, այդ թվում՝ համապատասխան ՀԿ-ների շրջանակը (հոդված 8.3): Հանրության շահագրգիռ ներկայացուցիչները, և ոչ թե լայն հասարակայնությունն ընդհանրապես, պետք է հնարավորություն ունենան պլանի կամ ծրագրի նախագծի և բնապահպանական զեկույցի վերաբերյալ իրենց կարծիքները ներկայացնել (տես **հատված Ա4.2**, քայլ 4) խելամիտ ժամկետում (հոդված 8.4):

60. Ի լրումն վերոնշյալի, Արձանագրությունը սահմանում է գործընթացի վաղ փուլերում հանրության ներգրավման հետևյալ ոչ պարտադիր պահանջները՝

- ՌԲԳ-ի անհրաժեշտությունը որոշելիս շրջակա միջավայրի վրա զգալի ազդեցությունների բացահայտում (հոդված 5) (տես **հատված Ա3.2**).
- Շրջանակների որոշում (հոդված 6) (տես **հատված Ա4.2**, քայլ 1).

61. Հանրությանը իրազեկելու և հանրության շահագրգիռ ներկայացուցիչների հետ խորհրդակցելու մանրամասն պայմանավորվածությունները պետք է ճշտվեն և ներկայացվեն հանրությանը (հոդված 8.5). Այս պայմանավորվածությունները պետք է համապատասխանեն Հավելված V-ում սահմանված դրույթներին (տես՝ **վերևում**): ՌԲԳ Հրահանգում Հավելված V-ի համարժեք դրույթներ չկան:

62. Հանրության մասնակցության վերաբերյալ հավելյալ դրույթներ են սահմանված առաջաբանում և հետևյալ հոդվածներում՝ 1 (գ) (նպատակներ), 2.6 և 2.8 (սահմանումներ), 3.2, 3.3, 3.6 և 3.7 (ընդհանուր դրույթներ), 5.3 և 5.4 (ստուգազանում), 6.3 (շրջանակների որոշում), 7.2 (ա) (բնապահպանական զեկույց), 10.4 (անդրսահմանային խորհրդակցություններ), 11 (որոշումներ) և 12.2 (մշտադիտարկում): Արձանագրության հոդված 8-ի համարժեք դրույթները ՌԲԳ Հրահանգում զետեղված են հոդվածներ 6.1-ում, 6.2-ում, 6.4-ում և 6.5-ում: Հանրության մասնակցության վերաբերյալ լրացուցիչ դրույթներ են պարունակում առաջաբանը և հոդվածներ 2 (բ) և (դ), 3.7, 7.2, 8 և 9.1:

63. Արձանագրության շրջանակներում հանրությանը վերապահված իրավունքներն առավել մանրամասն քննարկելու համար նպատակահարմար է դրանք բաժանել երեք խմբերի՝

- Ընդհանուր իրավունքներ.
- Տեղեկացված լինելու իրավունք.
- Մասնակցելու իրավունք:

Հանրության ընդհանուր իրավունքներ

64. Արձանագրությունը հանրությանը վերապահում է մի շարք ընդհանուր իրավունքներ՝ ի լրումն պլանի կամ ծրագրի նախագծի և բնապահպանական զեկույցի վերաբերյալ որոշակի տեղեկատվություն ստանալու և դրանց շուրջ խորհրդակցելու իրավունքների: Այս

իրավունքներն ամրագրված են հոդված 3-ում և նման են Օրհուսի կոնվենցիայի հոդված 3-ում սահմանված իրավունքներին՝

- Պաշտոնյաների և իրավասու մարմինների կողմից ստանալ համապատասխան աջակցություն և ուղղորդում
- Համապատասխան ընկերակցությունները, կազմակերպությունները կամ խմբերը (օրինակ՝ ՀԿ-ների) պետք է ճանաչվեն և աջակցություն ստանան
- Կիրառել Արձանագրությամբ սահմանված իրավունքները
 - Առանց պատժամիջոցների, հետապնդման կամ հալածանքի ենթարկվելու
 - Առանց քաղաքացիության, ազգության կամ բնակավայրի հիման վրա խտրականության ենթարկվելու:

65. Հիմնականում ԵՄ օրենսդրությունը, բացի ՌԲԳ Հրահանգից, նույնօրինակ իրավունքներ է սահմանում:

66. Հոդված 3-ը ներառում է դրույթներ, որոնք մանրամասնում են, թե Արձանագրության պահանջները ինչպես կարելի է ինտեգրել ազգային օրենսդրությանը:

Տեղեկատվության մատչելիության հանրային իրավունքները

67. Հետևյալ տեղեկատվությունը ստանալու իրավունքներն ամրագրված են են Արձանագրության տարբեր դրույթներում և ըստ անհրաժեշտության քննարկվում են այս Ձեռնարկում՝

- Շրջակա միջավայրի վրա էական ազդեցությունների որոշման եզրակացությունները (հոդված 5.4) (տե՛ս [գլուխ Ա3](#)).
- Պլանի կամ ծրագրի նախագիծը և բնապահպանական զեկույցը (դրանց ժամանակին տրամադրումը) (հոդված 8.2 և հոդված 10.4) (տե՛ս [գլուխ Ա4.2](#)).
- Հանրությանն իրազեկելու և հանրության շահագրգիռ ներկայացուցիչների հետ խորհրդակցելու մանրամասն պայմանավորվածությունները (հոդված 8.5) (այս հատվածում).
- Պլանի կամ ծրագրի ընդունումը, այլ. (հոդված 11.2) ([հատված Ա4.6](#)).
- Մշտադիտարկման արդյունքները (հոդված 12.2) ([հատված Ա4.7](#)).

68. Հանրությանն իրազեկելու և հանրության շահագրգիռ ներկայացուցիչների հետ խորհրդակցելու մանրամասն պայմանավորվածությունները պետք է ճշտվեն, և այդ մասին հասարակությունը պետք է տեղեկացվի: Արձանագրության Հավելված V-ը մանրամասն ներկայացնում է այս պայմանավորվածությունների անհրաժեշտ պարամետրերը:

Հանրության մասնակցելու իրավունքները

69. Բացի տեղեկացված լինելու իրավունքից, հանրության շահագրգիռ ներկայացուցիչներին վերապահված է որոշումների կայացման գործընթացին մասնակցելու իրավունք՝ պլանի կամ ծրագրի նախագծի ու բնապահպանական զեկույցի վերաբերյալ իրենց կարծիքներն արտահայտելու և պլանի կամ ծրագրի վերաբերյալ որոշումների ընթացքում իրենց կարծիքները քննարկման առարկա դարձնելու միջոցով:

- Հանրությանը պետք է ընձեռվեն մասնակցելու արդյունավետ հնարավորություններ գործընթացի վաղ փուլերում, երբ բոլոր տարբերակները բաց են (հոդված 8.1).
- Հանրությանը շրջակա միջավայրի վրա զգալի ազդեցությունների որոշման և շրջանակների որոշման փուլերին մասնակցության իրավունք կարող է ընձեռվել, սակայն սա պարտադիր պահանջ չէ (հոդված 5.3 և հոդված 6.3) ([համապատասխանաբար \[գլուխ Ա3\]\(#\) և \[գլուխ Ա4.2\]\(#\)](#))
- Հանրության շահագրգիռ ներկայացուցիչները կարող են խելամիտ ժամկետներում պլանի կամ ծրագրի նախագծի և բնապահպանական զեկույցի վերաբերյալ իրենց կարծիքն արտահայտել (հոդված 8.4 և հոդված. 10.4) ([հատվածներ Ա4.2](#) և [Ա4.5](#) ([համապատասխանաբար՝ ազդեցության ենթարկվող երկրի հանրության շահագրգիռ ներկայացուցիչների իրավունքների մասին](#)))

- Հանրության շահագրգիռ ներկայացուցիչների արտահայտած կարծիքները պետք է հաշվի առնվեն որոշումների կայացման գործընթացում (հոդված 11.1) (հատված Ա4.6):

Ա4.3.2 Հնարավոր գործնական նկատառումներ

70. Ինչպես արդեն նշված է վերևում, Արձանագրության շրջանակներում (հոդված 3) հանրությանը վերապահված ընդհանուր իրավունքները նման են Օրհուսի կոնվենցիայում սահմանված իրավունքներին:
71. Ի լրումն վերոնշյալի, այս հատվածում քննարկվում են, ըստ Արձանագրության, հանրության մասնակցության ապահովման գործնական նկատառումներ հետևյալ չորս հարցադրումների միջոցով.
1. Ո՞վքեր են նրանք:
 2. Որո՞նք են Արձանագրության շրջանակներում նրանց վերապահված իրավունքները:
 3. Ինչպե՞ս կարելի է նրանց տեղեկատվություն տրամադրել:
 4. Ինչպե՞ս կարող են նրանք մասնակցել:

Ո՞վքեր են ընգրկված հանրության կազմում

72. Ո՞վքեր են մտնում հասարակության սահմանման մեջ: Ովքե՞ր են «հանրության շահագրգիռ ներկայացուցիչները», ու՞մ պետք է ընձեռվի «խելամիտ ժամկետում պլանի կամ ծրագրի նախագծի և բնապահպանական զեկույցի մասին կարծիքներ արտահայտելու հնարավորություն» (հոդված 8.4): «Հանրության շահագրգիռ ներկայացուցիչներ» արտահայտության սահմանումն Արձանագրության մեջ տրված չէ, թեև Օրհուսի կոնվենցիայում ամրագրված է նման սահմանում: Բհարկե, հանրության շահագրգիռ ներկայացուցիչները տարբեր պլանների կամ ծրագրերի դեպքում տարբեր անձանց կամ կազմակերպությունների կարող են ընդգրկել:
73. Հանրության շահագրգիռ ներկայացուցիչների ցանկը որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հնարավոր գործնական նկատառումները.
- Արձանագրությունը պահանջում է, որ «հանրության շահագրգիռ ներկայացուցիչները», այդ թվում՝ համապատասխան շԿ-ները, ճանաչվեն (ընտրվելու փոխարեն)
 - Արձանագրությունում ընգրկված «հանրության» սահմանումը համընկնում է Օրհուսի կոնվենցիայի և ՌԲԳ Հրահանգի սահմանումներին, սակայն տարբեր է էսպուի կոնվենցիայում ամրագրված ձևակերպումից, քանի որ հստակ ընդգրկում է «ընկերակցությունները, կազմակերպությունները կամ խմբերը»:
 - Մահմանումը վերաբերում է «ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձի» (ԵԽ Ուղեցույց, պարբերություն 7.5): «Շատ դեպքերում ֆիզիկական կամ իրավաբանական անձանց **ընկերակցությունը, կազմակերպությունը կամ խումբն** իր հերթին կարող է իրավաբանական անձ հանդիսանալ, և ուղղակիորեն ընդգրկվել սույն սահմանման շրջանակներում: Հետևաբար, այս ձևակերպումը պետք է մեկնաբանել առ այն, որ իրավաբանական անձ կարգավիճակ չունեցող ընկերակցությունները, կազմակերպությունները կամ խմբերը (այդ թվում՝ հասարակական կազմակերպությունները) նույնպես կարող են, ազգային օրենսդրության շրջանակներում համապատասխան դրույթների առկայության դեպքում, «հանրության» մաս կազմել» (ԵԽ Ուղեցույց, պարբերություն 7.6):
 - Արձանագրությունում նշվում է, որ «հանրության շահագրգիռ ներկայացուցիչները» (այս արտահայտության սահմանումը չի ներկայացվում, ընդամենը նշվում է, որ դրանց թվում պետք է ընդգրկվեն շԿ-ները) կարող են օգտվել պլանի կամ ծրագրի նախագծի և բնապահպանական զեկույցի վերաբերյալ իրենց կարծիքներն արտահայտելու հնարավորությունից: Օրհուսի կոնվենցիայում «հանրության շահագրգիռ ներկայացուցիչների» սահմանումը տրվում է որպես «հանրության այն ներկայացուցիչները, որոնց շահերը բնապահպանական խնդիրների շուրջ որոշումների կայացման գործընթացի արդյունքում կարող են տուժել կամ շահել, կամ որոնք

հետաքրքրված են այդ գործընթացով: Սույն դրույթի համատեքստում համարվում է, որ այս բոլոր ոչ կառավարական կազմակերպությունները, որոնք հետամուտ են բնապահպանական խնդիրներին և բավարարում են ազգային օրենսդրության պահանջները, հանրության շահագրգիռ ներկայացուցիչներ են համարվում» (հոդված 2.5): Հրահանգի սահմանումը համապատասխանում է Օրհուսի կոնվենցիայում ամրագրված սահմանմանը, թեև «հանրության շահագրգիռ ներկայացուցիչներ» բառակապակցությունը չի օգտագործվում: Կողմերը կարող են օգտագործել այս սահմանումը:

- ԵՄ Ուղեցույցում նշվում է. « Հանրության այն ներկայացուցիչները, ովքեր սույն լիբավական գործիքի կիրառությամբ ենթակա որոշումների կայացման գործընթացի արդյունքում կարող են ազդեցության ենթարկվել կամ հետաքրքրված են այդ գործընթացով՝ կարող են սահմանվել որպես լայն հասարակայնության ենթախումբ... Սույն դրույթը [պետություններին] պարտավորեցնում է սահմանել այս ենթախումբը, որին պետք է ընձեռվի պլանի կամ ծրագրի նախագծի և բնապահպանական զեկույցի վերաբերյալ կարծիք արտահայտելու հնարավորություն... Հանրության այս ենթախմբի կազմը կարող է փոփոխվել ըստ նախատեսվող պլանի կամ ծրագրի բովանդակության: Որոշ իրավիճակներում, օրինակ, ողջ երկրի տարածքն ընդգրկող պլանի կամ ծրագրի դեպքում հանրության շահագրգիռ կամ ազդակիր ներկայացուցիչները կարող են համընկնել լայն հասարակայնության հետ, և սա պետք է հաշվի առնվի հանրության համապատասխան ներկայացուցիչների ցանկը կազմելիս» (ԵՄ Ուղեցույց, պարբերություն 7.16):
- Ըստ սահմանման, համապատասխան ՀԿ-ները, հանրության շահագրգիռ ներկայացուցիչներ են համարվում: ԵՄ Ուղեցույցում նշվում է. «ՀԿ-ները կարող են հետաքրքրություններ ունենալ տարբեր բնագավառների վերաբերյալ: Որոշ ՀԿ-ներ, օրինակ, ավելի ակտիվ են ազգային մակարդակում, մինչդեռ այլ ՀԿ-ներ ավելի մեծ ակտիվություն են ցուցաբերում տարածաշրջանային կամ տեղական մակարդակում կամ զբաղվում են կոնկրետ խնդիրներով, օրինակ՝ բնության կամ թափոնների խնդիրներով: Համապատասխան ՀԿ-ների ցանկը կազմելիս ... երկրները պետք է համապատասխանության պարամետրերը հարմարեցնեն նախատեսվող պլանի կամ ծրագրի բնույթին և ՀԿ-ների հետաքրքրություններին: Ջուտ տեղական հարցերով զբաղվող ՀԿ-ները պետք է ընդգրկվեն նույնիսկ հեռու վայրերում նախատեսվող պլանների և ծրագրերի համապատասխան գործընթացներում, եթե ակնհայտ է, որ դրանց իրականացումը կարող է ազդել այդ կազմակերպությունների շահերի վրա» (ԵՄ Ուղեցույց, պարբերություն 7.17):

74. Կարևոր է, որ հաշվի առնվեն բնակչության բոլոր այն խմբերը, որոնց շահերի վրա թե՛ վնասակար, թե՛ շահավետ ազդեցություն կարող են գործել նախատեսվող պլանի կամ ծրագրի աշխատանքները և միջոցներ ձեռք առնել բացասական ազդեցությունների ենթակա բնակչության խմբերին ներգրավել հանրային մասնակցության գործընթացներում: Այս խմբերի շարքում կարող են լինել անապահով խավերի ներկայացուցիչներ, օրինակ՝ ցածր եկամուտ վաստակող մարդիկ, հաշմանդամներ, անօթևաններ, փախստականներ և այլն:

Որո՞նք են հանրության, հասարակության ընդհանուր իրավունքները

Կողմերը պետք է հետևեն, որ համապատասխան պաշտոնյաները և իրավասու մարմինները աջակցեն և ուղղորդեն հասարակությանը սույն Արձանագրության շրջանակներում ընդգրկված խնդիրների հարցում (հոդված 3.2):

75. Քանի որ պաշտոնյաները պետական ծառայության մեջ են, կարելի է ակնկալել, որ նրանք շահագրգռություն կորստորեն հանրության կողմից այս գործիքների կիրառումը խրախուսելու գործում՝ համապատասխան տեղեկատվություն, ուղղորդում և խթաններ տրամադրելու միջոցով: «Պետք է ձգտեն ապահովել» արտահայտությունը չպետք է մեկնաբանվի որպես պարտականության մեղմացման ձևակերպում, այլն պետք է ընդունվի որպես այն փաստի ճանաչում, որ երկրները չեն

կարող երաշխավորել իրենց պաշտոնյաների և իրավասու մարմինների կողմից տրամադրվող աջակցությունն ու ուղղորդումը, քանի որ կոնկրետ դեպքում առանձին պաշտոնյաների կողմից տրամադրվող աջակցության և ուղղորդման գնահատականը կարող է սուբյեկտիվ լինել: Այս արտահայտությունը կարող է մեկնաբանվել որպես պետություններին ներկայացվող պահանջ՝ քայլեր ձեռնարկել պաշտոնյաների և իրավասու մարմինների կողմից նշված աջակցությունն ապահովելու ուղղությամբ, այսինքն՝ երկրները պետք է տրամադրեն աջակցության միջոցները, պաշտոնյաներին և իրավասու մարմիններին հնարավորություն ընձեռեն նման աջակցություն տրամադրելու համար, նրանց խրախուսեն նման աջակցություն տրամադրել պաշտոնական քաղաքականությունների և կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների միջոցով³³:

76. ՌԲԳ գործընթացում հանրության մասնակցությունը խիստ կարևոր է ՌԲԳ-ի օրինականությունն ու արժեքն ամրագրելու համար: Շատ երկրներ դժվարությունների են բախվել ՌԲԳ գործընթացում հանրության մասնակցությունը խրախուսելու գործում, ուստի չպետք է թերագնահատել «տեղեկատվություն, ուղղորդում և քաջալերանք» տրամադրելու համար անհրաժեշտ ջանքերը:

Յուրաքանչյուր երկիր պետք է սույն Արձանագրության պահանջների իրականացման համատեքստում ապահովի շրջակա միջավայրի պահպանման, այդ թվում՝ առողջապահության հարցերին հետամուտ ընկերակցությունների, կազմակերպությունների կամ խմբերի պատշաճ ճանաչումը և աջակցի նրանց (հոդված 3.3):

77. Կողմերը պետք է օրինական ընկերակցությունների, կազմակերպությունների կամ խմբերի (օրինակ, ՀԿ-ների) ստեղծման պայմաններ ապահովեն: Որոշ երկրներում նման խմբերի գրանցումը պարտադիր է, մինչդեռ մյուսները առանց վերապահումների ճանաչում են նաև չգրանցված կամ ըստ անհրաժեշտության ստեղծված խմբերին: Աջակցության ձևերը կարող են տարբեր լինել, այդ թվում՝ անմիջական օժանդակություն (օրինակ՝ դրամաշնորհներ) կամ անուղղակի աջակցություն (օրինակ՝ հարկային արտոնություններ, կամ մասնակցությամբ պայմանավորված առավելություններ):

Յուրաքանչյուր երկիր պետք է հետևի, որ Արձանագրության դրույթներին համապատասխան իրենց իրավունքները կիրառող անձինք մասնակցության պատճառով որևէ կերպ պատժի, հալածանքի կամ ոտնձգության չենթարկվեն: Սույն դրույթը չի ազդում ազգային դատարանների՝ դատական վարույթների միջոցով ծախսերի ողջամիտ փոխհատուցման շնորհման իրավասությունների վրա (հոդված 3.6):

78. Այս դրույթը նպատակաուղղված է ՌԲԳ գործընթացին հանրության ներկայացուցիչների կարգավիճակով մասնակցող անձանց դեմ, առանց դատական միջամտության, պատժամիջոցների, հալածանքի կամ ոտնձգությունների կանխման:

Սույն Արձանագրության համապատասխան դրույթների շրջանակներում հանրության անդամներին իրավունք է վերապահվում իրենց իրավունքները կիրառել առանց քաղաքացիության, ազգության կամ բնակավայրի, իսկ իրավական մարմինների դեպքում՝ գրանցման կամ գործունեության վայրի հիման վրա խտրականության ենթարկվելու (հոդված 3.7):

79. Այս դրույթի նախատեսված նպատակն է՝ կանխել քաղաքացիության, ազգության կամ բնակության վայրի հիման վրա խտրականության դրսևորման դեպքերը:

Ինչպե՞ս կարելի է տեղեկատվությունը մատչելի դարձնել հանրությանը:

³³ Տե՛ս Օրհուսի կոնվենցիայի կիրարկման ուղեցույցը (ՄԱԿ հրատարակություն, վաճառքի հերթական համարը՝ E.00.II.E.3), էջ 43, գետեղված է <http://www.unece.org/env/pp/acig.htm> կայքէջում:

80. Հանրությանը տեղեկատվությամբ ապահովելու համար անհրաժեշտ է օգտվել տեղեկատվության հրապարակման և մատչելիության ապահովման համապատասխան մեխանիզմներից, թեև Արձանագրությամբ միայն ներկայացվում է տեղեկատվությունը հանրությանը մատչելի դարձնելու պահանջ: Տեղեկատվության արդյունավետ տարածում կարելի է կազմակերպել հանրային ծանուցման միջոցներով (օրինակ՝ թերթերում տեղադրված ծանուցագրեր) կամ անհատական ծանուցման միջոցով (օրինակ՝ անհատական էլեկտրոնային հաղորդագրությունների ուղարկում):

81. Արձանագրությունում հստակորեն նշվում է էլեկտրոնային լրատվամիջոցներից օգտվելու մասին, որոնք դիտվում են որպես հանրությանը տարբեր փաստաթղթերի մասին ժամանակին տեղեկատվություն տրամադրելու միջոց: Այնուամենայնիվ, հաշվի առնելով հանրության մասնակցության արդյունավետ հնարավորությունների ընձեռնման անհրաժեշտությունը, ընդամենը հաղորդակցման էլեկտրոնային միջոցներով փաստաթղթերի տարածումը կարող է բավարար չհամարվել, քանի որ բացառում է հանրության մի շարք կարևոր հատվածների, օրինակ, ընչազուրկ, մեկուսացված (օրինակ՝ գյուղական) վայրերում բնակվող կամ համացանցից չօգտվող տարեց անձանց մասնակցությունը:

82. Տեղեկատվության տարածման և մատչելիության ապահովման մեթոդներն ու միջոցները քննարկվում են Ձեռնարկի [Ա.5 գլխում](#):

Ինչպե՞ս կարող է հանրությունը մասնակցել

83. Հանրության մասնակցության կազմակերպման գործնական մեթոդներն առավել մանրամասն ներկայացվում են [գլուխ Ա.5](#)-ում: Ստորև բերված են Արձանագրության համապատասխան դրույթների վերաբերյալ գործնական ուղենիշներ:

84. Պետությունները պետք է հասարակության որոշ անդամների հնարավորություն ընձեռեն բնապահպանական զեկույցի և պլանի կամ ծրագրի նախագծի վերաբերյալ իրենց կարծիքը արտահայտելու համար: Հանրության մասնակցության հիմնավորումներից մեկն այն է, որ այս ձևով հանրությունը նպաստում է պլանի կամ ծրագրի վերաբերյալ որոշումներ կայացնող մարմնին տրամադրվող տեղեկատվության որակի հղկմանը: Հանրության մասնակցությունը երբեմն կարող է ի հայտ բերել նոր և կարևոր տեղեկություն, որը կարող է հանգեցնել պլանի կամ ծրագրի նշանակալի բովանդակային փոփոխությունների և, հետևաբար, շրջակա միջավայրի վրա նախատեսվող պլանի կամ ծրագրի հնարավոր էական բնապահպանական հետևանքների ցանկի վերանայման: Նման դեպքերում կարող է առաջանալ բնապահպանական զեկույցի վերանայման անհրաժեշտություն, ինչպես նաև, կախված կատարված փոփոխությունների բնույթից՝ հանրությանը կրկին ներգրավելու պահանջ (ԵՄ Ուղեցույց, կետ 7.1, փոփոխված):

85. Արձանագրությունը պահանջում է, որ հանրությանը մասնակցության հնարավորություն ընձեռվի այն ժամանակ, «երբ բոլոր տարբերակները դեռևս քննարկման առարկա են», այսինքն, մի փուլում, երբ հնարավոր է խելամիտ այլընտրանքային տարբերակներից ընտրել և լավագույն տարբերակը ընդունել կամ օրենքով սահմանված կարգով ներկայացնել հաստատման:

86. Պլանի կամ ծրագրի նախագիծը և զեկույցը պետք է ներկայացնել լայն հասարակայնությանը, սակայն պետք է հաշվի առնվեն հանրության շահագրգիռ անձանց կարծիքները:

87. Հանրության մասնակցության նախատեսվող ժամկետները այնպես պետք է հաշվարկվեն, որ համապատասխանեն «գործընթացի վաղ փուլերում արդյունավետ» մասնակցության (հոդված 8.1) և հանրության շահագրգիռ անձանց կարծիքը «խելամիտ ժամկետում» ներկայացնելու (հոդված 8.4) հնարավորություն ընձեռելու պահանջներին: Ներերկրյա և անդրսահմանային ՇՄԱԳ-ների շրջանակներում խորհրդակցությունների կազմակերպման փորձառությունը կարող է օգտակար լինել (ԵՄ Ուղեցույց, կետ 7.9), օրինակ, ՇՄԱԳ-ի ժամկետները կարող են որպես ուղեցույց

ծառայել: Խորհուրդ է տրվում, որ ժամկետներն ամրագրվեն օրենսդրության շրջանակներում և որ պլանի կամ ծրագրի ցանկացած նույն տեսակի համար սահմանվեն բնապահպանական զեկույցի և պլանի կամ ծրագրի նախագծի վերաբերյալ կարծիքների ներկայացման նույն ժամկետները: ՌԲԳ Հրահանգը պարտադրում է, որ խորհրդակցությունների ընթացքում պլանի կամ ծրագրի նախագծին կից ներկայացվի բնապահպանական հաշվետվությունը (հոդված 6.2), իսկ Արձանագրությունը հստակ ձևով չի ամրագրում այս երկու փաստաթղթերը միասին ներկայացնելու պահանջ:

88. Կախված պլանի կամ ծրագրի տեսակից ու բարդության աստիճանից՝ կարող են սահմանվել տարբեր ժամկետներ, սակայն պետք է ուշադիր լինել և միջոցներ ձեռնարկել, որպեսզի բավարար ժամանակ նախատեսվի ծավալուն, բարդ, վիճահարույց կամ հեռահար պլանների և ծրագրերի վերաբերյալ հիմնավոր կարծիք ձևավորելու և պատշաճ ձևակերպելու համար: Անհրաժեշտ է նաև բավարար ժամանակ տրամադրել պլանավորող մարմնին՝ ներկայացված տեսակետները նախքան պլանի կամ ծրագրի ընդունումը ուսումնասիրելու համար: Երբեմն ներկայացվում են լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելու պահանջներ, հանրության մասնակցության համար նախատեսվող ժամկետները որոշելիս հարկավոր է հաշվի առնել պատասխանատու մարմնի կողմից պատասխաններ ներկայացնելու համար պահանջվող ժամանակահատվածը (ԵԽ Ուղեցույց, պարբերություն 7.10, փոփոխված):

89. Կարող է նպատակահարմար լինել ՌԲԳ-ի շրջանակներում հասարակության մասնակցությունը միավորել պլանի կամ ծրագրի մշակման գործընթացի շրջանակներում կազմակերպվող հասարակական մասնակցության հետ (ինչպես քննարկվում է գլուխ Ա2-ում): Պլանի կամ ծրագրի մշակման և ՌԲԳ-ի շրջանակներում կազմակերպվող հասարակական մասնակցության քայլերի համատեղումը կարող է հնարավորություն ընձեռել պլանի կամ ծրագրի վերաձևակերպման հնարավոր առաջարկները քննարկել կարծիքների ներկայացման ու վերանայման մեկ ընդհանուր գործընթացի միջոցով:

Ա.4.4 ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ

90. Այս հատվածում ներկայացվում է Արձանագրության համաձայն ՌԲԳ շրջանակներում բնապահպանության և առողջապահության իրավասու մարմինների հետ խորհրդակցության ուսումնասիրությունը (հիմնականում հոդված 9):

Ա.4.4.1 Իրավական պարտավորություններ

91. Հոդված 9-ը պահանջում է, որ բնապահպանության և առողջապահության իրավասու մարմիններին գործընթացի վաղ փուլերում արդյունավետ հնարավորություն տրվի պլանի կամ ծրագրի նախագծի և բնապահպանական զեկույցի վերաբերյալ իրենց կարծիքներն արտահայտելու համար (հոդված 9.3):

92. Հարկավոր է որոշել, թե բնապահպանական և առողջապահական ո՞ր մարմինները պետք է մասնակցեն խորհրդակցություններին (հոդված 9.1), նաև անհրաժեշտ է սահմանել տեղեկացման և խորհրդակցությունների վարման մանրամասն մեխանիզմը (հոդված 9.4):

93. Բնապահպանության և առողջապահության մարմինների հետ խորհրդակցություններ նախատեսվում են ՌԲԳ-ի տարբեր փուլերում՝

- Զգալի ազդեցությունների բացահայտում, եթե ՌԲԳ-ի անհրաժեշտությունը որոշելիս նման պահանջ է ներկայացվում (հոդված 5.2) (տե՛ս [հատված Ա.3.2](#))
- Շրջանակների որոշում (հոդված 6.2) (տե՛ս [հատված Ա.4.2](#))
- Բնապահպանական զեկույց (հոդված 9.3) (տե՛ս [հատված Ա.4.2](#))

94. Խորհրդակցություններին առնչվող լրացուցիչ դրույթներ են ամրագրված հետևյալ հոդվածներում՝ 2.6 (սահմանումներ), 5.2 (ստուգազնում), 6.2 (շրջանակների որոշում), 10.4 (անդրսահմանային խորհրդակցություններ), 11 (որոշումների կայացում) և 12.2 (մշտադիտարկում): Արձանագրության հոդված 9-ին համապատասխանող ՌԲԳ Հրահանգի

հիմնական դրույթներն ամրագրված են հոդվածներ 6.1, 6.2, 6.3 և 6.5-ում: Խորհրդակցություններին վերաբերող հավելյալ դրույթներ են ներկայացվում առաջաբանում և հոդվածներ 2 (բ)-ում, 3.6-ում, 5.4-ում, 7.2-ում, 8-ում և 9.1-ում:

Ա4.4.2 Հնարավոր գործնական նկատառումներ

95. Խորհրդակցություններին վերաբերող իրավական պարտականություններն իրականացնելիս, ստորև բերվող առաջարկները կարող են նպաստել արդյունավետ խորհրդակցությունների կազմակերպմանը (լրացուցիչ մանրամասների համար տե՛ս ներդիր Ա4.5):

- Կողմերը համատեղ որոշում են իրավասու մարմինների իրազեկման և նրանց հետ խորհրդակցությունների վարման մեխանիզմի մանրամասները՝ առաջնորդվելով օրենքով սահմանված կարգով (հոդված 9.4)
- «Իրավասու մարմիններ» հասկացությունը ներառում է վարչական կամ իրավական պահանջների համաձայն սահմանված պաշտոնական պետական և հանրային մարմինները
- Այդ մարմինները կարող են նշանակվել օրենքներում ամրագրված պահանջների կամ գործի անհատական բնույթի համապատասխանության կամ պլանների կամ ծրագրերի տեսակների հիման վրա (հոդված 9.1)
- Թե՛ Արձանագրությունը և թե՛ Հրահանգը պահանջում են, որ պատասխանատու մարմնի նշանակումը որոշվի խորհրդակցության արդյունքում: Գործընթացում պարզություն մտցելու համար կարող է նպատակահարմար լինել նախօրոք պատրաստել ըստ պլանների և ծրագրերի տեսակների տարբեր պատասխանատու մարմինների նշանակման ցանկ. նախօրոք որոշման այս դրույթը պարտադիր պահանջ է ՌԲԳ Հրահանգի շրջանակներում: Տարբեր հաստատությունների, այդ թվում՝ բնապահպանության և առողջապահության մարմինների պարտականությունները պարզաբանելու համար կարող է նաև օգտակար լինել ՌԲԳ խորհրդակցությունների շրջանակներում քննարկվող ծառայությունների մատուցման պայմանագրերի և տեխնիկական առաջադրանքների նախնական տարբերակների պատրաստումը:
- Յուրաքանչյուր պլանի կամ ծրագրի, կամ դրանց տեսակի համար հարկավոր է ընտրել խորհրդակցման համապատասխան ձև:

96. Խորհրդակցությունների կազմակերպման տարբեր մեթոդներ և եղանակներ կան, օրինակ՝

- գրավոր կարծիքների հայցում
- նախաձեռնող խմբեր
- կիզակետային խմբեր
- խորհրդատու հանձնաժողովներ
- հարցազրույցներ
- համացանցային քննարկումներ:

97. Գլուխ Ա5-ում ներկայացված է այլ գործիքների մասին տեղեկատվություն: Տե՛ս նաև վերևում բերված ենթահատված Ա4.3.2, որը գործնական խորհուրդներ է տալիս գործընթացում հանրության ներգրավման կազմակերպման վերաբերյալ : Այս խորհուրդների գերակշիռ մասը հավասարապես կարող են վերաբերել իրավասու մարմինների հետ խորհրդակցությունների կազմակերպմանը:

Ներդիր Ա4.5 Խորհրդակցություն պատասխանատու մարմինների հետ. հնարավոր գործնական պայմանավորվածություններ

«Իրավասու մարմիններ» հասկացության մեջ ընդգրկված են վարչական կամ օրենսդրական կարգով սահմանված պաշտոնական կառավարական կառույցները կամ հանրային իշխանությունները: Դրանց թվում կարող են լինել բնապահպանական կամ շրջակա միջավայրի ու առողջապահության տեսչություններ (ազգային, տարածքային կամ տեղական մակարդակներում),

բնապահպանության կամ առողջապահության գիտահետազոտական հաստատություններ, որոնք հանրային գործառույթ են իրականացնում կամ կառավարության օղակներ են (ազգային, տարածքային կամ տեղական), որոնք կարող են հետաքրքրված լինել խնդրո առարկա պլանի կամ ծրագրի իրականացման արդյունքում հնարավոր հետևանքներով կամ տիրապետել համապատասխան փորձագիտական գիտելիքների: «Բնապահպանության կամ առողջապահության ոլորտներում հատուկ պատասխատվություն կրող» արտահայտությունը վերաբերում է այդ մարմինների պարտավորություններին կամ նրանց վերապահված լիազորություններին (օրինակ՝ վերահսկել շրջակա միջավայրի որակը, ապահովել առողջապահական ծառայություններ, իրականացնել տեսչական այցեր, վարել գիտահետազոտական ուսումնասիրություններ և այլն):

Պատասխանատու մարմինների «նշանակումը» կարող է կատարվել ընդհանուր ձևով՝ Արձանագրության կիրառման օրենքում համապատասխան դրույթներ ամրագրելու միջոցով: Օրինակ, ազգային բնապահպանական գերատեսչությունը կարող է իրավասու մարմին նշանակվել անխտիր բոլոր դեպքերի կամ աշխատանքների սահմանված տեսակների քննման համար: Իրավասու մարմինները կարող են նաև նշանակվել անհատական քննվող գործի վերաբերյալ որոշմամբ, եթե Արձանագրությունը կիրառող օրենքում կան նշանակման նման տարբերակ թույլատրող համապատասխան դրույթներ: Օրինակ՝ օրենքով կարող են սահմանվել մի քանի իրավասու մարմիններ, այդ թվում՝ բնապահպանական կամ առողջապահական գերատեսչություններ և տարածաշրջանային պետական միավորներ: Աշխատանքների անհատական ուսումնասիրության հիման վրա նշանակման տարբերակի դեպքում պլանավորող մարմինը կարող է սահմանել, թե նշված իրավասու մարմիններից որը պետք է ընդգրկվի առանձին աշխատանքների շուրջ խորհրդակցություններում՝ կախված յուրաքանչյուր պլանի կամ ծրագրի բնույթից:

Երկրները կարող են նաև բնապահպանական կամ առողջապահական հարցերի պատասխանատվություն կրող մարմիններ նշանակել առավել ընդհանուր ձևաչափով, օրինակ նման պատասխանատվություն կրող «հարակից տեղական մարմինները»: Այս օրինակը ընդհանուր դրույթով և անհատական գործի հիման վրա իրավասու մարմինների նշանակման միջանկյալ տարբերակ է:

Իրավասու մարմինների իրազեկման և դրանցից պատասխանների հայթայթման «մանրամասն գործողությունների» կազմակերպումը թողնված է երկրների հայեցողությանը: Արձանագրությունն իրագործող օրենսդրությունը պետք է սահմանի այս գործողությունների շրջանակը: Օրինակ, տվյալ մեխանիզմով կարող են սահմանվել իրավասու մարմինների իրազեկման և կարծիքների ներկայացման ուղիները: Կողմերը կարող են նաև ուսումնասիրել խորհրդակցությունների վարման առավել ժամանակակից մեխանիզմներ, ինչպիսիք են ինտերնետային քննարկումները, եթե դրանք իրենց բնույթով չեն բացառում որոշակի իրավասու մարմինների մասնակցությունը: Խորհրդակցությունների վարման բազմաթիվ մեթոդներ և եղանակներ կան, այդ թվում՝ պլանների կամ ծրագրերի նախագծերի վերաբերյալ գրավոր կարծիքների ներկայացում, նախաձեռնող խմբեր, կիզակետային խմբեր, խորհրդատու կոմիտեներ կամ հարցազրույցներ: Նախատեսվող պլանի կամ ծրագրի համար հարկավոր է ընտրել ամենահամապատասխան մեթոդը:

(Աղբյուրը՝ ԵԽ Ուղեցույցի փոփոխված տեքստ, պարբերություններ 7.11–7.20):

Ա4.5 ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

98. Այս հատվածում անդրադարձ է կատարվում Արձանագրության համաձայն (հիմնականում հոդված 10) ՌԲԳ շրջանակներում իրականացվող անդրասահմանային խորհրդակցություններին:

Ա4.5.1 Իրավական պարտավորություններ

99. Հողված 10-ով անդրսահմանային խորհրդակցություններ են նախատեսվում այն դեպքում, երբ մի երկրում (ծագման երկիր) նախատեսվող պլանը կամ ծրագիրը կարող է զգալի բնապահպանական հետևանքներ առաջացնել մեկ այլ երկրի տարածքում (ազդեցության ենթարկվող՝ ազդակիր երկիր):

100. Պլանի կամ ծրագրի ծագման երկիրը պետք է տեղեկացնի ազդակիր երկրին, եթե գտնում է, որ առաջարկվող պլանի կամ ծրագրի իրականացումը կարող է էական անդրսահմանային բնապահպանական հետևանքների հանգեցնել, կամ եթե հարցում է ստանում զգալի բնապահպանական ազդեցությունների ենթակա որևէ երկրից (հողված 10.1): Հետևաբար, առաջին քայլը պետք է լինի ճշտել, թե նախատեսվող պլանը կամ ծրագիրը զգալի անդրսահմանային բնապահպանական հետևանքներ կարող է ունենալ, թե ոչ:

101. Այս գլխում ներկայացված ՌԲԳ գործընթացում հստակ սահմանված չէ, թե անդրսահմանային ծանուցագիրը և խորհրդակցությունները ո՞ր փուլում պետք է նախաձեռնվեն: Արձանագրությունը պարզապես պահանջում է, որ ծանուցագիրը «ներկայացվի հնարավորինս շուտ՝ նախքան պլանի կամ ծրագրի ընդունումը» (հողված 10.1):

102. Ծանուցագրին կից պետք է ներկայացվեն (հողված 10.2)՝

- Պլանի կամ ծրագրի նախագիծը
- Բնապահպանական զեկույցը, որը ներառում է հնարավոր անդրսահմանային բնապահպանական հետևանքների մասին տեղեկատվություն
- Տեղեկատվություն որոշումների կայացման գործընթացի վերաբերյալ, այդ թվում՝ կարծիքների ներկայացման ժամանակացույցը:

103. Ազդակիր երկրի կողմից համաձայնության կամ համապատասխան պահանջի դեպքում այնուհետև կազմակերպվում են խորհրդակցություններ, որոնց շրջանակներում քննարկվում են՝

- Պլանի կամ ծրագրի իրականացման դեպքում հնարավոր անդրսահմանային բնապահպանական հետևանքները (հողված 10.3).
- Բացասական հետևանքների կանխմանը, նվազեցմանը կամ մեղմացմանն ուղղված գործողությունները (հողված 10.3).
- Ազդակիր երկրի համապատասխան իրավասու մարմիններին և հանրությանը տեղեկացնելու և ստորև բերված թեմաների շուրջ իրենց կարծիքները ներկայացնելու մասին մանրամասն պայմանավորվածություններ (հողված 10.4).
 - Պլանի կամ ծրագրի նախագիծը
 - Բնապահպանական զեկույցը:

104. Ազդակիր երկրի բնապահպանության ու առողջապահության իրավասու մարմինների և հանրության կարծիքները պետք է հաշվի առնվեն: Պահանջվում է, որ նրանք տեղեկացվեն, թե իրենց կարծիքներն ինչպես են հաշվի առնվել (հողված 11):

105. Անդրսահմանային խորհրդակցություններին վերաբերող լրացուցիչ դրույթներ են գետեղված առաջաբանում, հողվածներ 2.3-ում, 2.4-ում (սահմանումներ) և 11-ում (որոշում), ինչպես նաև Հավելվածներ III, IV (պարբերություն 10) և V-ում: ՌԲԳ Հրահանգում Արձանագրության հողված 10-ի հիմնական դրույթների համարժեք պահանջներն ամրագրված են հողված 7-ում: Անդրսահմանային խորհրդակցություններին վերաբերող հավելյալ դրույթներ կան առաջաբանում, հողվածներ 2 (բ)-ում, 8-ում և 9.1-ում, ինչպես նաև Հավելված II-ում (պարբերություն 2).

Ա4.5.2 Հնարավոր գործնական պայմանավորվածություններ

106. Անդրսահմանային ազդեցություններն ամենաուշը պետք է առանձնացվեն բնապահպանական զեկույցի նախապատրաստման ընթացքում, բայց դրանք ավելի վաղ փուլում բացահայտելու դեպքում ծանուցումը նույնպես պետք է շրջանակների որոշման ավելի վաղ փուլում ներկայացվի: Այս ձևով հնարավոր է նվազեցնել որոշումների կայացման փուլում տարբեր ձգձգումների հավանականությունը: Բայցևայնպես, նման վաղաժամկետ ծանուցումը պարտադիր պետք է լինի

ոչ պաշտոնական, քանի որ պաշտոնական ծանուցմանը կից, ի թիվս այլ փաստաթղթերի, անպայման պետք է ներկայացվի բնապահպանական հաշվետվությունը: Ստորև բերված կետերը անդրսահմանային խորհրդակցությունների վերաբերյալ հավելյալ առաջարկություններ են ներկայացնում և հիմնված են ԵԽ Ուղեցույցում սահմանված դրույթների վրա (պարբերություններ 7.26-7.29):

107. Արձանագրությունը պահանջում է, որ անդրսահմանային խորհրդակցությունների համար **խելամիտ ժամանակացույց** նախատեսվի: Բավարար ժամանակ է պետք նախատեսել համապատասխան կողմերի միջև կապի հաստատման, ազդակիր երկրի համապատասխան իրավասու մարմինների ու հանրության շահագրգիռ անձանց հաստատման, նրանց հետ խորհրդակցությունների կազմակերպման, պլանի կամ ծրագրի ծագման երկրի համապատասխան իրավասու մարմինների կողմից անդրսահմանային խորհրդակցությունների արդյունքում ստացված կարծիքների քննարկման ու ամփոփման համար: Տարբեր գործնական հարցեր, օրինակ՝ փաստաթղթերի թարգմանությունը, իրենց հերթին կարող են երկարաձգել այս գործընթացը:

108. Անդրսահմանային մեխանիզմը մեկնարկելու դեպքում համապատասխան կողմերը պետք է ամենայն մանրամասնությամբ ձևակերպված պայմանավորվածությունների շուրջ համաձայնության գան՝ ապահովելով հասարակության շահագրգիռ անձանց և ազդակիր երկրի բնապահպանական ու առողջապահական իրավասու մարմինների հետ անհրաժեշտ խորհրդակցությունների կազմակերպումը:

109. Անդրսահմանային խորհրդակցությունները (ինչպես նաև համապատասխան կողմերի ծանուցումը) կարող են կազմակերպվել տարբերայնորեն՝ ըստ անհրաժեշտության: Այնուամենայնիվ, անդրսահմանային համատեքստում (Էսպուի կոնվենցիայի համաձայն) ՇՄԱԳ-ի իրականացման փորձը վկայում է, որ այս գործընթացը հնարավոր է արագացնել և պարզեցնել երկկողմ կամ բազմակողմանի համաձայնագրերի ստորագրման միջոցով, որոնցով ամրագրվում է անդրսահմանային խորհրդակցությունների շրջանակը և սահմանվում են համապատասխան պարամետրերը, այդ թվում՝ կապ պաշտպանող անձինք և շփման ժամանակացույցը, համատեղ մարմինը, փաստաթղթերի թարգմանության կազմակերպումը, ծախսերի հաշվեգրումը, հետևանքների կարևորության չափանիշները, հանրության մասնակցության կազմակերպումը և վեճերի կարգավորման արձանագրությունները: Էսպուի կոնվենցիային կից «Օրինակելի կիրառությի և երկկողմ ու բազմակողմ համաձայնագրերի ուղեցույցը»³⁴ այս հարցերի վերաբերյալ խորհուրդներ է պարունակում: Էսպուի կոնվենցիայի շրջանակներում ստորագրված երկկողմ և բազմակողմ համաձայնագրերը, որոնք պլանների և ծրագրերի ընդգրկման դեպքում պահանջվող համապատասխան փոփոխությունների են ենթարկվել, կարող են նման պայմանավորվածությունների հիմք ծառայել:

110. Էսպուի կոնվենցիային կից ներկայացվող *Անդրսահմանային համատեքստում ՇՄԱԳ-ում հանրության մասնակցության վերաբերյալ ուղեցույցը* կարող է տեղեկատվության օգտակար աղբյուր լինել³⁵:

³⁴ Տես Կոնվենցիան ընդունած երկրների համաժողովի որոշում թիվ III/4 (ECE/MP.EIA/2004/5, հավելված)

³⁵ ECE/MP.EIA/7; գետեղված է from <http://www.unece.org/env/eia/publications.html> կայքէջում:

Ա4.6 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՈՒՄ

111. Այս բաժնում քննարկվում է Արձանագրության համաձայն ՌԲԳ-ի շրջանակներում որոշումների կայացման գործընթացը (հոդված 11):

Ա4.6.1 Իրավական պարտավորություններ

112. Որոշում կայացնող մարմինը որոշում է, թե պլանի կամ ծրագրի այլընտրանքային տարբերակներից (եթե կան այդպիսիք), կամ պլանի կամ ծրագրի այլընտրանքային բաղադրիչներից, որը պետք է հաստատվի (հոդված 11, ՌԲԳ Հրահանգի համապատասխան դրույթները գետեղված են հոդվածներ 8-ում և 9-ում): Որևէ պլան կամ ծրագիր ընդունելիս որոշում կայացնող մարմինը պետք է հաշվի առնի բնապահպանական զեկույցի եզրակացությունները, այդ թվում՝ պլանի կամ ծրագրի տարբեր այլընտրանքների բացասական հետևանքների կանխմանը, նվազեցմանը և մեղմացմանն ուղղված գործողությունները: Որոշում կայացնող մարմինը պետք է նաև հաշվի առնի հետևյալ կողմերի հնչեցրած կարծիքները (հոդված 11.1).

- բնապահպանության և առողջապահության համապատասխան մարմիններ
- հանրության շահագրգիռ ներկայացուցիչներ
- ազդակիր երկրներ:

113. Պլանի կամ ծրագրի հաստատումից հետո համապատասխան իրավասու մարմինները, լայն հասարակայնությունը (ոչ միայն հասարակության շահագրգիռ անձինք) և ազդեցության ենթարկվող կողմերը պետք է ծանուցվեն ընդունված որոշման մասին (հոդված 11.2): Ընդունված պլանը կամ ծրագիրը նրանց պետք է ներկայացվի ուղեկցող փաստաթղթով, որը՝

- ամփոփում է, թե ինչպես են ընդունված պլանում կամ ծրագրում ընդգրկվել բնապահպանական նկատառումները (որոնք ներկայացված են բնապահպանական զեկույցում)
- ամփոփ ներկայացնում է, թե արտահայտած կարծիքները (հանրության դեպքում հասարակության շահագրգիռ անձանց արտահայտած կարծիքները) ինչպես են հաշվի առնվել
- համառոտ ներկայացնում է քննարկված խելամիտ այլընտանքներից պլանի կամ ծրագրի տվյալ տարբերակի ընտրության հիմնավորումը
- ԵՄ անդամ պետությունների դեպքում՝ նկարագրում է մշտադիտարկման համաձայնեցված գործողությունները (ՌԲԳ Հրահանգ 9.1 (գ)):

Ա4.6.2 Հնարավոր գործնական նկատառումներ

114. Պլանը կամ ծրագիրն ընդունելիս որոշումներ կայացնողները մասնավորապես պետք է հաշվի առնեն՝

- Պլանի կամ ծրագրի նպատակների և բնապահպանական նպատակների համատեղելիությունը
- Բնապահպանական մնացորդային հետևանքները:

115. Հասարակության ծանուցումը և գրավոր փաստաթղթում ընդգրկվող տեղեկատվությունը համեմատելի են Օրհուսի կոնվենցիայի պահանջների հետ: Այս տեղեկատվության գաղտնիության պահպանման մասին ոչ մի դրույթ չի սահմանվում: Ինչպես նշված է ԵՄ Ուղեցույցում՝ «իրավասու մարմինները պետք է բավարար տեղեկատվություն տրամադրեն այն մասին, թե շրջակա միջավայրի տվյալներն ինչ պայմանով են ներկայացվում և ինչպես են ձեռք բերվել: Այս տեղեկատվությունը կարող է մատուցվել տարբեր ձևաչափերով, այդ թվում՝ տեղեկատվական հրապարակումների, կառավարական հրապարակումներում կամ կայքերում գետեղված հայտարարությունների, հանրային հեռուստատեսային կամ ռադիոհաղորդումների կամ համապատասխան տեղեկությունները ձեռք բերելու ուղիները մանրամասնող բնապահպանական տեղեկատվության կատալոգների միջոցով» (պարբերություն 7.31):

116. Ինչպես արդեն նշվել է վերևում, ՌԲԳ գործընթացի որոշ բաղադրիչներ հնարավոր է ընդգրկել պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում: Այսպիսով, ցանկալի է, որ ՌԲԳ շրջանակներում իրականացված տարբեր վերլուծությունների արդյունքներն հաշվի առնվեն պլանի կամ ծրագրի կազմման ողջ գործընթացում: Հետևաբար, պլանի կամ ծրագրի նախագծի շրջանակներում

հնարավոր է ցույց տալ, թե ՌԲԳ ինչ ներդրում է ունեցել պլանի կամ ծրագրի մշակման գործընթացում:

Ա.4.7 ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

117. Այս եզրափակիչ հատվածում քննարկվում են Արձանագրության պահանջների համաձայն ՌԲԳ-ի շրջանակներում մշտադիտարկման մանրամասները (հոդված 12):

Ա.4.7.1 Իրավական պարտավորություններ

118. Հոդված 12-ով նախատեսվում է ընդունված պլանի կամ ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա զգալի ազդեցությունների մշտադիտարկում (ՌԲԳ Հրահանգի համապատասխան դրույթը գետեղված է հոդված 10-ում): Արձանագրությունը պահանջում է, որ մշտադիտարկման արդյունքները տրամադրվեն ինչպես համապատասխան բնապահպանական և առողջապահական մարմիններին, այնպես էլ՝ հանրությանը (հոդված 12.2): Մշտադիտարկման հիմնական հիմնավորումը, ի թիվս այլ գործոնների, շրջակա միջավայրի վրա չնախատեսված վնասակար հետևանքների բացահայտումն է և դրան ի պատասխան համապատասխան միջոցների նախաձեռնումը (հոդված 12.1):

Ա.4.7.2 Հնարավոր գործնական նկատառումներ

119. Ի լրումն վերոնշյալի, մշտադիտարկումը կարող է ապահովել այլ առավելություններ: Այսպիսով, մշտադիտարկման շնորհիվ հնարավոր է՝

- Համեմատել նախատեսված և փաստացի հետևանքները՝ ներկայացնելով պլանի կամ ծրագրի իրականացման մասին տեղեկատվություն
- Փորձառություն կուտակել հետագա ՌԲԳ-ների բարելավման համար (այսինքն՝ որակի ապահովման գործիք)
- Հետևել, որ պատասխանատու մարմինների կոմից սահմանված բնապահպանական պայմանների խախտում չի թույլ տրվել
- Հետևել, որ պլանը կամ ծրագիրն իրականացվի նախատեսված ձևով, այդ թվում՝ իրականացվեն շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունների կանխման, նվազեցման կամ մեղմացման նախատեսված գործողությունները:

120. Արձանագրությունը չի մանրամասնում, թե ով, ինչ, որտեղ, երբ և ինչպես պետք է մշտադիտարկի. չի նշվում, թե ով պետք է նախաձեռնի այն, ով պետք է հրապարակի արդյունքները, ինչը պետք է մշտադիտարկման առարկա լինի (բացառությամբ ընդհանուր ձևակերպումով սահմանված՝ շրջակա միջավայրի վրա պլանի կամ ծրագրի ազդեցությունները), ինչ տվյալներ պետք է ներկայացվեն (չմշակված արդյունքներ կամ վերլուծության ենթարկված տվյալներ), որտեղ պետք է իրականացվի մշտադիտարկումը, ինչ հաճախականությամբ և ինչ տևողությամբ, երբ պետք է արդյունքները հրապարակվեն և թե ինչպես կարելի է վերահսկել (մեթոդները) ու հրապարակել արդյունքները: Արձանագրությունն ընդունած երկրները կարող են օգտվել մշտադիտարկման և տեղեկատվության հրապարակման առկա համակարգերից կամ ՌԲԳ-ի համար դրանք հատուկ խստացնել:

121. Մշտադիտարկման բնույթը կարող է տարբերվել ըստ նախատեսվող պլանների և ծրագրերի տեսակների: Հնոգտագործման պարբերաբար վերանայվող ծրագրի դեպքում կարող է անհրաժեշտ լինել մշտադիտարկման շրջանակներում հետևել, թե արդյոք շրջակա միջավայրի վրա կանխատեսված հետևանքները գրանցվել են, թե ոչ, որպեսզի պլանի հետագա տարբերակները բարելավվեն: Այնուամենայնիվ, հաճախ դժվար է պլանի և ծրագրի շրջանակներում վստահորեն հաստատել պատճառահետևանքային կապերը: Մշտադիտարկման արդյունքները կարող են ներկայացվել պլանի վերանայման հաջորդ պարբերաշրջանի մեկնարկից առաջ: Տրանսպորտային ենթակառուցվածքների ծրագիրը կարող է ավելի կենտրոնացած լինել գործողությունների իրականացման ընթացքում անսպասելի բացասական հետևանքներ վերացնելու խնդիրների շուրջ, որպեսզի նման դեպքերում անմիջապես միջոցներ ձեռնարկվեն ծրագիրը կամ դրա առանձին

նախագծերը վերափոխելու ուղղությամբ: Մշտադիտարկման տևողությունը վերջին օրինակի դեպքում, առաջին օրինակի համեմատությամբ, զգալիորեն ավելի երկար կարող է լինել, իսկ մշտադիտարկման արդյունքները կարող են հանրությանը ներկայացվել, օրինակ, հատուկ ծրագրին նվիրված կայքի միջոցով:

122. Համաձայն ԵՄ Ուղեցույցի (պարբերություն 8.4), հանձնարարվում է ընտրել այնպիսի մեթոդներ, որոնք լիարժեք մշակված են և նպատակահարմար են նախատեսված պլանը կամ ծրագիրը իրականացնելու ընթացքում բնապահպանական զեկույցում ընդգրկված ենթադրություններն ու կանխատեսումները գրանցված ազդեցությունների հետ համեմատելու համար: Կարևոր է հաշվի առնել, թե արդյոք ք ընտրված մեթոդները պլանի կամ ծրագրի անկանխատեսելի բացասական էական հետևանքների վաղ նախագուշացման վստահելի մեխանիզմ են ապահովում, թե ոչ, որպեսզի ժամանակին համապատասխան գործողություններ ձեռնարկվեն: Նաև հարկավոր է հաշվի առնել, որ մշտադիտարկման համար անհրաժեշտ բնապահպանական տեղեկատվության բնույթը (այսինքն՝ մանրամասնության աստիճանը և քանակական ու որակական ցուցանիշերը) կախված է պլանի կամ ծրագրի բնույթից ու մանրամասնության աստիճանից, ինչպես նաև կանխատեսվող բնապահպանական ազդեցություններից:

123. Թեև պահանջվում է ներկայացնել **անկանխատեսելի** բացասական հետևանքների ցուցակը, սակայն մշտադիտարկումը կարելի է նախատեսել բնապահպանական զեկույցում նշված համապատասխան նշանակալի բնապահպանական ազդեցությունների հիման վրա: Հետևաբար, «անկանխատեսելի» որակումը կարող է վերաբերել անկանխատեսելի հետևանքների ուժգնությանը կամ լարմանը, օրինակ, էներգետիկ սեկտորի պլանի իրականացման արդյունքում նախատեսվածից ավելի մեծ չափով փոփոխությունների գրանցում ծծմբի երկօքսիդի արտանետումների ցուցանիշներում: Մշտադիտարկման ծրագրում կարելի է ընդգրկել նաև այնպիսի բաղադրիչներ, որոնց օգնությամբ հնարավոր լինի բացահայտել իսկապես անկանխատեսելի հետևանքներ: Օրինակ, պատահական ընտրանքի միջոցով բնապահպանական պարամետրերի լայն շարքի պարբերական վերլուծությունը կարող է բացահայտել որևիցե պարամետրի փոփոխություն, որն ըստ նախատեսված պլանի կամ ծրագրի, ազդեցության չպետք է ենթարկվեր:

124. ԵՄ Ուղեցույցում նշվում է, որ «պլանի կամ ծրագրի իրականացումը նշանակում է ոչ միայն նախատեսվող նախագծերի կատարում (այդ թվում՝ կառուցման և շահագործման նախագծերի), այլև ներառում է այլ գործողությունների նախաձեռնում (օրինակ՝ վարքագծային ցուցանիշներ կամ կառավարման մեխանիզմներ), որոնք պլանի կամ ծրագրի (կամ դրա իրականացման) մասն են կազմում» (պարբերություն 8.9):

125. Արձանագրությունում չի քննարկվում, թե անկանխատեսելի բացասական ազդեցություններ գրանցելու դեպքում ինչ շտկիչ միջոցառումներ պետք է ձեռնարկվեն: Եթե այս պատճառով պլանը կամ ծրագիրը փոփոխելու անհրաժեշտություն է ծագում, ապա հարկավոր է նոր ՌԲԳ իրականացնել՝ Արձանագրության 2-րդ և 4-րդ հոդվածների պահանջները բավարարելու համար:

126. Մշտադիտարկման ենթակա էական ազդեցությունների շարքում կարող են լինել անդրսահմանային ազդեցությունները: Նախագծի ավարտից հետո վերլուծություն իրականացնելու Էսպուի կոնվենցիայում ամրագրված պահանջը (հոդված 7) նման ազդեցությունները վերահսկելու հիմք կարող է ծառայել: Թեև մշտադիտարկման արդյունքները համապատասխան երկրին ներկայացնելու պահանջ չի դրվում, սակայն դրանք պետք է հանրային ոլորտում լինեն, իսկ տվյալ երկրի տարածքում մշտադիտարկում կազմակերպելու համար հարկավոր է դիմել այդ երկրի աջակցությանը:

127. ՌԲԳ-ի հիմնական գործիքների նկարագրությանը նվիրված **Գլուխ Ա5**-ում մշտադիտարկման վերաբերյալ գործնական ցուցումներ են տրվում: ԵՄ Ուղեցույցի հատված 8-ում և Հավելված I-ում գետեղված են մշտադիտարկման վերաբերյալ լրացուցիչ ուղենիշներ: Տե՛ս նաև Շրջակա

միջավայրի պահպանման օրենսդրության կիրառման ԵՄ ցանցի (IMPEL) վերջնական հաշվետվությունը, IMPEL ՆԱԽԱԳԻԾ: ՌԲԳ Հրահանգ 2001/42/EC-ի Հոդված 10-ի իրագործում, զետեղված է http://ec.europa.eu/environment/eia/pdf/impel_final_report.pdf կայքէջում:

Գլուխ Ա5

ՌԲԳ ՏԱՐՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ
ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ա5.1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արձանագրության տեքստում օգտագործվում է «շրջակա միջավայրը, այդ թվում՝ առողջությունը» տերմինը: Կրկնողությունից խուսափելու նպատակով սույն ձեռնարկում նշվում է միայն շրջակա միջավայրը, սակայն պետք է համարել, որ այդ հասկացության մեջ ընդգրկված է նաև առողջությունը: Առողջապահական հարցերի շուրջ լրացուցիչ տեղեկատվության համար տե՛ս հավելված Ա1.1:

1. Այս գլխում ներկայացվում են ՌԲԳ Արձանագրության դրույթներին (Ա2-ից Ա4 գլուխներում նկարագրված ձևով) և միջազգայնորեն ընդունված օրինակելի պրակտիկայի, կիրառույթի չափանիշներին համապատասխան գնահատման իրականացման ցուցումներ:
2. Գլուխը բաղկացած է երեք հատվածից, որոնք վերաբերում են՝
 - ՌԲԳ-ի և պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի միջև հարաբերությանը՝ հիմնական մոտեցումների և մեթոդաբանական շրջանակների հատուկ շեշտադրմամբ (**հատված Ա5.2**)
 - Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի արդյունավետությանը նպատակաուղղված ՌԲԳ-ի իրականացման մոտեցումներ և գործիքներ (**հատված Ա5.3**)
 - Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի արդյունավետության ապահովման նպատակով ՌԲԳ-ի իրականացման մասնակցային մոտեցումներ և գործիքներ (**հատված Ա5.4**):

Ա5.2 ՌԲԳ-Ի ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Ա5.2.1 Ներածություն

3. Արձանագրությունն ընթացակարգային շրջանակ է, որը չի սահմանում, թե վերլուծությունները կամ խորհրդակցություններն ինչպես պետք է իրականացվեն: Այնուամենայնիվ, Արձանագրությունում ամրագրված են մի շարք պահանջներ, որոնք մեթոդաբանական բնույթ կամ բովանդակություն ունեն:
4. Այս տեսանկյունից հարկ է նշել, որ ՌԲԳ վարելու լավագույն մեթոդաբանություն գոյություն չունի և հնարավոր է ընտրություն կատարել այս նպատակի համար սահմանված վերլուծական և խորհրդակցական գործիքների լայն շրջանակից: Այդ գործիքները հիմնականում բխում են երեք հիմնական աղբյուրներից`
 - ՇՄԱԳ-ում կիրառվող գործիքներ, որոնք հարմարեցվել են համապատասխան մանրամասնությամբ և մասշտաբներով ՌԲԳ անցկացնելու պահանջներին
 - Քաղաքականությունների վերլուծություններում, պլանների գնահատումներում կամ պլանների ու ծրագրերի մշակման գնահատումներում կիրառվող գործիքներ, որոնք հարմարեցվել են Արձանագրության պահանջներին
 - Առողջության վրա ազդեցությունների գնահատման (ԱԱԳ) շրջանակներում կիրառվող գործիքներ, որոնց օգնությամբ Արձանագրության պահանջների համաձայն գնահատվում են ազդեցությունները մարդու առողջության վրա:
5. Բոլոր դեպքերում, ՌԲԳ մեթոդաբանությունը և գործիքները պետք է համապատասխանեն տվյալ պլանի կամ ծրագրի խնդիրներին, և մոտեցման ընտրությունը պետք է կատարվի շրջանակների որոշման փուլում:
6. Ինչպես նշված է [գլուխ Ա3](#)-ում, Արձանագրության պահանջները վերաբերում են պլաններին և ծրագրերին, որոնք հետագա նախագծերի հաստատման շրջանակ են սահմանում: Այս համատեքտում ՇՄԱԳ-ի մեթոդներից արտածված մեխանիզմները կարող են նույնությամբ կամ համապատասխան փոփոխություններով կիրառվել, օրինակ, հողօգտագործման ձևեր կամ տարբեր նախագծեր հաստատող պլանների և ծրագրերի ՌԲԳ-ների շրջանակներում (այսինքն, երբ պատճառահետևանքային կապերը հնարավոր է հեշտությամբ բացահայտել): Այս պայմաններում կարող է նպատակահարմար լինել օգտվել հետևյալ մեթոդներից`
 - Պաշտոնական և ոչ պաշտոնական ստուգացուցակներ
 - Ազդեցությունների մատրիցներ
 - Ազդեցությունների ցանցեր
 - Դեպքերի համեմատություններ և համատեղ փորձագիտական եզրակացություններ
 - Քարտեզների համախումբ և աշխարհագրական տեղեկատվության համակարգ (GIS)
 - Կանխատեսումների մոդելավորում
 - Կենսապարբերաշրջանի գնահատումներ
 - Բազմաչափանիշային վերլուծություն
7. Եթե շրջակա միջավայրի վրա նախատեսվող պլանի կամ ծրագրի կամ դրա առանձին բաղադրիչների ազդեցություններն անուղղակի են կամ ընդհանուր բնույթ ունեն, ապա ավելի նպատակահարմար կարող է լինել օգտվել քաղաքականությունների վերլուծության կամ պլանների գնահատման շրջանակներում կիրառվող գործիքներից: Քաղաքականությունների վերլուծության կամ պլանների գնահատման մեթոդներից են`
 - Օրենքների և քաղաքականությունների վերլուծություն
 - SWOT (առավելությունների, թույլ կողմերի, հնարավորությունների, վտանգների) վերլուծություն կամ սահմանափակումների և հնարավորությունների գնահատման այլ մոտեցումներ
 - Սցենարային տարբերակների կազմում
 - Բախումների և սիներգիաների մատրիցներ
 - Որոշումների ծառացանցեր

- Միտումների վերլուծում և արտածում (էքստրապոլացիա)
- Միմուլացիոն մոդելավորում
- Տարբերակների գնահատում
- Համեմատական ռիսկերի գնահատում:

8. Կարևոր է նկատի ունենալ, որ շատ դեպքերում գնահատման մեկ ընդհանուր պարզ մեթոդի օգնությամբ հնարավոր է անդրադառնալ շրջակա միջավայրի վրա բոլոր ազդեցություններին:

9. Այնուամենայնիվ, պլանների կամ ծրագրերի կամ դրանց որոշակի բաղադրիչների առողջապահական հետևանքները նշանակալի են, կարող է նպատակահարմար լինել օգտվել ԱԱԳ-ում կիրառվող գործիքներից:

ԱԱԳ մեթոդների օրինակներ են՝

- Առողջապահական վտանգների ստուգացուցակներ
- Որակական և քանակական ռիսկերի գնահատում
- Առողջության ռիսկերի ընկալման հետազոտություններ
- Ռիսկերի բնութագրման և դրանց մասին իրազեկման մեթոդներ և գործիքներ
- Առողջապահական ռիսկերի, առողջության վրա ազդեցությունների և դրանք պայմանավորող բնապահպանական գործոնների արագ գնահատման մեթոդաբանություններ

10. Բացառիկ հանգամանքներում այն կարող է նպատակահարմար լինել օգտվել DPSEEA (Շարժիչ ուժեր – ճնշումներ – վիճակ – վնասակար ազդեցություններից չպաշտպանված վիճակ – հետևանքներ - գործողություններ) մոդելից՝ որոշումների կայացման համատեքստում առողջապահական ցուցանիշների համակարգ մշակելու համար: Անուամենայնիվ, անհրաժեշտ է հաշվի առնել DPSEEA մոդելի սահմանափակումները, հատկապես դրա բարդությունը և ոչ լիարժեք ճշգրտությունը:

Ա.5.2.2 ՌԲԳ և պլանի կամ ծրագրի մշակման գործընթացները մեթոդաբանական տեսանկյունից

11. Ինչպես նշել է գլուխ Ա2-ում, ՌԲԳ և պլանի կամ ծրագրի մշակման գործընթացները փոխակապակցված գործառույթներ ունեցող, փոխլրացնող, միմյանց աջակցող գործընթացներ են: Հաշվի առնելով դրանց սերտ փոխկապվածությունը, հնարավոր է պլանի կամ ծրագրի մշակման շրջանակներում կիրառվող վերլուծական և խորհրդակցական գործիքների փոփոխմամբ ու հարմարեցմամբ ստանալ ՌԲԳ-ի համար համարժեք մեխանիզմներ:

12. Համապատասխան բնապահպանական խնդիրների վերլուծության համար աննշան փոփոխությունների շնորհիվ կիրառելի գործիքների օրինակներ են՝

- Համատեքստի և հիմնական խնդիրների սահմանման գործիքներ (ստուգացուցակներ, SWOT, մատրիցներ)
- Այլընտրանքային տարբերակների մշակման գործիքներ (սցենարային տարբերակների կազմում և սահմանված նպատակների հիման վրա պլանավորում)
- Ազդեցությունների գնահատման գործիքներ (մոդելավորում, GIS և այլն) կամ տարբերակների համեմատության և եզրակացությունների ներկայացման գործիքներ (բազմաչափանիշային վերլուծություն, ծախսերի և օգուտների վերլուծություն և այլն)

13. Այս համատեքստում կարևոր է կշռադատել և որոշել, թե համապատասխան բնապահպանական խնդիրներին անդրադառնալու և դրանով իսկ Արձանագրությամբ պահանջվող տեղեկատվությունն ապահովելու տեսանկյունից զարգացման պլանների կամ ծրագրերի մշակման մեթոդներից ո՞րն է առավել նպատակահարմար ընդլայնել:

14. Մոտեցումներն ու մեթոդաբանությունները պետք է ընտրվեն՝ ելնելով քննվող գործի պահանջներից և նախատեսվող պլանի կամ ծրագրի բնույթին համապատասխան, հաշվի առնելով տվյալների և մասշտաբների վերաբերյալ նկատառումները, որպեսզի կայացվեն հիմնավորված

որոշումներ և առավել ուժեղ հիմքերի վրա դրվի պլանի կամ ծրագրի մշակման գործընթացը: Օրինակ, հողի օգտագործման պլանների ՌԲԳ-ի շրջանակներում սովորաբար շեշտադրվում են տվյալ տարածքի ռեսուրսների ու շրջակա միջավայրի հնարավորությունները և սահմանափակումները: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել տեղի նախնական վիճակի պայմաններին և նախատեսվող փոփոխություններով պայմանավորված բնապահպանական ազդեցություններին՝ օգտվելով այնպիսի միջոցներից, ինչպիսիք են GIS համակարգը, կենսավայրերի վերլուծությունը կամ զգայունության քարտեզագրումը: Ի հակադրություն այս օրինակի, որևէ ոլորտի պլանների կամ ծրագրերի ՌԲԳ-ի շրջանակներում ուշադրությունը, համաձայն Կիոտոյի արձանագրության թիրախների,³⁶ կարող է կենտրոնացվել ազդեցատային ազդեցությունների, օրինակ՝ օդի որակի կամ ածխածնի արտանետումների ցուցանիշների շուրջ, և կարող են կիրառվել սիմուլացիոն մոդելավորման մեթոդներ:

15. Այս օրինակները ընդգծում են ՌԲԳ-ի գործընթացը պլանավորման գործընթացի համատեքստին և առանձնահատկություններին համապատասխանեցնելու կարևորությունը: Հետևյալ կանոնները կարող են օգնել պլանի կամ ծրագրի մշակման շրջանակներում կիրառվող գործիքներին ՌԲԳ մեթոդները համապատասխանեցնելու օպտիմալ մոտեցումն ընտրելու գործում:

- Վերլուծել նախատեսվող պլանի կամ ծրագրի մշակման և վերլուծական գործիքների տրամաբանությունը, ինչպես նաև շահառուների ներգրավման կիրառվող մեթոդները:
- Որոշել, թե պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում ի՞նչ գործիքներ և մեթոդներ պետք է կիրառվեն Արձանագրության դրույթներով պահանջվող տեղեկատվությունը ստանալու համար և թե դրանք ինչպես է նպատակահարմար փոփոխել ու հարմարեցնել
- Որոշել ՌԲԳ գործընթացի շրջանակներում հավելյալ վերլուծությունների և խորհրդակցությունների անհրաժեշտությունը և ընտրել համապատասխան գործիքները:

Ա.5.2.3 Համապատասխան գործիքի ընտրությունը

16. ՌԲԳ-ի իրականացման մեթոդները և գործիքները կարող են էականորեն ազդել պլանի կամ ծրագրի մշակման և որոշումների կայացման գործընթացներում օգտագործվող տեղեկատվության որակի, ինչպես նաև այս գործընթացի արդյունավետության վրա:

17. Ինչպես նշվում է այս հատվածի ծանոթությունում, համակարգված և համապարփակ վերլուծություն ապահովող լավագույն մեթոդաբանություն գոյություն չունի: Ընդհանուր առմամբ, ՌԲԳ իրականացման համար պետք է առաջնորդվել առաջադրանքի պահանջներին համապատասխանող պարզագույն գործիքն ընտրելու սկզբունքով: Բնարկե, շատ դեպքերում առավել բարդ մեթոդների կարիք կարող է զգացվել՝ համապատասխան տեղեկատվությունը հայթայթելու և շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կանխատեսելու համար (օրինակ, ճանապարհաշինական ծրագրի դեպքում երթևեկության սիմուլացիոն մոդելավորում): Բայցևայնպես պետք է գործի «հնարավորինս պարզ» մեթոդի նախընտրության սկզբունքը, անհրաժեշտ է ձեռնպահ մնալ վերլուծությունները չափից ավելի բարդացնելուց:

18. Կարևոր է նաև հաշվի առնել, որ ընտրված գործիքները պետք է հարմարեցվեն տվյալների բնույթին և մասշտաբներին, որպեսզի ընդգրկեն հավանական ազդեցությունների ժամանակային և տարածական ծավալները: Դրանք նաև պետք է կարողանան հաղթահարել պատճառահետևանքային կապերի մասին սահմանափակ գիտելիքներով, անբավարար տվյալներով, տվյալ հատվածի կամ տարածքի զարգացման վրա մեծապես ազդող անհայտ միտումներով պայմանավորված անորոշությունները:

19. Տարբեր գործիքների օգնությամբ ստացված տեղեկատվությունը պետք է համապատասխանի կայացվող որոշման տեղեկատվական պահանջներին, պետք է պարզաբանի տարբեր զիջումների դիմաց ստացվող օգուտները, առաջարկի իրագործելի այլընտրանքային տարբերակները որոնք կապահովեն լավագույն բնապահպանական արդյունքները՝ բացասական հետևանքները նվազեցնելու և դրական ազդեցությունները խթանելու միջոցով:

³⁶ Տե՛ս http://unfccc.int/kyoto_protocol/items/3145.php

Ա5.3 ՀԻՄՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

20. Այս հատվածում ներկայացվում է ՌԲԳ-ում կիրառվող վերլուծական մեթոդների ու գործիքների առավել մանրամասն նկարագրությունը: Դրանց շրջանակում ընդգրկված են ՇՄԱԳ-ի մեխանիզմներ, քաղաքականությունների գնահատման և ԱԱԳ մեթոդներ: Որպեսզի սույն ակնարկից ավելի հեշտ լինի օգտվել, ակնարկի կառուցվածքը համապատասխանեցվել է բնապահպանական հաշվետվության նախապատրաստման հիմնական քայլերի և առաջադրանքների հաջորդականությանը, ինչպես ներկայացված է [հատված Ա4.2](#)-ում: Գործիքների ներկայացված ցանկը սպառիչ չէ և կարող է հարմարեցվել նախատեսվող պլանի կամ ծրագրի կոնկրետ համատեքստին՝ կախված պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի ներքին տրամաբանությունից և շոշափվող խնդիրների բնույթից:

Շրջանակների որոշումը

21. Շրջանակների որոշման, շրջանակագրման միջոցով սահմանվում է ուսումնասիրման ենթակա հարցերի շարքը: Այս փուլում, որպես կանոն, մտահոգությունների երկար ցուցակից ընտրվում է շրջակա միջավայրի վրա զգալի ազդեցությունների առավել համառոտ ցանկ:

22. Հետևյալ մեթոդները կարող են օգտագործվել կոնկրետ պլանների և ծրագրերի բնապահպանական հարցերի շրջանակը սահմանելու և ուշադրություն պահանջող խնդիրները կամ նախատեսված աշխատանքներն իրականացնելու դեպքում հնարավոր էական ազդեցությունները բացահայտելու համար:

- Քաղաքականությունների և օրենքների գնահատումներ, որոնք օգնում են նախատեսվող պլանին կամ ծրագրին վերաբերող բնապահպանական նպատակների ու թիրախների սահմանման գործում
- Հավաքական փորձագիտական եզրակացություններ, որոնք անձնական փորձի կամ դեպքերի համեմատության հիման վրա կարող են որոշել այն հնարավոր ազդեցությունները, որոնց անհրաժեշտ է անդրադառնալ ՌԲԳ շրջանակներում:
- Ստուգացուցակներ, որոնց միջոցով հեշտությամբ կարելի է որոշել, թե արդյոք տվյալ խնդիրներն առնչվում են նախատեսվող պլանին կամ ծրագրին, թե ոչ և խուսափել հնարավոր խնդիրներն անտեսելուց:
- Ազդեցությունների և բախումների կամ սիներգիաների մատրիցներ, որոնք օգնում են (ավելի համակարգված ձևով, քան ստուգացուցակների դեպքում) ՌԲԳ շրջանակներում ընդգրկվելիք հիմնական խնդիրների բացահայտմանը:
- SWOT վերլուծություն, որը ներկայացնում է ՌԲԳ-ի շրջանակներում քննարկվող՝ շրջակա միջավայրին վերաբերող համապատասխան հնարավորություններն ու վտանգները
- Քարտեզների համախումբ և GIS համակարգ, որոնց օգնությամբ հնարավոր է սահմանել հիմնական տարածական խնդիրները և որոշել, թե գնահատումն ինչ տարածք պետք է ընդգրկի:
- Որոշման ծառացանցեր և ազդեցությունների ցանցեր, որոնց օգնությամբ հնարավոր է առանձնացնել հիմնական ուղղակի և անուղղակի ազդեցությունները և սահմանել գնահատման շրջանակները:
- Կենսապարբերաշրջանի գնահատում, որը «օրորոցից մինչև գերեզման» մոտեցման հիման վրա արձանագրում է բոլոր մուտքերն ու արդյունքները, ինչպես նաև որոշում բնապահպանական ազդեցությունների գնահատման շրջանակներում տվյալների ստուգման համակարգի շրջանակները:

23. Շատ դեպքերում նպատակահարմար, հնարավոր կամ անհրաժեշտ չէ ՌԲԳ-ի շրջանակներում անդրադառնալ նախատեսվող պլանի կամ ծրագրի բոլոր բնապահպանական հետևանքներին, սակայն այդ որոշումների հիմնավորումները պետք է անպայման ներկայացվեն: Փոխարենը, համապատասխան ցուցանիշների կամ ուղղորդող հարցերի հիման վրա իրականացվող գնահատումը ՌԲԳ-ի համար բավարար է (տե՛ս ներդիր Ա4.2).

Համատեքստի և նախնական վիճակի վերլուծություն

24. Նախնական վիճակի վերլուծության նպատակն է սահմանել ելակետային շրջանակ, որի հիման վրա պետք է գնահատել նախատեսվող պլանի կամ ծրագրի ազդեցությունները: Որպես կանոն, սահմանվում է շրջակա միջավայրի ներկա վիճակը, ներկայացվում դրա էվոլյուցիայի հնարավոր ուղիներն առանց նախատեսվող պլանի կամ ծրագրի իրականացման: Այս տեսանյունից կարևոր է վերլուծել և արտածել այն տարածքի կամ ոլորտի շրջակա միջավայրի վիճակի էվոլյուցիայի միտումները, որը պետք է ընդգրկվի նախատեսվող պլանի կամ ծրագրի կազմման և ՌԲԳ շրջանակներում: Հաշվի առնելով, որ անհրաժեշտ է անդրադառնալ թե՛ ներկայիս հիմնական խնդիրներին և թե՛ երկարաժամկետ միտումներին, ինչպես նաև նկատի ունենալով պլանի կամ ծրագրի կազմման և ՌԲԳ գործընթացների համար տրամադրվող սահմանափակ ժամանակն ու միջոցները՝ նախնական վիճակի վերլուծության համար սովորաբար օգտագործվում են առկա տվյալները:

25. Տվյալների ստացման համար կարելի է օգտվել բազմաթիվ գործիքներից, ինչպիսիք են՝
- Տեղի շրջակա միջավայրի որակի ուսումնասիրությունները, որոնք ամենայն արդյունավետությամբ հաճախ կիրառվում են նախագծերի մակարդակում իրականացվող ՇՄԱԳ-ի շրջանակներում, իրատեսորեն կարող են կիրառվել միայն շատ կոնկրետ տեղական պլանների և ծրագրերի ՌԲԳ-ների դեպքում: ՌԲԳ-ի համար դրանց կիրառման նպատակահարմարությունը սահմանափակող գործոններից մեկն այն է, որ դրանք ընդամենը ներկայացնում են ներկա իրավիճակի ակնթարթային պատկերը և երկարաժամկետ միտումների բացահայտման գործում անարդյունավետ են:
 - Պլանի կամ ծրագրի իրականացման ընթացքում պատրաստվող՝ բնապահպանական քաղաքականության նպատակների իրականացման և չափանիշների բավարարման մասին ընթացիկ հաշվետվությունները կարող են պատկերացում տալ արդեն իսկ սահմանված բնապահպանական նպատակների ու թիրախների բավարարման խոչընդոտների կամ ձեռքբերումների մասին: Այս հաշվետվություններում (որոնք շրջակա միջավայրի վիճակի կամ բնապահպանական մշտադիտարկման համակարգերի մասին հաշվետվությունների մասն են հաճախ կազմում) ուշադրությունը, որպես կանոն, կենտրոնացվում է առանձին ներքին (ներերկրյա) ցուցանիշների շուրջ, որոնք համապատասխանում են տվյալ երկրում սահմանված համապատասխան պարտավորություններին
 - Բնապահպանական առանցքային ցուցանիշների միտումների վերլուծությունը, որպես կանոն, հենվում է միագումար (ագրեգացված) ցուցանիշների վրա և չափում է հիմնական շարժիչ ուժերը, դժվարությունները, ազդեցությունները և պատասխան գործողությունները: Օգտակար ցուցանիշների աղբյուր են երեք առանցքային ցուցանիշների շուրջ կենտրոնացված միջազգային համեմատական վերլուծությունները, օրինակ՝ Եվրոպական բնապահպանական գործակալության կամ ՏՀԶԿ վերլուծությունները:
 - Առողջապահական հարցումներն օգնում են բացահայտել մտահոգության առարկա հանդիսացող առողջապահական խնդիրները, որոնք առնչվում են պլանի կամ ծրագրի ոլորտին կամ դրանց իրականացման տարածքին: Օրինակ, տրանսպորտային պլանի ՌԲԳ-ի շրջանակներում կարող են վերլուծության առարկա լինել բնակչության՝ օդի աղտոտվածության և աղմուկի բարձր մակարդակների, ճանապարհային վթարների մեծ թվի և այլնի հարցերը. սովորաբար համարվում է, որ այս խնդիրներն ուղղակիորեն առնչվում են տրանսպորտի ոլորտին: Բայցևայնպես, տրանսպորտային միջոցների պլանի ՌԲԳ կարող է նաև անդրադառնալ ավելի ընդհանուր և անուղղակի առողջական խնդիրների, օրինակ՝ սիրտ-անոթային հիվանդություններին, սոցիալ-հոգեբանական բարեկեցության կամ գիրության հիմնահարցերին, և ուսումնասիրել, թե արդյոք դրանց վրա ազդում են փոխադրամիջոցներին առնչվող գործոնները, թե ոչ (օրինակ, ֆիզիկական ակտիվության՝ քայլերու կամ հեծանիվ վարելու պակաս): Պատճառահետևանքային կապերի բարդության հետևանքով նման անուղղակի հարցերի ազդեցությունների գնահատականները, բնականաբար, պարունակում են ենթադրություններ, և նման դեպքեր գնահատելիս անհրաժեշտ է մատնանշել ստացված եզրակացությունների սահմանափակումների և անորոշությունների մասին:

Այլընտրանքային տարբերակների մշակում և համեմատություն

26. Բնապահպանական գեկույցը պետք է ներկայացնի, նկարագրի և գնահատի շրջակա միջավայրի վրա նախատեսվող պլանի կամ ծրագրի և դրա խելամիտ այլընտրանքային տարբերակների հնարավոր նշանակալի ազդեցությունները (հոդված. 7): ՌԲԳ գործընթացը կարող է կարևոր դեր խաղալ այլընտրանքային խելամիտ տարբերակների բացահայտման և մշակման գործում, որը ձեռնարկվում է շրջանակների որոշման փուլում: Հիմնական այլընտրանքների ազդեցությունների համեմատությունը ՌԲԳ գործընթացի կարևորագույն բաղադրիչներից է, որ նպաստում է պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի որակի բարձրացմանը և դրա համապատասխանեցմանը շրջակա միջավայրի պահպանման և կայուն զարգացման պահանջներին: Այլընտրանքային տարբերակների մշակման հիմնական գործիքներից են՝

- Հավաքական փորձագիտական եզրակացություն, որի օգնությամբ կարելի սահմանել և մշակել հիմնական այլընտրանքային տարբերակները, օրինակ՝ սեմինարների և համաժողովների միջոցով:
- Քարտեզների համախումբ և GIS համակարգ, որոնք օգնությամբ մշակվում և լավարկվում (օպտիմալացվում) են հստակ տարածական սահմաններ ունեցող այլընտրանքային տարբերակներ:
- Սցենարային տարբերակների մշակում, որոնք միջոցով հնարավոր է ներկայացնել հետագա զարգացման վրա ազդող տարբեր անորոշ գործոնների և շարժիչ ուժերի հետևանքով ստեղծվող հնարավոր տարբերակներ
- Մոդելավորում, որի օգնությամբ կարելի է պատկերավոր ձևով ցուցադրել առաջարկվող տարբերակների հիմնական առանձնահատկությունները (սկսած ծայրահեղ տարբերակներից), բացառել անիրագործելի առաջարկները, մշակել ընտրված առաջարկների միավորված կամ լավարկված (օպտիմալացված) տարբերակը:
- Կենսապարբերաշրջանի գնահատում, որի օգնությամբ հնարավոր է առանձնացնել միջոցների և էներգիայի տարբեր հոսքերի վրա հիմնված այլընտրանքային տարբերակներ (օրինակ՝ թափոնների կամ էներգետիկ ռեսուրսների կառավարում):

27. Այլընտրանքների ձևակերպումը կարևոր դեր է խաղում ՌԲԳ շրջանակներում բնապահպանական նկատառումները պլանի և ծրագրի մշակման գործընթացում ընդգրկելու գործում: Առաջին քայլն է՝ ձևակերպել մի շարք ողջամիտ այլընտրանքներ, որոնք համապատասխանում են նախատեսվող պլանի կամ ծրագրի նպատակներին, և դրանք վերլուծել բնապահպանական տեսանկյունից: Այդ այլընտրանքների շարքում պետք է ընդգրկված լինի «որևէ գործողություն չձեռնարկելու» տարբերակը: Թեև սա պարտադիր պահանջ չէ, կարելի է նաև առանձնացնել բնապահպանական տեսանկյունից լավագույն իրագործելի տարբերակը: Բնապահպանական տեսանկյունից լավագույն իրագործելի տարբերակի սահմանումն օգնում է պարզաբանել, թե տարբեր զիջումների միջոցով ինչ օգուտներ կարելի է ստանալ և հիմնավորել ընտրությունը:

28. Ինչպես նշված է հատված Ա4.2-ում, հնարավոր է վերլուծել և փոխադարձաբար համեմատել բոլոր այլընտրանքային տարբերակներն ըստ ազդեցությունների կամ պլանի և ծրագրի սահմանված նպատակների համապատասխանության: Այսպիսով, այլընտրանքների մշակումը, որպես կանոն, սերտորեն շաղկապված է դրանց **համապատասխան ազդեցությունների գնահատմանը** (հետևաբար, հատված Ա4.2-ում այս երկու առաջադրանքներն ընդգրկված են միևնույն քայլի շրջանակներում), այլընտրանքային տարբերակների մշակման համար կիրառվող որոշ վերլուծական գործիքներ կարող են նաև օգտագործվել դրանց ազդեցությունները կանխատեսելու համար (ստորև բերված գործիքներից մի քանիսը համապատասխանում են վերևում բերված մեթոդներին): Լայնորեն կիրառվող գործիքներից են՝

- Հավաքական փորձագիտական եզրակացություններ, որոնց օգնությամբ հնարավոր է վերլուծել սպասվող ազդեցությունների մասշտաբներն ու բնույթը:
- Ազդեցությունների, հակասությունների կամ սիներգիաների մատրիցներ, որոնք ներկայացնում են առաջարկվող տարբերակների հիմնական բնապահպանական ազդեցությունները կամ բնապահպանական նպատակների հետ դրանց հիմնական հակասությունները կամ սիներգիաները
- Միտումների վերլուծություններ և արտաձուլումներ, որոնք ներկայացնում են շրջակա միջավայրի վիճակի հավանական էվոլյուցիան, այսինքն՝ հարափոփոխ բնապահպանական խնդիրներով պայմանավորված բնապահպանական միտումներ:

- Քարտեզների համախումբ և GIS համակարգ, որոնց միջոցով կարելի է որոշել տվյալ տարածքում առաջարկի ազդեցությունները և բացահայտել կուտակումային և բազմաճողական, սիներգիկ ազդեցությունները:
- Կենսապարբերաշրջանի գնահատում, որի միջոցով հնարավոր է հաշվարկել առաջարկված տարբերակների համապատասխան մուտքներն ու արդյունքները:
- Կանխատեսողական մոդելավորում, որի միջոցով հնարավոր է բնապահպանական պայմանների սիմուլյացիայի օգնությամբ որոշել ազդեցությունների քանակական արտահայտությունները:

29. Որոշումներ կայացնելիս, հիմնական **այլընտրանքային տարբերակների համեմատման** ամենահեշտ եղանակն է՝ նկարագրել և հստակ ներկայացնել դրանց գլխավոր դրական ազդեցությունները (օգուտներ) և բացասական ազդեցությունները (խնդիրներ կամ ռիսկեր). միննույն է, այս նկարագրությունը հարկավոր է ընդգրկել ոչ տեխնիկական ակնարկում, ամփոփագրում:

Տարբերակների համեմատության եղանակների շարքում են նաև՝

- Մատրիցներ, որոնք ներկայացնում են առաջարկվող տարբերակների ազդեցությունները կամ բացահայտում դրանց համապատասխանությունը սահմանված բնապահպանական նպատակներին
- Քարտեզների համախումբ և GIS համակարգ, որոնք կարող են պատկերների միջոցով ներկայացնել առաջարկվող տարբերակները և դրանց ազդեցությունները
- Բազմաչափանիշային վերլուծություն, որն այլընտրանքային տարբերակները վերլուծում է ըստ մի շարք չափանիշների, այնուհետև այս առանձին գնահատումները միավորում է մեկ ընդհանուր գնահատման շրջանակներում
- Ծախսերի և օգուտների վերլուծություն, որն ուսումնասիրում է սահմանված ժամանակահատվածում առաջարկի ապահոված օգուտների և դրա համար պահանջվող ծախսերի հավասարակշռությունը
- Կենսապարբերաշրջանի գնահատում, որը ներկայացնում է առաջարկվող այլընտրանքային տարբերակների ազդեցությունները և էներգիայի հոսքերը

30. Հաշվի առնելով ռազմավարական մակարդակում վերլուծության համատեքստի անխուսափելի անորոշության պայմանները՝ խորհուրդ է տրվում, ստուգել վերլուծության զգայունության աստիճանը: Զգայունության վերլուծությունը օգնում է բացահայտել ենթադրությունների պարամետրերի փոփոխման հետևանքները և, այսպիսով, ցույց է տալիս գնահատման կայունության աստիճանը:

31. **Հավելված A5.1**-ում ներկայացված է առանձին մեթոդների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն: Այդ մեթոդների առանձնահատկություններն ամփոփ ներկայացված են ստորև բերված Աղյուսակ Ա5.1-ում:

Աղյուսակ Ա5.1 Հիմնական վերլուծական գործիքների ամփոփ նկարագրություն

Վերլուծական գործիք	Կիրառում ՌԲԳ գործընթացի շրջանակներում	Հիմնական հատկանիշներ
--------------------	---------------------------------------	----------------------

	Խնդիրների և ազդեցությունների սահմանում	Համատեքստի և նախնական վիճակի վերլուծություն	Այլընտրանքային տարբերակների մշակման գործիքներ	Ազդեցությունների գնահատում	Որոշումների կայացման նպատակով տարբերակների համեմատություն	Տվյալների, տեղեկատվության պահանջ	Պահանջվող ծախսեր և ժամանակ	Թափանցիկություն՝ հանրության տեսանկյունից	Անորոշությունները հաղթահարելու ճկունություն	Առողջապահական խնդիրներին անդրադարձալու ունակություն
Բնապահպանական շրջագնում, օրենքների և քաղաքականությունների վերլուծական ակնարկ	✓	✓				□	\$	⊕		XX
SWOT վերլուծություն	✓	✓			✓	□	\$	⊕	⚡	XX
Ստուգացուցակներ	✓					□	\$	⊕	⚡	X
Մատրիցներ	✓		✓	✓	✓	□	\$	⊕	⚡	X
Որոշումների ծառացանցեր, ազդեցությունների ցանցեր	✓	✓			✓	□	\$	⊕		XX
Քարտեզների համախմբեր և GIS համակարգ	✓	✓	✓	✓	✓	▣	\$\$	⊕		X
Միտումների վերլուծում և արտածում (էքստրապոլացիա)		✓		✓		□	\$	⊕	⚡	X
Հավաքական փորձագիտական եզրակացություն	✓	✓	✓	✓	✓	□	\$	⊕	⚡	XX
Մոդելավորում			✓	✓		▣	\$\$	⊕	⚡	X
Սցենարային տարբերակների կազմում	✓		✓			▣	\$\$	⊕	⚡	XX
Կենսապարբերաշրջանի գնահատում	✓	✓	✓	✓	✓	▣	\$\$	⊕		
Ծախսերի և օգուտների վերլուծություն			✓	✓	✓	▣	\$\$	⊕		
Բազմաչափանիշային վերլուծություն			✓	✓	✓	▣	\$\$	⊕	⚡	X

Բանալի

Կիրառում	✓	այո
Տվյալների, տեղեկատվության պահանջ	□	փոքր
	▣	մեծ
Պահանջվող ծախսեր և ժամանակ	\$	քիչ
	\$\$	շատ
Թափանցիկություն՝ հանրության տեսանկյունից	⊕	ցածր
	⊖	միջին
	⊗	բարձր
Անորոշությունները հաղթահարելու ճկունություն	⚡	այո
Առողջապահական խնդիրներին անդրադարձալու ունակություն	X	ցածր
	XX	բարձր

Ա5.4 ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԱՍՓՈՓ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

32. Արձանագրությունը սահմանում է հանրությանը տեղեկատվությամբ ապահովելու և խորհրդակցություններում հանրությանը ներգրավելու հիմնական պահանջները (տե՛ս հատված Ա4.3):

Այս դրույթները կարող են նման թվալ ՇՄԱԳ պահանջներին, սակայն կարևոր է նկատի ունենալ, որ որոշ ՌԲԳ-ների մասշտաբները, շրջանակներն ու ծավալները հաշվի առնելով՝ հանրության մասնակցության գործնական պայմանավորվածությունները կարող են ՇՄԱԳ-ի մեխանիզմներից էականորեն տարբերվել:

33. ՌԲԳ-ին կարող են մասնակցություն ունենալ հանրության տարբեր խմբեր և անհատներ: Հաշվի առնելով որոշ ՌԲԳ-ների բարդության գործոնը, երբեմն ընտրվում են այնպիսի մեթոդներ, որոնք նպատակաուղղված են խնդիրների հանգուցալուծման շուրջ կենտրոնացված քննարկումների վարմանը, քան առավել լայն ներգրավվածության ապահովմանը: Մա ՌԲԳ կիրառության կարևոր մարտահրավերներից է առաջիկա մի քանի տարիների ընթացքում:

34. Որպեսզի հանրությունը մասնակցության բազում հնարավորություններից շփոթության մեջ չընկնի, ընտրված գործիքները, եթե դա հնարավոր է, պետք է ՌԲԳ-ի և պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի համար նախատեսեն հանրության մասնակցության մեկ ընդհանուր գործընթաց: Այս գործիքները կարող են՝

- Տրամադրել տեղեկատվություն
- Հավաքել կարծիքներ
- Հանրության շահագրգիռ ներկայացուցիչներին ներգրավել համագործակցության միջոցով խնդիրների հանգուցալուծման գործընթացներում:

35. Հանրության մասնակցության բազմաթիվ գործիքներ կան, և աննշան փոփոխման դեպքում տարբեր մեխանիզմներ կարող են տարբեր արդյունքներ տալ: Ամենալայն կիրառումն ունեցող գործիքները ամփոփված են ստորև բերված Ա5.2-ում և մանրամասն նկարագրվում են [հավելված Ա5.2-ում](#):

36. Անապահով խմբերի և անհատների անբավարար միջոցները և կարողությունները կարող են սահմանափակել նրանց մասնակցությունը, հետևաբար հարկավոր է ընտրել հանրության մասնակցության համապատասխան մեթոդ, որը կհեշտացնի նշված խմբերի և անհատների մասնակցությունը: Եթե անապահով խմբերն ու անհատները դժվարությամբ են օգտվում ընտրված գործիքներից, ապա վտանգ կա, որ միայն ապահովված խմբերն ու անհատները կմասնակցեն ՌԲԳ-ին և նրանց կարծիքները կարող են լիարժեք չներկայացնել ողջ հանրության մտահոգությունները:

Աղյուսակ Ա5.2 Հանրության մասնակցության հիմնական գործիքների ամփոփ նկարագրություն

Հանրության մասնակցության գործիք	Ապահովում է ...	Հիմնական հատկանիշները
---------------------------------	-----------------	-----------------------

	Տեղեկատվության տրամադրում	Կարծիքների հավաքում	Համագործակցության միջոցով խնդիրների լուծում	Ծախսատարություն	Խնդիրներ լուծման արդյունավետություն	Կարծիքների ներկայացման հարմարավետություն
Տպագիր նյութեր, որոնք պահանջում են ընթացիկ ներկայացում	✓	✓		\$		☺
Ցուցադրումներ	✓	✓		\$		☺
Աշխատակիցների կողմից ներկայացվող ցուցադրումներ	✓	✓	✓	\$\$	👉	☺
Տեղեկատվական թեժ գիծ	✓	✓		\$		☺
Ինտերնետային/համացանցային խորհրդակցություններ	✓	✓	✓	\$	👉	☺
Հարցաշարեր և պատասխանների թերթիկներ		✓		\$\$		☺
Հարցումներ		✓		\$\$		☺
Հասարակական լսումներ	✓	✓		\$		☺
Սեմինարներ	✓	✓	✓	\$	👉	☺
Խորհրդատու հանձնաժողով	✓	✓	✓	\$	👉	☺

Բանալի:

Ապահովում է	✓	այո
Ծախսատարություն	\$	ցածր
	\$\$	բարձր
Խնդիրների լուծման արդյունավետություն	👉	ցածր
	👉	բարձր
Կարծիքների ներկայացման հարմարավետություն	☺	միջին
	☺	բարձր

ԳԼՈՒԽ Ա6
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

Ա.6.1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արձանագրության տեքստում օգտագործվում է «շրջակա միջավայրը, այդ թվում՝ առողջությունը» տերմինը: Կրկնողությունից խուսափելու նպատակով սույն ձեռնարկում նշվում է միայն շրջակա միջավայրը, սակայն պետք է համարել, որ այդ հասկացության մեջ ընդգրկված է նաև առողջությունը: Առողջապահական գարցերի շուրջ լրացուցիչ տեղեկատվության համար, տե՛ս հավելված Ա.1.1-ը:

1. Այս գլխում քննարկվում է Արձանագրության հոդված 13, որը վերաբերում է քաղաքականություններին և օրենքներին: Հատուկ շեշտ է դրվում Արձանագրության «սկզբունքների ու տարրերի» կիրառման վրա՝ պլանների կամ ծրագրերի շրջանակներում ՌԲԳ գործընթացի նմանությամբ դրան համարժեք գործընթաց իրականացնելու փոխարեն:
2. Բարի Սադլերի կողմից խմբագրված « Ռազմավարական բնապահպանական գնահատումը քաղաքականության մակարդակում. առաջընթաց, ներկա վիճակ և հեռանկարներ» վերտառությամբ հատորը պատրաստվել է ՏԲԿ-ի կողմից՝ որպես սույն ձեռնարկին կից ներկայացվող հավելյալ տեղեկատվություն³⁷:

³⁷ Ձեռնեղված է http://www.unece.org/env/eia/documents/PolicySEA/SEA_of_Policies_volume.pdf կայքէջում:

Իրավական պարտավորություններ

3. Հոդված 13-ը պահանջում է, որ կողմերը «ձգտեն», «փորձեն» հետևել, որ շրջակա միջավայրին առջվող մտահոգությունները քննարկվեն և ինչպես հարկն է ընդգրկվեն քաղաքականության և օրենսդրության նախագծերի կազմման գործընթացում՝ համաձայն Արձանագրության համապատասխան սկզբունքների և տարրերի պահանջների: Հոդված 13-ի պահանջների կատարման շրջանակներում Կողմերը պետք է հետևեն, գործնական պայմանավորվածություններն ապահովեն որոշումների ընդունման թափանցիկություն:
4. Քաղաքականություններին և օրենքներին վերաբերող հավելյալ դրույթներ կան առաջաբանում և հոդված 1 (բ)-ում (նպատակ) և հոդված 24.4-ում (ուժի մեջ մտնելը): ՌԲԳ Հրահանգում համարժեք դրույթներ չկան:

Քաղաքականության և օրենսդրության ի՞նչ սահմանում է կիրառվում

5. Արձանագրությունում «քաղաքականության և օրենսդրության» արտահայտության սահմանումը չի տրվում, սակայն, որպես կանոն, քաղաքականությունները հիմնականում համարվում են պլանների և ծրագրերի մակարդակից ավելի բարձր և առավել ընդհանուր բնույթի ռազմավարական առաջարկներ: Օբսֆորդի անգլերենի բառարանում քաղաքականությունը սահմանվում է որպես «որդեգրված կամ առաջարկվող սկզբունք կամ գործելակերպ, որը համարվում է ցանկալի, շահավետ կամ նպատակահարմար և որին պաշտոնապես հետևում են [հատկապես] կառավարությունները, քաղաքական կուսակցությունները և այլն», իսկ «օրենսդրությունը»՝ որպես «օրենսդրի կամ օրենսդիր մարմնի կողմից վավերացված օրենք»: Հոդված 13-ում նշվում է, որ Հոդված 13-ին ենթակա են այն քաղաքականություններն ու օրենքները, որոնք շրջակա միջավայրի վրա նշանակալի ազդեցություններ կարող են ունենալ:

Ուղղորդում

6. Արձանագրությունը խիստ սահմանափակ տեղեկատվություն է ներկայացնում քաղաքականությունների և օրենքի նախագծերի կազմման գործընթացում շրջակա միջավայրի վերաբերյալ մտահոգությունները քննարկելու և ընդգրկելու վերաբերյալ:
7. Որոշումների կայացման այս ռազմավարական մակարդակներում բնապահպանական մտահոգությունների քննարկումն ու ընդգրկումը խիստ կարևոր են կայուն զարգացում ապահովելու համար: Հստակ սահմանված գործընթացի բացակայությունը նշանակում է, որ քաղաքականությունների և օրենքների նախագծերի մշակման գործընթացի շրջանակներում շրջակա միջավայրի խնդիրները քննարկելու և ընդգրկելու գործում ճկուն և նորարարական մոտեցում կիրառելու հնարավորություններ կան: Հաշվի առնելով տարբեր քաղաքականությունների և օրենքների խիստ անհատական բնույթը՝ նման ճկունությունը էական նշանակություն ունի: Հետևաբար, սա շատ մեծ ներուժ պարունակող, հետաքրքիր և դժվար աշխատանքի ասպարեզ է:
8. Քաղաքականությունների նախագծերի մշակման գործընթացում շրջակա միջավայրի հարցերի քննարկման և ընդգրկման կարգը, որպես կանոն, տարբերվում է օրենքների նախագծերի պատրաստման գործընթացում կիրառվող ձևաչափից: Օրինակ, քաղաքականության մշակման գործընթացում կարող է իրականացվել ՌԲԳ, այդ թվում՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների գնահատում, այլընտրանքային տարբերակների քննարկում և հանրության հետ խորհրդակցություններ: Սակայն այս ձևաչափը, որպես կանոն, չի կիրառվում օրենսդրական համատեքստում, քանի որ օրենքի նախագծերը քննարկվում են սահմանված խորհրդարանական կամ այլ օրենսդրական ընթացակարգերի շրջանակներում: Շրջակա միջավայրի հարցերը կարող են քննարկվել այդ ընթացակարգերի շրջանակներում, սակայն Արձանագրությամբ սահմանված ֆորմալ գնահատումը սովորաբար տեղի է ունենում

մինչև օրենքի նախագիծն օրենսդիր մարմին ներկայացնելը: Այս համատեքստը զուգահեռներ ունի Արձանագրության այն դրույթներ հետ, որոնք ամրագրում են, որ պլանները կամ ծրագրերը պետք է ենթակա լինեն «խորհրդարանի կամ կառավարության կողմից ֆորմալ ընթացակարգով ընդունման»: Այս դեպքերում ՌԲԳ-ն ձեռնարկվում է նախքան վերջնական տեսքի բերված պլանը կամ ծրագիրը ֆորմալ ընթացակարգով ընդունման ներկայացնելը:

9. Ձեռնարկի կայքում (http://www.unece.org/env/eia/sea_manual/welcome.html) տրված են քաղաքականությունների և օրենքների հարցում տարբեր երկրների կողմից կիրառվող մոտեցումների մասին տեղեկատվության հղումներ, այս տեղեկատվությունը նաև զետեղված է վերոնշյալ հատորի [գլուխ 2](#)-ում:

Ա6.2 ՀՆԱՐԱՎՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

10. Այս հատվածում ներկայացվում են քաղաքականությունների և օրենքի նախագծերի մշակման գործընթացի շրջանակներում շրջակա միջավայրի հարցերի քննարկման և ընդգրկման հնարավոր տարբերակները՝ համաձայն Արձանագրության հոդված 13-ի դրույթների և ստորև պարզաբանվող «քննարկման և ընդգրկման» գործընթացը պայմանավորող բաղադրիչների:
11. Քաղաքականությունների և օրենքների նկատմամբ պարտադիր կարգով ՌԲԳ կիրառելու պահանջի բացակայությունը Կողմերին հնարավորություն է ընձեռում քաղաքականությունների և օրենքների մշակման գործընթացում շրջակա միջավայրերի քննարկման և ընդգրկման հարցում ճկուն մոտեցում ցուցաբերել, ձեռնարկել փորձական ուսումնասիրություններ և աստիճանաբար կուտակել համապատասխան փորձ ու հմտություններ: Օրինակ, Կողմերը կարող են առաջին հերթին ուշադրությունը կենտրոնացնել այն քաղաքականությունների և օրենքների շուրջ, որոնք շրջակա միջավայրի վրա (դրական կամ բացասական) ազդեցություն գործելու բացահայտ ներուժ ունեն: Կիրառման ոլորտի և ազդեցությունների կարևորության չափանիշների ստույգ սահմանմանը կարելի է անդրադառնալ հետագայում:
12. Այնուամենայնիվ, բնապահպանական հարցերի քննարկման և ինտեգրման գործընթացին վերաբերող Արձանագրության դրույթների հիմնական առանձնահատկություններից կարելի է առանձնացնել երկուսը՝ ինտեգրման (հոդված 1 (բ) և (ե)) և թափանցիկության ապահովման (հոդված 13.3) անհրաժեշտությունը: Ստորև բերված ներդիր Բ6.1-ում ներկայացվում են խորհուրդներ, որոնք կարող են օգտակար լինել ինտեգրումն առավել արդյունավետ կերպով իրականացնելու և թափանցիկություն ապահովելու գործում հաջողության հասնելու համար: Այս մոտեցումների կիրառման գործնական մեթոդները ներկայացված են [Գլուխ Ա5](#)-ում:
13. Հարկավոր է նաև հաշվի առնել պլանների և ծրագրերի կազմմանը վերաբերող 4-12-րդ հոդվածների դրույթներով ամրագրված բաղադրիչները (այն է՝ հոդված 13.2-ում նշվող «սկզբունքները և տարրերը»):
 - Կիրառման ոլորտ և նշանակալի ազդեցությունների որոշում
 - Շրջանակների որոշում և բնապահպանական զեկույց
 - Հանրության մասնակցություն, բնապահպանական և առողջապահական իրավասու մարմինների հետ խորհրդակցություն և անդրասահմանային խորհրդակցություններ
 - Որոշումների կայացում
 - Մշտադիտարկում:
14. Բայցևայնպես, պարտադիր չէ խստությամբ պահպանել այս բաղադրիչների հաջորդականությունը: Հնարավոր է, որ տարբեր գործողություններ կրկնվեն, նախորդ քայլերին վերադառնալու կարիք լինի կամ որոշ գործողություններ համատեղվեն: Հավաքվող տեղեկատվությունը, բնականաբար, ավելի ընդհանուր և բարձրակարգ բնույթի է, քան պլանների և ծրագրերի մշակման դեպքում, և, հետևաբար, բնապահպանական ազդեցությունների կանխատեսումներն ու գնահատումը նույնքան ստույգ չեն կարող լինել, որքան պլանների և ծրագրերի դեպքում: Քաղաքականությունների և օրենքների նկատմամբ կիրառվող որոշ գործընթացներ, որոնք նման են ՌԲԳ գործընթացին, չեն խրախուսում առանձին բնապահպանական զեկույց պատրաստելու գաղափարը, փոխարենը ՌԲԳ-ի արդյունքներն ընդգրկվում են քաղաքականության և օրենքների մշակման առկա փաստաթղթային փաթեթում: Հիմնավորող փաստաթղթերը հանրությանը կարող են ներկայացվել առանձին:
15. Կողմերի համար կարող է օգտակար լինել ծանոթությունը «Ռազմավարական բնապահպանական գնահատման վերաբերյալ կառավարական կարիքների հրահանգի

կատարման ուղենիշներ, պլանների և ծրագրերի նախագծեր»³⁸ վերտառությամբ նյութում ներկայացված սկզբունքներին, որոնք ամփոփված են ստորև բերված Աղյուսակ Ա6.1-ում:

16. Այն Կողմերը, որոնք նաև ստորագրել են Օրհուսի կոնվենցիան, պետք է նաև հաշվի առնեն կոնվենցիայի 7-րդ և 8-րդ հոդվածների դրույթները, որոնք քննարկվում են ստորև բերված Ներդիր Ա6.2-ում:
17. Վերջապես, Կողմերը կարող են ստեղծել խորհրդատու ծառայություն կամ կենտրոն, որը կաջակցի քաղաքականությունների և օրենքների մշակման գործընթացում Արձանագրության դրույթների կիրառման աշխատանքներին: Նման ծառայությունը կամ կենտրոնը կարող է գործել, օրինակ, բնապահպանության նախարարությանը, վարչապետի գրասենյակին կամ այլ կենտրոնական գերատեսչությանը կից կամ որպես նման իրավասու մարմինների համատեղ նախաձեռնություն:

Ներդիր Ա6.1 Ինտեգրման և թափանցիկության ապահովման ռազմավարություններ

Բնապահպանական հարցերի քննարկումն ու ինտեգրումը պետք է տեղի ունենան քաղաքականությունների և օրենքների մշակման գործընթացի վաղ փուլերում: Քաղաքականության և օրենքի նպատակների շաղկապումն առավել ընդհանուր բնապահպանական նպատակներին պետք է լինի այս ինտեգրման ելակետը: Բնապահպանական հարցերն առավել արդյունավետ ինտեգրելու համար անհրաժեշտ է³⁹

- Դրանք նախաձեռնել վաղ փուլում՝ մինչև վերջնական որոշումների կայացումը
- Քաղաքականությունը կամ օրինագիծը մշակող խմբում ընդգրկել բնապահպանական հարցերին նախանձախնդիր ազդեցիկ անձանց
- Խմբում և որոշում կայացնող մարմինների հետ համաձայնեցնել, թե բնապահպանական հարցերի քննարկման և ինտեգրման գործընթացի, այդ թվում՝ բնապահպանական գնահատման արդյունքներն ինչպես են օգտագործվելու
- քննարկման և ինտեգրման գործընթացը հարմարեցնել քաղաքականության կամ օրենքի մշակման գործընթացին, հատկապես դրա ժամանակացույցին
- շրջակա միջավայրի վերաբերյալ մտահոգությունների շուրջ քննարկումներում ընդգրկել բնապահպանական գնահատման սկզբունքներն ու տարրերը
- ապահովել թափանցիկություն՝ բնապահպանական հարցերը քաղաքականության կամ օրենքի մշակման գործընթացում ընդգրկելու գործում:

Թափանցիկություն կարելի ապահովել տարբեր միջոցներով, այդ թվում⁴⁰

- Արդյունքների և հիմնավորումների ներկայացում հանրությանը (այն է՝ ինչու է տվյալ քաղաքականությունը կամ օրենքն ընդունվել՝ նկատի ունենալով բնապահպանական մտահոգությունները)
- Հանրության իրազեկում քաղաքականության կամ օրենքի մշակման գործընթացի վաղ փուլերում, ներկայացված կարծիքների քննարկում և ընդգրկում, ինչպես նաև այս գործողությունների ընթացքի մասին հանրության ծանուցում
- Քաղաքականության կամ օրենքի հնարավոր բնապահպանական ազդեցությունների հարցերի շուրջ բնապահպանական և առողջապահական իրավասու մարմինների հետ խորհրդակցություններ գործընթացի վաղ փուլերում
- Գործընթացի վաղ փուլերում հանրության՝ ոչ միայն համապատասխան ՀԿ-ների, այլև համապատասխան դեպքերում լայն հասարակայնության և Արձանագրությունն ընդունած այլ երկրների համապատասխան մարմինների

³⁸ Կանադական բնապահպանական գնահատման գործակալություն (2000), «Ռազմավարական բնապահպանական գնահատման վերաբերյալ կառավարական կաբինետի հրահանգի կատարման ուղենիշներ, պլանների և ծրագրերի նախագծեր», գետեղված է <http://www.ceaa.gc.ca/default.asp?lang=En&n=B3186435-1> կայքէջում:

³⁹ Կրկնում է գլուխ Ա3-ում ներկայացված քննարկումը

⁴⁰ Կրկնում է պլանների և ծրագրերի վերաբերմամբ կիրառվող 7-11-րդ հոդվածների դրույթները:

ներգրավում

Աղյուսակ Ա6.1 Կանադական ուղենիշների առանցքային սկզբունքները

Առանցքային սկզբունքներ	
Ընդգրկում գործընթացի վաղ փուլերում	Բնապահպանական նկատառումների վերլուծությունը պետք է լիարժեք ընդգրկվի քաղաքականության մշակման գործընթացում: Որպեսզի կայացվող որոշումները լինեն կայուն զարգացման սկզբունքներին համահունչ և հիմնավորված, անհրաժեշտ է շրջակա միջավայրի վրա նշանակալի ազդեցությունների քննարկումները կազմակերպել առաջարկի հայեցակարգի պլանավորման գործընթացի վաղ փուլում՝ նախքան վերջնական որոշումների կայացումը: Այս կերպ [ՌԲԳ-ն] կարող է աջակցել այլընտրանքային տարբերակների քննարկմանը և լրացուցիչ ուսումնասիրման ենթակա հարցերի բացահայտմանը:
Այլընտրանքային տարբերակների քննարկում	[ՌԲԳ-ի] կարևորագույն տարրերից մեկն այն է, որ քաղաքականության մշակման գործընթացում հնարավորություն է ընձեռում գնահատել և համեմատել քաղաքականության նախագծի այլընտրանքային տարբերակների բնապահպանական ազդեցությունները: Այս համեմատությունը կարող է օգնել բացահայտել այն փոփոխությունները, որոնց շնորհիվ հնարավոր կլինի նվազեցնել քաղաքականության նախագծի բնապահպանական ռիսկերը:
Ճկունություն	[Իրավասու մարմինները] ըստ իրենց հայեցողության կարող են որոշել [ՌԲԳ-ներ] կազմակերպելու կարգը, նրանց խորհուրդ է տրվում վերլուծական մեթոդաբանությունները և գործիքները փոփոխել և հղկել՝ դրանք հարմարեցնելով տվյալ պայմաններին:
Ինքագնահատում	Յուրաքանչյուր [իրավասու մարմին] պատասխանատու է իր կողմից առաջարկվող քաղաքականությունները, ըստ անհրաժեշտության, [ՌԲԳ-ի] ենթարկելու, գնահատման կազմակերպման կարգը որոշելու և գնահատման արդյունքները զեկուցելու համար:
Վերլուծության համապատասխան աստիճան	Հնարավոր բնապահպանական հետևանքների վերլուծության շրջանակները պետք է համապատասխանեն ակնկալվող ազդեցությունների աստիճանին:
Պատասխանատվություն	[ՌԲԳ-ն] պետք է պետության կողմից որոշումների կայացման բաց և հաշվետու գործընթացի մաս կազմի: Պատասխանատվության դրույթի իրականացումը հենվում է համապատասխան կազմակերպությունների և անհատների ներգրավման [այն է՝ մասնակցության] և փաստաթղթերի ու զեկույցների ներկայացման պահանջների վրա:
Գործող մեխանիզմների կիրառում	[ՌԲԳ-ներ վարելիս իրավասու մարմինները] բնապահպանական ազդեցությունները վերլուծելու, անհրաժեշտության դեպքում հանրությանը ներգրավելու, իրականացման աշխատանքները գնահատելու և արդյունքները զեկուցելու համար պետք է օգտվեն գործող մեխանիզմներից: Բնապահպանական հետևանքների

	մասին զեկույցները հրապարակելիս անհրաժեշտ է օգտվել նույն մեխանիզմներից:
--	--

Հղումներ

18. ԵՀ-ն մշակել է քաղաքականությունների և օրենքների նախապատրաստման գործընթացում շրջակա միջավայրի հարցերի քննարկման և ընդգրկման մի շարք գործիքներ, այդ թվում՝ Գլխավոր Քարտուղարության «Ազդեցությունների գնահատման» վերաբերյալ ուղեցույց, որը նպատակաուղղված է ԵՀ քաղաքականությունների մշակման գործընթացի կարգավորմանն ու աջակցմանը⁴¹:
19. Հավելյալ հղումներ են ներկայացված «Ռազմավարական բնապահպանական գնահատումը քաղաքականության մակարդակում. առաջընթաց, ներկա վիճակ և հեռանկարներ» վերտառությամբ հատորում և Ձեռնարկի կայքում՝ (http://www.unece.org/env/eia/sea_manual/welcome.html):
20. Ի լրումն վերոնշյալի, որոշ երկրներ մշակել են քաղաքականությունների և օրենքների նախագծերի մշակման գործընթացում առողջապահական հարցերի քննարկման և ընդգրկման մեթոդներ: Նման օրինակներից է Միացյալ Թագավորությունում պատրաստված «Քաղաքականության գնահատում և առողջապահության հարցեր» վերտառությամբ ուղեցույցը, որտեղ ընդգրկված են առողջապահության և բարեկեցության վերաբերյալ ստուգիչ հարցեր⁴²:

Ներդիր Ա6.2 Հանրության մասնակցությունն ըստ Օրհուսի կոնվենցիայի
 Հոդված 7 («Շրջակա միջավայրին առնչվող պլանների, ծրագրերի և քաղաքականությունների մշակման գործընթացում հանրության մասնակցությունը»)

... Համապատասխան կարգով յուրաքանչյուր Կողմ պարտավոր է շրջակա միջավայրին վերաբերող քաղաքականությունների մշակման գործընթացում հանրությանը մասնակցության հնարավորություններ ընձեռելու ուղղությամբ քայլեր ձեռնարկել:

Հոդված 8 («Հանրության մասնակցությունը գործադիր կանոնադրությունների և/կամ ընդհանուր կիրառույթ և օրենքի ուժ ունեցող նորմատիվ գործիքների մշակման գործընթացում»)

Յուրաքանչյուր Կողմ պարտավոր է ձգտել խթանելու հանրության արդյունավետ մասնակցությունը պետական իրավասու մարմինների կողմից գործադիր կանոնադրությունների և/կամ ընդհանուր կիրառույթ և օրենքի ուժ ունեցող նորմատիվ գործիքների մշակման գործընթացի համապատասխան փուլերում, երբ տարբերակները դեռևս քննարկման ենթակա են, եթե այդ կանոնադրությունները և/կամ օրենքները կարող են շրջակա միջավայրի վրա նշանակալի ազդեցություն գործել:

Այս նպատակով հարկավոր է ձեռնարկել հետևյալ քայլերը.

ա) սահմանել արդյունավետ մասնակցության համար բավարար ժամանակ նախատեսող ժամկետներ,

բ) հրապարակել կամ այլ միջոցներով հանրությանը մատչելի դարձնել կանոնադրության

⁴¹ Ձեռնեղված է http://ec.europa.eu/governance/impact/index_en.htm կայքում (օրինակի համար տե՛ս Ազդեցությունների գնահատման ԵՀ ներքին ուղենիշները հետևյալ կայքէջում՝ http://ec.europa.eu/governance/impact/commission_guidelines/docs/iag_2009_en.pdf):

⁴² Միացյալ Թագավորություն, Քաղաքականության գնահատում և առողջապահություն. Առողջապահության նախարարության ուղեցույց (2004թ. վերահրատարակում) https://www.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/191503/policy_appraisal_and_health.pdf

նախագիծը, և

զ) հանրությանը ուղղակիորեն կամ ներկայացուցիչ խորհրդակցային մարմինների միջոցով կարծիքներ ներկայացնելու հնարավորություն ընձեռել:

Հանրության մասնակցության արդյունքները պետք է հնարավորին չափով հաշվի առնվեն:

Հոդված 8-ը կարող է մեկնաբանվել որպես հանրության մասնակցությունն ապահովելու պարտավորություն օրենքների (և այլնի) նախապատրաստման այն փուլերում, երբ տարբերակները դեռևս քննարկման առարկա են, ժամկետների, ծանուցման, կարծիքների ներկայացման և ստացված կարծիքները հնարավոր չափով հաշվի առնելու ընդհանուր ընթացակարգային շրջանակ սահմանելու միջոցով⁴³:

⁴³ Օրհուսի կոնվենցիայից հետո. Կիրառման ուղեցույց (նշում 34), էջեր 119–122

ԲԱԺԻՆ Բ. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Գլուխ Բ1

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ
ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Բ1.1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արձանագրության տեքստում օգտագործվում է «շրջակա միջավայրը, այդ թվում՝ առողջությունը» տերմինը: Կրկնողությունից խուսափելու նպատակով սույն ձեռնարկում նշվում է միայն շրջակա միջավայրը, սակայն պետք է համարել, որ այդ հասկացության մեջ ընդգրկված է նաև առողջությունը: Առողջապահական հարցերի շուրջ լրացուցիչ տեղեկատվության համար, տե՛ս հավելված Ա.1.1:

1. Այս գլխում ընդգծվում է ՌԲԳ կարողության զարգացմանն ուղղված գործողությունների ընդհանուր արդյունավետությունն ապահովելու նպատակով ճիշտ մոտեցում որդեգրելու կարևորությունը: Գլուխն անդրադառնում է հետևյալ հարցերին՝

- ՌԲԳ-ի իրականացման կարողությունների զարգացման շրջանակ (հավելված Բ1.2), որտեղ քննարկվում են ռազմավարությունների մշակման գործընթացում վերլուծության ենթակա գլխավոր հարցերը, որոնք նպատակաուղղված են Արձանագրության արդյունավետ կիրառման կարողությունների զարգացմանը և որտեղ բերվում են կարողությունների զարգացման գործիքների օրինակներ:
- Կարողությունների գնահատում (հավելված Բ1.3), որտեղ ամփոփվում են կարողությունների զարգացմանն առնչվող հիմնական հարցերը և ներկայացվում են կարողությունների գնահատման պարզ գործիքներ:
- ՌԲԳ կարողությունների զարգացման ռազմավարությունների մշակման խորհուրդներ (հավելված Բ1.4), կարողությունների զարգացման վերաբերյալ հիմնական ենթադրությունների նկարագրում:
- Եզրափակիչ ակնարկ (հավելված Բ1.5), որտեղ նկարագրվում են այն հիմնական հարցերը, որոնք պամանավորում են ՌԲԳ կարողությունների զարգացման համակարգված աշխատանքների որակը:
- Կարողությունների զարգացման մանրամասն հարցաշարի օրինակ, որը կիրառվել է Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի հինգ երկրներում (հավելված Բ1.1):
- ՌԲԳ-ի ներմուծման և Արձանագրության պահանջների կատարման համար ազգային կարողությունների զարգացման ռազմավարությունների պարզ տեխնիկական առաջադրանքների օրինակներ (հավելված Բ1.2):

Բ1.2 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Բ1.2.1 Արձանագրության կիրառման կարողությունների զարգացման շրջանակ

2. ՌԲԳ համակարգերի արդյունավետ կիրառման համար ընդհանրապես պահանջվում է երեք կարգի կարողությունների, այն է՝ համակարգի, հաստատությունների (ինտիտուցիոնալ) և անհատի կարողությունների զարգացում: Այս կարողությունների զարգացման հիմնական հարցերն ամփոփ ներկայացված են ստորև բերված Աղյուսակ Բ1.1-ում:

Աղյուսակ Բ1.1 Արձանագրության կիրառման կարողությունների զարգացման շրջանակ⁴⁴

Կարողությունների տեսակներ	Համակարգի կարողություններ	Ինտիտուցիոնալ կարողություններ	Անհատի կարողություններ
Հիմնական տարրեր	<ul style="list-style-type: none"> Իրավական, կանոնադրական և ընթացակարգային մեխանիզմներ, որոնք սահմանում են հաստատությունների և անհատների գործունեությունը 	<ul style="list-style-type: none"> Տվյալ համակարգում տվյալ կազմակերպության՝ արդյունավետ գործունեություն ծավալելու կարողությունը 	<ul style="list-style-type: none"> Անհատների հմտությունները, փորձառությունը և մոտիվացիան
Նպատակներ	<ul style="list-style-type: none"> Ընդհանուր օրենսդրական քաղաքականության և կանոնակարգման շրջանակների մշակում Միջգերատեսչական համակարգման բարելավում 	<ul style="list-style-type: none"> Կազմակերպության գործունեության արդյունավետության բարձրացում և գործառնական կարողությունների զարգացում 	<ul style="list-style-type: none"> Հմտությունների հղկում Երկրաժամկետ մոտիվացիայի և պատասխանատվության ստանձնման խրախուսում
Առանձին միջամտություններ (ոչ ամբողջական ցանկ)	<ul style="list-style-type: none"> Օրենսդրական քաղաքականության և կանոնադրության բարեփոխումներ ՌԲԳ գործընթացի գլխավոր դերակատարների փոխշփումների խրախուսման գործնական ուղենիշներ Ողջ համակարգի արդյունավետության մշտադիտարկում և վերանայում 	<ul style="list-style-type: none"> Ինտիտուցիոնալ հաշվետու գումներ, աուդիտներ Կառավարման ներքին ուղենիշներ Աշխատանքային պայմանների բարելավում (օր.՝ հաղորդակցման միջոցներ) 	<ul style="list-style-type: none"> Տարրական հմտությունների ուսուցում Մասնագիտական բարձր որակավորում Մասնագիտական հավաստագրում
Բազմաօրոշյալ ին միջամտություններ (ոչ ամբողջական ցանկ)	<ul style="list-style-type: none"> ՌԲԳ-ի և դրա արդյունավետ կիրառման սկզբունքների ապահոված օգուտների մասին իրազեկության մակարդակի բարձրացում Հարթակներ, որոնք խթանում են կանոնավոր մասնագիտական քննարկումները և քաղաքականության վերաբերյալ երկխոսությունը հիմնական շահառուների միջև (օր.՝ մասնագիտական ցանցեր կամ որևէ կիրառության ներկա վիճակը քննարկելու և վերանայելու նպատակով կանոնավոր կազմակերպվող համաժողովներ) Փորձական նախագծերի իրականացում, որոնց շրջանակներում փորձարկվում են օրենսդրության կամ ուղեցույցի առաջարկվող փոփոխությունները՝ որպես միջգերատեսչական ուսումնական աշխատանք, և ներգրավվում են տեղական մասնագետներ՝ նրանց ընձեռելով 		

⁴⁴ Փոփոխված քաղվածք Ա. Յուրքևիքյուբեի և Ջ. Դյուսիքի հեղինակած «ՏԲԿ մոտեցումը ՇՄԱԳ/ՌԲԳ բարեփոխումների իրականացման կարողությունների զարգացմանը ընթացակարգ» (2004) վերտառությամբ չտպագրված նյութից, ՏԲԿ բնապահպանական գնահատման խումբ:

	գործնական աշխատանքի միջոցով նոր հմտություններ յուրացնելու հնարավորություն • Օրինակելի կիրառույթ սահմանող և խրախուսող նախաձեռնությունների հաստատում
--	---

Համակարգի կարողություններ

3. Համակարգի կարողությունների չափը կախված է ընդհանուր համակարգի որակից, որի շրջանակներում հաստատություններն ու անհատները գործունեություն են ծավալում: Համակարգերը կարող են լինել ոչ լիարժեք նպատակային (այսինքն, չեն ապահովում սահմանված նպատակները) կամ անարդյունավետ (այսինքն, չափազանց դանդաղ, թանկ, բարդ կամ շատ միջոցներ պահանջող): Համակարգի կարողությունների զարգացման նպատակը օրենքների, քաղաքականության և կարգավորիչ մեխանիզմների բարեփոխումների, գործնական ուղեցույցերի տրամադրման և ողջ համակարգի արդյունավետության մշտադիտարկման ու վերանայման միջոցով ամբողջ համակարգի արդյունավետության բարձրացումն է:

4. **Օրենսդրական, քաղաքականության և կարգավորիչ մեխանիզմների բարեփոխումներ:** Արձանագրությունը կարող է ազգային օրենսդրական հարթույթ ներմուծվել, օրինակ, շրջակա միջավայրի պահպանության մասին օրենքի (բնապահպանության մասին շրջանակային օրենքի) միջոցով, որտեղ ամրագրվում է Արձանագրության դրույթների կիրառումը, ՌԲԳ-ի մասին ազգային շրջանակային օրենքի հաստատման (առանձին օրենքի ընդունման կամ գործող բնապահպանական օրենսդրության կամ ՇՄԱԳ օրենքներում փոփոխությունների ներմուծման միջոցով), կամ պլանավորման և ճյուղային գործող օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելու միջոցով:

5. **ՌԲԳ-ի վերաբերյալ գործնական ուղեցույցն** ընդհանրապես կարողությունների զարգացման ամենաարդյունավետ միջոցներից է: Այն կարող է պատրաստվել ընդհանուր կիրառույթ ունեցող կամ կոնկրետ դեպքերում կիրառելի ուղենիշների տեսքով, որոնք ՌԲԳ ընդհանուր ընթացակարգերը և սկզբունքները հարմարեցնում են կոնկրետ պլանի կամ ծրագրի մշակման գործընթացի նպատակներին: Ուղեցույցներում ներկայացվում է ՌԲԳ հիմնական տարրերի, նախատեսված ՌԲԳ արդյունքների, պլանի և ծրագրի մշակման գործընթացի հետ ընդհանրությունների, ինչպես նաև՝ կիրառելի գործիքների և մեթոդների և նույնիսկ Արձանագրության դրույթների կատարումը ստուգող ստուգացուցակների նկարագրությունը: Գործնական ուղեցույցերի օրինակների ցանկը՝ համապատասխան հղումներով, տրված է ԵՏՀ կայքում (http://www.unece.org/env/eia/sea_manual/welcome.html), այս ցանկը պարբերաբար համալրվում է նոր օրինակներով:

6. **ՌԲԳ ամբողջական համակարգի պարբերական վերանայման** միջոցով հնարավոր է ստանալ ՌԲԳ համակարգի ընդհանուր արդյունավետության ամբողջական պատկերը և դրա հիման վրա հետագա բարեփոխումների պլան առաջարկել: Անհրաժեշտ է նաև մշտադիտարկման և աուդիտի համակարգեր ունենալ:

Ինստիտուցիոնալ կարողություններ

7. Ինստիտուցիոնալ կարողությունները տվյալ համակարգում որևէ կազմակերպության՝ արդյունավետ գործունեություն ծավալելու կարողություններն են: Ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման նպատակը ներքին ինստիտուցիոնալ աուդիտների, ՌԲԳ-ի վերաբերյալ կառավարման ներքին ուղենիշների և հաղորդակցման ներքին մեխանիզմների միջոցով տվյալ հաստատության գործունեության ընդհանուր մակարդակի բարձրացումն է:

8. Խորհուրդ է տրվում պարբերաբար **ներքին ինստիտուցիոնալ աուդիտներ/ հաշվետուցումներ** անցկացնել՝ ՌԲԳ համակարգում տվյալ կազմակերպության գործունեության արդյունավետությունը ստուգելու, ձեռքբերումները բացահայտելու, ներքին ընթացակարգերով պայմանավորված դժվարությունները վերացնելու և կազմակերպության գործունեության

արդյունավետությունը բարձրացնելու միջոցներ ու գործողություններ սահմանելու համար: Նման աուդիտները կարող են կենտրոնացվել կազմակերպության ներսում աշխատանքների համակարգման, աշխատողների կարողությունների և պատասխանատվության հարցերի շուրջ: Կազմակերպության ինքնագնահատման շրջանակներում պարբերաբար կարող են իրականացվել աշխատողների կատարողականի գնահատումներ՝ թերի կողմերը բացահայտելու և լուծումներ առաջարկելու համար:

9. ՌԲԳ-ի արդյունավետության առավել բարձր մակարդակ կարելի է ապահովել նաև տարբեր բաժինների միջև ներքին հաղորդակցման մեխանիզմների բարելավման արդյունքում: **Կառավարման ներքին ուղենիշները** կարող են սահմանել ներքին հաղորդակցման և որոշումների կայացման ընթացակարգեր: Այնուամենայնիվ, **հաղորդակցման միջոցների** ճիշտ ընտրությունը խիստ կարևոր է, ՌԲԳ շրջանակներում հաղորդակցման էլեկտրոնային միջոցների օգտագործումը կարող է նպաստել աշխատանքների արդյունավետության բարձրացմանը: Բայցևայնպես, թիմային քննարկումները և փորձագետների հետ խորհրդակցություններն առավել արդյունավետ կարող են լինել իրարամերժ կարծիքների ներդաշնակեցման և կազմակերպության տարբեր բաժինների միջև համագործակցության խթանման համար: Նման խորհրդակցությունները շոշափելի ներդրում կարող են ունենալ ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման գործում:

Անհատի կարողություններ

10. Կադրային ռեսուրսները ներկայացնում են մարդկանց հմտությունների և փորձագիտական գիտելիքների ամբողջությունը և կենտրոնական դեր են խաղում ՌԲԳ-ի գործընթացում: Մարդկանց կարողությունների զարգացման նպատակն է՝ հետևել, որ կարևոր դերակատարում ունեցող անձինք ունենան համապատասխան հմտությունները և պատասխանատվություն ստանձնեն իրենց աշխատանքի համար, նվիրված լինեն իրենց աշխատանքին: Ի թիվս այլ միջոցների, դա կարելի է անել հիմնական հմտությունների զարգացման, առաջատար մասնագիտական զարգացման և որակավորման/սերտիֆիկացման ծրագրերի միջոցով:
11. **Հիմնական հմտությունների զարգացումը** մարդկային կարողությունների զարգացման սկզբնակետն է: Դրա շրջանակներում համալսարաններում կարգակերպվում են ՌԲԳ-ի և դրան հարող խնդիրների վերաբերյալ դասընթացներ, իրազեկման սեմինարներ, ինչպես նաև ներկայացվում են ֆիլմեր և շահագրգիռ կողմերի համար նախատեսված հեռակա ուսուցման գործիքներ⁴⁵:
12. **Առաջատար մասնագիտական զարգացման** համար տարբեր ոլորտներին վերաբերող հարցերի շուրջ կազմակերպվում են բարձր մասնագիտական դասընթացներ և ուսումնասիրություններ: Արդյունավետ միջոցներից է նաև գործնական աշխատանքի միջոցով ուսուցումը, որի դեպքում փորձագետները խիստ մասնագիտական գիտելիքներ են ձեռքբերում իրական ՌԲԳ-ներում մասնակցության և առավել փորձառու աշխատակիցների հետ շփման շնորհիվ:
13. **ՌԲԳ մասնագիտական որակավորումը/սերտիֆիկացիան** մարդկային կարողությունները և հմտություններն ընդլայնելու միջոցներից է: ՌԲԳ վկայագրումը պետք է գործի որպես բնապահպանության մասնագետների և ՇՄԱԳ փորձագետների որակավորման ենթահամակարգ: Կարևոր է հետևել, որ ՌԲԳ փորձագետների սերտիֆիկացիան ուղեկցվի պարբերաբար կազմակերպվող ուսուցումներով, սեմինարներով և կարողությունների զարգացման այլ նախաձեռնություններով:

Կարողությունների զարգացման բազմաարթությամբ միջամտություններ

⁴⁵ Օրինակ, Համաշխարհային բանկի և Ազդեցությունների գնահատման միջազգային ընկերակցության համատեղ ուժերով Չինաստանում մշակված ՌԲԳ իրականացման հեռակա ուսուցման ծրագիր, որի մասին տեղեկություններ կարելի է գտնել <http://info.worldbank.org/etools/docs/library/107861/sea/sea/index.html> կայքէջից:

14. Ի լրումն տարբեր տեսակի կարողությունների զարգացման կոնկրետ գործիքների, գոյություն ունեն նաև մի շարք գործիքներ, որոնք վերևում քննարկվող բոլոր երեք տեսակի կարողությունների զարգացման համար բարենպաստ միջավայր են ապահովում: Այդ գործիքներից են՝ օրինակելի կիրառության ապահոված առավելությունների մասին իրազեկում, կանոնավոր մասնագիտական քննարկումների կազմակերպում, փորձնական նախագծեր և պարզևատրման ծրագրեր: Կառավարության վերին օղակների կողմից աջակցությունը ՌԲԳ համակարգի կայացման գործում վճռորոշ կարևորություն ունի: Հետևաբար, քաղաքականություն մշակողները և կառավարության այլ բարձրաստիճան պաշտոնյաները (ոչ միայն բնապահպանական ոլորտի) պետք է քաջատեղյակ լինեն ՌԲԳ օրինակելի կիրառության ապահոված օգուտների մասին:
15. ՌԲԳ-ի և դրա արդյունավետ կիրառման ապահոված օգուտների մասին իրազեկումը կարող է պլանների կամ ծրագրերի մշակման համար պատասխանատու պաշտոնյաների կամ որոշումներ կայացնող մարմինների շրջանում ամրապնդել ՌԲԳ համակարգի կարևորությունը գնահատելու հիմքերը: Հարափոփոխ քաղաքական միջավայրում այս գործիքը կարող է օգտագործվել տարբեր հատվածներում, սեկտորների տարբեր մակարդակներում ՌԲԳ-ի կիրառության ընդլայնելու համար: Սա կարելի անել, օրինակ, գովազդային նյութերի միջոցով, որոնք ներկայացնում են իրական կյանքից վերցված օրինակներ և դրանց շուրջ որոշումներ կայացնողների և մասնագետների կարծիքները:
16. **ՌԲԳ փորձնական նախագծերի** միջոցով հնարավոր է մշակել, փորձարկել և ցուցադրել ՌԲԳ-ի նոր մոտեցումներ: Նման նախագծերը նպաստում են գործնական փորձառության կուտակմանը և ՌԲԳ օրինակելի կիրառության նախադեպերի հաստատմանը: Նման նախագծերը, որպես կանոն, կազմակերպվում են ՌԲԳ գործընթացի ներմուծման վաղ փուլերում: Դրանց միջոցով փորձարկվում են ՌԲԳ-ի հնարավոր ձևաչափերը և գործող այն մեխանիզմների և ընթացակարգերի հետ դրանց փոխադարձ կապերը, որոնց հետ հետագայում ՌԲԳ-ն հնարավոր է միավորել կամ համատեղել, օրինակ՝ ՇՄԱԳ-ը: Նման նախագծերը կարող են իրականացվել միջինստիտուցիոնալ ուսուցման շրջանակներում և գործնական աշխատանքի միջոցով ուսուցման հիմունքներով ներգրավել տեղական մասնագետների:
17. Հիմնական շահագրգիռ կողմերի միջև **կանոնավոր մասնագիտական քննարկումներ ու քաղաքականության վերաբերյալ երկխոսություններ** կարող են կազմակերպվել մասնագիտական ցանցերի, կիրարկման ներկա վիճակի վերանայմանը և քննարկմանը նվիրված համաժողովների, էլեկտրոնային փոստի հասցեների ցանկերի օգտագործմամբ քննարկումների միջոցով: Տարբեր մասնագիտական ոլորտների և աշխարհագրական վայրերում գործող հաստատությունների և անհատների միջև կանոնավոր շփումները խրախուսում են մասնագիտական քննարկումները, որոնք կարող են մեծապես ազդել ՌԲԳ ամբողջական համակարգի զարգացման վրա, նպաստել կարևորագույն հաստատությունների ներսում կարողությունների զարգացման նախաձեռնությունների իրականացմանը և համակարգել ՌԲԳ-ի իրականացման համար պահանջվող մարդկային ռեսուրսների մշակմանն ուղղված տարբեր միջամտությունները: Ցանցային շփման հաջողված փորձի օրինակ է Ազդեցությունների գնահատման միջազգային ընկերակցությունը (<http://www.iaia.org/>), որը նաև բազմաթիվ ազգային մասնաձյուղեր ունի:
18. **Պարզևատրման ծրագրերի** միջոցով հնարավոր է բացահայտել և ճանաչել ՌԲԳ օրինակելի կիրառության օրինակները: Շնորհման արարողությունները կարելի է կազմակերպել ՌԲԳ ազգային համաժողովի ընթացքում, որի շրջանակներում քննարկվում են տարբեր մոտեցումներ և ներկա կիրառության հիմնական խնդիրները: ՌԲԳ պարզևատրման կարող են շնորհվել հաստատություններին կամ անհատներին՝ լիարժեք իրականացված ՌԲԳ նախագծերի համար, որոնք ներկայացնում են օրինակելի կիրառության օրինակներ, օրինակ՝ առանձին ոլորտներում իրականացված ՌԲԳ-ների կամ ՌԲԳ-ի կոնկրետ բաղադրիչի կիրառման նորարարական մոտեցումների համար (օրինակ՝ գնահատման գործիքներ,

հանրության մասնակցության մեխանիզմներ, այլընտրանքային տարբերակների քննարկում, կուտակումային ազդեցությունների գնահատում և այլն):

Բ1.2.2 Կարողությունների զարգացման հիմնական խնդիրները

19. Կարողությունների զարգացումը վերջավոր գործընթաց չէ, այսինքն՝ ցանկացած պահի առանցքային հարցերի ընդամենը մի համախումբ կարող է քննարկման առարկա դառնալ՝ կարողությունների զարգացման ռազմավարության սկզբնական տարբերակի ազդեցությունը գնահատելու համար:
20. ՌԲԳ կարողությունների գնահատման նախաձեռնությունների մշակման առաջին քայլը պետք է լինի ռազմավարական շրջանակի որոշումը, որը պատասխանում է հետևյալ հարցերին՝
 - Ի՞նչ կարողություններ է հարկավոր զարգացնել ՌԲԳ-ի արդյունավետ իրականացման համար:
 - Որո՞նք են գերակայությունները և ի՞նչ հաջորդականությամբ պետք է դրանց անդրադառնալ:
 - Ինչպե՞ս կարելի է շաղկապել կարողությունների զարգացմանը նպատակաուղղված տարբեր միջամտությունները՝ սիներգիկ արդյունք ստանալու համար:
 - Կարողությունների զարգացման ո՞ր գործիքների համատեղումը կապահովի լավագույն արդյունքներ:
21. Ռազմավարական ուղղությունների ընտրությունը կախված է նախատեսված ժամկետներից և առկա միջոցներից, ինչպես նաև մասնակցող շահագրգիռ կողմերի համագործակցությունից և նպատակաուղղված աջակցությունից: Հետևաբար, շահագրգիռ կողմերի, նրանց պահանջների և կարողությունների վերլուծությունը պետք է նախորդի կարողությունների զարգացման ռազմավարության մշակման աշխատանքներին:

Բ1.3 ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Բ1.3.1 Կարողությունների գնահատում. նպատակ և գործիքներ

22. Արձանագրության կիրարկման կարողությունների զարգացման նախաձեռնությունները կարող են չապահովել սահմանված նպատակների իրականացումը, եթե լավ պլանավորված չլինեն: Ոչ բավարար կարողությունների հիմնապատճառները, ինչպես նաև դրանց դրսևորման ձևերը, պետք է պատշաճ ձևով ուսումնասիրվեն համապատասխան խնդիրները լուծելու համար⁴⁶:
23. Հետևաբար, կարողությունների զարգացմանն ուղղված նպատակային և արդյունավետ միջամտությունների մշակումը հարկավոր է սկսել առկա կարողությունների վերանայումից: Անհրաժեշտ է բացահայտել.
 - ՌԲԳ-ում ներգրավված հիմնական շահագրգիռ կողմերի պահանջները
 - Հիմնական թերությունները և կարողությունների զարգացմանը նպատակաուղղված աջակցության ցանկալի շեշտադրումները
 - Կողմեր կամ միավորներ, որոնց կարելի է ընդգրկել կարողությունների զարգացմանը նպատակաուղղված միջամտությունների իրականացման և վերահսկողության գործընթացներում

⁴⁶ Փիթեր Մորգան, «Կարողություններ և կարողությունների զարգացում. Մի շարք ռազմավարություններ» (1998), նյութ, որը պատրաստվել է Միջազգային զարգացման կանադական գործակալության Քաղաքական և սոցիալական քաղաքականությունների վարչության քաղաքականության բաժնի համար, Քվեբեք: Ձեռնարկված է http://www.impactalliance.org/ev_en.php?ID=4051_201&ID2=DO_TOPIC կայքէջում:

- Կարողությունների զարգացման ծրագրերում կատարված ենթադրությունները և ռիսկերը:
24. Կարողությունների գնահատումը հարկավոր է միշտ իրականացնել հիմնական շահագրգիռ կողմերի՝ բնապահպանական իրավասու մարմինների, պլանավորման իրավասու մարմինների, խորհրդատուների, ՀԿ-ների և ՌԲԳ-ում ներգրավված այլ կողմերի հետ, խորհրդակցությունների միջոցով:
 25. Կարողությունների գնահատումը կարելի է իրականացնել տարբեր մեթոդների օգնությամբ՝ հաշվի առնելով նախատեսված ժամկետներն ու տրամադրվող միջոցները և կարողությունների զարգացման ռազմավարության շրջանակները:
 26. Սեմինարների կազմակերպումը, որպես կանոն, ամենաքիչ ծախսատար և ժամանակատար տարբերակն է: Սեմինարների տևողությունը կարող է տատանվել երկու ժամից մինչև երկու կամ ավելի օր՝ կախված ներգրավված մարդկանց խմբերից:
 27. Հարցազրույցներն ու հարցումներն առավել ժամանակատար են, սակայն ավելի ընդգրկուն և մանրակրկիտ տեղեկատվություն են ապահովում, քան սովորական սեմինարը: Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի հինգ երկրներում Արձանագրության կիրարկման կարողությունների գնահատումներն իրականացվել են հարցազրույցների և հարցումների հիման վրա, ինչպես ամփոփ ներկայացված է [հավելված Բ1.1](#)-ում:

Բ1.3.2 ՌԲԳ կարողության գնահատման հիմնական հարցեր

28. Կարողությունների գնահատման միջոցով բացահայտվում են համակարգի հիմնական թույլ կողմերը, գլխավոր դերակատարները և կարողությունների զարգացմանն ուղղված ամենաարդյունավետ նախաձեռնությունները:
29. Համակարգի և խնդիրների վերլուծությունը պետք է անդրադառնա հետևյալ խնդիրներին՝
 - Պլանավորման շրջանակի վերանայում
 - ՌԲԳ-ի ենթակա պլանների և ծրագրերի սահմանում
 - Պլանների կամ ծրագրերի բնապահպանական գնահատումների գործող համակարգերի արդյունավետությունը
 - Արձանագրության դրույթների գործնական կիրառման ամենալուրջ դժվարությունները:
30. Շահագրգիռ կողմերին վերաբերող վերլուծությունում պետք է շոշափվեն հետևյալ հարցերը՝
 - ՌԲԳ բարեփոխումների հիմնական շահագրգիռ կողմերը և նրանց ցանցերը
 - ՌԲԳ կարողությունների զարգացման ծառայություններ ապահովող մարմինները և կարողությունների զարգացման անցյալ, ներկա և նախատեսվող նախաձեռնություններից ստացված միջոցները:
31. Վերոնշյալ հարցերի հիման վրա կազմված կարողությունների գնահատման շրջանակից են օգտվել ՄԱԿ ԶՕ և ՄԱԿ ԲԾ-ն՝ Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի հինգ երկրներում Արձանագրության կիրարկման կարողությունների վերլուծություն կատարելու համար: Կարողությունների գնահատումն իրականացվել է հարցազրույցների և հարցումների միջոցով, օգտագործված հարցաշարն ամփոփված է [հավելված Բ1.1](#)-ում⁴⁷:

⁴⁷ Կարելի է նաև գտնել <http://europeandcis.undp.org/environment/iep> կայքէջում:

Բ1.4 ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

32. ՌԲԳ կարողությունների գնահատման շրջանակներում սահմանված կոնկրետ ոլորտներում կարողությունները զարգացնելու համար կարողությունների զարգացման ռազմավարությունը կամ ծրագիրը պետք է սահմանի երկարաժամկետ ռազմավարություն (նպատակները և գերակայությունները), ինչպես նաև կարճաժամկետ ծրագիր (անմիջական առաջնահերթ գործողությունները): Կարողությունների զարգացման ռազմավարություններ մշակելիս քննարկման ենթակա մի շարք հարցեր ամփոփ ներկայացված են [Հավելված Բ1.2](#)-ում:
33. Կարողությունների գնահատման ռազմավարության նախապատրաստման աշխատանքները նպաստում են համապատասխան իրավասու մարմինների, գործնական մասնագետների, կարողությունների զարգացման ուսուցում կազմակերպող հաստատությունների (բուհեր, պետական կառավարման ազգային ուսումնական ինստիտուտներ և այլն) և ՌԲԳ բարեփոխումներով հետաքրքրվող այլ շահառուների (օրինակ, ՀԿ-ների) հետ խորհրդակցությունների արդյունավետությանը՝ վերջնական փաստաթուղթը կենտրոնացնելով ընդհանուր առաջնահերթությունների շուրջ և հետևելով, որ այն անհարկի ձևով նպատակաուղղված չլինի որևէ կոնկրետ շահային խմբի պահանջներին կամ ծրագրային օրակարգին:
34. Նպատակահարմար է ռազմավարության շրջանակներում ամրագրել, թե ո՞ր հաստատություններն են պատասխանատվություն կրում տարբեր առաջնահերթ գործողությունների իրականացման համար, ինչպես նաև սահմանել գործողությունների կարճաժամկետ պլանի ավարտին ռազմավարության վերանայում անցկացնելու կարգը: Նման վերանայումը կարելի է համատեղել հիմնական շահագրգիռ կողմերի կամ շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների միջև հանդիպման հետ, որի շրջանակներում հնարավոր է վերլուծել գրանցված առաջընթացը, բացահայտել քաղված դասերը, վերասահմանել նպատակները և մշակել գործողությունների ծրագիր հետագա փուլի համար:
35. Կարողությունների զարգացման ռազմավարության մշակումը հազվադեպ է ուղղընթաց և հստակ գործընթաց լինում. ռազմավարությունը կարող է մի քանի անգամ վերանայվել, ժամանակի ընթացքում բացահայտվող նոր տեղեկատվությունը լրացուցիչ փոփոխությունների ենթարկվել:
36. Քանի որ Արձանագրության դրույթների կիրառման կարողությունների զարգացումը շատ ընդհանրություններ ունի այլ ինստիտուցիոնալ կամ կառուցվածքային կարողությունների զարգացման նախաձեռնությունների հետ, ապա խորհուրդ է տրվում ծանոթանալ կարողությունների զարգացման համար մշակված այլ նյութերի ևս, ինչպիսիք են ՄԱԿ ԲԾ-ի Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների գնահատման ուսուցողական ձեռնարկը⁴⁸ և ՄԱԿ ԶԾ-ի Կարողությունների զարգացման միջոցներն ու գործիքները⁴⁹:

Բ1.5 ԵԶՐԱՓԱԿԻՉ ՆՇՈՒՄՆԵՐ

37. Արձանագրության կիրառման համար պատասխանատու մարմինները կարող են կարևոր դեր խաղալ իրազեկության մակարդակը բարձրացնելու և ՌԲԳ-ի վերաբերյալ ազգային

⁴⁸ ՄԱԿ ԲԾ, Տնտեսագիտության և առևտրի մասնաճյուղ (2002), 2րդ հրատարակություն, գետեղված է http://www.unep.ch/etu/publications/EIAMan_2edition_toc.htm կայքէջում:

⁴⁹ ՄԱԿ ԶԾ, *Կարողությունների գնահատման ուղեցույց* (2008), Կարողությունների զարգացման ուղեցույց (2008) և այլն, որոնք գետեղված են <http://www.beta.undp.org/content/undp/en/home/librarypage/capacity-building.html> կայքէջում:

օրենսդրության կիրարկումը վերահսկելու միջոցով: Որոշակի վերապահումներով կարելի
հանգել այն եզրակացությանը, որ կարողությունների զարգացման որակը տվյալ երկրում ՌԲԳ
արդյունավետ համակարգի ստեղծման իսկական շահագրգռվածության վստահելի ցուցանիշ է:

38. Կարողությունների պարբերական զարգացումը բացառվում է, եթե ՌԲԳ-ի համար
պատասխանատու հիմնական հաստատությունները չեն գիտակցում կամ ընդունում ՌԲԳ
կարողությունների զարգացման անհրաժեշտությունը: Սա քաղաքական տեսանկյունից
զգայուն թեմա կարող է լինել, քանի որ որոշ երկրներ փորձում են խուսափել թերի
կարողությունների փաստը բացեիբաց ընդունելուց: Այնուամենայնիվ, խնդրահարույց
իրավիճակի ընդունումը կարողությունների աստիճանական զարգացման գլխավոր
նախապայմանն է:
39. Կադրային և ֆինանսական միջոցների առկայությունը ՌԲԳ կարողությունների զարգացման
բնական նախապայմաններից է: Նպատակադրված նախաձեռնության դեպքում հնարավոր է
ապահովել ժամանակի և ջանքերի արդյունավետ համակարգում: Բայցևայնպես, իրական
գործողությունների իրականացման համար հարկավոր է բավարար միջոցներ հատկացնել:

Գլուխ Բ2

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՐ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՆԱԿԱՆ
ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ
ՕՐԻՆԱԿ

Բ2.1 ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Ընթացակարգի տեքստում օգտագործվում է «շրջակա միջավայրը, այդ թվում՝ առողջությունը» տերմինը: Կրկնողությունից խուսափելու նպատակով սույն ձեռնարկում նշվում է միայն շրջակա միջավայրը, սակայն պետք է համարել, որ այդ հասկացության մեջ ընդգրկված է նաև առողջությունը: Առողջապահական հարցերի շուրջ լրացուցիչ տեղեկատվության համար տե՛ս հավելված Ա.1.1:

Բ2.1.1 Գործնական վարժության նպատակը

1. Արդյունավետ ուսուցումը, սովորաբար, տեսության ծանոթությունը համատեղում է հիպոթետիկ, մտացածին կամ իրական կյանքից վերցված օրինակների շուրջ գործնական աշխատանքների հետ:
2. Սույն ձեռնարկում տեսական տեղեկատվությունը ներկայացվում է Ա1-ից Ա6 գլուխներում: Նշված գլուխներում ներկայացված հիմնական տեղեկատվությունն այստեղ ամփոփվում է գործնական վարժության շրջանակներում, որի խնդիրն է տվյալ պլանի կամ ծրագրի համար մշակել ՌԲԳ-ի օպտիմալ ձևաչափ:
3. Ներկայացված առաջադրանքները և քննարկման հարցերը ձևակերպված են որպես ընդհանուր շրջանակ: Վերապատրաստման դասընթաց վարողը պետք է այս շրջանակային հարցերը համապատասխանեցնի կարողությունների զարգացման տվյալ նախաձեռնության նպատակներին կամ դասընթացի մասնակիցների գիտելիքների մակարդակին:

Բ2.1.2 Հնարավոր արդյունքներ

4. Այս գործնական վարժությունը մասնակիցներին կօգնի ՌԲԳ գործընթացի և պլանի կամ ծրագրի մշակման գործընթացի հետ փոխադարձ կապերի վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կազմել: Այս վարժությունը կարելի է օգտագործել հետևյալ հարցերի շուրջ քննարկումների նախապատրաստման համար.
 - Պլանի կամ ծրագրի մշակման գործընթացի շրջանակներում ՌԲԳ ընթացակարգի իրականացման նպատակահարմար մոտեցման ընտրություն, որը կարող է նպաստել տվյալ պլանների կամ ծրագրերի կազմման գործընթացի տվյալ ռեժիմի համար ՌԲԳ ուղենիշների մշակման աշխատանքներին:
 - Կոնկրետ պլանի կամ ծրագրի մշակման համար ՌԲԳ-ի մանրամասն մոտեցում, որը կարող է օգնել նման ՌԲԳ-ների համար տեխնիկական առաջադրանքներ մշակելու գործում:

Բ2.1.3 Գործնական վարժության առաջադրանքները

5. Սույն գլխում առաջարկվում է նման գործնական վարժությունն իրականացնել առաջադրանքների հետևյալ հաջորդականությամբ՝
 - Առաջադրանք 1: Վերլուծել պլանի կամ ծրագրի կազմման գործընթացը
 - Առաջադրանք 2: Քննարկել, թե երբ և ինչպես որոշել տվյալ պլանի կամ ծրագրի շրջանակներում ՌԲԳ-ի անհրաժեշտությունը
 - Առաջադրանք 3: Քննարկել շրջանակների որոշման գործնական պայմանավորվածությունները
 - Առաջադրանք 4: Քննարկել, թե բնապահպանական զեկույցում ինչ տեղեկատվություն է հարկավոր ընդգրկել և դրա տրամաբանական կապերը պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի հետ

- Առաջադրանք 5: Քննարկել համապատասխան բնապահպանական և առողջապահական իրավատու մարմինների հետ խորհրդակցությունների կազմակերպման գործնական պայմանավորվածությունները
- Առաջադրանք 6: Քննարկել հանրության մասնակցության գործնական պայմանավորվածությունները
- Առաջադրանք 7: Քննարկել պլանի կամ ծրագրի մշակման գործընթացում ՌԲԳ-ի շրջանակներում հավաքված տեղեկատվությունն ընդգրկելու գործնական պայմանավորվածությունները
- Առաջադրանք 8: Քննարկել պլանի կամ ծրագրի մշակման գործընթացի շրջանակներում ՌԲԳ աշխատանքների համակարգման գործնական պայմանավորվածությունները
- Առաջադրանք 9: Քննարկել մշտադիտարկման ռեժիմի մշակման և ՌԲԳ-ն հետագա բնապահպանական գնահատումների հետ շաղկապման գործնական խնդիրները
- Առաջադրանք 10: Ներկայացնել տվյալ պլանի կամ ծրագրի շրջանակներում ՌԲԳ-ի կազմակերպման առաջարկվող մոտեցումը:

Բ2.1.4 Վարժության բարդությունը

6. Կախված լսարանի պահանջներից, պլանների կամ ծրագրերի մշակման գործընթացի տիրապետման մակարդակից և գործնական աշխատանքի համար նախատեսված ժամանակից՝ գործնական քննարկումը կարող է անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.
 - **Տվյալ պլանի կամ ծրագրի մշակման գործընթացի շրջանակներում ՌԲԳ-ի կազմակերպման ընդհանուր մոտեցումը:** Այս պարզ քննարկման համար պահանջվում է, որ լսարանը ծանոթ լինի Արձանագրության պահանջներին, ընդհանուր գիտելիքներ ունենա համապատասխան պլանի կամ ծրագրի մշակման ընթացակարգի կամ քայլերի վերաբերյալ և տեղյակ լինի պլանների և ծրագրերի մշակման գործընթացում ՌԲԳ-ի ինտեգրման այլընտրանքային տարբերակների մասին: Այս վարժությունը լիարժեք կատարելու համար սովորաբար պահանջվում է 2-4 ժամյա աշխատանք:
 - **Տվյալ պլանի կամ ծրագրի մշակման գործընթացի շրջանակներում ՌԲԳ-ի իրականացման ընթացակարգի մանրամասն նկարագրություն:** Այս առավել բարդ քննարկման համար պահանջվում է, որ լսարանը ծանոթ լինի Արձանագրության պահանջների մանրամասնություններին, մանրամասն գիտելիքներ ունենա համապատասխան պլանի կամ ծրագրի մշակման ընթացակարգի կամ քայլերի վերաբերյալ և տեղյակ լինի պլանների և ծրագրերի մշակման գործընթացում ՌԲԳ-ի ինտեգրման այլընտրանքային տարբերակների մասին: Այս վարժությունը լիարժեք կատարելու համար սովորաբար պահանջվում է 6-8 - ժամյա աշխատանք:
 - **Տվյալ պլանի կամ ծրագրի մշակման գործընթացի համապատասխան ՌԲԳ մեթոդների և գործիքների կիրառում:** Գիտելիքների բարձր մակարդակ ենթադրող այս քննարկման համար պահանջվում է, որ լսարանը տիրապետի Արձանագրության պահանջների մանրամասնություններին, մանրամասն գիտելիքներ ունենա համապատասխան պլանի կամ ծրագրի մշակման ընթացակարգի կամ քայլերի վերաբերյալ և քաջատեղյակ լինի (ա) պլանների կամ ծրագրերի ձևակերպման գործընթացում ՌԲԳ-ի ինտեգրման այլընտրանքային ձևաչափերի և (բ) բնապահպանական զեկույցի նախապատրաստման և խորհրդակցությունների ու հանրության մասնակցության կազմակերպման համար կիրառվող վերլուծական և մասնակցային գործիքների վերաբերյալ: Այս վարժությունը լիարժեք կատարելու համար սովորաբար պահանջվում է 9-15- ժամյա աշխատանք՝ կախված պլանի կամ ծրագրի մշակման գործընթացի բարդությունից:
 - **Տվյալ պլանի կամ ծրագրի ՌԲԳ-ի մանրամասն տեխնիկական առաջադրանք:** Գիտելիքների բարձր մակարդակ ենթադրող այս քննարկման համար պահանջվում է, որ լսարանը տիրապետի հետևյալ մանրամասնություններին.

- Արձանագրության պահանջների մանրամասները
- Պլանի կամ ծրագրի մշակման գործընթացի առանձնահատկությունների մանրամասները
- ՌԲԳ-ի և պլանի կամ ծրագրի մշակման գործընթացի միջև տրամաբանական կապերի մանրամասները
- Մեթոդներ, որոնք կարող են օգտագործվել՝ (ա) բնապահպանական գեկույցի պատրաստման և (բ) խորհրդակցությունների և հանրության մասնակցության կազմակերպման համար:
- Պլանի կամ ծրագրի մշակման գործընթացում ՌԲԳ-ի ինտեգրման հնարավոր աստիճաններ
- Այս գործնական վարժությունը լիարժեք կատարելու համար, որպես կանոն, պահանջվում է 15-30 Ժամյա աշխատանք՝ կախված պլանի կամ ծրագրի մշակման գործընթացի բարդությունից:

Բ2.1.5 Տեղեկատվություն, որն անհրաժեշտ է հավաքել նախքան վարժության կատարումը

7. Գործնական վարժությունը հաջողությամբ կատարելու համար անհրաժեշտ է հայթայթել տվյալ պլանի կամ ծրագրի մշակման գործընթացի կամ տվյալ պլանի կամ ծրագրի առանձնահատկությունների մասին հետևյալ տվյալները.
 - Ի՞նչ հարցերի շուրջ է կենտրոնացված տվյալ պլանի կամ ծրագրի մշակման գործընթացը: Ո՞վքեր են մշակում տվյալ պլանը կամ ծրագիրը և ովքե՞ր են հաստատելու այն:
 - Արդյո՞ք կան պլանի կամ ծրագրի մշակման գործընթացի համար սահմանված պահանջներ կամ ուղենիշներ, որոնք կարող են օգնել սահմանելու ընթացակարգի հաջորդական քայլերը և նախատեսվող արդյունքները:
 - Պլանի կամ ծրագրի մշակման գործընթացի շրջանակներում բնապահպանական հարցերին անդրադարձող առանձին բաժին կամ վերլուծություն պատրաստելու պահանջ ներկայացվո՞ւմ է, թե՛ ոչ:
 - Պլանի կամ ծրագրի մշակման գործընթացի շրջանակներում ի՞նչ ձևաչափով պետք է տեղի ունենա իրավասու մարմինների խորհրդակցությունների գործընթացը: Ովքե՞ր ր պետք է մասնակցեն և ե՞րբ:
 - Արդյո՞ք պլանի կամ ծրագրի մշակման գործընթացում հանրության մասնակցության վերաբերյալ պահանջներ ներկայացվում են, թե՛ ոչ: Եթե այո, ապա ո՞վ կարող է մասնակցել և ե՞րբ:

Բ2.2 ԿՈՆԿՐԵՏ ԴԵՊՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Առաջադրանք 1: Վերլուծել պլանի կամ ծրագրի կազմման գործընթացը

8. Այս ներածական վարժության միջոցով մասնակիցները կարող են ծանոթանալ ՌԲԳ-ի ենթակա պլանի կամ ծրագրի մշակման գործընթացների հետ: Այս տեղեկատվությունն անհրաժեշտ է տվյալ համատեքստին համապատասխան արդյունավետ ՌԲԳ առաջարկելու համար: Բնականաբար, մինչև ՌԲԳ վերացական ընթացակարգի ձևաչափի մշակումը անհրաժեշտ է պատկերացում կազմել պլանի կամ ծրագրի կազմման բուն գործընթացի գործնական իրականացման մասին և բացահայտել ՌԲԳ-ի համար պահանջվող պակասող տվյալները: Այս տեղեկատվությունը հիմք կհանդիսանա ՌԲԳ-ն տվյալ պլանի կամ ծրագրի մշակման գործընթացում ինտեգրելու ձևաչափի հետագա քննարկման համար:
9. Պլանի կամ ծրագրի մշակման գործընթացի վերլուծության սկզբնակետը պետք է լինի տվյալ պլանի կամ ծրագրի բնույթի մասին հիմնական տեղեկատվության հավաքումը: Մասնակիցները պետք է տեղեկատվություն ստանան պլանի կամ ծրագրի սկզբնաղբյուրների, դրա մշակման համար պատասխանատու մարմնի և որոշում կայացնողների դերի մասին: Կարող է նաև նպատակահարմար լինել պարզել, թե տվյալ պլանը կամ ծրագիրն ինչպես է իրականացվելու (օրինակ, արդյո՞ք դա անմիջականորեն ենթադրում է նախագծերի իրականացում, թե դրան պետք է հաջորդի մեկ այլ, առավել մանրամասն պլան կամ ծրագիր և այլն):
10. Ընդհանուր համատեքստը պարզաբանելուց հետո անհրաժեշտ է անդրադառնալ պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի հետևյալ մանրակրկիտ հարցերին.
 - Որո՞նք են պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի կոնկրետ առաջադրանքները:
 - Արդյո՞ք պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում ընդգրկված են բնապահպանական վերլուծություններ, որոնք կարող են առնչվել բնապահպանական զեկույցի պատրաստմանը:
 - Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի որ փուլերում են իրականացվել այս վերլուծությունները:
 - Արդյո՞ք պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում արդեն նախատեսված է համապատասխան բնապահպանական և առողջապահական իրավասու մարմինների հետ խորհրդակցություններ, թե ոչ: Ո՞ր իրավասու մարմիններն են ընդգրկված այս խորհրդակցություններում և պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի ո՞ր փուլում են նախատեսված այս խորհրդակցությունները:
 - Արդյո՞ք պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում արտացոլված են հանրությանը տեղեկատվություն տրամադրելու և հանրության մասնակցությունն ապահովելու պահանջները: Հանրության ո՞ր անդամներին կամ ներկայացուցիչներին է տրամադրվում այդ տեղեկատվությունը և մասնակցության հնարավորությունը և պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի ո՞ր փուլում են նախատեսվում այս հնարավորությունները:
11. Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի առավել մանրակրկիտ վերլուծությունը հեշտացնելու համար խորհուրդ է տրվում օգտվել ստորև ներկայացված աղյուսակ Բ2.1-ից:
12. Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի առավել մանրամասն վերլուծության համար որպես ուղենիշներ կարող են ծառայել հետևյալ նկատառումները.
 - Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի առաջադրանքների շարքում կարող են ընդգրկվել տեղեկատվություն հավաքելու, վերլուծելու, այլ շահագրգիռ կողմերի հետ կապ պահպանելու, պլանի նախագծի կազմման փուլեր առանձնացնելու և այլ գործողություններ: Այս գործողությունները կարող են սահմանված լինել համապատասխան պլանի կամ ծրագրի նախապատրաստման մասին համապատասխան օրենսդրության կամ ուղենիշների շրջանակներում կամ արտածված լինեն նախկինում իրականացված համանման պլաններից կամ ծրագրերից:

- Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի առաջադրանքներն ամփոփ ներկայացնելուց հետո մասնակիցները պետք է հաջորդ քայլում անդրադառնան պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում ընդգրկվելիք բնապահպանական վերլուծությունների սահմանմանը: Մասնակիցները պետք է հաշվի առնեն, որ պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում շատ հաճախ որոշակի տարրական բնապահպանական վերլուծություններ են կիրառվում: Նպատակահարմար է պարզել այս վերլուծությունների շրջանակներն ու առանցքային հարցերը, որպեսզի բնապահպանական զեկույցը նախապատրաստելիս դրանց միջև փոխադարձ կապերն առավել արդյունավետ ձևով ընդգծվեն:
- Քանի որ իրավասու մարմինների կողմից խորհրդակցությունների կազմակերպումը, որպես կանոն, ցանկացած պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի անկապտելի մասն է, խորհուրդ է տրվում պարզել, թե պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի շրջանակներում բնապահպանական և առողջապահական մարմինների հետ խորհրդակցությունների կազմակերպման պայմանավորվածություններ կա՞ն, թե ոչ, և եթե այո, ապա ի՞նչ ժամկետներ են սահմանված:
- Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի վերլուծությունը կարելի է եզրափակել տեղեկատվության մատչելիության և պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում հանրության մասնակցության ապահովման պայմանավորվածությունների գնահատմամբ:

Աղյուսակ Բ2.1 Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի վերլուծության շրջանակ

Պլանի կամ ծրագրի մշակման առաջադրանքներ	Առկա բնապահպանական վերլուծություններ	Իրավասու մարմինների հետ խորհրդակցություններ	Հանրությանը տեղեկատվության տրամադրում և հանրության շահագրգիռ ներկայացուցիչների հետ խորհրդակցություններ

Առաջադրանք 2: Քննարկել, թե երբ և ինչպես որոշել տվյալ պլանի կամ ծրագրի շրջանակներում ՌԲԳ-ի անհրաժեշտությունը

13. Այս վարժությունը մասնակիցներին խրախուսում է քննարկել տվյալ պլանի կամ ծրագրի համար ՌԲԳ-ի անհրաժեշտությունը որոշելու ժամկետներն ու կարգը: Մասնակիցները պետք է հաշվի առնեն, որ այս որոշումը կայացնելու ժամկետը կարող է մեծ ազդեցություն ունենալ առաջարկվող ՌԲԳ գործընթացի արդյունավետության համար: Այս որոշման ուշացումը կարող է հանգեցնել ձգձգումների և անարդյունավետ ՌԲԳ-ի պատճառ դառնալ:
14. Քննարկումը նախնառաջ պետք է անդրադառնա հետևյալ հարցերին՝
 - Ի՞նչ տեղեկատվություն է պահանջվում տվյալ պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի շրջանակներում ՌԲԳ իրականացնելու անհրաժեշտությունը որոշելու համար:
 - Արդյո՞ք տվյալ պլանի կամ ծրագրի կազմման գործընթացը պետք է ինքնաբերաբար ենթակա լինի ՌԲԳ-ի, թե պահանջվում է կոնկրետ դեպքերի ուսումնասիրություն իրականացնել:
 - Ո՞ր փուլում է հնարավոր առավել արդյունավետ ձևով կայացնել ՌԲԳ-ի անհրաժեշտության մասին որոշումը:
15. Եթե մասնակիցները գան եզրահանգման, թե կոնկրետ ինչ դեպքերի ուսումնասիրություն է պահանջվում իրականացնել, ապա նրանք պետք է քննարկեն հետևյալ հարցերը՝
 - «Կարևորության ստուգման» ի՞նչ մոտեցում պետք է կիրառել:
 - Ինչպե՞ս պետք է կազմակերպվեն համապատասխան իրավասու մարմինների (հնարավոր է նաև հանրության շահագրգիռ ներկայացուցիչների) հետ խորհրդակցությունները:

- Ինչպե՞ս պետք է կայացված որոշման մասին տեղեկատվությունը տրամադրել հանրությանը:

16. Այս վարժությունը հաջողությամբ կատարելու համար մասնակիցները պետք է տիրապետեն Արձանագրության համաձայն ՌԲԳ-ի անհրաժեշտությունը որոշելու մասին այս Ձեռնարկում ներկայացված տեղեկատվությանը, այդ թվում՝ համապատասխան թեստերի նկարագրության մանրամասներին (տե՛ս [գլուխ Ա.3](#)):
17. Այս վարժությունը լիարժեք ձևով կատարելուց հետո մասնակիցները քաջատեղյակ կլինեն, որ տվյալ պլանի կամ ծրագրի շրջանակներում ՌԲԳ-ի իրականացման անհրաժեշտությունը պետք է պլանի կամ ծրագրի մշակման գործընթացի հնարավորինս վաղ փուլում կայացվի: Նրանք կտիրապետեն ՌԲԳ-ի անհրաժեշտությունը հնարավորինս վաղ փուլում որոշելու համար պահանջվող գործնական պայմանավորվածությունների մասին տեղեկատվությանը:

Առաջադրանք 3: Քննարկել շրջանակների որոշման գործնական պայմանավորվածությունները

18. Շրջանակների որոշումը ՌԲԳ-ի կարևորագույն բաղադրիչներից է: Այս վարժության օգնությամբ մասնակիցները կքննարկեն, թե պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում երբ և ինչպես է իրականացվում ՌԲԳ-ի շրջանակների որոշումը:
19. Մասնակիցները պետք է հաշվի առնեն, որ Արձանագրությունում շրջանակների որոշումն ամրագրված չէ որպես ընթացակարգային կոշտ փուլ (շրջանակագրման որոշման պահանջ ևս չի ներկայացվում): Նրանք պետք է նկատի ունենան, որ շրջանակների որոշումը կարող է իրականացվել որպես մեկ ընթացակարգային քայլ կամ որպես կրկնողական գործընթաց, որը կարող է սկսվել վաղ փուլերում տրամադրվող խորհրդատվությունից և շարունակվել մինչև բնապահպանական զեկույցի նախապատրաստման տարբեր փուլեր:
20. Քննարկման ենթակա կետերից են՝
 - Շրջանակների որոշման ընթացքում ի՞նչ տեղեկատվություն պետք է արտածել բնապահպանական զեկույցի համապատասխան շրջանակները որոշելու համար:
 - Ո՞րն է կազմում անհրաժեշտ տեղեկատվության նվազագույն շրջանակը, որի հիման վրա հնարավոր է արդյունավետ կերպով որոշել ՌԲԳ-ի շրջանակները և պլանի կամ ծրագրի մշակման գործընթացում երբ է հնարավոր ամբողջացնել այս տեղեկատվությունը:
 - Ի՞նչ գործնական պայմանավորվածություններ է հարկավոր ձեռք բերել համապատասխան իրավասու մարմինների (հնարավոր է նաև հանրության շահագրգիռ ներկայացուցիչների) հետ խորհրդակցություններ կազմակերպելու համար:
 - Արդյո՞ք նպատակահարմար է շրջանակների որոշումը կազմակերպել որպես մեկ ընթացակարգային քայլ, թե որպես կրկնողական գործընթաց, որը սկսվում է վաղ փուլերում խորհրդատվության տրամադրումից և որը պլանի կամ ծրագրի կազմման մշակման փուլերին զուգընթաց առավել մանրամասն ձեռակերպում է ստանում:
21. Այս վարժությունը լիարժեք կատարելու համար պահանջվում է, որ մասնակիցները տիրապետեն սույն Ձեռնարկում ներկայացված շրջանակների որոշմանը և ՌԲԳ-ի շրջանակներում այլընտրանքային տարբերակների քննարկմանը վերաբերող տեղեկատվությանը (տե՛ս [հատված Ա.4.2](#)):
22. Այս վարժությունը կատարելուց հետո մասնակիցները կգնահատեն հնարավորինս վաղ փուլում շրջանակների որոշման նախաձեռնման կարևորությունը և կկարողանան այն շաղկապել պլանի կամ ծրագրի մշակման գործընթացին:

Առաջադրանք 4: Քննարկել, թե բնապահպանական զեկույցում ինչ տեղեկատվություն է հարկավոր ընդգրկել և դրա տրամաբանական կապերը պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի հետ

23. Այս վարժությունը մասնակիցներին օգնում է քննարկել բնապահպանական զեկույցում ընդգրկվելիք տեղեկատվության շրջանակները և այդ տեղեկատվության տրամաբանական կապերը պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի հետ:
24. Մասնակիցները պետք է նախևառաջ համառոտ ներկայացնեն Արձանագրության պահանջների հիման վրա բնապահպանական զեկույցում ամփոփվող տեղեկատվության տեսակները: Նրանք կարող են իրենց քննարկման արդյունքները համեմատել պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի քայլերի ամփոփագրի և համապատասխան պլանի կամ ծրագրի մշակման ընթացքում կատարվող բնապահպանական վերլուծությունների հետ, ինչպես տրված է 1-ին առաջադրանքում: Նման համեմատությունը օգտակար է բնապահպանական զեկույցի տեղեկատվությունը պլանի կամ ծրագրի մշակման գործընթացին շաղկապելու հնարավորությունների մասին առավել հստակ պատկերացում կազմելու համար:
25. Քննարկման ենթակա հարցերից են՝
- Ի՞նչ տեղեկատվություն պետք է պարունակի բնապահպանական զեկույցը տվյալ պլանի կամ ծրագրի տեսակի համար (հաշվի առնելով տվյալ պլանին կամ ծրագրին վերաբերող ռազմավարական հարցերը և մանրակրկիտ գնահատման համապատասխան մակարդակ բավարարելու պահանջը):
 - Ինչպե՞ս է բնապահպանական զեկույցում ամփոփված տեղեկատվությունը տարբերվում պլանի կամ ծրագրի մշակման ընթացքում իրականացված այլ վերլուծություններից և արդյո՞ք կան ընդհանրություններ կամ սիներգիայի հնարավորություններ:
 - Ի՞նչ տեղեկատվություն պետք է ստանա ՌԲԳ թիմը պլանի կամ ծրագրի մշակման համար պատասխանատու թիմից և ինչ ներդրում կարող է ունենալ ՌԲԳ թիմը պլանի կամ ծրագրի մշակման աշխատանքներում:
 - Լրացուցիչ, ոչ պարտադիր հարց. ի՞նչ քանակական կամ որակական տվյալներ պետք է ներկայացվեն և ի՞նչ վերլուծական գործիքներից կարելի է օգտվել այդ տվյալները ստանալու համար (տե՛ս [գլուխ Ա5](#)):

26. Այս վարժությունը լիարժեք կատարելու համար պահանջվում է, որ մասնակիցները տիրապետեն բնապահպանական զեկույցի ([հատված Ա4.2](#)), ՌԲԳ-ի և պլանի կամ ծրագրի մշակման գործընթացի միջև տրամաբանական կապերի ([գլուխ Ա2](#)), ինչպես նաև ՌԲԳ-ի հիմնական վերլուծական գործիքների ([գլուխ Ա5](#)) վերաբերյալ այս Ձեռնարկում ներկայացված տեղեկատվությանը:

27. Այս վարժությունը կատարելուց հետո մասնակիցները քաջատեղյակ կլինեն, որ բնապահպանական զեկույցի պատրաստումը կարող է գործնականում շաղկապված լինել համապատասխան պլանի կամ ծրագրի մշակման գործընթացին կամ ընդգրկվել այդ գործընթացում (թեև զեկույցը պետք է պլանի կամ ծրագրի նախագծից հստակ տարբերակելի նյութ լինի):

Առաջադրանք 5: Քննարկել համապատասխան բնապահպանական և առողջապահական իրավասու մարմինների հետ խորհրդակցությունների կազմակերպման գործնական պայմանավորվածությունները

28. Այս վարժությունը մասնակիցներին խրախուսում է քննարկել ՌԲԳ-ի ընթացքում համապատասխան բնապահպանական և առողջապահական իրավասու մարմինների հետ խորհրդակցությունների կազմակերպման մասին գործնական պայմանավորվածությունները:

29. Մասնակիցները պետք է ամփոփ ներկայացնեն այն խորհրդակցությունները, որոնք ՌԲԳ Արձանագրության դրույթների հիման վրա պարտադիր են: Այնուհետև նրանք կարող են

համեմատել իրենց առաջարկները համապատասխան պլանի կամ ծրագրի նախապատրաստման ընթացքում համապատասխան իրավասու մարմինների հետ իրականացվող խորհրդակցությունների հետ (ինչպես տրված է 1-ին առաջադրանքում): Այս համեմատության հիման վրա նրանք կարող են քննարկել, թե բնապահպանական և առողջապահական իրավասու մարմինների հետ ՌԲԳ-ին առնչվող խորհրդակցությունները պետք է կազմակերպվեն առանձին, թե կարող են համատեղվել պլանի կամ ծրագրի մշակման ընթացքում համապատասխան մարմինների հետ կազմակերպվող խորհրդակցությունների հետ:

30. Քննարկման ենթակա հարցերից են՝

- ՌԲԳ շրջանակներում ո՞ր իրավասու մարմինների հետ պետք է խորհրդակցել:
- Ե՞րբ և ինչպե՞ս պետք է կազմակերպվեն այս խորհրդակցությունները գործընթացում արդյունավետ ներդրում ունենալու համար:
- Ինչպե՞ս են առաջարկվող խորհրդակցությունները տարբերվում իրավասու մարմինների հետ խորհրդակցությունների կազմակերպման գործող ձևաչափերից:
- Արդյո՞ք գերադասելի է ՌԲԳ-ի և պլանի կամ ծրագրի մշակման վերաբերյալ խորհրդակցությունները և կարծիքների ընդունման գործընթացը կազմակերպել միասին, թե՛ առանձին:

31. Այս վարժությունը լիարժեք կատարելու համար պահանջվում է, որ մասնակիցները տիրապետեն իրավասու մարմինների հետ խորհրդակցությունների (հատված Ա4.4), ՌԲԳ-ի և պլանի կամ ծրագրի մշակման գործընթացի միջև տրամաբանական կապերի (գլուխ Ա2), ինչպես նաև ՌԲԳ-ի հիմնական խորհրդակցային գործիքների (գլուխ Ա5) վերաբերյալ սույն Ձեռնարկում զետեղված տեղեկատվությանը:

32. Այս վարժությունը կատարելուց հետո մասնակիցները քաջատեղյակ կլինեն, որ ՌԲԳ շրջանակներում համապատասխան իրավասու մարմինների հետ խորհրդակցությունները կարող են գործնականում շաղկապված լինել համապատասխան պլանի կամ ծրագրի մշակման ընթացքում իրավասու մարմինների հետ խորհրդակցությունների հետ կամ ընդգրկվել դրանցում:

Առաջադրանք 6: Քննարկել հանրության մասնակցության գործնական պայմանավորվածությունները

33. Այս վարժությունը մասնակիցներին խրախուսում է քննարկել հանրության հետ խորհրդակցությունների կազմակերպման գործնական պայմանավորվածությունները:

34. Մասնակիցները պետք է համառոտ ներկայացնեն Արձանագրության դրույթների հիման վրա հանրության մասնակցության կազմակերպման համար սահմանված պայմանները: Այնուհետև նրանք կարող են իրենց առաջարկները համեմատել համապատասխան պլանի կամ ծրագրի մշակման շրջանակներում տեղեկատվության մատչելիության և հանրության մասնակցության առկա պայմանավորվածությունների հետ (ինչպես տրված է 1-ին առաջադրանքում): Այս համեմատության հիման վրա նրանք կարող են քննարկել, թե արդյոք ՌԲԳ-ի գործընթացում հանրության մասնակցությունը նպատակահարմար է կազմակերպել որպես առանձին գործընթաց, թե գերադասելի կլինի այն համատեղել պլանի կամ ծրագրի մշակման գործընթացի շրջանակներում հանրության մասնակցության ռեժիմի հետ:

35. Քննարկման շրջանակներում հանձնարարվում է անդրադառնալ հետևյալ հարցերին՝

- ՌԲԳ-ի ընթացքում ի՞նչ տեղեկատվություն պետք է տրամադրվի հանրությանը:
- Արդո՞ք անհրաժեշտ է որոշել տվյալ ՌԲԳ-ով մտահոգված անձանց շրջանակը, թե՛ ոչ (և եթե այո, ապա ինչպե՞ս):
- Արդյո՞ք նպատակահարմար է խորհրդակցությունները մեկ փուլով անցկացնել, թե՞ նախընտրելի է դրանք կազմակերպել որպես կրկնողական գործընթաց:

- Ինչպե՞ս են ՌԲԳ-ի շրջանակներում կազմակերպվող խորհրդակցությունները տարբերվում հանրության հետ առկա խորհրդակցություններից և արդյոք նպատակահարմար է ՌԲԳ-ի և պլանի կամ ծրագրի մշակման գործընթացի համար առանձին խորհրդակցություններ կազմակերպել, թե՞ նախընտրելի է կազմակերպել տեսակետների ներկայացման մեկ ընդհանուր գործընթաց:
- Լրացուցիչ հարց. ի՞նչ խորհրդակցային գործիքներ կարող են կիրառվել հանրության մասնակցությունը խթանելու համար (եթե ժամանակը ներում է, ապա հանձնարարվում է առանձնացնել համապատասխան խորհրդակցային գործիքները, որոնք կարող են կիրառվել տվյալ ՌԲԳ-ի շրջանակներում (տե՛ս գլուխ Ա5)):

36. Այս վարժությունը լիարժեք կատարելու համար պահանջվում է, որ մասնակիցները տիրապետեն հանրության մասնակցության (հատված Ա4.3), ՌԲԳ-ի և պլանի կամ ծրագրի մշակման գործընթացի միջև տրամաբանական կապերի (գլուխ Ա2), ինչպես նաև ՌԲԳ-ի հիմնական խորհրդակցային գործիքների (գլուխ Ա5) վերաբերյալ սույն Ձեռնարկում ամփոփված տեղեկատվությանը:

37. Այս վարժությունը կատարելուց հետո մասնակիցները քաջատեղյակ կլինեն, թե ՌԲԳ-ի շրջանակներում հանրության մասնակցության պայմանավորվածությունները կարող են գործնականում շաղկապված լինել համապատասխան պլանի կամ ծրագրի մշակման ընթացքում հանրության մասնակցության ռեժիմին կամ ընդգրկվել դրանում:

Առաջադրանք 7: Քննարկել պլանի կամ ծրագրի մշակման գործընթացում ՌԲԳ-ի շրջանակներում հավաքված տեղեկատվությունն ընդգրկելու գործնական պայմանավորվածությունները

38. Բնապահպանական զեկույցի և խորհրդակցությունների արդյունքների քննարկման վերաբերյալ վարժության շրջանակներում մասնակիցները պետք է անդրադառնան այն պայմանավորվածություններին, որոնց շնորհիվ պլանի կամ ծրագրի մշակման համար պատասխանատու անձինք, բնապահպանական զեկույց պատրաստողները կամ համապատասխան պլանի կամ ծրագրի վերաբերյալ որոշում կայացնող մարմինները կարող են հետևել, որ ՌԲԳ-ի արդյունքում ստացված տեղեկատվությունը հաշվի առնվի պլանի կամ ծրագրի մշակման գործընթացում մինչև դրա նախագծի հաստատումը:

39. Քննարկման ենթակա հիմնական հարցերն են՝

- Ինչպե՞ս հետևել, որ ՌԲԳ-ի արդյունքները (բնապահպանական զեկույցը և դրանում սահմանված բացասական հետևանքների կանխմանը, նվազեցմանը կամ մեղմացմանը նպատակաուղղված միջոցառումները, համապատասխան իրավասու մարմինների հետ խորհրդակցությունների և հանրության մասնակցության արդյունքները), ինչպես հարկն է, հաշվի առնվեն պլանի կամ ծրագրի ընդունման ժամանակ, եթե՝
- ՌԲԳ պլանի կամ ծրագրի մշակման գործընթացում մասնակի չափով է ինտեգրված (այսինքն՝ այն կազմակերպվել է պլանի կամ ծրագրի մշակման գործընթացին զուգահեռ և դրա արդյունքները պլանի կամ ծրագրի մշակման գործընթացում ընդգրկվել են վերջինիս հիմնական փուլերում): Ի՞նչ քայլերի է անհրաժեշտ դիմել, եթե ՌԲԳ փորձագետները և պլանի կամ ծրագրի համար պատասխանատու մասնագետները որոշ հարցերի շուրջ չեն կարողանում համաձայնության գալ:
- ՌԲԳ լիարժեք ընդգրկված է պլանի կամ ծրագրի մշակման գործընթացում: Կրկին անգամ ի՞նչ քայլերի է անհրաժեշտ դիմել, եթե ՌԲԳ փորձագետները և պլանի կամ ծրագրի համար պատասխանատու մասնագետները որոշ հարցերի շուրջ չեն կարողանում համաձայնության գալ:
- ՌԲԳ իրականացվում է պլանի կամ ծրագրի մշակման գործընթացից տարանջատ կամ նախաձեռնվում է միայն պլանի կամ ծրագրի նախագծի մշակումից հետո: Ի՞նչ քայլերի է անհրաժեշտ դիմել, եթե ՌԲԳ-ի արդյունքները պահանջում են պլանում կամ ծրագրում

Էական փոփոխությունների կատարում, երբ պլանի կամ ծրագրի նախագիծն արդեն կազմվել է:

Առաջադրանք 8: Քննարկել պլանի կամ ծրագրի մշակման գործընթացի շրջանակներում ՌԲԳ աշխատանքների համակարգման գործնական պայմանավորվածությունները

40. Այս վարժությունը մասնակիցներին խրախուսում է քննարկել Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացի շրջանակներում ՌԲԳ իրականացնելու համար պահանջվող գործնական աշխատանքները:
41. Նախորդող վարժությունների շրջանակներում մասնակիցները քննարկում են ՌԲԳ շրջանակների որոշման (առաջադրանք 3), բնապահպանական զեկույցի համար պահանջվող տեղեկատվության (առաջադրանք 4), իրավասու մարմինների հետ ՌԲԳ-ի վերաբերյալ խորհրդակցությունների կազմակերպման (առաջադրանք 5), ՌԲԳ գործընթացում հանրության մասնակցության կազմակերպման (առաջադրանք 6) և ՌԲԳ-ի արդյունքում ստացված տեղեկատվությունը պլանի կամ ծրագրի մշակման գործընթացում ընդգրկելու (առաջադրանք 7) ձևաչափերի մանրամասները: Այս քննարկումների եզրակացությունների հիման վրա մասնակիցները հստակ պատկերացում կկազմեն առաջարկվող ՌԲԳ գործընթացը վարող փորձագետների աշխատանքի կոնկրետ պայմանականությունների մասին:
42. Քննարկման ենթակա հարցերից են՝
- Որո՞նք են հիմնական առավելություններն ու թերի կողմերը, եթե ՌԲԳ կազմակերպվում է պլանի կամ ծրագրի մշակման գործընթացից տարանջատ կամ եթե այն հետաձգվում և իրականացվում է պլանի կամ ծրագրի նախագծի մշակումից հետո:
 - Որո՞նք են պլանի կամ ծրագրի մշակման գործընթացում ՌԲԳ-ի մասնակի ինտեգրման հիմնական առավելություններն ու թերի կողմերը:
 - Որո՞նք են պլանի կամ ծրագրի մշակման գործընթացում ՌԲԳ-ի լիարժեք ինտեգրման հիմնական առավելություններն ու թերի կողմերը:
43. Այս վարժությունը լիարժեք կատարելու համար պահանջվում է, որ մասնակիցները տիրապետեն ՌԲԳ ընթացակարգի տարրերի ([գլուխ U2](#)), որոշումների կայացման ([հատված U4.6](#)), ՌԲԳ-ի և պլանի կամ ծրագրի մշակման գործընթացի միջև տրամաբանական կապերի ([գլուխ U2](#)) վերաբերյալ սույն Ձեռնարկում ներկայացված տեղեկատվությանը:
44. Այս վարժությունը կատարելուց հետո մասնակիցները հստակ պատերազում կունենան պլանի կամ ծրագրի մշակման գործընթացի շրջանակներում ՌԲԳ-ի նախաձեռնման հիմնական առավելությունների և թերի կողմերի մասին:

Առաջադրանք 9: Քննարկել մշտադիտարկման ռեժիմի մշակման և ՌԲԳ հետագա բնապահպանական գնահատումների հետ շաղկապման գործնական խնդիրները

45. Այս վարժությունը մասնակիցներին խրախուսում է քննարկել, թե ինչ մասնակցություն է ակնկալվում ՌԲԳ փորձագետներից պլանի կամ ծրագրի մշտադիտարկման ձևաչափը մշակելու և ՌԲԳ հետագա բնապահպանական գնահատումների հետ շաղկապելու գործում:
46. Քննարկման ենթակա հարցերից են՝
- Որո՞նք են ՌԲԳ-ից հետո իրականացվող մշտադիտարկման ռեժիմի հիմնական տարրերը:
 - Ի՞նչ փոխադարձ կապեր պետք է ունենա ՌԲԳ-ից հետո իրականացվող մշտադիտարկումը պլանի կամ ծրագրի մշտադիտարկման ռեժիմի հետ:
 - Ինչպե՞ս պետք է ՌԲԳ շաղկապվի հետագա բնապահպանական գնահատումների հետ (այսինքն՝ ՇՄԱԳ այն կոնկրետ նախագծերի համար, որոնք բխում են պլանի կամ ծրագրի սահմանած շրջանակից կամ հետագա պլանների կամ ծրագրերի ՌԲԳ-ներ):

47. Այս վարժությունը հաջողությամբ կատարելու համար մասնակիցները պետք է տիրապետեն մշտադիտարկման վերաբերյալ սույն Ձեռնարկում ներկայացված տեղեկատվությանը ([հատված Ա4.7](#)):
48. Այս վարժությունը կատարելուց հետո մասնակիցները հստակ պատկերացում կունենան մշտադիտարկման իրականացման հիմնական խնդիրների և ՌԲԳ-ի ու հետագա ՇՄԱԳ-ների կամ ՌԲԳ-ների միջև գործնական կապերի մասին:

Առաջադրանք 10: Ներկայացնել տվյալ պլանի կամ ծրագրի շրջանակներում ՌԲԳ-ի կազմակերպման առաջարկվող մոտեցումը

49. Այս եզրափակիչ վարժությունը մասնակիցներին օգնում է նախատեսվող ՌԲԳ մոտեցումը փաստարկված ձևով ներկայացնելու գործում: Այն կարող է նաև օգտակար լինել տվյալ ՌԲԳ գործընթացի համար կոնկրետ տեխնիկական առաջադրանք մշակելու համար:
50. Մասնակիցները պետք է ամփոփ ներկայացնեն առաջարկված մոտեցման հիմնական ուժեղ և թույլ կողմերը և հստակ ներկայացնեն դրա կիրառման վերաբերյալ կատարված ենթադրությունները կամ նախատեսված ռիսկերը: Եթե ժամանակը ներում է, մասնակիցները նաև պետք է հաշվարկեն ՌԲԳ ողջ գործընթացն ավարտելու համար պահանջվող աշխատանքային օրերի մոտավոր թիվը, բացահայտեն ՌԲԳ փորձագետներից պահանջվող հմտությունների շրջանակը և որոշեն, թե ինչ լրացուցիչ հարցեր պետք է արծարծվեն տվյալ ՌԲԳ-ի ներկայացման ընթացքում:
51. Այսպիսով, մասնակիցներին կարելի է հանձնարարել առաջարկվող ՌԲԳ մոտեցումն ամփոփ ներկայացնել՝ անդրադառնալով հետևյալին.
- ՌԲԳ շրջանակներում իրականացված հիմնական առաջադրանքները և դրանց փոխադարձ կապերը պլանի կամ ծրագրի մշակման գործընթացի առաջադրանքների հետ
 - Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում ՌԲԳ փորձագետների դերը (առաջադրանքներն ու իրավասությունները)
 - Առաջարկվող պլանի կամ ծրագրի մոտեցման հիմնական ուժեղ և թույլ կողմերը և դրա արդյունավետ կիրառումը պայմանավորող ենթադրությունները (ռիսկերի իրատեսական գնահատման դեպքում)
 - ՌԲԳ ավարտելու համար պահանջվող աշխատանքային օրերի նախատեսված քանակ
 - ՌԲԳ փորձագետներից պահանջվող հմտությունները և այլն:
52. Այս վարժությունը կատարելուց հետո մասնակիցները պետք է տիրապետեն իրավասու մարմնին, ՌԲԳ-ի իրականացման հարցերով հետաքրքրվող շահագրգիռ կողմերին կամ խորհրդատուներին առաջարկվող ՌԲԳ մոտեցումը ներկայացնելու հմտություններին:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված Ա1.1

ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

1 ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Այս հավելվածում ներկայացվում է Արձանագրության պահանջների համաձայն ՌԲԳ շրջանակներում մարդու առողջության հարցերի քննարկման վերաբերյալ ուղղորդում: Հատված 2-ում քննարկվում է առողջության կարևորությունը և Արձանագրության առողջությանն առնչվող դրույթները: Հատված 3-ում անդրադարձ է կատարվում հնարավոր գործնական պայմանավորվածություններին:

Սույն հավելվածի նպատակն է՝ օգտակար լինել թե՛ ՌԲԳ մասնագետներին, ովքեր ցանկանում են մարդու առողջության վրա պլանների և ծրագրերի հնարավոր ազդեցությունների մասին առավել հստակ պատկերացում կազմել, և թե՛ բնապահպանության և առողջապահության իրավասու մարմիններին, որոնք պարտավոր են տեղեկատվություն տրամադրել կամ կարծիք արտահայտել (օրինակ, որպես կանոնադրությամբ սահմանված խորհրդակցություններին մասնակցող կողմ), կամ որոնք ցանկանում են, որպեսզի առողջական խնդիրները լիարժեք քննարկվեն: Այնուամենայնիվ, ինչպես Ձեռնարկի դեպքում, այս հավելվածը պաշտոնական իրավական փաստաթուղթ կամ այլ մասնագիտական խորհուրդների աղբյուր չէ, կամ չի կարող ծառայել որպես Արձանագրության մեկնաբանական ուղեցույց:

Կողմերը կարող օգտագործել սույն հավելվածում ամփոփված գաղափարները՝ ազգային համատեքստում առողջական հարցերի քննարկման ձևաչափեր մշակելու, փորձնական ուսումնասիրություններ նախաձեռնելու, Արձանագրության պահանջներին համապատասխանող ընթացակարգեր մշակելու և իրենց ինստիտուցիոնալ պահանջներն ու պայմանները բավարարելու համար:

2 ԻՆՉՈՒՒ Է ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԵՎՈՐ

Ինչպես նշվում է «Բնապահպանության և առողջապահության գործողությունների 2004–2010թթ պլանում».⁵⁰

Լինել առողջ՝ սա բոլորի ցանկությունն է. մարդիկ ուզում են, որ իրենք, իրենց երեխաները լինեն առողջ և զիտակցում են հասարակության համար առողջության ապահոված տնտեսական և սոցիալական օգուտների կարևորությունը: Առողջությունը կարևոր դեր է խաղում երկարաժամկետ տնտեսական աճի և կայուն զարգացման ապահովման գործում. փաստերը վկայում են, ոչ թե առողջության ծախսատարության, այլ վատառողջության ծախսատարության մասին (հաշվի առնելով առողջապահական ծառայությունները, դեղորայքը, աշխատանքից հիվանդության պատճառով բացակայությունները, ցածր աշխատունակությունը, հաշմանդամությունը և նախատեսվածից շուտ թոշակի անցնելը):

Հաշվի առնելով շրջակա միջավայրի վիճակի և առողջական վիճակի միջև հստակ կապերը՝ նախաձեռնվել է «Շրջակա միջավայր և առողջություն» միջկառավարական գործընթացը: Շրջակա միջավայրի և առողջության պահպանման մասին Լոնդոնի 1999թ. հռչակագիրը մեծ խթան է հանդիսացել ՌԲԳ Արձանագրության մշակման համար, իսկ դրան հաջորդող Բուդապեշտի 2004թ. հռչակագիրն ամրագրեց Արձանագրության դրույթներին համաձայն ռազմավարական

⁵⁰ Եվրոպական համայնքների հանձնաժողով, COM(2004) 0416 վերջնական տարբերակ: Ձեռնդրված է <http://eurlex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=CELEX:52004DC0416:EN:HTML> կայքէջում:

առաջարկների գնահատման շրջանակներում առողջական հարցերի ընդգրկման պարտավորությունը⁵¹:

Արձանագրությունը պահանջում է, որ առողջության նկատառումները քննարկվեն որպես պլանների և ծրագրերի ՌԲԳ-ների անքակտելի մաս:

3 ՀՆԱՐԱՎՈՐ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

Այս հատվածում ուսումնասիրվում են մեկնաբանման և մեթոդաբանության դժվարություններ, ինչպես նաև ՌԲԳ-ի շրջանակներում առողջական հարցերի քննարկման գործնական մոտեցումներ, կենտրոնանալով հետևյալի շուրջ՝

- Առողջության վրա էական ազդեցությունների որոշում (ենթահատված 3.1):
- Բնապահպանության և առողջապահության իրավասու մարմինների հետ խորհրդակցում (ենթահատված 3.2):
- Առողջության վրա նախատեսված ազդեցությունների գնահատում, այդ թվում՝ առողջական հետևանքների թե՛ քանակական և թե՛ որակական գնահատումների իրականացում (ենթահատված 3.3):
- Շրջանակների որոշում և բնապահպանական զեկույցի պատրաստում (ենթահատված 3.4):

3.1 Առողջության վրա նշանակալի ազդեցությունների որոշում

Արձանագրությունը առողջության սահմանում չի տալիս, փոխարենը պահանջում է, որ ՌԲԳ-ի շրջանակներում ուսումնասիրման ենթակա յուրաքանչյուր պլանի կամ ծրագրի համապատասխան առողջական խնդիրները կամ գործոններն առանձնացվեն՝ հաշվի առնելով բնապահպանության և առողջապահության համապատասխան մարմինների հետ խորհրդակցությունների արդյունքները:

Վերոնշյալ խնդիրները կամ գործոնները որոշելիս համապատասխան իրավասու մարմինների խորհուրդ է տրվում ծանոթանալ ստորև բերված՝ առողջության որոշիչների շրջանակն ամփոփող գծագրի բովանդակությանը: Կարևոր է առանձնացնել առողջությունը պայմանավորող այն որոշիչների կամ գործոնների ցանկը, որոնք պլանի կամ ծրագրի իրականացման արդյունքում կարող են մեծ ազդեցությունների ենթարկվել: Այնուհետև կարող է նպատակահարմար լինել քննարկել, թե տվյալ պլանը կամ ծրագիրը ինչպես կարող է համապատասխան բնապահպանական նպատակներին համահունչ կերպով նպաստել, օրինակ, առողջության պահպանմանն ու ամրապնդմանը:

Առողջության ԱՀԿ լայն հասկացությունը, այսինքն՝ բարեկեցությունը և ոչ թե միայն հիվանդությունների բացակայությունը, ինքնին ենթադրում է, որ պլանները և ծրագրերը բազմաթիվ առումներով կարող են ազդել առողջության վրա: Որոշ ազդեցություններ կարող են լինել ուղղակի և ակնհայտ, և շատ մասնագետներ դրանք հեշտությամբ բացահայտում են, իսկ մյուսները՝ անուղղակի և դժվար կանխատեսելի: Ինչպես բնապահպանական ազդեցությունների շատ տեսակների դեպքում, այնպես էլ այս համատեքստում ֆիզիկական միջավայրի գործոնների և առողջական հետևանքների միջև պատճառահետևանքային կապերը կարող են բարդ լինել և դրսևորվել երկար ժամանակահատվածներում: Կարևոր է նաև հաշվի առնել, որ պլանների և ծրագրերի առողջական հետևանքները հաճախ կարող են սիներգիկ կամ բազմաճողական բնույթ ունենալ, որի դեպքում տարատեսակ գործոնների համատեղման արդյունքում գրանցվում են էական ազդեցություններ՝ թե՛ դրական և թե՛ բացասական:

Բացի այդ, էական խնդիրներ կարող են առկա լինել առողջապահական տվյալները ՌԲԳ-ի նպատակների համար օգտագործելիս, քանի որ տարբեր նպատակներով հավաքված այդ


51 Բնապահպանության և առողջապահության նախարարների երրորդ համաժողովի հռչակագիր (EUR/ICP/EHCO 02 05/18Rev.5) (Լոնդոն, 1999), զետեղված է http://www.euro.who.int/__data/assets/pdf_file/0007/88585/E69046.pdf կայքէջում: Ինչպես նաև Բնապահպանության և առողջապահության նախարարների չորրորդ համաժողովի հռչակագիր (EUR/04/5046267/6) (Բուդապեշտ, 2004), զետեղված է <http://www.euro.who.int/document/e83335.pdf> կայքէջում:

տվյալները կարող են չափազանց ընդհանրացված լինել: Հիվանդությունների տարածման և մահվան տեմպերի վիճակագրությունը միշտ չէ, որ կարող է որպես սկզբնականի վիճակի օգտակար նկարագիր կամ հիմք ծառայել պլանի կամ ծրագրի իրականացման ազդեցությունների մշտադիտարկման համար:

Թեև տարբեր որոշիչ գործոնների և դրանց բարդ փոխազդեցության հարաբերական կարևորությունն անորոշ է, գծագրում ամփոփված որոշիչները համարվում են առողջությունը պայմանավորող գլխավոր գործոնները: Որպես այդպիսին, դրանք կարող են օգտագործվել որպես պլանի կամ ծրագրի հնարավոր էական առողջական հետևանքների գնահատման ելակետ:

Օրինակ, պլանները և ծրագրերը կարող են ազդել տրանսպորտի, բնակարանաշինության և բնակապահովման, զբաղվածության, կրթության և սոցիալական ծառայությունների վրա, հետևաբար կարող են նպաստել սոցիալական համախմբվածությանը, համայնքային կառույցներն առավել մատչելի դարձնել, մարդկանց խրախուսել զբաղվել մարմնամարզությամբ կամ նվազեցնել ավտոմեքենա վարելու անհրաժեշտությունը: Այսպիսով, տրանսպորտային ծրագիրը կարող է ազդել առողջության հետևյալ որոշիչ գործոնների վրա՝ անհատի ապրելակերպ (օրինակ, ֆիզիկական ակտիվ ապրելակերպը խրախուսելու կամ սահմանափակելու միջոցով), հասարակական և համայնքային ցանցեր և ազդեցություններ (համայնքային հարմարությունների փոփոխման կամ համայնքների տարանջատվածության նվազեցման/մեծացման միջոցով), բնակության և աշխատանքային պայմաններ (օրինակ, ճանապարհային երթևեկության պատահարների թիվը փոփոխելու միջոցով) և շրջակա միջավայրի պայմաններ (օրինակ, օդի աղտոտվածության և աղմուկի աստիճանի փոփոխման միջոցով)⁵²: Լրացուցիչ գործնական օրինակ է բերված ստորև տրված աղյուսակում:

Առողջության հիմնական որոշիչները⁵³



52 Վերցված է Մարգարեթ Դուգլասի, Մարթին Հիգինսի և Շիլա Բեքի «Ռազմավարական բնապահպանական գնահատումը և առողջությունը» վերտառությամբ գեկոյցից, որը պատրաստվել է Շոտլանդիայի ԱԱԳ ցանցի պատվերով (2005): Ձեռնեղված է <http://www.healthscotland.com/documents/1250.aspx> կայքէջում:

53 Աղբյուրներ՝ Հյու Բարթոն, «Առողջության քարտեզ քաղաքաշինության պլանավորողների համար. Առողջ և կայուն բնակավայրերի հայեցակարգային մոդել», «Կառուցապատված շրջակա միջավայր» ամսագիր, հատոր 31, թիվ 4 (2005), էջեր 339–355; Հյու Բարթոն և Մարքուս Գրանթ, «Առողջության քարտեզ մարդու տեղական կենսավայրի համար», Առողջության խրախուսման թագավորական հասարակության ամսագիր, հատոր 126, համար 6 (2006) և Մ. Ուայթեդ և Գ. Դալգրեն, «Ինչպե՞ս պայթարել առողջապահական անհավասարությունների դեմ», «Լանսեթ» ամսագիր, հատոր 338, համար 8774 (1991), էջեր 1059–1063:

Չեխիայի «Ձեռնարկատիրություն և նորամուծություն» 2007–2013թթ. գործառնական ծրագրի ՌԲԳ-ի շրջանակներում առողջության վրա ազդեցության գնահատում⁵⁴

Առողջությունը պայմանավորող որոշիչ գործոններ՝

- Շրջակա միջավայրի գործոններ՝ օդի որակ, աղմուկ և շրջակա միջավայրում թունավոր նյութերի տարածում,
- Սոցիալ-տնտեսական գործոններ՝ աշխատանք և կրթություն,
- Հասարակական և համայնքային ցանցեր/ազդեցություններ՝ չկան այդպիսիք,
- Բնակչության և աշխատանքային պայմաններ՝ սովորաբար օգտագործվող ապրանքների և շինանյութի անվտանգություն,
- Անհատական ապրելակերպի գործոններ՝ առողջարար ժամանցի տարբերակներ (օր.՝ ազրոտուրիզմ, հեծանվավագր և այլն):

ՌԲԳ թիմի կողմից նախաձեռնված գործողություններ.

- Պարզաբանել, թե առողջական հարցերն ինչու են ընդգրկվել ՌԲԳ-ի շրջանակներում՝ առանձին քննարկելու փոխարեն:
- Պատրաստել Չեխիայի Հանրապետությունում առողջության վիճակի ամփոփ ակնարկ:
- Կազմել առողջապահության ոլորտում քաղաքականությունների, պլանների և ծրագրերի ազդեցությունների վերլուծման հիմնական մեթոդաբանական հարցերի ակնարկ, հիմնավորել առողջության այն որոշիչ գործոնների վերլուծումը, որոնց հիմքում ընկած են շրջակա միջավայրի կամ սոցիալ-տնտեսական վիճակի փոփոխությունները:
- Հիմնավորել առողջության վրա տվյալ ծրագրի ազդեցությունների գնահատման համար ընտրված մոտեցումները, կազմել առողջությանը վերաբերող այն քաղաքականությունների, պլանների և ծրագրերի ամփոփ ակնարկը, որոնք առնչվում են Գործառնական ծրագրին:
- Գնահատել առողջության վրա փաստացի ազդեցությունները, հիմնականում օգտվելով հետևյալ միջոցներից՝ (ա) այս ծրագրով նախատեսված առանձին գործողությունների հնարավոր ուղղակի ազդեցությունների (դրական և բացասական) մասին ՌԲԳ թիմի կողմից պատրաստված ամփոփ ակնարկ և (բ) այս ծրագրով նախատեսված՝ առողջության համապատասխան որոշիչ գործոնների վրա դրական կամ բացասական ազդեցություն գործելու հնարավորություն ենթադրող գործողությունների որոշում ՌԲԳ թիմի կողմից:
- Առաջարկել ծրագիրն իրականացնելու տարբերակներ, այդ թվում՝ (ա) այն ծրագրի շրջանակներում հանձնարարվող հետագա նախագծերի ընտրության չափանիշներն ու պայմանները (ներառյալ բնապահպանական և այլ պայմաններ) և (բ) առողջության վա ազդեցությունների մշտադիտարկման ցուցանիշներ:
- Կատարել ընդհանուր եզրակացություններ:

Այս գնահատումներն իրականացվել են Չեխիայի Հանրապետության (Առողջապահության ազգային ինստիտուտի) ճանաչված մասնագետների հավաքական փորձագիտական դատողությունների հիման վրա, որոնք վերանայվել են ՌԲԳ թիմի կողմից:

Առողջությունը պայմանավորող որոշիչ գործոններ, որոնք ազդեցություններ կարող են կրել պլանների կամ ծրագրերի իրականացման արդյունքում⁵⁵:

⁵⁴ Մարթին Սմաթնի, ՌԲԳ թիմի ղեկավար, անձնական հաղորդակցություն, 2007թ. հունվար: Լրացուցիչ տեղեկատվության համար դիմել՝ martin.smuty@integranet.cz

⁵⁵ Հիմնված է Ազդեցությունների գնահատման միջազգային ընկերակցության «Առողջության վրա ազդեցությունների գնահատում. օրինակելի կիրառության միջազգային սկզբունքներ» նյութից, Հատուկ հրատարակություն թիվ 5 (սեպտեմբեր 2006): Ձեռնեղված է <http://www.iaia.org/publicdocuments/special-publications/SP5.pdf> կայքէջում:

- Առողջ ապրելակերպի վրա ազդող գործոններ, ինչպիսիք են՝ ուտքով քայլելու և հեծանիվ վարելու պայմանների, առողջարար սննդամթերքի, մարզանքի համար նախատեսված հանրային տարածքների, հանրային տրանսպորտի ծառայությունների ապահովումը և ավտոմեքենա վարելու նախընտրությունից հրաժարվելու խրախուսումը:
- Հասարակական կամ համայնքային ազդեցություններին կամ ցանցերին առչվող գործոններ, ինչպիսիք են՝ համայնքի համախմբվածությունը, համայնքի ներքին տարանջատվածությունը, սոցիալական աջակցությունը կամ մեկուսացումը, համայնքային ծառայությունների (այդ թվում՝ բժշկական ծառայությունների, սոցիալական աջակցության, խանութների) մատչելիությունը, տեղական տրանսպորտի և կապի ցանցերի, հողօգտագործման և քաղաքային նախագծման, անվտանգության և հանցագործության տարածվածության հարցերը:
- Բնակության և աշխատանքային պայմաններին առչվող գործոններ, ինչպիսիք են՝ բնակարանների առկայությունը և դրանց որակը, խմելու մաքուր ջրի մատակարարումը և սանիտարահիգիենիկ բավարար պայմանների ապահովումը, սենյակային օդի որակը և տարբեր վտանգների ենթարկումը (օրինակ՝ պատահարների ենթարկվելու վտանգ, այդ թվում՝ ներառյալ աշխատավայրում, կամ տրասպորտային վտանգներ):
- Ընդհանուր սոցիալ-տնտեսական գործոններ (օրինակ՝ կրթություն, աշխատանք և եկամուտ), մշակութային գործոններ (օրինակ՝ ավանդական ապրելակերպի արժեքներ, կրոնական արժեքներ կամ մշակութային և հոգևոր արժեք ներկայացնող վայրեր) և շրջակա միջավայրի գործոններ (օդի, ջրի և հողի աղտոտվածություն, աղմուկ, ախտահարույց մարմինների բազմացման վայրեր և այլն):

Վերոնշյալ գործոններից մի քանիսը փոխկապակցված են կամ չեն կարող հեշտությամբ ընդգրկվել որոշիչ գործոնների մեկ կատեգորիայում կամ կարող են դասակարգվել մի քանի կատեգորիաներում: Այնուամենայնիվ, առողջությունը պայմանավորող որոշիչ գործոնների այս շրջանակը սպառնիչ ցուցակ չէ և չպետք է օգտագործվի որպես առողջական գործոնների դասակարգման կամ խմբավորման կոշտ կաղապար: Այն ներկայացվում է որպես մի շրջանակ, որից կարելի է օգտվել տվյալ պլանի կամ ծրագրի իրականացման հետևանքով հնարավոր փոփոխությունների ենթակա առողջական գործոնների նախնական բացահայտման համար:

Արձանագրության դրույթների համաձայն ՌԲԳ-ի իրականացման աշխատանքներում ուշադրությունը կենտրոնացվում է ֆիզիկական միջավայրի շուրջ: Այնուամենայնիվ, Արձանագրության պահանջների կիրառման փորձի կուտակմանը զուգընթաց, որոշ երկրներ հետամուտ կլինեն ֆիզիկական, սոցիալական և վարքագծային միջավայրերի միջև ավելի բարդ փոխազդեցությունների գնահատմանը:

Թեև շրջակա միջավայրի գործոնները կարևոր են առողջական վիճակը գնահատելու համար, սոցիալ-տնտեսական գործոնները, թերևս, առավել կարևոր են. եկամուտներն ու կրթությունը սերտորեն փոխկապակցված են առողջությանը (տե՛ս ստորև): Բայցնայնպես, կարող է դժվար լինել չափել առողջության որոշիչ գործոնների վրա պլանների և ծրագրերի տարբեր տեսակների (օրինակ, հողօգտագործման պլանների) ազդեցությունները:

Առողջությունը պայմանավորող որոշիչ գործոններ հանդիսացող՝ սոցիալ-տնտեսական կարգավիճակի չափորոշիչներ
 Սոցիալ-տնտեսական կարգավիճակը չափվում է մի շարք փոփոխականներով, այդ թվում⁵⁶

- Եկամուտ (անհատական կամ միագումար): Նյութական ռեսուրսների մատչելիության հիմք

⁵⁶ See St'e u Բրուն ա Գալոբարդես, Մերի Շոու, Դեբի Ա. Լոուլեր, Ջոն Լինչ և Ջորջ Դեյվի Սմիթ, «Սոցիալ-տնտեսական դիրքի ցուցանիշներ (մաս 1-ին)», Համաճարակաբանության և համայնի առողջության ամսագիր (2006), հատոր 60, էջ 7–12: Զետեղված է <http://jech.bmj.com/cgi/content/full/60/1/7> կայքէջում:

հանդիսացող եկամուտի գործոնն ազդում է առողջության վրա: Եկամուտը նյութական կենսամակարդակը պայմանավորող լավագույն ցուցանիշն է: Այնուամենայնիվ, եկամուտների մասին հավաքված տվյալները կարող են սահմանափակ լինել՝ հաշվի առնելով նման տեղեկատվությունը գաղտնի պահելու ձգտումը:

- Կրթամակարդակ (անհատական ակտիվներ): Կրթությունը հետագա աշխատանքի և եկամուտի կարևորագույն որոշիչ գործոններից է և կարող է ազդել մարդու ճանաչողական գործունեության վրա: Կրթական մակարդակի մասին տվյալները դժվար չէ ձեռք բերել, սակայն դրանց հիման վրա, որպես կանոն, հնարավոր չէ գնահատել կրթության որակը:
- Զբաղմունքին առչվող չափորոշիչներ: Զբաղմունքը և եկամուտների մակարդակը սերտորեն փոխկապակցված են: Դեռ ավելին, զբաղմունքային դասակարգն արտացոլում է սոցիալական դիրքը և կարող է առողջական վիճակի վրա ազդել: Որոշ զբաղմունքների դեպքում աշխատողները կարող են ենթարկվել շրջակա միջավայրի և աշխատանքի առաջադրանքին առնչվող տարբեր վնասակար վտանգների: Համապատասխան գործողությունների մասին տվյալներ հեշտությամբ կարելի է գտնել տվյալների բազմաթիվ ստվորական աղբյուրներից:

Արձանագրությունը պահանջում է գնահատել միայն այն բնապահպանական խնդիրները, որոնք էական կամ հավանական են համարվում: Բնապահպանության և առողջապահության իրավասու մարմիններին խորհուրդ է տրվում առողջության վրա տվյալ պլանի կամ ծրագրի հնարավոր ազդեցությունների երկար ցուցակն աստիճանաբար կրճատել՝ թողնելով միայն այն գործոնները, որոնք հնարավոր էական հետևանքների կարող են հանգեցնել: Այս գործընթացի վերաբերյալ հավելյալ ուղղորդում է ներկայացվում Արձանագրության հավելված III-ում:

3.2 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒՄ

Բնապահպանական և առողջապահական իրավասու մարմինների հետ խորհրդակցությունը ՌԲԳ շրջանակներում առողջության հարցերի քննարկման հիմքն է: Շատ երկրներում ավելի հեշտ է բացահայտել բնապահպանական պարտականություններ կրող համապատասխան մարմինները, քան առողջապահության ոլորտում դրանց համարժեք հաստատությունները: Սովորաբար այս ասպարեզում գործում են տարբեր պարտավորություններ կրող բազմաթիվ կազմակերպություններ.

- **Ազգային իրավասու մարմինները** հաճախ առողջապահության քաղաքականության մշակման և իրականացման հարցերով զբաղվող գլխավոր գործակալություններն են:
- **Տարածաշրջանային և տեղական մարմինները** կարող են առավել կոնկրետ դեր խաղալ տեղական բնակչությանն առնչվող գործառնական հարցերում:
- **Համայնքային մարմինները** կարող են առողջությունը պահպանելու և ամրապնդելու գործառույթ իրականացնել: Գործառույթների շրջանակում կարող են ընդգրկված լինել ինչպես առողջության ավանդական հարցերի կառավարման պարտականությունը, ինչպիսիք են սանիտարահիգիենիկ պայմանների ապահովումը և ջրամատակարարումը, այնպես էլ՝ այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են առողջության ամրապնդմանն ուղղված միջոցառումների և առաջնային առողջապահական ծառայությունների կազմակերպումը:

Առողջապահության իրավասու մարմինները հազվադեպ են ներգրավվում պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում: ԱՀԿ Առողջ եվրոպական քաղաքների ցանցի կողմից կազմակերպված ուսումնասիրություններից մեկը հայտնաբերել է, որ առողջապահության և պլանավորման իրավասու մարմինները կանոնավոր համագործակցություն են ծավալել ուսումնասիրված դեպքերի ընդամենը 25 տոկոսի չափով⁵⁷: Առողջապահության իրավասու մարմինների

⁵⁷ Հյու Բարթոն, Քլեր Միչամ և Քեթրին Ցուրու (խմբ), «Առողջության համար բարենպաստ պայմաններ ստեղծող քաղաքաշինության պլանավորումը գործնականում. Եվրոպական քաղաքների փորձը»,

կարողությունները կարող են թերի լինել և առնվազն սկզբնական փուլերում աջակցության և ուղղորդման անհրաժեշտություն կարող է լինել: Անհրաժեշտության դեպքում կարելի է մշակել փոխշփման, համապատասխան միջոցներ և նրանց տեսակետները կամ այլ ներդրումները (օրինակ, սպասարկման պայմանագրեր) հայցելու կարգ սահմանել (տե՛ս նաև **բաժին Ա4.4**-ը, որտեղ քննարկում է համապատասխան իրավասու մարմինների հետ խորհրդակցման գործընթացը):

Իրոք, առողջական այն գործոնների որոշումը, որոնք, հավանական է, որ էական ազդեցություն կկրեն տվյալ տեսակի պլանի կամ ծրագրի իրականացման դեպքում, և առողջության վրա տվյալ պլանի կամ ծրագրի բացասական և դրական ազդեցությունների մասին եզրակացությունների կատարումը հեշտ խնդիրներ չեն: Այս առումով կարող է նպատակահարմար լինել, որ բնապահպանության և առողջապահության իրավասու մարմինները և պլաններ կամ ծրագրեր կազմողները փոխանակեն իրենց տեղեկատվությունը և աստիճանաբար ընդհանուր համաձայնության գան հետևյալի շուրջ՝

- Առողջության որոշիչներ, որոնք տարբեր տեսակի պլանների կամ ծրագրերի իրականացման արդյունքում կարող են ենթակա լինել նշանակալի ազդեցությունների,
- Առողջության որոշիչների և համապատասխան առողջական հետևանքների միջև պատճառահետևանքային կապեր,
- Առողջության վրա բացասական ազդեցությունների կանխմանը, նվազեցմանը կամ մեղմմանը նպատակաուղղված գործողություններ,
- Տարբեր պլանների և ծրագրերի իրականացման ընթացքում փաստացի առողջական հետևանքների մշտադիտարկման պայմանավորվածություններ:

3.3 ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Պլանի կամ ծրագրի իրականացման արդյունքում էական ազդեցությունների ենթակա հիմնական առողջական որոշիչների սահմանումը առողջության վրա պլանի կամ ծրագրի դրական և բացասական ազդեցությունների գնահատման հիմք կարող է ծառայել: Այս որոշիչների ցուցանիշներում նկատվող փոփոխությունները կարող են հանգեցնել հետևյալ տեսակի առողջական հետևանքների՝

- ուղղակի կամ անուղղակի,
- կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ,
- կուտակումային կամ սիներգիստիկ,
- կայուն կամ ժամանակավոր:

Ստորև բերված աղյուսակում ամփոփվում են ֆիզիկական միջավայրի ռիսկային գործոնները և դրանց առնչվող հնարավոր հիվանդություններն ու վտանգները: Տեղական պայմաններին համապատասխանեցված նմանօրինակ աղյուսակի պատրաստումը որոշ դեպքերում կարող է օգնել համապատասխան մարմիններին: Աղյուսակը կարելի է նաև հարմարացնել պլանի կամ ծրագրի տարբեր տեսակների համար:

Հաշվի առնելով վերևում տրված հատված 3.1-ում քննարկված անորոշություններն ու սահմանափակումը, իրատեսական չէ ակնկալել, որ ՌԲԳ իրականացնող մարմինները ճշգրիտ և մանրամասն կանխատեսումներ կկատարեն առողջության վրա իրենց պլանների և ծրագրերի հնարավոր, ինչպես դրական, այնպես էլ՝ բացասական ազդեցությունների վերաբերյալ: Այս ազդեցությունները կանխատեսելու համար շատ մանրակրկիտ ուսումնասիրությունների նախաձեռնումը սովորաբար նույնքան անիրատեսական է:

առողջության համար բարենպաստ պայմաններ ստեղծող քաղաքաշինության պլանավորման մասին ԱՀԿ-ի Քաղաքային նախաձեռնության խմբի զեկույց (ԱՀԿ, 2003): Զետեղված է <http://www.euro.who.int/document/E82657.pdf> կայքէջում:

Կարևոր է ընտրել համապատասխան, պարզ և գործնական մոտեցումներ, իսկ առավել մանրամասն ուսումնասիրությունների հետամուտ լինել միայն բացառիկ դեպքերում, քանի որ ՌԲԳ շրջանակներում բավարար չափով առողջության հարցերին անդրադառնալու դեպքում կարևոր մեթոդաբանական և ընթացակարգային դժվարություններ են ծագում:

Այս տեսանկյունից, հարկ է նշել, որ Արձանագրությունը, 2-րդ հոդվածի 7-րդ պարբերության միջոցով, պարտադրում է, որ ներկայացվի միայն պահանջվող տեղեկատվությունը՝ հաշվի առնելով.

- Առկա տեղեկատվությունը և գնահատման ընթացիկ մեթոդները,
- Պլանի կամ ծրագրի բովանդակությունը և մանրակրկիտության աստիճանը, որոշումների կայացման գործընթացում դրա կարգավիճակը,
- Հանրության շահերը,
- Որոշումներ կայացնող մարմնին տրամադրվելիք անհրաժեշտ տեղեկատվությունը:

Ի լրումն վերոնշյալի, Արձանագրության Հավելված IV-ի , 8-րդ պարբերությունում ամրագրված է պահանջ առ այն, որ բնապահպանական զեկույցում պետք է ներկայացվի տեղեկատվություն անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերման ընթացքում ծագած դժվարությունների, այդ թվում՝ տեխնիկական խնդիրների կամ գիտելիքների պակասի վերաբերյալ:

Առողջական հետևանքների որակական գնահատում

Շատ դեպքերում առողջական հետևանքների գնահատումը կարող է քանակականի փոխարեն որակական լինել: Սակայն որակական գնահատումը չի նշանակում գուշակություն. կատարվող ցանկացած դատողություն պետք է հիմնավորված լինի և հնարավորինս հենվի իրականացված հետազոտությունների արդյունքների և առկա գիտելիքների վրա: Հավելված Ա5.1-ում ամփոփված են մի շարք վերլուծական գործիքներ, որոնք նպաստում են փորձագիտական եզրակացությունների ամբողջացմանը: Կան նաև բժշկագիտությունից արտածված լրացուցիչ մեթոդներ: Լոնդոնի առողջապահական հետազոտությունների կենտրոնը պատրաստել է «Առողջության վրա ազդեցությունների գնահատման համար հրատարակված ապացույցների վերանայման ուղեցույց» վերտառությամբ նյութը⁵⁸, որտեղ ամփոփվում են քանակական և որակական տվյալների՝ ՌԲԳ-ի նպատակների համար ընդունելի գնահատման մի շարք մեթոդներ:

Ֆիզիկական միջավայրի ռիսկի գործոնների և դրանց առնչվող հիվանդությունների և ռիսկի օրինակներ (ԱՀԿ, 2006, ընտրված են ԵՏՀ տարածաշրջանին վերաբերող տվյալները)

⁵⁸ Ձեռնեղված է <http://www.lho.org.uk/download.aspx?urlid=10846&urlt=1> կայքէջում

	Ջուր, սանիտարանիզմիկ պայմաններ	Մեկնակային օդի աղտոտվածություն	Արտաքին/դրսի օդի աղտոտվածություն	Աղմուկ	Այլ տնային ռիսկեր/վտանգներ	Քիմիկատներ	Հանգստյան վայրեր	Ջրային ռեսուրսների կառավարում	Հողօգտագործում և կառուցապատված միջավայր	Համայնքային այլ ռիսկեր	Ճառագայթահարում, ռադիացիա	Աշխատանք	Գլխային փոփոխություն
Ստորին շնչուղիներ													
Վերին շնչուղիներ													
Լուծով ուղեկցվող հիվանդություններ													
Աղիքային վարակիչ/ նեմոտոզային ինֆեկցիոն/հիվանդություններ													
Լեշմանիոզային ինֆեկցիաներ													
Մեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ													
Ձեռքբերովի իմունային անբավարության համախտանիշ ՁԻԱՀ													
B և C կարգի հեպատիտ													
Թոքախտ, տուբերկուլոզ													
Պերինտալ բարդություններ													
Բնածին անոմալիաներ													
Թերսնուցում													
Քաղցկեղ													
Ներվոստենիկ խանգարումներ													
Կատարակտ													
Խլություն													
Սրտանոթային հիվանդություններ													
Թոքերի խրոնիկ արգելիչ հիվանդություններ													
Շնչարգելություն/ ասթմա													
Կմախքամկանային հիվանդություններ													
Ֆիզիկական անշարժություն													
Ճանապարհային երթևեկության պատահարներ													
Սայթաքումներ													
Ջրահեղձություն/խեղդվելու դեպքեր													
Հրդեհներ													
Թունավորումներ													
Այլ անկանխատեսելի վնասվածքներ													
Բռնություն													

գետեղված <http://www.hiagateway.org.uk> կայքում: Տե՛ս նաև Ազդեցությունների գնահատման միջազգային ընկերակցության կողմից հրատարակված «Առողջության վրա ազդեցությունների գնահատում. Օրինակելի կիրառության միջազգային սկզբունքներ» (<http://www.iaia.org/publicdocuments/special-publications/SP5.pdf>).

ՌԲԳ շրջանակներում առողջության հարցեր. Առողջության վրա պլանների և ծրագրերի հնարավոր ազդեցությունները

Հարցերի օրինակներ, որոնք օգնությամբ հնարավոր է բացահայտել առողջության վրա պլանների և ծրագրերի հնարավոր ազդեցությունները, այս խնդիրների և առողջության միջև գրանցված կապերի փաստացի հիմքերի մասին նշումներ (Ստորև ներկայացված են ընդհանուր, հատկանշական հարցեր, որոնք պետք է հարմարեցվեն համապատասխան պայմաններին)

Առողջության որոշիչ գործոնների վրա հնարավոր ազդեցությունների մասին հարցեր	ՌԲԳ-ի համապատասխան թեմա	Կառավարության քաղաքականություններ	Հնարավոր առողջական հետևանքներ և փաստացի հիմքեր (հղումներ գրականությանը և/կամ կայքէջերի) ⁶⁰
Արդյո՞ք տվյալ պլանով կամ ծրագրով նախատեսված են առողջապահական հարմարություններ, օրինակ՝ ընտանեկան բժիշկների ընդունարաններ, առողջապահական կենտրոններ կամ հիվանդանոցներ:	Բնակչություն		Ընտանեկան բժիշկների հետ խորհրդակցությունների բարձր ցուցանիշները վկայում են սոցիալական և տնտեսական զրկվածության մասին, թեև առողջական խնդիրների բարձր ռիսկայնություն ունեցող համայնքներում կանխարգելիչ ծառայությունների մատչելիությունը, որպես կանոն, անբավարար է:
Արդյո՞ք պլանով կամ ծրագրով նախատեսված է ժամանցային հարմարությունների, օրինակ՝ մարզասրահների կառուցում:	Բնակչություն		Անբավարար մարզանքը կարող է հանգեցնել սրտանոթային հիվանդությունների առավել լուրջ վտանգների:
Արդյո՞ք տվյալ պլանի կամ ծրագրի իրականացումը կարող է ազդել առողջապահական կամ ժամանցային հարմարությունների մատչելիության վրա:	Բնակչություն		Ծառայությունների անբավարար հասանելիությունից (օրինակ, ուտքով կամ մատչելի տրանսպորտով) առավել տուժում են կանայք, դպրոցականները, տարեց մարդիկ և հաշմանդամները Ծառայությունների դժվարհասանելիությունը սոցիալական մեկուսացման կարևոր գործոն է, ինչն իր հերթին պատճառահետևանքային կապ ունի առողջական խնդիրների հետ:
Արդյո՞ք տվյալ պլանը կամ ծրագիրը կարող է հանգեցնել դեպի	Հող, ջուր, օդ		Օդի աղտոտվածությունն առողջության վրա կարող է ունենալ կարճաժամկետ և երկարաժամկետ հետևանքներ, կարող է

⁶⁰ Բացառությամբ հատուկ նշված դեպքերում, ներկայացված տվյալները վերցված են Բեն Քեյվիլի, Փիթեր Մոլինյոյի և Ադամ Քուլթսի հեղինակած նյութից՝ «Առողջ, կայուն համայնքներ: Արդյունավետ գործողություններ» (Վելինբորո, Միացյալ Թագավորություն, Միլթոն Քեյնս և Հարավային Միդլանդի առողջական և սոցիալական հարցերով զբաղվող խումբ, 2004թ.): Ջետեղված է www.apho.org.uk/resource/view.aspx?RID=93661 կայքէջում:

օդային կամ ջրային ավազաններ արտանետումների վտանգ պարունակող գործողությունների:			սրել թոքային կամ սրտային հիվանդությունները, ինչպես նաև կրճատել կյանքի միջին տևողությունը:
Արդյո՞ք տվյալ պլանը կամ ծրագիրն առնչություն ունի հողի աղտոտման կամ թափոնների կառավարման կամ հեռացման աշխատանքների հետ:	Հող, ջուր, օդ		Աղտոտիչները, ինչպիսիք են ծանր մետաղները, նավթը, աբեստը և աղբավայրերի գազերը վնասակար են առողջության համար: Թափոնների հեռացումը կարող է ծանրաբեռնել ավտոմոբիլային երթևեկությունը, բացասաբար անդրադանալ աղմուկի ու փոշու մակարդակների, անվտանգության և օդի որակի վրա:
Արդյո՞ք տվյալ պլանը կամ ծրագիրը կարող է հանգեցնել մարդկանց վրա այլ ազդեցությունների, օրինակ՝ աղմուկի կամ առօրյա ընթացքը խաթարող գործողությունների հետևանքով:	Բնակչություն		Շրջակա միջավայրի աղմուկը շատերի համար անհանգստության և քնի խանգարման պատճառ է հանդիսանում: Աղմուկի բարձր մակարդակի և սրտային ու հիպերտոնիկ հիվանդությունների միջև պատճառահետևանքային կապը հաստատող փաստեր կան ⁶¹ :
Արդյո՞ք տվյալ պլանը կամ ծրագիրը կարող է հեղեղման վտանգ ստեղծել:	Ջուր, հող		Հեղեղման առողջական հետևանքներից են՝ գաստրոէնտերիտ, կրծքավանդակի վարակիչ հիվանդություններ, ասթմա, հողերի կարծրացում և սթրեսի հետևանքով հոգեբանական խնդիրներ և այլն:
Արդյո՞ք տվյալ պլանը կամ ծրագիրը կարող է հանգեցնել կլիմայի փոփոխությանը:	Կլիմայական գործոններ, օդ		Կլիմայի անկայունությունը և ծովի բարձրացող մակարդակը կարող են հանգեցնել առողջական լուրջ և երկարաժամկետ հետևանքների: Դրանցից խոսափելուն կամ դրանց բացասական հետևանքների մեղմմանն ուղղված գործողությունները կարող են շոշափելի արդյունքներ ապահովել:
Արդյո՞ք տվյալ պլանը կամ ծրագիրը խրախուսում է հանրային տրանսպորտի կամ մասնավոր մեքենաներից բացի այլընտրանքային փոխադրամիջոցի օգտագործումը:	Օդ, կլիմայական գործոններ		Ավտոմեքենայի օգտագործման կրճատումը նվազեցնում է մեքենաների շարժիչների աղտոտիչ արտանետումներից տուժելու վտանգը: Երթևեկության ծանրաբեռնվածության և աղմուկի կրճատումը նպաստում են կյանքի որակի և բարեկեցության բարելավմանը: Ածխածնի արտանետումների նույնիսկ փոքր կրճատումը նպաստում է կլիմայի փոփոխության կանխման նպատակների իրականացմանը:
Արդյո՞ք պլանը կամ ծրագիրը խրախուսում	Օդ, բնակչություն		Ֆիզիկական ակտիվությունը առողջության բնօրինակը վիճակը

⁶¹ Շրջակա միջավայրի առողջության ինստիտուտ, «Աղմուկի ոչ լսողական հետևանքների մասին զեկույց» (Լեսթեր, Միացյալ Թագավորություն, 1997թ), էջ 90

<p>է քայլերը և հեծանիվով երթնեկեղը:</p>			<p>բարելավելու և գիրությունը կրճատելու լավագույն միջոցներից մեկն է:</p> <p>Խառը հողօգտագործում, խիտ բնակչություն, մեծ թվով աշխատատեղեր, փոխկապակցված փողոցներ, հետիոտնի հարմարավետությանը համապատասխանող դիզայն և անվտանգության բարձր մակարդակ ունեցող համայնքները խրախուսում են ֆիզիկական ակտիվությունը և կրճատում գիրության տարածումը:</p> <p>Այդ հատկանիշները հատկապես կարևոր են տարեց մարդկանց մեկուսացումը նվազեցնելու տեսանկյունից:</p>
<p>Արդյո՞ք տվյալ պլանով կամ ծրագրով նախատեսվում է լավացնել գյուղական և ավիամերձ շրջանների հասանելիությունը:</p>	<p>Բնակչություն, լանդշաֆտներ, կենսաբազմազանություն</p>		<p>Քայլերու և հեծանիվ վարելու ավելի մեծ հնարավորությունները բարենպաստ պայմաններ են ստեղծում առողջության պահպանման համար:</p> <p>Բնության հետ ավելի մեծ շփումը օգտակար է հոգեկան առողջությանը:</p>
<p>Արդյո՞ք բնակարանաշինության պլաններում ու ծրագրերում հաշվի են առնվել էներգետիկ արդյունավետության, ջերմության պահպանման, օդափոխության և ձկունության նկատառումները:</p>	<p>Բնակչություն, կլիմայական գործոններ</p>		<p>Մտքը, խոնավ պայմաններում ապրելը կարող է հանգեցնել սիրտ-անոթային և արյան շրջանառության խախտմամբ ուղեկցվող հիվանդությունների:</p> <p>Վառելիքի պակասը ազդում է հոգեկան առողջության վրա և սրում է առողջապահական անհավասարությունները:</p> <p>Բնակարանային պայմանները պետք է հարմար լինել հաշմանդամ, ընտանիք ունեցող մարդկանց և տարեց բնակչության համար</p>
<p>Արդյո՞ք տվյալ պլանը կամ ծրագիրը խրախուսում է ծառայությունների դյուրին և կայուն մատչելիությունը, օրինակ՝ աշխատատեղեր, խանութներ, դպրոցներ, առողջապահական հարմարություններ և սոցիալական միջոցառումներ:</p>	<p>Բնակչություն</p>		<p>Անբավարար տրանսպորտային ծառայությունների հետևանքով սրվում է սոցիալական մեկուսացումը, քանի որ սահմանափակվում են կյանքի հնարավորություններն ընդլայնող գործողությունների մատչելիությունը, ինչպիսիք են աշխատանքը, ուսումը, առողջապահությունը, սննդի գնումը և այլ կարևոր գործողություններ:</p> <p>Համայնքում առկա ֆիզիկական խոչընդոտները (օրինակ, տրանսպորտի ենթակառուցվածք) և հոգեբանական խոչընդոտները (օրինակ, ճանապարհային անվտանգության մտավախություններ) սահմանափակում են երթևեկության հնարավորությունները և կարող են սահմանափակել այնպիսի ծառայությունների մատչելիությունը, ինչպիսիք են ուսումնական, առողջապահական հաստատությունները և աշխատանքային վայրերը:</p> <p>Ծառայությունների անբավարար հասնելիությունից (օրինակ, ոտքով կամ մատչելի տրանսպորտով) առավել</p>

			տուժում են կանայք, դպրոցականները, տարեցներն ու հաշմանդամները: Ծառայությունների դժվարիասանելիությունը սոցիալական մեկուսացման էական գործոն է, սոցիալական մեկուսացումը և առողջական խնդիրները փոխկապակցված են:
Արդյո՞ք տվյալ պլանը կամ ծրագիրը մարդկանց մոտ սերմանում է համայնքի անվտանգության, համայնքի հետ նույնացվելու և սոցիալական համախմբվածության զգացողության ձևավորում:	Բնակչություն, մշակութային ժառանգություն, լանդշաֆտներ, կենսաբազմազանություն		Լավ դիզայնը մարդկանց խրախուսում է համայնքի շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատվության զգացումը և նվազեցնում է այնպիսի երևույթների տարածումը, ինչպիսիք են վանդալիզմը կամ հարմարությունների թերօգտագործումը: Որևէ համայնքի հետ նույնանալու և տվյալ համայնքին պատկանելու զգացումը նպաստում է առողջությանը և բարեկեցության ընկալվող մակարդակի բարձրացմանը: Հանցագործությունների վախը քայքայում է սոցիալական համերաշխությունը և բացասական հոգեբանական ազդեցություններ կարող է ունենալ: Տնից դուրս գալու վախը մասնավորապես տարեցներին մղում է մեկուսացման, նրանց դարձնում առավել խոցելի: Լավ քաղաքային դիզայնը կարող է օգնել «հանցագործությունները դիզայնի միջոցով համայնքից դուրս մղելու» գործում և բարելավել համայնքի անվտանգությունը:
Արդյո՞ք տվյալ պլանով կամ ծրագրով նախատեսվում է հանրային կանաչ տարածքների կառուցում:	Բնակչություն, ֆաունա և ֆլորա, մշակութային ժառանգություն, լանդշաֆտներ		Անվտանգ կանաչ տարածքները խրախուսում են սոցիալական շփումները և ակտիվ ապրելակերպը, որպես կանոն, նման համայնքները բնութագրվում են հանցագործությունների ցածր տոկոսային ցուցանիշներով: Մարդիկ, ովքեր ծառերի կամ կանաչ տարածքների տեսարան ունեն, առողջության և բարեկեցության ավելի բարձր մակարդակ են վերագրում իրենց կյանքին:
Արդյո՞ք պլանը կամ ծրագիրը կարող է ազդել մտահոգության առարկա հանդիսացող սոցիալական խմբի զբաղվածության աստիճանի վրա:	Բնակչություն		Մեկուսի վայրերում կառուցապատման աշխատանքները կարող են հանգեցնել համայնքից խոցելի խմբերի վտարմանը: Տեղական աշխատանքային հնարավորությունները ոտքով կամ հեծանիվով աշխատանքի գնալու պայմաններ են ստեղծում: Գործազուրկները ֆիզիկական և հոգեկան վատթար վիճակի, ինչպես նաև կյանքի կարճ տևողության առավել բարձր հավանականություն ունեն: Ցածր վարձատրվող, անապահով աշխատանքների դեպքում մեծ է դժբախտ պատահարների, վարակիչ, սրտային հիվանդությունների, ինչպես նաև առողջությանը վնասակար

			սովորությունների, օրինակ ծխելու հավանականությունը:
--	--	--	--

ՌԲԳ և ԱԱԳ. ընդհանրություններ և տարբերություններ

ԱԱԳ-ի սահմանումը որևէ միջազգային իրավական գործիքում ամրագրված չէ, սակայն Ազդեցությունների գնահատման միջազգային ընկերակցությունն այն սահմանում է որպես՝ «ընթացակարգերի, մեթոդների և գործիքների համախումբ, որոնց օգնությամբ համակարգված ձևով գնահատվում են բնակչության առողջության վրա քաղաքականության, պլանի, ծրագրի կամ նախագծի հնարավոր և երբեմն չնախատեսված ազդեցությունները և բնակչության շրջանում այդ ազդեցությունների բաշխվածությունը: ԱԱԳ-ն սահմանում է այս հետևանքներին ի պատասխան նախաձեռնվելիք գործողությունները»⁶²:

ՌԲԳ-ի և ԱԱԳ-ի միջև ընդհանրություններ շատ կան: Երկուսն էլ նպատակաուղղված են որոշումների կայացման գործընթացի համար անհրաժեշտ տեղեկատվության ապահովմանը և այդ որոշումների վրա ազդեցության ներգործմանը: Երկուսի դեպքում էլ կիրառվում են ընթացակարգեր, որոնք ներառում են ստուգազնում, շրջանակների որոշում և հաշվետվությունների կազմում, կարևորում են խորհրդակցությունների դերը:

Բայցևայնպես կարելի է առանձնացնել մի շարք տարբերություններ.

- ԱԱԳ-ն, որպես կանոն, կիրառվում է ռազմավարական առաջարկների, օրինակ պլանների կամ ծրագրերի «ex ante՝ սպասվող արդյունքների վրա հիմնված» ՌԲԳ կանխատեսումների սովորական համատեքստից դուրս: Օրինակ՝ առողջության վրա կոնկրետ ծառայությունների, գործողությունների կամ վարքագծի ազդեցությունը:
- Շատ դեպքերում ԱԱԳ-ն հենվում է այնպիսի գիտաճյուղերի հետազոտությունների հիման վրա կուտակված գիտելիքների վրա, ինչպիսիք են հասարակագիտությունը, համաճարակաբանությունը և տոքսիկոլոգիան: ԱԱԳ-ն կարող է շատ ավելի մանրակրկիտ և բնույթով ավելի քանակական լինել, քան ընդունելի է ՌԲԳ-ի դեպքում, թեև ԱԱԳ իրականացնելիս համապատասխան դեպքերում կարելի է առաջնորդվել ռազմավարական մոտեցմամբ և որակական մեթոդներով:
- Ի լրումն վերանշյալի, հարկ է նշել, որ առողջապահության ոլորտում որոշ տերմիններ, ինչպիսիք են պլանը կամ ծրագիրը, օգտագործվում են ՌԲԳ-ի շրջանակներում ընդունված նշանակությունից տարբերվող այլ իմաստներով (օրինակ՝ առողջապահական անհավասարությունների նվազեցման պլան կամ պատվաստման ծրագիր):

ԱԱԳ շրջանակներում կիրառվող մեթոդները և դրանց հիման վրա ստացված տեղեկատվությունը հեշտությամբ են կիրառվել ՌԲԳ-ի շրջանակներում՝ օգնելով բացահայտել մարդու առողջության և առողջապահական անհավասարությունների վրա պլանների և ծրագրերի հնարավոր հետեւանքները և առաջարկելով բացասական հետևանքները չեզոքացնելու, իսկ դրական ազդեցություններն ընդլայնելու ուղիներ: Բայցևայնպես, ինչպես բնապահպանական այլ ազդեցությունների դեպքում, ՌԲԳ-ի կանխատեսողական և առողջության վրա պլանների ու ծրագրերի անորոշ և անուղղակի ազդեցությունների բնույթը կարող են ԱԱԳ-ն դարձնել անիրագործելի կամ նույնիսկ անցանկալի՝ ստույգ և մանրամասն կանխատեսումների տեսանկյունից:

3.4 ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՑԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Սույն Ձեռնարկի հատված Ա4.2.3-ում ամփոփվում են շրջանակների որոշման և բնապահպանական զեկույցի պատրաստման հաջորդական քայլերը: Այս ենթահատվածում ներկայացվում են առողջական հարցեր ընդգրկելու գործնական խորհուրդներ, ինչպես նաև զեկույցի բաղադրիչների մասին լրացուցիչ ուղղորդում (ի լրումն աղյուսակ Ա4.2-ում ներկայացված

⁶² Առողջության վրա ազդեցության գնահատում. Օրինակելի կիրառության միջազգային սկզբունքներ, նշում 56:

տեղեկատվության): Ստորև բերված աղյուսակում ներկայացված խորհուրդները ամբողջական և խստությամբ պարտադրվող պահանջներ չեն: Բնապահպանական զեկույցի շրջանակներում առողջության հարցերին անդրադարձող անձինք կարող են ընտրել տվյալ պլանի կամ ծրագրի առանձնահատկություններին և համատեքստին, ինչպես նաև շրջանակների որոշման փուլում առողջապահության իրավասու մարմինների ներկայացրած տեսակետներին առավել համապատասխան մոտեցումներ:

Բնապահպանական զեկույցի շրջանակներում առողջության հարցերին անդրադառնալու հնարավոր մոտեցումներ

Բնապահպանական զեկույցի բաղադրիչներ (Արձանագրություն, հավելված IV)	Առողջության հարցերին անդրադառնալու հնարավոր մոտեցումների վերաբերյալ խորհուրդներ
1. Պլանի կամ ծրագրի բովանդակությունը և հիմնական նպատակները և դրանց կապն այլ պլանների կամ ծրագրերի հետ	Այս հարցը հանգամանակից քննարկվում է Ձեռնարկի Աղյուսակ Ա4.2-ում:
2. Շրջակա միջավայրի, այդ թվում՝ առողջության, ներկա վիճակը և դրանց հավանական էվոլյուցիան, եթե նախատեսվող պլանը կամ ծրագիրը չիրականացվի	Այս երեք կետերը (2–4) ընդհանրություններ ունեն, սակայն վերաբերում են պլանի կամ ծրագրի շրջանակներում ընդգրկված կամ դրա ազդեցություններին ենթակա տարածքի հատուկ առողջական վիճակների տարբեր հարցերի: 2-րդ պարբերությունով կարող են ներկայացվել տվյալ տարածքում նկատվող ընդհանուր առողջական միտումները:
3. Նախատեսվող աշխատանքների իրականացման արդյունքում էական ազդեցությունների ենթակա տարածքում շրջակա միջավայրի, այդ թվում՝ առողջապահական հարցերի հատկանիշները	3-րդ պարբերությունում կարող է տրվել նկատվող ընդհանուր առողջական միտումների նկարագրությունը, կարող են շեշտադրվել բարեկեցության տեսանկյունից բարձրաթեք տարածքները (հանրային վայրեր, մարզանքի համար նախատեսված տարածքներ և այլն), տեղայնացված առողջական խնդիրներով և առողջական անհավասարություններով բնութագրվող տարածքները և խիտ բնակեցված վայրերը:
4. Նախատեսվող պլանին կամ ծրագրին առնչվող բնապահպանական, այդ թվում՝ առողջապահական խնդիրները	4-րդ պարբերությունում ամփոփվում են առողջական խնդիրները: ՌԲԳ-ի շրջանակներում առողջության հարցերին անդրադարձող ավելի համապարփակ մոտեցում ընտրելու դեպքում սահմանվում են առողջության որոշիչներ, դրանց շարքում կարող են ընդգրկվել այնպիսի գործոններ, ինչպիսիք են ապրելակերպը, հասարակության և համայնքի ազդեցությունները, բնակության և աշխատանքային պայմանները կամ ընդհանուր սոցիալ-տնտեսական, մշակութային կամ բնապահպանական գործոնները
5. Միջազգային, ազգային և այլ մակարդակներում սահմանված բնապահպանական, այդ թվում՝ առողջապահական	Առողջական նպատակների շարքում կարող են ընդգրկվել միջազգային և տարածաշրջանային (օրինակ՝ ԱՀԿ-ի կամ ԱՀԿ Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակի կողմից սահմանված), ազգային և տեղական նպատակներ, որոնք առնչություն ունեն տվյալ պլանի կամ ծրագրի հնարավոր էական

<p>նպատակներ, որոնք առնչվում են նախատեսվող պլանին կամ ծրագրին: Ձեկույցի նախապատրաստման ընթացքում այս, ինչպես նաև այլ բնապահպանական, այդ թվում՝ առողջապահական, նպատակների ընդգրկման ուղիները</p>	<p>ազդեցությունների կամ դրա արձարձած խնդիրների հետ:</p>
<p>6. Հնարավոր էական բնապահպանական, այդ թվում՝ առողջապահական ազդեցությունները*/ ինչպես սահմանված է հոդված 2-ի 7-րդ պարբերությունում</p> <p>*/ Այս ազդեցությունների շարքում պետք է ընդգրկվեն երկրորդական, կուտակումային, բազմաձողական (սիներգիկ), կարճաժամկետ, միջնաժամկետ, երկարաժամկետ, կայուն և ժամանակավոր, բացասական և դրական ազդեցությունները</p>	<p>Առողջության հարցերը պետք է հաշվի առնվեն հոդված 2-ի 7-րդ պարբերությունում թվարկված հարցերի հետ միասին, օրինակ՝ երթևեկության աղմուկ և օդի աղտոտիչներ: Այս բաղադրիչների միջև կապերի նկարագրությունը կարևոր է, քանի որ դրա արդյունքում կարող են բացահայտվել այլ, ավելի կարևոր ազդեցություններ, որոնք անհնարին կլինեք բացահայտել բաղադրիչներն առանձին վերլուծելու դեպքում:</p> <p>Առողջական հարցերին անդրադարձող առավել համապարփակ մոտեցումների շրջանակներում հնարավոր է գնահատել առողջության համապատասխան որոշիչների վրա տվյալ պլանի կամ ծրագրի դրական ու բացասական ազդեցությունները և եզրահանգումներ կատարել պլանի կամ ծրագրի իրականացման դեպքում բնակչության առողջության համար բարվոք պայմանների ստեղծման հավանականության վերաբերյալ: Այս համատեքստում, առողջությունը ներառում է նաև բարեկեցության գաղափարը և չի սահմանափակվում հիվանդությունների բացակայությամբ:</p>
<p>7. Պլանի կամ ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի, այդ թվում՝ առողջության վրա վնասակար զգալի հետևանքների կանխման, նվազեցման կամ մեղմացման գործողություններ</p>	<p>Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների մեղմման ուղղված միջոցառումներն իրենց հերթին վնասակար ներգործություն կարող են ունենալ առողջության վրա կամ հակառակը: Ցանկացած ազդեցություն պետք է հաշվի առնվի:</p>
<p>8. Քննարկվող այլընտրանքային տարբերակների ընտրության հիմնավորում և գնահատման ացկացման նկարագրություն, որտեղ անդրադարձ է կատարվում տրամադրվող տեղեկատվության խնդիրներին, օրինակ՝ տեխնիկական թերություններ կամ սահմանափակ գիտելիքներ</p>	<p>Այս հարցը հանգամանալից քննարկվում է Ձեռնարկի աղյուսակ Ա4.2-ում:</p>
<p>9. Առաջարկվող պլանի կամ ծրագրի իրականացման հետևանքով</p>	<p>Առողջությանը հատուկ առչվող մշտադիտարկման հարցերի շարքում են՝</p> <ul style="list-style-type: none"> • Կարճաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունների

<p>բնապահպանական, այդ թվում՝ առողջապահական էական ազդեցությունների մշտադիտարկման նախատեսված գործողություններ</p>	<p>մշտադիտարկում: Ֆիզիկական միջավայրի փոփոխությունները կարող են կարճաժամկետ հետևանքներ ունենալ, օրինակ՝ տրանսպորտի կամ հողօգտագործման փոփոխությունները կարող են անմիջական ազդեցություն ունենալ երթևեկության պատահարների թվի վրա: Էկոհամակարգի այլ փոփոխությունների, օրինակ՝ օդի որակի և կլիմայի փոփոխության դեպքում, հետևանքներն անհամեմատ ավելի երկրաժամկետ ազդեցություններ են ենթադրում:</p> <ul style="list-style-type: none"> • Առողջական կարգավիճակի տարբերությունների մշտադիտարկում: Եթե շրջանակների որոշման և բնապահպանական զեկույցի պատրաստման փուլերում առողջապահական անհավասարություններին անդրադարձ է արվել, ապա կարևոր է համապատասխան ցուցանիշներն ընդգրկել մշտադիտարկման ռեժիմում: Մա օգտակար կլինի բնապահպանության և առողջապահության մասնագետներին, ինչպես նաև համահունչ կլինի հանրության շահագրգիռ ներկայացուցիչներին տեղեկատվություն տրամադրելու պահանջին: <p>Առողջական հետևանքների մշտադիտարկման իրագործելիությունը պայմանավորված է համապատասխան տեղեկատվության առկայությամբ, ինչը կարելի է ապահովել հետևյալ գործողությունների միջոցով՝</p> <ul style="list-style-type: none"> • <i>Ազգային, տարածաշրջանային և տեղական առկա տվյալների օգտագործում</i> Շատ հաճախ բնապահպանության և առողջապահության իրավասու մարմինները բնապահպանական և առողջապահական մշտադիտարկման գործող ծրագրեր են ունենում: • <i>Առողջական ցուցանիշների օգտագործում:</i> Տվյալ պլանի կամ ծրագրի առողջական ազդեցությունների մշտադիտարկման համար երբեմն կարող է նպատակահարմար լինել շարունակել օգտվել շրջանակների որոշման և բնապահպանական զեկույցի պատրաստման փուլերում ընտրված առողջական ցուցանիշներից: Մա հնարավորություն է ընձեռում ապահովել ՌԲԳ գործընթացի շրջանակներում կատարվող վերլուծությունների հետևողականությունը: Այնուամենայնիվ, մշտադիտարկման առկա համակարգերում առողջական նոր ցուցանիշներ ներմուծելու համար անհրաժեշտ փոփոխությունները կարող են դժվարությունների հանգեցնել: Այդ իսկ պատճառով մշտադիտարկման ցանկացած նոր համակարգի իրագործելիությունը պետք է մանրակրկիտ ուսումնասիրվի նախքան դրա հաստատումը:
<p>10. Հնարավոր անդրսահմանային զգալի բնապահպանական, այդ</p>	<p>Այս հարցը հանգամանալից քննարկվում է Ձեռնարկի աղյուսակ Ա.4.2-ում:</p>

<p>թվում՝ առողջապահական ազդեցություններ</p>	
<p>11. Ներկայացված տեղեկատվության ոչ տեխնիկական ամփոփագիր</p>	<p>Այս հարցը հանգամանալից քննարկվում է Ձեռնարկի աղյուսակ Ա4.2-ում:</p>

Հավելված Ա1.2

ՌԲԳ-Ի ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ
ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ՇՐՋԱԴԱՐՉԱՅԻՆ
ՕՐԵՆՔՆԵՐ ԵՎ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նշում. Շրջադարձային փաստաթղթերի սույն ցանկը սպառիչ չէ: Ազգային ուղենիշների փաստաթղթերը կարող են ցանկից հանված լինել և փոխարենը տեղադրված լինել կայքում:

1970	<p>«Միացյալ Նահանգների բնապահպանական քաղաքականության մասին» օրենքը (1969) պահանջում է, որ. «օրենքների կամ այլ խոշոր ֆեդերալ գործողությունների նախագծերը, որոնք... նշանակալի ազդեցություն կարող են ունենալշրջակա միջավայրի վրա, պետք է ներառեն...շրջակա միջավայրի վրա ազդեցությունների վերաբերյալ մանրամասն հաշվետվություն» (Հոդված 102 (2)(գ))</p> <p>«Շրջակա միջավայրի որակի մասին» Կալիֆոռնիայի օրենքը, որ կազմվել է «Բնապահպանական քաղաքականության մասին» ազգային օրենքի նմանությամբ և վերաբերում է առաջարկվող կամ նահանգային գործակալությունների կողմից ընդունված գործողություններին, այդ թվում՝ ծրագրերին, պլաններին և փուլային նախագծերին (Ուղենիշներ, հոդված 15165–15168):</p>
1970-ների կեսեր	<p><i>Բաց հետաքննություններ և կարևոր առաջարկների բնապահպանական գնահատումներ</i>, քաղաքականություն հարցերի քննարկում (օրինակ՝ Կանադայում 1974–1977թթ Մակքենզի հովտի նավթուղու վերաբերյալ հետաքննություն, Ավստրալիայում 1975–1977թթ Ռեյնջեր Ուրանիում ընկերության գործունեության բնապահպանական հետաքննություն):</p>
1978	<p>«Ազգային բնապահպանական քաղաքականության մասին» օրենքի <i>կանոնադրություն</i>, որը կազմվել է Շրջակա միջավայրի որակի խորհրդի կողմից, սահմանում է ծրագրի բնապահպանական ազդեցությունների ամփոփագրի եզրակացություններին համապատասխանող գործողություններ, որոնք կարող են դասակարգվել ըստ ընդհանուր նշանակության, աշխարհագրական վայրի կամ տեխնոլոգիայի (Հոդված 1052.4 (բ)):</p>
1986	<p>Նիդեռլանդներ, «<i>Բնապահպանական կառավարման մասին</i>» օրենք (փոփոխվել է 1994թ.), վերաբերում է կոնկրետ ազգային պլաններին և ծրագրերին, այդ թվում՝ բոլոր այն պլաններին ու ծրագրերին, որոնք ամրագրում են ՇՄԱԳ պահանջող նախագծերի վայրերը:</p>
1989	<p>Ավստրալիա, «<i>Ռեսուրսների գնահատման հանձնաժողովի մասին</i>» օրենք, այս օրենքի հիման վրա ստեղծվել է ռեսուրսների տնօրինման քաղաքականություններին առնչվող հարցերի վերաբերյալ անկախ հետաքննություններ իրականացնող մարմին (Հանձնաժողովի գործունեությունը դադարեցվել է 1993թ, օրենքը պահպանվել է):</p> <p>Համաշխարհային բանկ, «<i>Գործառնական հրահանգ 4.00</i>» (փոփոխվել է 1991, 1999), վերաբերում է ոլորտային և տարածաշրջանային բնապահպանական գնահատումներին (հավելված Ա. 6–8):</p>
1990	<p>Կանադա, «<i>Քաղաքականության և ծրագրերի նախագծերի բնապահպանական գնահատման գործընթաց</i>», հաստատված է Խորհրդի հրամանով (փոփոխվել է 1999թ.), վերաբերում է Կաբինետի հաստատմանը ներկայացվող առաջարկներին:</p>

1991	<p>Նոր Զելանդիա, «<i>Ռեսուրսների կառավարման մասին</i>» օրենք, կայունության ապահովմանը նպատակաուղղված շրջադարձային օրենք, որտեղ քաղաքականությունների, պլանավորման և կարգավորիչ գործառույթները միավորվում են մեկ ընդհանուր, համապարփակ ռեժիմի շրջանակներում:</p> <p>Միացյալ Թագավորություն, <i>Քաղաքականության գնահատման և շրջակա միջավայրի</i> մասին ուղեցույց, ներկայացնում է կենտրոնական պետական գործակալությունների համար նախատեսված խորհուրդներ (համալրվել է օրինակելի կիրառույթի մասին ուղենիշներով 1994թ, փոփոխվել է 1997թ. և թարմացվել 1998թ.):</p> <p>«Անդրսահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպուի կոնվենցիա), որն ուժի մեջ է մտել 1997թ, պահանջում է, որ Կողմերը «պատշաճ ձևով փորձեն կիրառել» ՇՄԱԳ-ի սկզբունքները քաղաքականությունների, պլանների և ծրագրերի նկատմամբ (հոդված 2.7):</p>
1992	<p><i>Քաղաքականությունների, պլանների և ծրագրերի ՇՄԱԳ-ների վերաբերյալ ԵՏՀ փորձնական ուսումնասիրություն</i>, որն անդամ երկրներին խորհուրդ է տալիս կիրառել դրա դրույթները:</p> <p>Հոնգ Կոնգ, այն ժամանակ գործող նախանգապետի որոշմամբ ընդունված «<i>Քաղաքականություններ ամրագրող փաստաթղթերի բնապահպանական հետևանքներ</i>» փաստաթուղթը, վերաբերում է Գործադիր խորհրդի նախագծերին (հետագայում կիրառվել է զարգացման պլանների նկատմամբ):</p> <p>Չեխիայի «Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների գնահատման մասին» օրենք, պահանջում է ՌԲԳ-ի իրականացում հայեցակարգերի լայն շրջանակի համար (այսինքն՝ քաղաքականություններ, ռազմավարություններ, պլաններ և ծրագրեր), որոնք մշակվում և ընդունվում են կենտրոնական պետական մարմինների կողմից:</p>
1993	<p>Դանիա, «<i>Կառավարության օրինագծերի և այլ առաջարկների բնապահպանական գնահատման մասին</i>» Վարչապետի գրասենյակի կողմից հրապարակված շրջաբերականը (փոփոխվել է 1995թ., 1998թ., երբ օրենքի ուժ է ձեռք բերել), վերաբերում է խորհրդարան ներկայացվող օրինագծերին և այն ռազմավարական առաջարկներին, որոնց շուրջ խորհրդարանի հետ խորհրդակցությունների կազմակերպում է պահանջվում:</p> <p>Եվրոպական հանձնաժողով, Ներքին կոմունիկացիայի գործակալության կողմից պատրաստված «<i>Օրենսդրական ծրագրի բնապահպանական գնահատում</i>», վերաբերում է Հանձնաժողովի օրինագծերին և այլ նախաձեռնություններին:</p>
1994	<p>Նորվեգիա, «<i>Բացատրական հայեցակարգերի և կառավարության կողմից ներկայացված առաջարկների գնահատում</i>», ընդունվել է վարչական հրամանագրով, պարունակում է շրջակա միջավայրին վերաբերող դրույթներ, սակայն հիմնականում վերաբերում է տնտեսական և վարչարարական հետևանքներին:</p> <p>Սլովակիա, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» օրենք, ամրագրում է զարգացման հիմնական քաղաքականությունների, ընտրված</p>

	տեղանքներում տարածքային պլանների և շրջակա միջավայրի վրա բացասական հետևանքների հնարավորություն պարունակող ցանկացած օրինագծի գնահատման պահանջ (հոդված 35):
1995	Նիդեռլանդներ, Կարինետի հրամանով ընդունված « <i>Բնապահպանական թեսթ</i> », վերաբերում է օրինագծերին և իրականացվում է կիրարկելիության, իրագործելիության և ձեռնարկատիրական գործունեության վրա ազդեցությունների գնահատման շրջանակներում:
1996	«Առանձին պլանների և ծրագրերի ազդեցությունների գնահատման վերաբերյալ հրահանգ կազմելու մասին Եվրոպական հանձնաժողովի առաջարկ» (COM (96) 511, փոփոխվել է համաձայն COM (99) 73-ի), այսուհետ՝ ՌԲԳ Հրահանգ:
1998	Ֆինլանդիա, « <i>Օրինագծերի բնապահպանական ազդեցությունների գնահատման ուղենիշներ</i> », հաստատվել է սկզբունքներն ընդունող որոշման հիման վրա, վերաբերում է օրինագծերի մշակմանը, ինչպես նաև հրամաններին և որոշումներին: « <i>Բնապահպանական հարցերի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության, որոշումների կայացման գործընթացում հանրության մասնակցության և արդարադատության հասանելիության մասին</i> » կոնվենցիա (Օրհուսի կոնվենցիա), 7-րդ և 8-րդ հոդվածներում հանրության մասնակցության պահանջն ամրագրող դրույթները վերաբերում են պլաններին, ծրագրերին և քաղաքականություններին, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանման մասին օրենքներին և կանոններին: « <i>Ռազմավարական բնապահպանական գնահատման վերաբերյալ ԵՏՀ տարածաշրջանի երկրների բնապահպանության նախարարների կողմից ընդունված հռչակագիր</i> » (ECE/CEP/56), երկրների և միջազգային ֆինանսական կազմակերպություններին կոչ է անում ՌԲԳ-ի ընդունումն ու կիրառումը դիտել որպես «առաջնահերթ նպատակ»:
1999	Ավստրալիա, « <i>Բնապահպանության և կենսաբազմազանության պահպանման մասին</i> » օրենք, պարունակում է քաղաքականությունների, պլանների և ծրագրերի շրջանակներում ՌԲԳ-ի կիրառումն ամրագրող դրույթներ: Ֆինլանդիա, « <i>Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների գնահատման ընթացակարգի մասին</i> » օրենք, վերաբերում է քաղաքականություններին, պլաններին և ծրագրերին: Միացյալ Թագավորություն, « <i>Կայունության տեսանկյունից տարածաշրջանային տարածքային ուղեցույցի գնահատման օրինակելի կիրառության առաջարկներ</i> » (վերջնական տեսքի է բերվել 2000 թ., իսկ 2005 թ. փոխարինվել է «Տարածաշրջանային տարածքային ռազմավարությունների կայունության գնահատում և տեղական զարգացման փաստաթղթեր» փաստաթղթով):
2001	Եվրոպական խորհուրդ և խորհրդարան, « <i>ՌԲԳ Հրահանգ</i> » (2001/42/EC), ուժի մեջ է մտել 2004 թ. հուլիսին, ներկայում ԵՄ անդամ պետությունների կողմից ներմուծվում է ազգային օրենսդրական դաշտ: Ֆրանսիա, « <i>Տրանսպորտի ոլորտին առնչվող պլանների և ծրագրերի բնապահպանական գնահատում</i> », Ֆրանսիայի՝ բնապահպանության հարցերի համար պատասխանատու գերատեսչություն:

2002	<p>«Ազդեցությունների գնահատման հանձնաժողովի կողմից հրապարակված հաղորդագրություն» (COM (2002) 276 վերջնական տարբերակ) (կուտակված փորձի հիման վրա վերանայվել է և լրացուցիչ զեկույց է պատրաստվել 2004թ, «Հանձնաժողովի աշխատակազմի աշխատանքային փաստաթուղթ, Ազդեցությունների գնահատման հետագա քայլեր, որոնք նպատակաուղղված են մրցունակության և կայուն զարգացման խթանմանը» (SEC (2004) 1377)):</p> <p>Ավստրիա, «Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների կարևորության գնահատում. ՌԲԳ շրջանակներում կիրառվող ստուգազննման մոտեցում և չափանիշներ», Գյուղատնտեսության, անտառտնտեսության, բնապահպանության և ջրային ռեսուրսների կառավարման ֆեդերալ նախարարություն:</p>
2003	<p>«Էսպուի կոնվենցիային կից ՌԲԳ Արձանագրություն», ընդունվել է Կիևում:</p> <p>Շոտլանդիա (Միացյալ Թագավորություն), «Զարգացման պլանների բնապահպանական գնահատում», Շոտլանդիայի գործադիր իշխանության Զարգացման հարցերի գերատեսչություն:</p>
2003	<p>Եվրոպական հանձնաժողով, «Հրահանգ 2001/42/EC-ի իրականացում. ՌԲԳ Հրահանգի պահանջների ուղեցույց»:</p>
2004	<p>Իռլանդիա, «ՌԲԳ Հրահանգի իրականացում. տարածաշրջանային իշխանությունների և պլանավորման իրավասու մարմինների համար նախատեսված ուղենիշների նախագիծ», Բնապահպանության, Մշակութային ժառանգության և տեղական կառավարման գերատեսչություն</p>
2005	<p>Միացյալ Թագավորություն, «Ռազմավարական բնապահպանական գնահատման գործնական ուղեցույց»:</p> <p>«Ռազմավարական բնապահպանական գնահատումը քաղաքականության մակարդակում. վերջերս գրանցված առաջընթաց, ներկա կարգավիճակ և ապագայի հեռանկարներ», Չեխիայի Հանրապետության բնապահպանության նախարարության պատվերով Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի կողմից պատրաստված հատոր:</p> <p>Հոնգ Կոնգ, «Ռազմավարական բնապահպանական գնահատման ձեռնարկ», Հոնգ Կոնգի հատուկ վարչական տարածաշրջան:</p> <p>Բավարիա (Գերմանիա), «Բնապահանական զեկույցի պատրաստման նախնական ուղենիշներ», Բավարիայի կառավարություն, Ներքին գործերի և Բնապահպանության նախարարություններ:</p> <p>Եվրոպական հանձնաժողով, «ՌԲԳ ձեռնարկ. տրանսպորտի ենթակառուցվածքներին առնչվող պլանների և ծրագրերի ռազմավարական բնապահպանական գնահատման ձեռնարկ», Էներգետիկայի և տրանսպորտի գլխավոր տնօրինություն:</p> <p>Ավստրիա, «Ռազմավարական բնապահպանական գնահատում. Շրջանակագրումից մինչև մշտադիտարկում», Գյուղատնտեսության, անտառտնտեսության, բնապահպանության և ջրային ռեսուրսների</p>

	<p>կառավարման ֆեդերալ նախարարություն:</p> <p>Ազդեցությունների գնահատման միջազգային ընկերակցություն, <i>ՌԲԳ-ի կիրառման միջազգային փորձի և տեսակետների վերաբերյալ համաժողով</i>, Պրագա:</p>
2006	<p>Տարածաշրջանային զարգացման ծրագրերի շրջանակներում կանաչապատման նախաձեռնությունների ցանց, «<i>ՌԲԳ գործընթացների ներդաշնակեցման 2007–2013թթ. քաղաքականության ձեռնարկ</i>»:</p> <p>ՏՀԶԿ /Զարգացման աջակցման հանձնաժողով, «<i>Ռազմավարական բնապահպանական գնահատման կիրառում. զարգացման ոլորտում համագործակցության ոլորտում օրինակելի կիրառույթի ուղեցույց</i>»:</p>
2010	<p><i>ՌԲԳ Արձանագրությունը</i> մտնում է ուժի մեջ:</p>

Հավելված Ա1.3

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ
ՌԲԳ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ՌԲԳ բարձրորակ գործընթացը իրագեկում է պլանի կամ ծրագրի մշակման համար պատասխանատու անձանց, որոշում կայացնող մարմիններին և հասարակության շահագրգիռ ներկայացուցիչներին ռազմավարական որոշումների կայացման վերաբերյալ, նպաստում է լավագույն տարբերակի ընտրությանը և ապահովում է ժողովրդավարության սկզբունքներին համահունչ որոշումների կայացման գործընթաց: Մա ապահովում է կայացված որոշումների վստահելիությունը և կրճատում նախագծերի շրջանակներում նախատեսված ՇՄԱԳ-ի համար պահանջվող ժամանակն ու միջոցները: Այս ամենն ապահովող բարձրակ ՌԲԳ գործընթացի հատկանիշները ներկայացվում են ստորև:

Ինտեգրված

- Ապահովում է կայուն զարգացմանն առնչվող բոլոր ռազմավարական որոշումների համապատասխան բնապահպանական գնահատման իրականացումը,
- Անդրադառնում է կենսաֆիզիկական, սոցիալական և տնտեսական հարցերի փոխկապվածություններին,
- Ներդաշնակեցված է համապատասխան հատվածներում և (անդրսահմանային) վայրերում գործող քաղաքականություններին և, համապատասխան դեպքերում, նախագծերի ՇՄԱԳ և որոշումների կայացման գործընթացներին:

Համահունչ կայուն զարգացման սկզբունքներին

- Նպաստում է առավել կայուն զարգացման տարբերակների և այլընտրանքային առաջարկների բացահայտմանը⁶³:

Կենտրոնացված

- Ապահովում է բավարար, վստահելի և կիրառելի տեղեկատվություն՝ զարգացման պլանավորման և համապատասխան որոշումների կայացման համար,
- Կենտրոնացած է կայուն զարգացման հիմնահարցերի շուրջ,
- Համապատասխանեցված է որոշումների կայացման գործընթացին բնորոշ հատկանիշներին,
- Ապահովում է ծախսարդյունավետության և ժամանակի տնտեսման բարձր մակարդակ:

Հաշվետու

- Պատասխանատու մարմինը պարտավորություն է կրում ընդունված ռազմավարական որոշման համար,
- Իրականացվում է արհեստավարժության, խստապահանջության, արդարության, անկողմնակալության և հավասարակշռման սկզբունքների հիման վրա,
- Ենթակա է անկախ ստուգայցերի և ստուգումների,
- Արձանագրում և հիմնավորում է որոշումների կայացման գործընթացում կայուն զարգացման հարցերի քննարկման արդյունքները:

Մասնակցային

- Իրագեկում և որոշումների կայացման գործընթացում ներգրավում է հանրության հետաքրքրված կամ շահագրգիռ ներկայացուցիչներին և համապատասխան պետական մարմիններին,

⁶³ Այսինքն, նպաստում է Ռիոյում 1992թ. ընդունված սահմանման համաձայն ընդհանուր կայուն զարգացման ռազմավարության մշակմանը [Օրակարգ 21, «Շրջակա միջավայրի և զարգացման մասին» Ռիոյի հռչակագիր, զետեղված է <http://www.un.org/esa/dsd/agenda21/> կայքէջում, սահմանվում է տվյալ երկրի կոնկրետ քաղաքականությունների շրջանակներում:

- փաստաթղթերի ձևակերպման և որոշումների կայացման գործընթացներում ուղղակիորեն անդրադառնում է նրանց արտահայտած տեսակետներին և մտահոգություններին,
- Ամրագրում է տեղեկատվության հստակ սահմանված, դյուրընկալելի պահանջներ և հետևում է, որ համապատասխան տեղեկատվությունը բավարար չափով մատչելի լինի:

Կրկնողական

- Հետևում է, որ գնահատումը պատրաստ լինի բավականի վաղ փուլում, որպեսզի հաշվի առնվի որոշումների կայացման և հետագա պլանավորման համատեքստում,
- Ռազմավարական որոշումների իրականացման ազդեցությունների վերաբերյալ բավարար տեղեկատվություն է տրամադրում՝ հնարավորություն ընձեռելով որոշումը փոփոխության ենթարկելու մասին դատողություններ կատարել և հետագա որոշումների հիմք ծառայել:

Հավելված Ա5.1

ԱՌԱՆՁԻՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Այս հավելվածում քննարկվում են հետևյալ մեթոդները՝

- Պաշտոնական և ոչ պաշտոնական ստուգացուցակներ
- Ազդեցությունների, հակասությունների կամ սիներգիաների մատրիցներ
- Հավաքական փորձագիտական եզրակացություններ, Դելֆիի մեթոդ
- Քարտեզների համախումբ և աշխարհագրական տեղեկատվության համակարգ (GIS)
- Միտումների վերլուծում և արտածում (էքստրապոլացիա)
- Որոշումների ծառացանցեր և ազդեցությունների ցանցեր
- Կանխատեսողական և սիմուլացիոն մոդելավորում
- Սցենարային տարբերակների կազմում
- Կենսապարբերաշրջանի գնահատումներ (ԿՊԳ)
- Ծախսերի և օգուտների վերլուծություն (ՇՕՎ)
- Բազմաչափանիշային վերլուծություն (ԲԶՎ)

Մեթոդ	Ֆորմալ և ոչ ֆորմալ ստուգացուցակներ
Նկարագրություն	<p>Ստուգացուցակը բաղկացած է հարցերից, որոնք ցանկալի է հաշվի առնել պլանի կամ ծրագրի տվյալ տեսակի գնահատման ժամանակ:</p> <p>Ստուգացուցակները կարող են թվարկել՝</p> <ul style="list-style-type: none"> • Շրջակա միջավայրի խնդիրներ, որոնք սովորաբար առնչվում են որոշակի պլանների և ծրագրերի • Զարգացման տարբեր գործողություններին առնչվող համապատասխան բնապահպանական նպատակներ • Ցուցանիշներ կամ որոշակի ուղղորդող հարցեր, որ կարող են արձարծվել որոշակի ոլորտների պլաններ կամ ծրագրեր գնահատելիս
ՌԲԳ շրջանակներում կիրառումը	<ul style="list-style-type: none"> • Համատեքստի և նախնական վիճակի վերլուծություն • Խնդիրների և ազդեցությունների սահմանում
Ուժեղ կողմեր	<ul style="list-style-type: none"> • Օգնում են մտաբերել տվյալ առաջադրանքին առնչվող ողջ տեղեկատվությունը • Պարզ միջոց են, որոնց օգնությամբ հնարավոր է որոշել, թե արդյոք տվյալ խնդիրներն առնչվում են քննարկվող առաջարկին, թե ոչ և խուսափել հնարավոր խնդիրներն անտեսելուց:
Թույլ կողմեր	<ul style="list-style-type: none"> • Վերլուծության նպատակահարմարության տեսանկյունից այս տարբերակը վերլուծական մեխանիզմ չունի • Նախատրամադրում է ստուգացուցակում չընդգրկված հնարավոր էական ազդեցությունների անտեսմանը • Դատողությունները կարող է շեղել ավելորդ տեղեկատվությամբ • Չի ամրագրում պատճառահետևանքային կապերը, ազդեցությունները դասակարգում է ըստ որոշակի ոչ ճկուն կատեգորիաների, մինչդեռ իրականում որևէ ազդեցություն բարդ համակարգի ընդամենը մի բաղադրիչը կարող է լինել

Մեթոդ	Ազդեցությունների, հակասությունների կամ սիներգիաների մատրիցներ
Նկարագրություն	Ազդեցությունների մատրիցների օգնությամբ հնարավոր է բացահայտել և ներկայացնել նախատեսված աշխատանքների հնարավոր

	<p>ազդեցությունները (օրինակ՝ նախատեսված նպատակները կամ գործողությունները) շրջակա միջավայրի տարբեր բաղադրիչների վրա: Դրանք նման են ստուգացուցակներին և կարող են ներկայացվել որպես երկչափ կամ երկհարթությային ստուգացուցակ: Դրանցում օգտագործվում են խորհրդանիշեր, նշաններ և թվային միավորներ, տարբեր սանդղակներ և գունային պայմանանշաններ՝ ազդեցությունների բնույթը, դրանց մոտավոր մասշտաբն ու ուժգնությունը ներկայացնելու համար: Մատրիցները կարող են նաև ցուցադրել կուտակումային և անուղղակի ազդեցությունները և հետևանքների փոխազդեցությունները: Օրինակ՝ դրանք կարող են ներառել նախատեսված աշխատանքների ընդհանուր ազդեցություններն ամփոփող սյունակներ կամ շարքեր:</p> <p>Ներկայացվող տեղեկատվությունը պետք է հեշտությամբ ստուգվի, յուրաքանչյուր մատրիցին անհրաժեշտ է կցել կոնկրետ ազդեցությունների բնույթը բացատրող տեքստ:</p> <p>Հակասությունների կամ սիներգիաների մատրիցները ցույց են տալիս նախատեսված միջամտությունների (օրինակ՝ նախատեսված նպատակների կամ գործողությունների) և համապատասխան բնապահպանական կամ այլ նպատակների (օրինակ՝ առավել համապարփակ գնահատումների դեպքում) փոխադարձ կապերը</p>
<p>ՌԲԳ շրջանակներում կիրառումը</p>	<ul style="list-style-type: none"> • Խնդիրների և ազդեցությունների բացահայտում • Ազդեցությունների գնահատում • Այլընտրանքային տարբերակների մշակման և համեմատման նպատակահարմար միջոց
<p>Ուժեղ կողմեր</p>	<ul style="list-style-type: none"> • Ներկայացնում է ազդեցությունների ամփոփ տեսողական պատկեր, որը հեշտ է մեկնաբանել • Կարելի է համապատասխանեցնել կուտակումային ազդեցությունների, ինչպես նաև հետևանքների փոխազդեցությունների ամփոփման պահանջներին • Օգտակար գործիք է, օրինակ, ենթակայական (սուբյեկտիվ) գնահատումների կամ թվային մոդելավորման արդյունքները ներկայացնելու համար • Կարելի է կազմել այնպես, որ նաև անդրադառնա հետևանքների փոխազդեցություններին և տարբեր գործողությունների կամ մի շարք նախագծերի ազդեցությունների համագումարի վերլուծությանը: Մատրիցները կարելի է նաև օգտագործել այլընտրանքային տարբերակների համեմատության համար:
<p>Թույլ կողմեր</p>	<ul style="list-style-type: none"> • Մատրիցները հաճախ ներկայացնում են միայն ուղղակի ազդեցությունները • Մատրիցներից օգտվողները կարող են չափից ավելի բարդ վերլուծությունների վրա կենտրոնանալ՝ խորամուղ լինելով բոլոր նախատեսված գործողությունների և բնապահպանական գործոնների բոլոր հնարավոր փոխազդեցությունների քննարկմանը: Մա ժամանակատար գործընթաց է և կարող է ուշադրությունը կարևոր ազդեցություններից շեղել դեպի անկարևորները:
<p>Գործնական կիրառման</p>	<p>Չեխիայի Հանրապետության ազգային զարգացման գործողությունների գնահատման մատրիցների ընտրանք (<i>Ռազմավարական</i>)</p>

<p>օրինակներ կամ լրացուցիչ տեղեկատվության հիմնական աղբյուրներ</p>	<p><i>բնապահպանական գնահատման շրջանակներում հանրության մասնակցության և առողջական հարցերի միջազգային սեմինարի արձանագրություն</i> (2001, ՏԲԿ), էջ 122, գետեղված է http://archive.rec.org/REC/Publications/Proceedings/SEAprceedings.pdf կայքէջում):</p> <p>Այլընտրանքների ստոգանման համար առաջարկվող մատիցային մեթոդներ (ՌԲԳ-ի շրջանակներում ածխածնի երկօքսիդի գատման և պահեստավորման մեթոդներ, գետեղված է http://uregina.ca/ghgt7/PDF/papers/poster/143.pdf կայքէջում):</p>
---	---

Մեթոդ	Հավաքական փորձագիտական եզրակացություններ, Դելֆիի մեթոդ
<p>Նկարագրություն</p>	<p>Հավաքական փորձագիտական եզրակացությունները հենվում են համապատասխան ոլորտներում ճանաչված փորձագետների նախնական կարծիքները շարունակաբար ամփոփելու սկզբունքի վրա:</p> <p>Այս նպատակին ծառայող կոնկրետ ձևերից են խնդիրների հանգուցալուծմանն ուղղված պարզ սեմինարները, հարցազրույցները կամ հարցաշարերը (օրինակ՝ հնարավոր ազդեցությունների և ռիսկերի գնահատում), ինչպես նաև առավել բարդ մեթոդներ: Դրանք ամփոփված են Հավելված Ա5.2-ում:</p> <p>Դելֆիի մեթոդը հավաքական փորձագիտական եզրակացությունների ձևավորման համակարգված և արդյունավետ գործիք է: Այն հնարավորություն է ընձեռում միմյանց հետ անմիջական շփում չունեցող փորձագետների մեծ խմբում բացահայտել տիրապետող տեսանկյունը: Այս մեթոդը նվազեցնում է ծախսերը և աշխարհագրական տարբեր վայրերում սփռված փորձագետների մասնակցության հնարավորություն է տալիս: Այն նաև սահմանում է սկզբունքներ և քայլեր, որոնց օգնությամբ հնարավոր է ձևակերպել փորձագիտական եզրակացություններ՝ օգտվելով առավել քիչ ժամանակատար մեթոդներից (օրինակ՝ սեմինարներ, համաժողովներ և այլն):</p> <p>Դելֆիի մեթոդը հիմնված է հետևյալ հիմնական քայլերի վրա.</p> <ul style="list-style-type: none"> • Պարզել անհրաժեշտ տեղեկատվության բնույթը, ձևակերպել հարցերը և սահմանել գործընթացի ժամանակացույցը • Որոշել Դելֆիի քննախմբում ընդգրկվող փորձագետների համապատասխան թիվը և բացատրել առաջադրանքները • Պատրաստել և բաժանել ազատ պատասխան կամ պատասխանի սահմանափակ թվով տարբերակներ ենթադրող հարցերի նախնական ցուցակ • Հավաքել և վերլուծել առաջին խմբաքանակի պատասխանները, կազմել պատասխանների ընդհանուր ցանկ: Եթե ազատ պատասխան ենթադրող հարցեր շատ են ընդգրկվել, ապա ստացված պատասխանները վերլուծել համապատասխան տեսական շրջանակի, տիպաբանության սահմաններում կամ ամփոփ համատեքստում: • Նույն հարցերն ուղարկել նույն փորձագետներին երկրորդ և երրորդ անգամ: Անհրաժեշտության դեպքում գործընթացը

	<p>կրկնել լրացուցիչ անգամներ: Պատասխաններն ընդգրկել համապատասխան հարցերի հետ, որպեսզի փորձագետները ծանոթանան այլոց կողմից ներկայացված տեսակետներին և փոփոխեն, հարմարեցնեն իրենց պատասխանները:</p> <p>Հարցվողները կընթերցեն միմյանց կարծիքները և կրկին կպատասխանեն սահմանված հարցերին: Տեղեկատվության փոխանակման ընթացքում մարդիկ իրենց տեսակետներում ընդգրկում են այլոց կողմից ներկայացված կարծիքներն ու տեղեկատվությունը և որոշումների կայացման գործընթացում քննարկման ենթակա կարևորագույն հարցերի շուրջ բավականին ստույգ պատկերացում են կազմում:</p> <ul style="list-style-type: none"> • Վերջնական հաշվետվությունը նախապատրաստել և տրամադրել փորձագետներին: Դելֆիի փորձագիտական քննախմբում ընդգրկվելու շարժառիթներից մեկը, հատկապես մասնագետների դեպքում, Դելֆիի ուսումնասիրության արդյունքների մասին սկզբնաղբյուրից, մյուսներից վաղ տեղեկանալն է:
<p>ՌԲԳ շրջանակներում կիրառումը</p>	<ul style="list-style-type: none"> • Համատեքստի և նախնական վիճակի վերլուծություն • Խնդիրների և ազդեցությունների բացահայտում • Ազդեցությունների գնահատում
<p>Ուժեղ կողմեր</p>	<ul style="list-style-type: none"> • Կարող է լուծել տեխնիկական կամ բարդ խնդիրներ • Միմյանցից հեռու գտնվող մեծ թվով շահագրգիռ կողմերի, որոշումների կայացման գործընթացի շրջանակներում, կարծիքների փոխանակման և համաձայնության գալու հնարավորություն է ընձեռում • Հարմարավետ է մասնակիցների համար, քանի որ կարող են այս գործընթացին մասնակցել տնից կամ գրասենյակից
<p>Թույլ կողմեր</p>	<ul style="list-style-type: none"> • Գործընթացի կազմակերպիչների համար ժամանակատար է (կարող է տևել մի քանի ամիս) • Մասնակիցները կարող են ետ կանգնել այս գործընթացից, եթե այն չափազանց երկար ձգվի կամ եթե նրանք այլ պարտավորություններ ունեն • Հարկավոր է գնահատել և փոխանցել մեծ ծավալով տվյալներ, այսինքն այս գործընթացը դժվար է կառավարել
<p>Գործնական կիրառման օրինակներ կամ լրացուցիչ տեղեկատվության հիմնական աղբյուրներ</p>	<p>Նեհայլի, Ջ. Մ. (2001 թ.) «<i>Բնչպես վարել Դելֆիի մեթոդով ուսումնասիրություն</i>»</p> <p>Բ. Դիք, «<i>Դելֆիի մեթոդն առերես</i>» (2000 թ., գործնական գիտահետազոտական ռեսուրսներ), զետեղված է http://www.scu.edu.au/schools/gcm/ar/arp/delphi.html կայքէջում:</p>

<p>Մեթոդ</p>	<p>Քարտեզների համախումբ և աշխարհագրական տեղեկատվության համակարգ (GIS)</p>
<p>Նկարագրություն</p>	<p>Քարտեզների համախումբը և GIS համակարգը ազդեցությունների տարածքային բաշխվածությունը բացահայտելու մեթոդներ են: Երկու</p>

	<p>մեթոդի դեպքում էլ պատրաստվում են քարտեզներ և տեղեկատվության ենթաշերտեր, որոնք հետագայում համախմբվում են մեկ պատկերում: Դրանք կարող են՝</p> <ul style="list-style-type: none"> • Տրամադրել տվյալ շրջակա միջավայրի, այդ թվում՝ առողջության վրա ազդեցությունների համակցված պատկերը (զգայուն տարածքներ կամ ռեսուրսներ, ընթացիկ դժվարություններ և այլն) • Ներկայացնել նախկինում իրականացված աշխատանքների ազդեցությունները • Ցուցադրել հետագա գործողությունների հնարավոր ազդեցությունները • Վերլուծել կուտակումային ազդեցությունները կամ ազդեցությունները մի շարք բնապահպանական գործոնների վրա: <p>Տարածքային վերլուծության կարևորագույն առանձնահատկություններից է տեղագրական տվյալները հաշվի առնելու ճկունությունը, ինչն առանցքային նշանակություն ունի ենթակառուցվածքները պլանավորելիս կամ որոշակի ազդեցություններ վերլուծելիս (օրինակ՝ աղմուկ, տեղական օդի որակ, տեսողական հետևանքներ):</p> <p>Ձեռքով պատրաստող քարտեզների համախումբը ստեղծվում է տարբեր տվյալներ պարունակող թափանցիկ քարտեզները մեկը մյուսի վրա դնելու միջոցով:</p> <p>GIS համակարգի միջոցով հնարավոր է բազմաշերտ էլեկտրոնային քարտեզներ կազմել, այս մեթոդը կարողի է համարել քարտեզների համախմբման տեխնիկապես առավել հազեցած տարբերակը: GIS համակարգը կարող է օգտակար լինել մեծ ծավալով տվյալներ մշակելու դեպքում: GIS-ի հիմքը կազմելուց հետո լրացուցիչ տեղեկատվություն ավելացնելը կամ տվյալներ փոփոխելը դժվարություն չեն ներկայացնում, հետևաբար թե՛ մուտքային և թե՛ ելքային տվյալները հեշտ է թարմացնել:</p>
<p>ՌԲԳ շրջանակներում կիրառումը</p>	<ul style="list-style-type: none"> • Համատեքստի և նախնական վիճակի վերլուծություն • Խնդիրների և ազդեցությունների բացահայտում • Ազդեցությունների գնահատում • Այլընտրանքային տարբերակների մշակման և համեմատման նպատակահարմար միջոց
<p>Ուժեղ կողմեր</p>	<ul style="list-style-type: none"> • Երկու մեթոդն էլ փաստացի, ներկա և հետագա ազդեցությունների տեսողական պատկերն են տրամադրում
<p>Թույլ կողմեր</p>	<ul style="list-style-type: none"> • Երկու մեթոդն էլ թանկ և ժամանակատար են
<p>Գործնական կիրառման օրինակներ կամ լրացուցիչ տեղեկատվության հիմնական</p>	<p><i>«Արևելյան Միդլանդս տարածաշրջանում ռազմավարական բնապահպանական գնահատման (ՌԲԳ) և հետագա հանույթների»</i> մասին Բրիտանական երկրաբանական կադարստրի հաշվետվությունը (2004 թ.) ներկայացնում է GIS համակարգից օգտվելու մի շարք մեթոդներ և մոտեցումներ (զետեղված է http://www.bgs.ac.uk/downloads/browse.cfm?sec=12&cat=136)</p>

աղբյուրներ	կայքէջում):
------------	-------------

Մեթոդ	Միտումների վերլուծում և արտածում (էքստրապոլացիա)
Նկարագրություն	<p>Միտումների ճշգրիտ վերլուծությունը ցանկացած ռազմավարական վերլուծության կարևորագույն բաղադրիչներից է: ՌԲԳ-ի համատեքստում դա կարելի է սահմանել որպես ժամանակի ընթացքում բնապահպանական խնդիրների և շրջակա միջավայրի փոփոխությունների մեկնաբանություն:</p> <p>Միտումների վերլուծությունը բացահայտում և կանխատեսում է միտումները կամ ցուցանիշների կրկնվող շարքերը: Միտումները կարող են լինել գծային, ցուցային կամ պարբերաշրջանային (ցիկլիկ) և հնարավորության դեպքում դրանք պետք է վերլուծված լինեն համապատասխան ժամանակային միջակայքերում: Միտումների տեսողական ներկայացումը կարող է լինել բավականին պարզունակ, օրինակ՝ գծային պատկեր, կամ բարդ, օրինակ՝ եռաչափ գրաֆիկա կամ տեսասիմուլացիա: Միտումների վերլուծության կարելի է կատարել մի շարք համակարգչային ծրագրերի օգնությամբ (օրինակ՝ դրանց ամենապարզունակ տեսակներից մեկը համակարգչային աղյուսակներ կազմող ծրագրերն են, իսկ տեխնիկապես առավել բարդ ծրագրերից են RATS, GAUSS, JMP և այլն):</p> <p>Միտումների վերլուծության միջոցով հնարավոր է ցույց տալ բնապահպանական խնդիրների և շրջակա միջավայրում համապատասխան (երբեմն ուշացումով արտահայտվող) փոփոխությունների փոխկապվածությունը: Որպես այդպիսին, այն կարող է նաև օգնել հետագա ազդեցությունները կանխատեսելու գործում: Որոշ միտումներ կարելի է արտածել հենվելով այն ենթադրության վրա, որ միտման ուղվածությունն ու տեմպերը կպահպանվեն: Այս պարագայում կարևոր է հաշվի առնել, որ յուրաքանչյուր միտում իր համապատասխան հակամիտումն ունի: Գերպարզեցված արտածումները, որոնց դեպքում հաշվի չեն առնվում միտման հակադարձային կետերը (օրինակ՝ երբ շրջակա միջավայրի ազդեցությունների տարողունակությունը սպառվել կամ գերազանցվել է) կամ տիրապետող հակամիտումները, կարող են թյուր պատկերացումներ տալ:</p> <p>Այսպիսով, միտումների արտածումը կարող է կարևոր դեր խաղալ միջնաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումների կազմման համար, երբ նշանակալի հակամիտումներ կամ շրջադարձային կետեր չեն նախատեսվում: Երկարաժամկետ միտումները ճշգրտությամբ հնարավոր է ներկայացնել միայն մոդելավորմամբ և ոչ բոլոր դեպքերում:</p>
ՌԲԳ շրջանակներում կիրառումը	<ul style="list-style-type: none"> • Համատեքստի և նախնական վիճակի վերլուծություն • Ազդեցությունների գնահատում
Ուժեղ կողմեր	<ul style="list-style-type: none"> • Երկար ժամանակահատվածների կտրվածքով շրջակա միջավայրի տվյալներ տիրապետելու դեպքում կարող է մեծապես օգնել կուտակումային ազդեցությունների քանակական արտահայտությունը որոշելու գործում

Թույլ կողմեր	<ul style="list-style-type: none"> • Հաճախ ստեղծվում են իրավիճակներ, երբ անհնարին է ձեռք բերել համապատասխան կամ բավարար չափով տեղեկատվություն որոշակի բնապահպանական խնդիրների վերաբերյալ • Պակասող տվյալների դեպքում անհրաժեշտ է օգտվել համապատասխան վիճակագրական մեթոդներից՝ միտումները ճիշտ մեկնաբանելու համար: Նման վերլուծությունը բավականին բարդ է իրականացնել:
Գործնական կիրառման օրինակներ կամ լրացուցիչ տեղեկատվության հիմնական աղբյուրներ	<p>Միտումների վերլուծության տարբեր օրինակներ են բերված Միացյալ Թագավորության տրանսպորտի նախարարության կողմից հրատարակված «<i>Ռեզումեի վարակի վնասվածքների և ծրագրերի համար</i>» վերտառությամբ ուղեցույցում (2004 թ.), գտնված է http://www.dft.gov.uk/webtag/documents/projectmanager/unit2.11.php կայքէջում:</p>

Մեթոդ	Որոշումների ծառացանցեր և ազդեցությունների ցանցեր
Նկարագրություն	<p>Ցանցերը և համակարգերը ցույց են տալիս պատճառահետևանքային կապերը: Դրանք բացահայտում են ազդեցության փոփոխման ուղեծիրը՝ շղթաների (ցանցերի) կամ սարդոստայնների (համակարգային գծագրերի) միջոցով նախատեսված աշխատանքների և դրանց իրականացման վայրի շրջակա միջավայրի միջև կապերն ընդգծելու միջոցով: Այս մեթոդների միջոցով հնարավոր է ցույց տալ պլանի կամ ծրագրի ազդեցություններն ու հետևանքները հետագա որոշումների վրա և դրանց շաղկապված ազդեցությունն այլ զարգացումների վրա (որոշումների ծառացանցեր) կամ դրանց աստիճանական անցումը ուղղակի և անմիջապես արտահայտվող ազդեցություններից անուղղակի կամ երկարաժամկետ կամ ուշացումով արտահայտվող ազդեցությունների (ազդեցությունների ցանցեր):</p> <p>Բավարար տվյալների տիրապետելու դեպքում հնարավոր է ցանցային գծագրերում ներառել քանակական չափումներ: Այս մեթոդը մոդելավորման պարզ ձև է և թույլ է տալիս գնահատել ազդեցությունները և դրանց փոխազդեցությունները (մոդելավորման մասին տե՛ս ստորև):</p> <p>Ցանց կամ համակարգ մշակելիս հարկավոր է նախաձեռնել հետևյալ քայլերը՝</p> <ul style="list-style-type: none"> • Քննարկել և թվարկել նախատեսված գործողությունները • Բացահայտել յուրաքանչյուր գործողության ազդեցությունն այլ զարգացումների վրա կամ շրջակա միջավայրի տարբեր տարրերի վրա ուղղակի ազդեցությունները • Բացահայտել անուղղակի շաղկապված ազդեցություններն այլ զարգացումների կամ բնապահպանական գործոնների վրա՝ ցույց տալով, թե ուղղակի հետևանքներն ինչպես են վերածվում անուղղակի ազդեցությունների • Որոշել, թե արդյոք ազդեցությունների փոփոխման այս ուղեծրի

	<p>կամ շրջակա միջավայրի որևէ գործոնի վրա կուտակումային ազդեցությունների հավանականություն կա, թե ոչ:</p> <ul style="list-style-type: none"> • Համապատասխան դեպքերում վերլուծել ազդեցությունների պարբերաշրջանները, եթե կան այդպիսիք • Համապատասխան դեպքերում ազդեցությունների գնահատման պարզ մոդելավորման համար օգտվել քանակական մեթոդներից:
ՌԲԳ շրջանակներում կիրառումը	<ul style="list-style-type: none"> • Խնդիրների և հետևանքների բացահայտում • Ազդեցությունների գնահատում • Այլընտրանքային տարբերակների մշակման և համեմատման նպատակահարմար միջոց:
Ուժեղ կողմեր	<ul style="list-style-type: none"> • Գծագրերի օգնությամբ ավելի հեշտ է ազդեցությունների մասին հստակ պատկերացում կազմել • Ցանցային գծագրերը հստակ ցույց են տալիս փոխազդեցությունների ուղիները, բացատրում են պատճառահետևանքային կապերը • Թեև ցանցի վերլուծությունը քանակական չէ, բայց նայնպես դրա հիման վրա հնարավոր է որոշել, թե որ գործընթացները կարելի է ներկայացնել քանակական արտահայտությամբ և առավել մանրամասն մոդելավորման ենթարկվել
Թույլ կողմեր	<ul style="list-style-type: none"> • Տարածքի կամ ժամանակի հարթությունները չեն ներկայացվում • Ցանցերի վերլուծությունը ենթադրում է ազդեցությունների գնահատման ամբողջական, համապարփակ մոտեցում, հետևաբար կարող է բավականին աշխատատար լինել • Գծագրերը կարող են չափից ավելի բարդ լինել

Մեթոդ	Կանխատեսողական և սիմուլացիոն մոդելավորում
Նկարագրություն	<p>Մոդելավորումը վերլուծական գործիք է, որը շրջակա միջավայրի պայմանների սիմուլացիայի միջոցով թույլ է տալիս շրջակա միջավայրի վրա ազդեցությունների քանակական արտահայտություն տալ:</p> <p>Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների մոդելավորման համար հաճախ օգտագործվում են համակարգչային տեխնոլոգիաներ:</p> <p>Մաթեմատիկական մոդելների միջոցով հնարավոր է իրականացնել շրջակա միջավայրի տարբեր գործոնների տարածական և ժամանակային վերլուծություն, օրինակ օդի և ջրի որակ, ջրային ծավալներ և հոսքեր, աղմուկի մակարդակ, հողածածկույթի և բուսականության վրա օդատարած նստվածքներ: Կան նաև այլ մոդելներ, օրինակ՝ սոցիալ-տնտեսական մոդելներ, կենսավայրերի մոդելներ և փորձագիտական համակարգեր, որոնք հնարավորություն են ընձեռում որոշակի համակարգով որոշելու տվյալ նախագծի ազդեցությունները:</p> <p>Առավել արդյունավետ և հաճախ օգտագործվող մոդելներից են օդի որակի, ջրի որակի և աղմուկի, ինչպես նաև էկոլոգիական և տեսողական մոդելավորման տարբերակները: Նմանօրինակ ազդեցությունների գնահատման համար մի շարք տարբեր մոդելներ կան: Դրանք կարող են կիրառվել նախատեսված պլանի կամ ծրագրի</p>

	<p>շրջանակներում ընդգրկված տարբեր գործողությունների ուղղակի և կուտակումային ազդեցությունների, ինչպես նաև՝ արտանետումներով պայմանավորված կամ զարգացման տարբեր առաջարկներից բխող անուղղակի հետևանքների վերլուծության համար:</p>
ՌԲԳ շրջանակներում կիրառումը	<ul style="list-style-type: none"> • Ազդեցությունների գնահատում • Այլընտրանքային տարբերակների մշակման և համեմատման նպատակահարմար միջոց
Ուժեղ կողմեր	<ul style="list-style-type: none"> • Աղմուկի, օդի տարածման և հիդրոդինամիկ մոդելները հղկված և ընդհանրացված մոդելներ են, որոնց օգտագործումը նպատակահարմար է ուղղակի և կուտակումային ազդեցությունների վերլուծության համար • Մոդելավորման արդյունքները կարելի է արդյունավետությամբ համատեղել համախմբման մեթոդների հետ, օրինակ՝ այլընտրանքային տարբերակները գնահատելու համար: • Մոդելավորումը հատկապես արդյունավետ մեթոդ է ժամանակի և տարածքի հարթություններում ազդեցությունների սիմուլացիա անցկացնելու համար:
Թույլ կողմեր	<ul style="list-style-type: none"> • Մոդելավորումը խիստ ծախսատար և ժամանակատար մեթոդ է • Մոդելավորման ճշգրտությունը ամբողջովին կախված է շջակա միջավայրի նախնական վիճակի տվյալներից և կատարված ենթադրություններից: • Ցանկացած մոդել դժվարությամբ կարող է իրատեսություն անդրադառնալ բնական համակարգի բոլոր նրբություններին • Մոդելները, որպես կանոն, հոռետեսական արդյունքներ ստացող մեթոդի համբավ ունեն, տվյալները համեմատաբար հեշտ է աղավաղել • Նոր մոդելի մշակումը սովորաբար պահանջում է ծախսերի, փորձագիտական գիտելիքների, ժամանակի և, հնարավոր է՝ տվյալների մեծ ներդրում: Այդ իսկ պատճառով առավել նպատակահարմար է դրանք կիրառել խոշոր և առավել բարդ նախագծերի համար: • Հաճախ ավելի նպատակահարմար է օգտվել նախկինում կիրառված, հետևաբար հաստատված և ընդունված մոդելներից:

Մեթոդ	Սցենարային տարբերակների կազմում
Նկարագրություն	<p>Սցենարային տարբերակների մշակումը ենթադրական իրավիճակների մշակման գործընթաց է, որտեղ հաշվի են առնվում հետագա զարգացումները պայմանավորող ամենաանորոշ և կարևոր շարժիչ գործոնները: Այս մեթոդն անդրադառնում է հետևյալ հարցերին՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Որո՞նք են շարժիչ ուժերը 2. Ի՞նչ անորոշություններ կան 3. Ի՞նչն է անխուսափելի 4. Ի՞նչ կլինի այս կամ այն սցենարային իրավիճակի դեպքում: <p>Սցենարային տարբերակների մշակումը երբեմն նմանեցվում է</p>

կանխատեսմանը, որը նույնպես կիրառվում է հետագա իրադարձությունները կանխատեսելու համար, սակայն հենվում է փաստացի տվյալների հիման վրա կատարվող հաշվարկների վրա: Սցենարային տարբերակներ կազմելու տարբեր մեթոդներ կան: Փիթեր Շվարցի հեղինակած «Երկարաժամկետ հայեցակետի ձևավորման արվեստը»⁶⁴ գրքում նկարագրվող՝ ութ քայլից բաղկացած մեթոդը կարող է օգտակար լինել ՌԲԳ-ի շրջանակներում: Նշված ութ քայլերն են՝

1. Մահմանել կենտրոնական խնդիրը կամ որոշումը: Ո՞ր դեպքում սցենարային տարբերակներն օգտակար կլինեն: Ի՞նչ էք իրականում ուզում պարզել:
2. Որոշել տեղի շրջակա միջավայրի կարևորագույն ուժերը: Ի՞նչ գործոններ են ազդում այդ կենտրոնական խնդրի կամ որոշման վրա: Ի՞նչ տեղեկատվության կարիք կունենան որոշումներ կայացնողներն իրենց ընտրությունը կատարելու համար:
3. Որոշել շարժիչ ուժերը: Ի՞նչ կարևոր միտումներ են ազդում հիմնական ուժերի վրա:
4. Ըստ կարևորության և անորոշության աստիճանի դասակարգել հիմնական և շարժիչ ուժերը: Առանձնացված հիմնական կամ շարժիչ ուժերը հարկավոր է մանրագնի ուսումնասիրել, քանի որ դրանք տարբեր սցենարային տարբերակների կազմման համար վճռորոշ դեր են կատարում: Լրացուցիչ ուսումնասիրման համար ընտրել երկու կամ երեք գործոն:
5. Ընտրել սցենարի տրամաբանությունը: Աստիճանական դասակարգումից հետո առկա տեղեկատվության հիման վրա որոշել սցենարային տարբերակների կազմման հիմնական փոփոխականները:
6. Կազմված սցենարների տարբերակները հղկել 2-րդ և 3-րդ քայլերում առանձնացված հիմնական գործոնների և շարժիչ ուժերի համատեքստում: Սցենարային տարբերակում հարկավոր է յուրաքանչյուր հիմնական գործոնին և շարժիչ ուժին դեր վերագրել: Օրինակ՝ երկու հիմնական գործոն և երկու շարժիչ ուժի դեպքում հնարավոր է չորս համակցություն, որոնց հիման վրա հնարավոր է մշակել տարբեր սցենարային տարբերակների բովանդակությունը:
7. Մահմանել հետևանքները: Սցենարային տարբերակները կազմելուց հետո հարկավոր է անդրադառնալ հետևանքներին: Ի՞նչ տեղի կունենա տարբեր սցենարային տարբերակների դեպքում: Սցենարային տարբերակներում ընդգրկեք տարատեսակ հնարավորություններ:
8. Ընտրել ուղղորդող ցուցանիշները և շրջադարձային կետերը: Մշակված սցենարային տարբերակները արտածե՛ք իրականությանը. հաշվի առնելով նկատվող միտումները՝ դրանցից մի քանիսն առավել իրատեսական կլինեն, քան մյուսները: Այնուհետև, սահմանեք լրացուցիչ ցուցանիշներ (օրինակ՝ ուղղորդող ցուցանիշներ), որոնք կարող են նախապես ազդարարել տվյալ սցենարային տարբերակի հավանական հաստատումը:

<p>ՌԲԳ շրջանակներում կիրառումը</p>	<ul style="list-style-type: none"> • Ազդեցությունների գնահատում • Այլընտրանքային տարբերակների մշակման և համեմատման նպատակահարմար միջոց
<p>Ուժեղ կողմեր</p>	<ul style="list-style-type: none"> • Սցենարներն իրականության պարզեցված տարբերակներ են և բարդ համակարգերի հետ աշխատող մարդկանց մոտ ստեղծում են միասնական պատկերացում • Դրանք կարող են կիրառվել տարբեր գաղափարներ փորձարկելու և դրանց հետևանքներն ուսումնասիրելու համար:
<p>Թույլ կողմեր</p>	<ul style="list-style-type: none"> • Սցենարային տարբերակների մշակումն ու մեկնաբանությունը ենթադրում են համեմատաբար բարձր կարգի տեխնիկական հմտություններ • Սցենարային տարբերակների հիման վրա վերլուծության որակը կախված է կիրառվող մոդելից և օգտագործվող տվյալներից: Հարկավոր է զգուշությամբ փորձարկել և ստուգել տվյալները՝ սխալ մոդելի վրա հիմնված որոշումներից կամ գործողություններից խուսափելու համար: • Սցենարներում կարող են կիրառվել բարդ մաթեմատիկական գործողություններ կամ գրաֆիկական պատկերներ, որոնք ոչ մասնագիտական լսարանների և քաղաքականակություն մշակողների համար դժվարըմբռնելի կարող են լինել:
<p>Գործնական կիրառման օրինակներ կամ լրացուցիչ տեղեկատվության հիմնական աղբյուրներ</p>	<ul style="list-style-type: none"> • Սցենարային իրավիճակների մշակման տարբեր մոտեցումների մանրամասն նկարագրություններ կարելի է գտնել հետևյալ կայքէջում՝ http://www.gbn.com/about/scenario_planning.php. • Համաշխարհային գործարար ցանց (http://www.gbn.com/). • Սցենարային տարբերակների տեղեկատվական կայքեր կարելի է գտնել հետևյալ հասցեում՝ http://www.well.com/~mb/scenario/:

64 «Երկարաժամկետ հայեցակետի ձևավորման արվեստը. Ռազմավարական որոշումների կայացման ուղիներ Ձեր և Ձեր ընկերության համար» (Նյու Յորք, Դարլդեյ, 1991):

Մեթոդ	Կենսապարբերաշրջանի գնահատումներ (ԿՊԳ) ⁶⁵
<p>Նկարագրություն</p>	<p>ԿՊԳ-ն շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների և որևէ ապրանքին (կամ ծառայությանն) առնչվող հնարավոր խնդիրների գնահատման մեթոդ է, որի հիմքում դրված են՝</p> <ul style="list-style-type: none"> • Համապատասխան մուտքերի և արդյունքների համապարփակ ցուցակի կազմում • Տվյալ մուտքերին և արդյունքներին առնչվող հնարավոր բնապահպանական ազդեցությունների գնահատում • Ցուցակի արդյունքների մեկնաբանում և ուսումնասիրության նպատակներին համապատասխան փուլերի առանձնացում: <p>ԿՊԳ-ն սովորաբար կիրառվում է էներգետիկայի, ինչպես նաև օդային և ջրային ավազանների արտանետումների, հողօգտագործման և բնական ռեսուրսների սպառման խնդիրների գնահատման համար:</p>

<p>ՌԲԳ շրջանակներում կիրառումը</p>	<ul style="list-style-type: none"> • Խնդիրների և ազդեցությունների բացահայտում • Ազդեցությունների գնահատում • Այլընտրանքային տարբերակների մշակման և համեմատման նպատակահարմար միջոց
<p>Ուժեղ կողմեր</p>	<ul style="list-style-type: none"> • «Օրորոցից մինչև գերեզման» մոտեցման հիման վրա ազդեցությունների համապարփակ վերլուծություն • ԿՊԳ-ն ծառայում է որպես բնապահպանական ազդեցությունների գնահատման համակարգերի շրջանակների ստուգման միջոց
<p>Թույլ կողմեր</p>	<ul style="list-style-type: none"> • Բացի էներգետիկ ոլորտից, բոլոր մնացած ոլորտներում դժվար է քանակական արտահայտություն տալ տարբեր գործընթացների արդյունքում ստացվող արտանետումներին, դրա համար պահանջվում է արտանետումների հսկայական ցուցակագրում • ԿՊԳ-ն հարկավոր է կիրառել զգուշությամբ և ցուցակագրման արդյունքները մեկնաբանելիս հարկավոր է խուսափել սուբյեկտիվ դատողություններից: Որոշ ապրանքների մասին բավարար տեղեկատվություն չի ներկայացվում` շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցությունները ճշգրիտ գնահատելու համար (օրինակ` մետաղներ, ցնդող օրգանական միացություններ): Բացի այդ արտադրական գործընթացների և սպառման տվյալները կարող են տարբեր երկրներում տարբեր լինել: • ԿՊԳ-ի օգնությամբ ստացված ցուցանիշների միագումարման (ագրեգացման) և տարբեր ապրանքների կենսապարբերաշրջանների ազդեցությունների համեմատության համար դրանց օգտագործման վստահելի մեթոդներ դեռևս չկան • Առանց ԿՊԳ-ի արժանահավատության հիմքերը թուլացնելու բիզնես առումով զգայուն նախնական տվյալների գաղտնիության պահպանումը ևս մեծ խնդիր է • ՌԲԳ-ն տարածական և ժամանակային հարթություն չի ընդգրկում • Իրավիճակների գերակշիռ դեպքում անհնարին է ԿՊԳ-ի միջոցով որևէ ապրանքի կամ գործընթացի գերազանցության սպառնիչ ապացույցներ ներկայացնել, քանի որ շատ պարամետրեր հնարավոր չէ պարզեցնել նման եզրահանգման գալու համար: Շատ ԿՊԳ-ներ միանման ապրանքների դեպքում իրարամերժ եզրահանգումների են բերել:
<p>Գործնական կիրառման օրինակներ կամ լրացուցիչ տեղեկատվության հիմնական աղբյուրներ</p>	<ul style="list-style-type: none"> • INTERREG III B Project Alp FRail (http://www.lkzpriem.de/de/main/alpine_freight_railway.htm) Անդրալպիական երկաթուղով բեռանփոխադրման երթևեկության գործառնական լուծումներ` ալպիական տարածքներում տնտեսական նշանակության վայրերի կայուն կառավարման ապահովման համար, գետեղված է հետևյալ կայքէջում` http://www.deutscherverband2.org/cms/fileadmin/medias/PDFs_Projekte/Alp_Frail-Kurzdarstellung-CADSES-de.pdf • «Շարժունակության ապահովման նպատակով համատեղ օգտագործվող ավտոմեքենաների շվեյցարական պարկի

	<p>մոդելների կենսապարբերաշրջանային գնահատում», Շվեյցարական տրանսպորտային միջոցների գիտահետազոտական համաժողովի շրջանակներում Գարրո Դոկայի և Սաբին Ցիգլերի կողմից ներկայացված հոդված (Ասկոնա, 1–3 մարտ 2001), գետեղված է http://www.doka.ch/DokaMobilitySTRCproc01.pdf կայքէջում:</p> <ul style="list-style-type: none"> • Umberto, համակարգչային գործիք, որն օգտագործվում է նյութերի և էներգիայի հոսքերի համակարգերի մոդելավորման, հաշվարկման և տեսողական ներկայացման համար, գետեղված է http://www.umberto.de/en/ կայքում • GaBi 4, կենսապարբերաշրջանի մոդելավորման, ջերմոցային գազերի հաշվարկման, չափորոշման և էներգետիկ արդյունավետության մոդելավորման գործիք, գետեղված է http://www.environmental-expert.com կայքում («համակարգչային ծրագրեր» բաժնում փնտրեք «gabi» անվանումը) • Արգոնի ազգային լաբորատորիայի կողմից մշակված «Greet» (Greenhouse Gases, Regulated Emissions, and Energy Use in Transportation` Ջերմոցային գազեր, վերահսկվող արտանետումներ և էներգետիկ միջոցների օգտագործում տրանսպորտի ոլորտում) մոդելը տրանսպորտային վառելիքների և ավտոմեքենաների տեխնոլոգիաների կենսապարբերաշրջանային մոդել է, գետեղված է http://greet.es.anl.gov/ կայքում • Ludwig-Bölkow-Systemtechnik ընկերության կողմից մշակված E2 տվյալների բազա, վառելիքի արտադրական շղթայում որոշումների կայացման օժանդակ վերլուծության գործիք և E3 տվյալների էներգետիկ, արտանետումների և ջրածնային վառելիքի արտադրական շղթաների տնտեսական տարածաշրջանային գնահատում, Ագատոր, Հիս, Շինդլեր: • Համակցված համակարգերի համար արտանետումների համաշխարհային մոդել (GEMIS), գետեղված է http://www.oeko.de/service/gemis/en/index.htm կայքէջում • SimaPro, գործիք, որը հավաքում, վերլուծում և վերահսկում է ապրանքների և ծառայությունների բնապահպանական տվյալները, տրված է հետևյալ կայքէջում` http://www.pre.nl/simapro/simapro_lca_software.htm:
--	--

⁶⁵ Այս նկարագրությունը հիմնված է ԵՀ-ի կողմից ֆինանսավորվող BEACON (Անդրեվրոպական տրանսպորտային համակարգի բնապահպանական գնահատման շուրջ համաձայնության մշակում) նախագծում կիրառվող ԿՊԳ-ի սահմանման փոփոխված տաբերակի վրա: Այս նախագիծը տրանսպորտի հատվածում կիրառված ՌԲԳ գործիքների օգտակար ամփոփագիր է ներկայացնում: Լրացուցիչ տեղեկատվության համար տե՛ս http://ec.europa.eu/environment/eia/sea-studies-and-reports/beacon_manuel_en.pdf կայքէջը:

Մեթոդ	Ծախսերի և օգուտների վերլուծություն (ՇՕՎ) ⁶⁶
Նկարագրություն	ՇՕՎ համեմատում է ստացված օգուտների և կատարված ծախսերի դրամական համարժեքները: Որպես օգուտ սահմանվում է այն ամենը, ինչը նպաստում է բարեկեցությանը, իսկ կատարված ծախսը վատթարացնում է բարեկեցության մակարդակը: Համապատասխանաբար, մարդկանց բարեկեցությունը որոշվում է մարդկանց նախընտրություններով: Այդ

նախընտրություններն արտահայտվում են կամ շուկայական վարքագծի և ընտրությունների, կամ էլ արտացոլվում են համապատասխան հարցումային ընթացակարգերի (շուկայական ուսումնասիրությունների) միջոցով: Նախընտրությունների չափումը իրականացվում է անհատի կողմից օգուտ ստանալու կամ վնասից խուսափելու դիմաց վճարելու, կամ էլ կրած վնասը հանդուժելու, հնարավոր օգուտը բաց թողնելու դիմաց փոխհատուցում ստանալու պատրաստակամությամբ: Այս ՎՊ-ների (բնապահպանական օգուտի դիմաց “վճարելու պատրաստակամությունը”) և ԸՊ-ների (բնապահպանական վնասի դեպքում “վնասներն ընդունելու պատրաստակամությունը”) հասկացությունների միջոցով գնահատվում է սպառողների բարեկեցության աճը: Օգուտների և վնասների առավելագույն տարբերությունը, կամ օգուտները ծախսերին գերազանցելու պահանջը տնտեսության բարեկեցության առավելագույն մակարդակի ապահովման նպատակ հետապնդող տնտեսական արդյունավետության հասկացության տեսանկյունից հիմարար դրույթներ են:

Շատ դեպքերում ՎՊ կարող է արտահայտվել շուկայական վարքագծով, իսկ վնասները կարող են գնահատվել ուղղակիորեն: Որպես օրինակ կարող է ծառայել օդի աղտոտման ազդեցությունը գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության վրա: Այս երկու ցուցանիշների միջև կապը փորձագիտական կամ գործնական ուսումնասիրության արդյունք է և հայտնի է որպես “աղտոտման արձագանքների ֆունկցիա”: Բերքի կորստի մեծությունն այնուհետև կարելի է չափել այդ մշակաբույսերի շուկայական արժեքով: Նշված ֆունկցիայի և շուկայական գնի նման համադրությունը արտադրական ֆունկցիայի տեսանկյունից մոտեցում ցուցաբերելու օրինակ է:

Այլ դեպքերում նման մոտեցում ցուցաբերելու համար չկա տեսանելի շուկա: Արտահայտված նախընտրությունների վերլուծությունն անդրադառնում է այսպես կոչված “փոխարինող շուկաներին”, ապրանքների և ծառայությունների այն շուկաներին, որոնք նյութականացնում են շրջական միջավայրի որոշ հատկանիշները: Որպես նման ապրանքի օրինակ կարող է ծառայել տունը/շենքը, որի շուկան անշարժ գույքի շուկան է: Յուրաքանչյուր անշարժ գույք դիտվում է որպես որոշակի տարրերի, գործոնների կամ հատկանիշների համախումբ, որն էլ ինչ-որ չափով ձևավորում է դրա արժեքը: Նման տարրեր կամ հատկանիշներ կարող են լինել աղմուկի բացակայությունը կամ օդի աղտոտվածությունը: Այս գործոնների ազդեցությամբ անշարժ գույքի արժեքի վիճակագրական նվազեցումներին հետևելով կարելի է գտնել “գնի հեղունիկ գործակիցը”:

Այսպիսով, բազմաթիվ ուսումնասիրություններ հաստատել են օդի աղտոտվածության, անհրապույր տեսարանների, աղմուկի և տների գների միջև նշանակալի կապերը: Եկամտից կախված հեղոնխստական գների տատանումների հիման վրա տվյալների հետագա վերլուծման արդյունքում ստացվում է աղմուկի նվազեցման դիմաց ՎՊ արժեքը: Նշված նախընտրությունների մեթոդի դեպքում օգտագործվում են հարցաշարեր, որոնք նախընտրությունների մասին պատասխաններ են վեր հանում փոխարինող շուկա չլինելու համատեքստում: Սկզբունքորեն այդ հարցաշարը նման է նոր կամ ձևափոխված ապրանքների սովորական շուկայական ուսումնասիրությանը: Անակնկալ արժևորման դեպքում մարդկանց հարց է տրվում, թե որքան գումար են պատրաստ վճարել, կամ հարցն այն է, թե ադյոք պատրաստ են վճարել X գումար, որտեղ նշված X-ը որոշակի սկզբնական գումար է: Անակնկալ աստիճանակարգումը (կամ

	<p>համակցված վերլուծությունը) այլընտրանքային տարբերակները դասակարգում է կամ տարբերակները արտացոլում է գումարային արտահայտությամբ: Մարդկանց ՎՊ այնուհետև արտածվում է և ոչ թե ուղղակիորեն բխեցվում է ՎՊ վերաբերյալ նրանց տրված պատասխաններից:</p>
<p>ՌԲԳ շրջանակներում կիրառումը</p>	<ul style="list-style-type: none"> • Ազդեցությունների գնահատում • Այլընտրանքային տարբերակների մշակման և համեմատման նպատակահարմար միջոց
<p>Ուժեղ կողմեր</p>	<p>ԾՕՎ-ը լայն կիրառում և ճանաչում վայելող մեթոդ է</p> <ul style="list-style-type: none"> • Որոշումներ կայացնող անձանց կամ մարմիններին տրամադրում է դյուրըմբռնելի տեղեկատվություն (դրամական արտահայտությամբ) • Հնարավորություն է ընձեռում համեմատել այլապես դժվար համեմատելի ազդեցությունները, օրինակ՝ ավտովարորդների խնայած ժամանակը և լանդշաֆտային տեսարանների կորուստը:
<p>Թույլ կողմեր</p>	<ul style="list-style-type: none"> • ԾՕՎ-ում վիճահարույց բազմաթիվ խնդիրներ կան, այդ թվում՝ համապատասխան զեղչերի դրույքաչափերը, հետագա ծախսերի և օգուտների կրճատումը՝ համեմատած ներկա գուտ արժեքների հետ և առողջության, կյանքի, բնապահպանական ապրանքների և ծառայությունների արժևորումը: • Բազմաթիվ տեխնիկական դժվարություններ և ԾՕՎ-ում կիրառվող մեթոդաբանական տարակարծություններ կան, օրինակ՝ անակնկալ արժևորում:
<p>Գործնական կիրառման օրինակներ կամ լրացուցիչ տեղեկատվության հիմնական աղբյուրներ</p>	<ul style="list-style-type: none"> • Միացյալ Թագավորության բնապահպանության, տրանսպորտի և տարածաշրջանների նախարարություն, «Բնապահպանական գնահատման տեխնիկական ուղեցույցի վերանայում. ԲԽՏ զեկույց» (Բնապահպանական խորհրդատվության տնտեսագիտություն՝ ԲԽՏ) (1998թ.) • Էնթոնի Բրոդման, Դեյվիդ Գրինբերգ, Էյդան Վայնինգ, Դեյվիդ Վայներ, «Ծախսերի և օգուտների վերլուծություն. Տեսություն և պրակտիկա», Յրդ հրատարակություն (Ափեր Սադել Ռիվեր, Նյու Ջերսի, Փրենթիս Հոլ, 2006թ.): • Ջ. Դիքսոն, Լ. Ֆալոն Սկուրա, Ռ. Քարփենթեր և Փ Շերման, «Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների տնտեսական գնահատում» (Լոնդոն, Էրթաքսան, 1994թ.): • Ն. Հենլի և Ս. Սպաշ, «Ծախսերը և օգուտների վերլուծություն և շրջակա միջավայր» (Չելթենհամ, Միացյալ Թագավորություն, Էդվարդ Էլզար, 1993թ.): • Է. Միշան, «Ծախսերի և օգուտների վերլուծություն» (Լոնդոն, Ալեն և Էնվին, 1988թ.): • Դ. Վ. Փիրս, Դ. Ուիթինգթոն, Ս. Ջորջիու և Դ. Ջեյմս, «Նախագծի և քաղաքականության գնահատում. տնտեսագիտության և բնապահպանության ինտեգրում» (Փարիզ, ՏՀՁԿ, 1994թ.): • «Ռիսկերի և քաղաքականության վերլուծաբաններ» ՍՊԸ, <i>Բնապահպանական ծախսերի և օգուտների ուղեցույց</i>, Բնապահպանության գործակալությանը ներկայացված զեկույց, 1998թ. հունվար: • Ջ. Ուինֆենի, «Բնապահպանական նախագծերի և

	քաղաքականությունների տնտեսական գնահատում. գործնական ուղեցույց» (Փարիզ, ՏՀԶԿ, 1995թ.):
--	---

⁶⁶ Այս նկարագրությունը վերցված է Միացյալ Թագավորության համապատասխան գեկույցից, որը նշված է սկզբնաղբյուրների ցանկում:

Մեթոդ	Բազմաչափանիշային վերլուծություն (ԲՉՎ)
Նկարագրություն	<p>ԲՉՎ-ն տարբեր չափանիշների հիման վրա այլընտրանքային տարբերակների գնահատման և տարբեր գնահատումները մեկ համընդհանուր գնահատման մեջ ընդգրկելու մեթոդ է: Դրա միջոցով հնարավոր է բացահայտել ամենանախընտրելի տարբերակը, աստիճանակարգել տարբերակները, հետագայում առավել մանրամասն ուսումնասիրության համար կազմել տարբերակների նախնական ցուցակ, կամ պարզապես առանձնացնել ընդունելի և անընդունելի տարբերակները:</p> <p>ԲՉՎ-ն գործոնների այս բարդ համակցությունը վերածում է թվային արտահայտության հիման վրա կատարվող գնահատման: ԲՉՎ բոլոր մոտեցումների դեպքում գնահատման շրջանակներում ընդգրկվում են չափանիշների կշիռներով և արդյունավետության գնահատականներով արտահայտված դատողություններ: Բազմաչափանիշային վերլուծության հիմնական քայլերը հետևյալն են՝</p> <ol style="list-style-type: none"> 1. <i>Մահմանել գնահատման չափանիշները:</i> Դրանք կարող են սահմանված համապատասխան նպատակների կամ հնարավոր ազդեցությունների հիման վրա չափել առաջարկվող այլընտրանքային տարբերակների հիմնական արդյունքները: Ուշադրությամբ ուսումնասիրե՛ք առաջարկվող չափանիշները, հետևելով, որ դրանք համապատասխանեն հետևյալ պահանջներին՝ <ul style="list-style-type: none"> • Չափանիշների լրակազմը պետք է ամբողջական լինի (որևէ նշանակալի չափանիշ չպետք է անտեսվի) • Չափանիշները չպետք է կրկնվեն կամ նույնական լինեն (լրակազմում կարող են ընդգրկվել ոչ կարևոր չափանիշներ կամ բոլոր տարբերակների դեպքում հավասար գնահատականներ ապահովող չափանիշներ) • Չափանիշները պետք է չափելի լինեն (պետք է հնարավոր լինի առնվազն որակական գնահատական տալ ընտրված չափանիշի կտրվածքով տվյալ տարբերակի արդյունավետությանը) • Չափանիշները պետք է փոխկապակցված չլինեն (կրկնակի միավորներ չպետք է վերագրվեն): 2. <i>Վերլուծել չափանիշների հարաբերական կարևորությունը (կշռի վերագրում):</i> ԲՉՎ մեթոդների գերակշիռ մասը հնարավորություն է ընձեռում որոշել որոշումների կայացման գործընթացում օգտագործվող յուրաքանչյուր չափանիշի հարաբերական կշիռը: Գոյություն ունեն կշիռների վերագրման պարզ (օրինակ՝ չափանիշները մեկը մյուսի հետ համեմատելու միջոցով դրանց հարաբերական կշռի որոշում) և բարդ մեթոդներ (օրինակ՝ ազդակիր համայնքում յուրաքանչյուր չափանիշի կարևորությունը պարզելու համար սոցիոլոգիական հարցումների իրականացում): 3. <i>Վերլուծել արդյունավետությունը (գնահատականի վերագրում):</i> Արդյունավետությունը գնահատելուց առաջ հարկավոր է

	<p>սահմանել տվյալ համատեքստում լավագույն և վատթարագույն արդյունքները: Արդյունավետության դիմաց միավորների վերագրումը կարելի կատարել երեք տարբերակով.</p> <ul style="list-style-type: none"> • Փորձագիտական եզրակացության հիման վրա յուրաքանչյուր տարբերակի միավորների ուղղակի վերագրում (օրինակ 0–100 միավորի միջակայքի սահմաններում): • Վատթարագույնից մինչև լավագույն արդյունք տանող աստիճանական հերթականության որոշման սկզբունք հանդիսացող չափանիշի հիման վրա տվյալ տարբերակի գնահատում • Տարբերակների ապահոված արդյունավետության արդյունքների համեմատություն: Տարբեր մեթոդներ կան՝ սկսած արդյունավետության արդյունքների հերթականությունը որոշելու նպատակով տարբերակների աստիճանակարգումից (օրինակ՝ չափանիշ 1-ի դեպքում լավագույն արդյունք է ապահովում Ա տարբերակը, Գ տարբերակը՝ երկրորդ, իսկ Բ տարբերակը՝ երրորդ) մինչև բարդ հաշվարկներ: <p>4. <i>Բազմապատկել յուրաքանչյուր տարբերակի կշիռն ու գնահատականը և ստանալ ընդհանուր գնահատականները:</i> Ընտրված չափանիշների կտրվածքով յուրաքանչյուր տարբերակի ապահոված գնահատականը հարկավոր է բազմապատկել համապատասխան չափանիշին վերագրված կշռով, և նույնը կրկնել բոլոր չափանիշների համար: Գնահատականների հանրագումարը տվյալ տարբերակի ընդհանուր հարաբերական գնահատականն է: Բոլոր տարբերակների արդյունքները քննարկվում և համեմատվում են:</p> <p>5. <i>Վերլուծել գնահատականների կամ կշիռների տատանումների զգայունությունը:</i> Զգայունությունը ցույց է տալիս, թե վերագրվող գնահատականներում և կշիռներում փոփոխություններն ինչպես են անդրադառնում ԲԶՎ-ի արդյունքների վրա: Նման վերլուծությունը կարևոր է, եթե՝</p> <ul style="list-style-type: none"> • Ընտրված չափանիշների կտրվածքով որոշ տարբերակների գնահատման արդյունքները խիստ անորոշ են կամ • Եթե որոշումներ կայացնողները կամ շահագրգիռ կողմերը ԲԶՎ-ում կիրառվող չափանիշների հարաբերական կշիռների վերաբերյալ տարակարծիք են:
<p>ՌԲԳ շրջանակներում կիրառումը</p>	<ul style="list-style-type: none"> • Ազդեցությունների գնահատում • Այլընտրանքային տարբերակների մշակման և համեմատման նպատակահարմար միջոց
<p>Ուժեղ կողմեր</p>	<ul style="list-style-type: none"> • ԲԶՎ-ն միաժամանակ հաշվի է առնում տարբեր չափանիշներ, ինչն անհնարին է մեկ չափանիշի վրա կենտրոնացող սովորական որոշումների կայացման գործընթացի դեպքում • ԲԶՎ-ի օգնությամբ հնարավոր է գնահատման շրջանակներում համախմբել տարբեր շահագրգիռ կողմերի տեսակետները • ԲԶՎ-ն թափանցիկ և հստակ սահմանված մեթոդ է (տրված գնահատականներն ու կշիռները գրանցվում են), հեշտ է իրականացնել հաշվեշտուգում (աուդիտ)

	<ul style="list-style-type: none"> • ԲԶՎ-ն կարող է նպաստել որոշումների կայացնողների և երբեմն համայնքի միջև հաղորդակցման սերտացմանը:
Թույլ կողմեր	<ul style="list-style-type: none"> • ԲԶՎ-ն նախատեսված այլընտրանքային տարբերակներին թեր և դեմ կարծիքների շուրջ կշռադատված քննարկումները վերածում է վերացական թվերի (գնահատականների և կշիռների) շուրջ քննարկումների և վիճաբանությունների • ԲԶՎ-ն խիստ վիճահարույց որոշումների շուրջ համաձայնություն չի կարող բերել • Քանակական տեղեկատվություն (գնահատականների միագումար) ներկայացնելու միջոցով ԲԶՎ-ն ստուգության պատրանք կարող է ստեղծել, թեև ԲԶՎ-ի կիրառումը մեծապես կախված է արժեքի վերագրման դատողություններից • ԲԶՎ-ին տիրապետող մասնագետները հեշտությամբ կարող են աղավաղել կամ շեղել ստացված արդյունքները (այսինքն ԲԶՎ շրջանակներում զգայունության պարզ վերլուծությունների միջոցով հնարավոր է պարզել արդյունքների վրա ամենամեծ ներգործություն ունեցող գործոնները և այս տեղեկատվությունն օգտագործել տարբեր համագումարային գնահատականներ ստանալու համար):
Գործնական կիրառման օրինակներ կամ լրացուցիչ տեղեկատվության հիմնական աղբյուրներ	<p>Միացյալ Թագավորության համայնքների և տեղական կառավարման նախարարություն <i>«Բազմաչափանիշային վերլուծության ձեռնարկ»</i> (Լոնդոն, 2009), գետեղված է http://www.communities.gov.uk/publications/corporate/multicriteriaanalysismanual կայքէջում:</p> <p><i>«Որոշումների կայացման բազմաչափանիշային վերլուծության ամսագիր»</i> («John Wiley & Sons» հրատարակչություն), «online» ռեժիմում հրատարակվող վճարովի ամսագիր: Լրացուցիչ տեղեկատվության համար այցելել հետևյալ կայքէջը՝ http://onlinelibrary.wiley.com/journal/10.1002/(ISSN)1099-1360</p> <p>Միացյալ Թագավորության բնապահպանության, տրանսպորտի և տարածաշրջանների նախարարություն, <i>«Բնապահպանական գնահատման տեխնիկական ուղեցույցի վերանայում. ԲԽՏ զեկույց»</i> (Բնապահպանական խորհրդատվության տնտեսագիտություն՝ ԲԽՏ) (1998)</p>

Հավելված Ա5.2

ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՌԱՁԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Այս հավելվածում ներկայացվում են հետևյալ մեթոդական գործիքները՝

- Կարծիք պահանջող տպագիր նյութեր
- Ցուցադրումներ
- Տեղեկատվական թեժ գիծ /սպասարկվող հեռախոսագիծ
- Ինտերնետային/համացանցային խորհրդակցություններ
- Հարցաշարեր և պատասխանների թերթիկներ
- Հարցումներ
- Հասարակական լսումներ
- Մեմինարներ
- Խորհրդատու հանձնաժողով

Մեթոդ	Կարծիք պահանջող տպագիր նյութեր
Նկարագրություն	<p>Տպագիր նյութերի օգտագործումը պլանի կամ ծրագրի նախնական տարբերակի և ՌԲԳ-ի մասին տեղեկությունների հրապարակման և տրամադրման, ինչպես նաև մասնակցության գործընթացի հրապարակման ամենահեշտ տարբերակներից է: Տպագիր նյութերի լայնորեն օգտագործվող ձևաչափերից են տեղեկատվական թերթիկները, թուղթիկները, տեղեկագրերը, գրքույկները, համարներով տպագրվող պարբերականները, հաշվետվությունները, հարցումները և այլն: Դրանք կարող են թողարկվել հատուկ նպատակով կամ պարբերաբար (օրինակ, տեղեկագրեր): Տպագիր նյութերը կարելի է բաժանել, տարածել կամ էլեկտրոնային փոստով առանձին ուղարկել ընտրված հասցեատերերի կամ սովորական կանոնավոր փոստի, օրինակ՝ կոմունալ ծախսերի հաշվեգրերի, գնացուցակների կամ կանոնավոր ուղարկվող այլ վճարների հետ միասին:</p> <p>Տպագիր նյութերի նպատակը շահառուների լայն շրջանակին պլանի կամ ծրագրի մշակման և գնահատման գործընթացների կամ փաստաթղթերի մասին դյուրընթեռնելի տեղեկությունները շարադրանքի և նկարների միջոցով տրամադրելն է:</p> <p>Անկախ առաքման ձևից՝ առձեռն հանձնում, փոստով առաքում, փոստով ուղարկվող այլ նյութերի հետ ընդգրկում, էլեկտրոնային տարածում, տպագիր նյութերի տրամադրումը որևէ հարցի մասին իրազեկելու կամ որևէ հացի կամ առաջարկի շուրջ տեսակետներ հայցելու ամենահեշտ և ամենաձանդամ միջոցներից է: Առկա դրամական միջոցների շրջանակներում գովազդման մեթոդներից օգտվելու հնարավորությունների հիման վրա կարելի է ընտրել ձեր կարիքներին համապատասխանող տպագիր նյութի չափաձև:</p>
Ուժեղ կողմեր	<ul style="list-style-type: none"> • Տպագիր նյութերը փոստով ուղարկելու կամ ազատ ցուցադրելու միջոցով հնարավոր է իրազեկել մեծ թվով մարդկանց • Նյութերի հետ կցված հարցաթերթիկների կամ հարցաշարերի միջոցով հնարավոր է արձագանք ստանալ կամ հետադարձ կապ հաստատել • Կարելի է աջակցել հանրության մասնակցության գործընթացին • Տպագիր տեղեկատվությունը մատչելի գովազդման միջոց կարող է լինել, տպագիր նյութերը հեշտ է բաժանել կամ ազատ

	<p>դրված լինելու դեպքում՝ պարզապես վերցնել</p> <ul style="list-style-type: none"> • Դրանց տարածումը թանկ չէ, հասցեների ցուցակները միավորելու դեպքում հնարավոր է զգալիորեն ընդլայնել տարածման շրջանակները • Դրանք կարող են նախատեսված լինել լայն լսարանի համար կամ նպատակաուղղված հատուկ խմբի: • Շարունակական շփումներ, տեղեկատվությունը կարող է թարմացվել
Թույլ կողմեր	<ul style="list-style-type: none"> • Տպագիր նյութերի գեռակշիռ մասի խնդիրը բարդ հասկացությունները բացատրելու համար տեղի անբավարարությունն է • Տեքստը, պատկերները պատրաստելու, էջադրելու, տպագրելու և ծախելու համար ժամանակ է պահանջվում • Որևէ երաշխիք չկա, որ մարդիկ կկարդան ստացված տպագիր նյութերը, դրանք կարող են փոստային թափոն համարվել • Էլեկտրոնային փոստով ուղարկելու դեպքում կարդացվելու երաշխիքը էլեկտրոնային հասցեների ցուցակի որակն է: Ժամանակ, էներգիա և թուղթ խնայելու համար այս ցուցակները պետք է պարբերաբար թարմացվեն • Նյութերի տեսքը պետք է տեսողական առումով հետաքրքիր լինի, սակայն պետք է խուսափել չափազանց առևտրային բնույթ ունեցող տեսքից • Այլ թուղթիկների և գովազդային թերթիկների հետ ընդգրկվելու դեպքում կարող են հեշտությամբ կորել կամ չնկատվել (այլ գովազդային նյութերի հետ ուղարկվելու դեպքում խորհուրդ է տրվում օգտագործել գունավոր թուղթ և հոծ վերնագրեր, որպեսզի հասցեատերերը դրանք առանց կարդալու աղբարկղ չնետեն) • Բացառում է անտառաճանաչներին, եթե պատկերազարդումներ չկան • Տեղեկատվությունը կարող է դժվարըմբռնելի լինել կամ սխալ հասկացվել:
Գործնական կիրառման օրինակներ կամ լրացուցիչ տեղեկատվության հիմնական աղբյուրներ	<p>Հանրության մասնակցության միջազգային ընկերակցություն IAP2 Հանրության մասնակցության մեթոդաբանական ձեռնարկ (2000), գտնելված է http://www.iap2.org/ կայքէջում:</p>

Մեթոդ	Ցուցադրումներ
Նկարագրություն	<p>Ցուցադրումները կոնկրետ հարցերի շուրջ տեղեկատվություն ներկայացնելու և իրազեկելու նպատակով կազմակերպվող միջոցառումներ են: Դրանք կարող են ինտերակտիվ ձևաչափով կազմակերպվել, կամ ընդգրկվել որևէ ֆորումի, սեմինարի, ցուցահանդեսի, համաժողովի կամ այլ միջոցառման շրջանակներում: Ցուցադրումների շրջանակներում հնարավոր է հետադարձ կապի հնարավորություններ ստեղծել, օրինակ՝ համառոտ ձևակերպված հարցերով դատարկ թերթիկներ, ինչպես նաև ընդգրկել նկարներ,</p>

	<p>մոդելներ, ցուցապաստառներ և տվյալ իրադարձությանը, առաջարկին կամ հարցին անդրադարձող այլ տեսողական և ձայնային ներկայացումներ: Բնտերակտիվ ցուցադրումներից են գաղափարները թերթիկների վրա գրելու և դրանք ցուցատախտակի վրա փակցնելու, քարտեզներ, գրառումների թերթեր կամ տեսակետներ, դիտողություններ և հարցեր ներկայացնելու համար նախատեսված դատարկ ցուցապաստառներ օգտագործելու մեթոդները:</p> <p>Ցուցադրումները շեշտադրում են առաջարկների կամ զարգացումների առավել կոնկրետ հասկացություններ, և, երբ փոխշփման հնարավորություններ կան, դրանց միջոցով հնարավոր է հանրության ներկայացուցիչներից ստանալ դիտողություններ և արձագանքներ, որոնք կարող են ընդգրկվել պլանի կամ ծրագրի մշակման, ինչպես նաև գնահատման գործընթացներում:</p> <p>Խորհուրդ է տրվում նախօրոք քննարկել և մեթոդների կիրառմանը նախապատրաստվելու համար նախաձեռնել հետևյալ կարևոր քայլերը՝</p> <ul style="list-style-type: none"> • Ընտրել առավելագույն թվով մասնակցիների համար հարմար օր և վայր (սովորաբար ոչ աշխատանքային կամ տոն օրերին՝ առևտրի կենտրոններում/հանրային վայրերում) • Կազմակերպել մի շարք ցուցապաստառների/ցուցադրումների միջոցով տվյալ միջոցառման/խնդրի վերաբերյալ տվյալների հրատարակումը • Ցուցադրումները կազմակերպել աշխույժ հանրային տարածքներում, որոնք հատում են տվյալ միջոցառման/խնդրով առավել հետաքրքրված կամ շահագրգռված մարդկանց ճանապարհը • Միջոցառումը գովազդել՝ շեշտադրելով քննարկման առարկա խնդիրները • Նշել, թե ցուցադրումները ո՞ր ժամերին են բաց լինելու • Ապահովել բավարար թվով աշխատակիցների ներկայություն և քննարկել կամավորների ներգրավման նպատակահարմարությունը, անվտանգության և ապահովության հարցերը • Մասնակցությունը համակարգելու և հարցերին պատասխանելու նպատակով ներգրավել համապատասխան անձանց/աշխատողների • Ամփոփել և հրապարակել ստացված արձագանքը կամ պատասխանները
<p>Ուժեղ կողմեր</p>	<ul style="list-style-type: none"> • Այս մեթոդը հանրության ուշադրությունը կենտրոնացնում է որոշակի խնդրի շուրջ • Կարող է հետաքրքրություն առաջացնել լրատվամիջոցների շրջանում և նպաստել տվյալ խնդրի արձարծմանն առավել լայն շրջանակներում • Տարբեր մակարդակներում տեղեկատվություն փոխանակելու հնարավորություն է ընձեռում • Ստացված արձագանքների միջոցով պատկերացում է տալիս տիրապետող տեսակետների կամ համայնքային խնդիրների մասին • Մարդիկ ցուցադրումներին/ցուցահանդեսներին կարող են

	<p>մասնակցել իրենց համար հարմար կամ ազատ ժամերի</p> <ul style="list-style-type: none"> • Խնդիրները պատկերների կամ գծագրերի միջոցով ներկայացնելու դեպքում մարդիկ այդ խնդիրների վերաբերյալ տեսողական պատկերացում են կազմում
Թույլ կողմեր	<ul style="list-style-type: none"> • Հարկավոր է ներգրավել համակարգողների՝ մասնակցությունը և գրավոր արձագանքների ներկայացումը խրախուսելու համար • Տեղեկատվությունը կարող է ոչ լիարժեք ձևով հասկացվել կամ սխալ ներկայացվել, եթե հարցերին պատասխանելու և դիտողություններ ընդունելու համար աշխատակիցներ չլինեն • Հանրությունը պետք է մասնակցելու հետաքրքրվածություն ունենա • Կարող է բացասաբար անդրադառնալ առաջարկի հեղինակության վրա, եթե արհեստավարժ կերպով կազմակերպված չլինի
Գործնական կիրառման օրինակներ կամ լրացուցիչ տեղեկատվության հիմնական աղբյուրներ	<p>Հանրության մասնակցության միջազգային ընկերակցություն IAP2 Հանրության մասնակցության մեթոդաբանական ձեռնարկ (2000), գետեղված է http://www.iap2.org/ կայքէջում:</p> <p>ԱՄՆ տրանսպորտի դեպարտամենտ, Մայրուղիների դաշնային վարչություն, «Հանրության մասնակցությունը տրանսպորտի ոլորտում որոշումների կայացման գործընթացում. Տրանսպորտային ոլորտի հարցերի շուրջ իրազեկման միջոցառումներ» (1997), գետեղված է http://www.fhwa.dot.gov/reports/pittd/tranfair.htm կայքէջում:</p> <p>Նիք Ուեյթս, «Համայնքային պլանավորման ձեռնարկ» (Լոնդոն, Earthscan հրատրակչություն, 2000): Չետեղված է http://www.communityplanning.net/toolkits/UrbanGovToolkitsCPH.pdf կայքէջում:</p>

Մեթոդ	Տեղեկատվական թեժ գիծ /սպասարկվող հեռախոսագիծ
Նկարագրություն	<p>Տեղեկատվական թեժ գիծը հեռախոսակապի միջոցով տրամադրում է պլանավորման փաստաթղթի կամ որևէ հարցի վերաբերյալ նախօրոք ձայնագրված տեղեկատվություն և/կամ ՌԲԳ ու պլանավորման թիմերի հետ հեռախոսով խոսելու հնարավորություն, որոնք կարող են պատասխանել հարցերի կամ լրացուցիչ տեղեկատվություն կամ աջակցություն տրամադրել: Տեղեկատվական թեժ գիծը հեռախոսակապի միջոցով տրամադրում է ստույգ, հետևողական տեղեկատվություն տվյալ հարցով հետաքրքրվող կամ լրացուցիչ տեղեկատվության կարիք ունեցող անձանց:</p> <p>Սպասարկվող հեռախոսագծերը հանրության և պլանի կամ ծրագրի մշակման և գնահատման գործընթացների ընթացքում կարող են ծառայել որպես հանրության և պլանի կամ ծրագրի մշակման թիմի միջև կապակցող օղակ, որի շնորհիվ հանրությունը իրեն ներգրավված է զգում:</p> <p>Այս մեթոդի կիրառման հիմնական քայլերն են.</p>

	<ul style="list-style-type: none"> • Որոշել ձայնագրող տեղեկատվության բովանդակությունը և այդ տեղեկատվությունը թարմացնելու պարբերականությունը • Հրապարակել նախատեսված հեռախոսահամարը, օրինակ՝ արտագնա թղթակցության կամ գովազդային նյութերի հետ այդ հեռախոսահամարով տպագիր թերթիկներ, թռուցիկներ կամ փակցնոդ պիտակներ ընդգրկելու միջոցով: Հեռախոսահամարը գովազդել լրատվամիջոցներով, հետևել, որ այն նշված լինի տարածվող բոլոր նյութերում • Բացել տեղեկատվական թեժ գծի հեռախոսահամար, որը հաղորդագրություն ձանագրելու և զանգեր ընդունելու հնարավորություն է տալիս: Ձայնագրվող տեղեկատվությունը պետք է ներկայացնի առավել հաճախ տրվող հարցերի պատասխանները: • Եթե գիծը սպասարկվելու է, ապա համապատասխան հանձնարարականներ տալ զանգերն ընդունող աշխատողներին: Նրանց պետք է ապահովել համապատասխան տեղեկատվությամբ և ուսուցմամբ, նրանք պետք է հեռախոսով հաճախորդներին, այդ թվում՝ դժվարահաճո հաճախորդներին, սպասարկելու ձիրք ունենան • Տեղական հեռախոսազանգերի համար անվճար հեռախոսահամար բացել • Նախապես ձայնագրված տեղեկատվական թեժ գծի դեպքում, լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար որևէ աշխատակցի հետ խոսելու հնարավորություն ընձեռել • Վարել ստացված հեռախոսազանգերի, հիմնական բողոքների, մտահոգությունների արձանագրություն, որը կարող է հետագայում օգտագործվել մասնակցության և խորհրդակցության գործընթացներում:
Ուժեղ կողմեր	<ul style="list-style-type: none"> • Տեղեկատվական թեժ գիծը տեղեկատվության արագ, էժան և արդյունավետ տարածման մատչելի և պարզ միջոց է • Հանրության համար ապահովում է պլանավորման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության ձեռքբերման կենտրոնական կետ: Հանրությանը ներկայացնում է լրացուցիչ տեղեկատվություն ստանալու և իրենց կարծիքներ հայտնելու ուղիները: • Նման ծառայության կազմակերպման և ներկայացվող տեղեկատվության թարմացման աշխատանքների ծախսերը բավականին մատչելի են • Ստեղծում է տվյալ կազմակերպության, պլանը կամ ծրագիրը մղակող կամ ՌԲԳ թիմի մատչելիության հեղինակություն (տպավորություն, իմիջ) • Շահագրգիռ կողմերից դիտողություններ ստանալու հարմարավետ միջոց է: Մարդիկ առանց վարանելու և վախի կարող են հեշտությամբ մասնակցել և իրենց կարծիքները ներկայացնել
Թույլ կողմեր	<ul style="list-style-type: none"> • Հաջողության հասնելու համար հարկավոր է բավարար և համապատասխան ձևով գովազդել • Եթե աշխատողներն են անմիջականորեն սպասարկում թեժ գիծը, ապա շատ ժամանակատար է և սահմանափակում է աշխատողների՝ այլ առաջադրանքներ կատարելու համար նախատեսված ժամանակը • Կապը սպասարկող անձինք պետք է տվյալ պլանին կամ

	<p>ծրագրին բավականին բանիմաց լինեն, որպեսզի կարողանան հարցերին տալ արագ, ճշգրիտ և արհեստավարժ պատասխաններ:</p>
<p>Գործնական կիրառման օրինակներ կամ լրացուցիչ տեղեկատվության հիմնական աղբյուրներ</p>	<p>Հանրային առողջության դեպարտամենտ (Ֆլինդերս Համալսարան) և Հարավային Ավստրալիայի համայնքի առողջության գիտահետազոտական կենտրոն, «Առողջապահական ծառայությունների բարելավում՝ հաճախորդների մասնակցության միջոցով. նյութատեխնիկական ուղեցույց կազմակերպությունների համար» (Կանբերա, Ավստրալիայի առողջապահության և տարեցների խնամքի հարցերի դեպարտամենտ, 2000թ.): Ձեռնեղված է http://www.healthissuescentre.org.au/documents/detail.html?filename_num=226533 կայքէջում:</p> <p>ԱՄՆ բնապահպանության գործակալություն, ՌՊՎՕ67 «Հանրության մասնակցության ուղեցույց» (1996), գլուխ 5 (Հանրության մասնակցության աշխատանքներ), զետեղված է http://www.epa.gov/epawaste/hazard/tsd/permit/pubpart/chp_5.pdf կայքէջում:</p> <p>ԱՄՆ բնապահպանականության գործակալություն, «Աղտոտիչների արտանետումների վերացման ազգային համակարգի (NPDES) շրջանակներում հանրության մասնակցություն» (2002), զետեղված է http://cfpub.epa.gov/npdes/stormwater/menuofbmps/index.cfm?action=min_measure&min_measure_id=2 կայքէջում</p>

Մեթոդ	Ինտերնետային/համացանցային խորհրդակցություններ
<p>Նկարագրություն</p>	<p>Այս մեթոդը, որպես կանոն, ենթադրում է ինտերնետային կայքի առկայություն: Կայքի միջոցով տրամադրվում է տեղեկատվություն և դիտողություններ կատարելու հնարավորություն: Հարկավոր է հետևել, որպեսզի այս տեղեկատվությունն արդիական լինի: Հնարավոր է նաև օգտվել ինտերնետով առավել ինտերակտիվ մասնակցության ձևերից, օրինակ՝ «online» ռեժիմում անցկացվող ֆորումներ և քննարկման խմբեր:</p> <p>Տեխնիկական տեսանկյունից կարելի է առանձնացնել ինտերնետային խորհրդակցությունների հետևյալ հնարավոր տարբերակները.</p> <ul style="list-style-type: none"> • HTML կայքէջեր, որոնցում տրված են տարբեր փաստաթղթերի, նկարների, պատկերների (շարժուն կամ անշարժ) և ձայնագրությունների հղումներ. • Էլեկտրոնային փոստի հասցե, որը նախատեսված է ազատ ձևաչափով դիտողություններ կամ կարծիքներ ներկայացնելու համար • Հարցաշարերի ձևեր, որոնք համայնքից դիտողություններ, կարծիքներ են հայցում տարբեր խնդիրների վերաբերյալ (HTML կամ PDF ձևաչափով ձևեր, որոնք լրացնելուց հետո հնարավոր է ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով հետ հանձնել) • Կարծիքների փոխանակման կայքէջ, որտեղ համակարգող անձի վերահսկողությամբ տարբեր խնդիրների վերաբերյալ հաջորդական տեսակետների «շարահյուսված» քննարկումներ

	<p>են կազմակերպվում</p> <ul style="list-style-type: none"> • Վիրտուալ հանդիպումներ տարբեր թեմաների անդրադարձող կայքային զրուցասրահներում (chat room) • Հանդիպումների և միջոցառումների կայքարձակում՝ վեբբաստինգ (այսինքն՝ կայքով ձայնային և տեսողական նյութերի հեռարձակում): <p>Ինտերնետը կարող է լրացնել հաղորդակցման ավանդական միջոցներին, բայց ոչ փոխարինել: Կայքի ստեղծման նպատակը պետք է հստակ սահմանված լինի, իսկ տեղեկատվությունը՝ ստույգ և ժամանակին ներկայացված: Հարկավոր է հաշվի առնել կայքի սպասարկման ծախսերը և պահանջվող բյուջեն ապահովել նախքան կայքի ստեղծման աշխատանքներ նախաձեռնելը: Հարկավոր է որոշել, թե կայքի կառավարումը պետք է ապահովել տվյալ կազմակերպության ուժերով, թե՛ այն հանձնարարվի կապալառուների, ինչ կայքային գործիքներից է նպատակահարմար օգտվել և ինչ ուսուցումների կարիք կա:</p>
Ուժեղ կողմեր	<ul style="list-style-type: none"> • Համացանցից օգտվելու հնարավորություն ունեցող անձանց տեղեկատվություն ներկայացնելու և տարածելու ամենաուղղակի, մատչելի և պահանջվող միջոցների տեսակյունից ոչ ծախսատար մեթոդն է • Տեղեկատվությունը կարել է ներկայացնել աշխարհասփյուռ լսարանի • Ծախսերը կրճատվում են, քանի որ տպագրության և փոստային առաքման ծախսեր չկան • Պլանավորման, գնահատման և խորհրդակցման գործընթացների վերաբերյալ ժամանակին ներկայացվող ստույգ տեղեկատվության և համապատասխան փաստերի արձանագրման հնարավորություն է ընձեռում • Շահագրգիռ կողմերին որոշակի առաջարկների վերաբերյալ իրենց դիտողություններ ներկայացնելու և տրված պատասխանները ստանալու միջոց է • Հաղորդակցման ինտերակտիվ միջոց է, որի օգնությամբ հնարավոր է քննարկումներ և վիճաբանություններ վարել
Թույլ կողմեր	<ul style="list-style-type: none"> • Նոր կայքի ստեղծման համար նշանակալի միջոցներ են պահանջվում • Ազատ ձևաչափով պատասխանները դժվար է վերլուծել • Քանի որ ոչ բոլոր շահագրգիռ կողմերն են ապահովված կայքերից օգտվելու հնարավորությամբ, այս գործիքը չի կարող փոխարինել խորհրդակցման ավանդական միջոցներին, անհրաժեշտ է դիմել տեղեկատվության տարածման նաև այլ տարբերակների:

Մեթոդ	Հարցաշարեր և պատասխանների թերթիկներ
Նկարագրություն	Հարցաշարները տեղեկատվություն հավաքելու հիմնական միջոցներից են և, որպես կանոն, մշակվում և փորձարկվում են, որպեսզի համոզվեն, որ դրանք դյուրըմբռնելի են: Հարցաշարերի օգտագործման դեպքում դեպքում հարցման բոլոր մասնակիցներին տրվում են միևնույն հարցերը, ինչը նպաստում է արդյունքների

	<p>վստահելիության առավել բարձր մակարդակի ապահովմանը: Հարցաշարերը կարող են տրամադրվել առերես կամ հեռախոսային հարցազույցների ընթացքում, ինքնուրույն լրացվող ձևերի տեսքով, այլ գովազդային նյութերի հետ միասին՝ փոստով կամ «online» ռեժիմում: Հարցաշարերը կարելի է ուղարկել էլեկտրոնային, ինչպես նաև հասարակ փոստով կամ ֆաքսով: Պատասխանների թերթիկները կարելի է հավաքել սեմինարների ընթացքում կամ հարցաշարերը բաժանել սեմինարի ընթացքում և խնդրել պատասխաններն ուղարկել սեմինարից հետո: Առաքման ծախսերը կրճատելու նպատակով հարցաշարերը կարելի է տարածել պարբերաբար փոստով ուղարկվող տեղեկատվական կամ գովազդային նյութերի հետ, օրինակ՝ դրանք ընդգրկել տեղեկատվական թերթիկների կամ հաշիվների հետ:</p> <p>Հարցաշարի նախապատրաստման քայլերն են՝</p> <ul style="list-style-type: none"> • Կազմել հարցերը՝ դրանք ձևակերպելով հնարավորինս համառոտ շարադրանքով • Հարցերը փորձարկել փոքր փորձնական խմբի շրջանակներում՝ համոզվելու, որ հարցերն անկողմնակալ և դյուրըմբռնելի ձևակերպում ունեն և թյուրըմբռնման տեղիք չեն տա: Կողմնակալությունից խուսափելու համար հարցերի ձևակերպումը պետք է լինի պարզ: • Ի սկզբանե ամրագրել հարցաշարի նպատակը • Ընդգրկել որակական տվյալներ, օրինակ՝ տարիքը, սեռը, հասցեն, կրթությունը և այլն՝ արդյունքների հետագա արտածման և/կամ հասցեների ցուցակում ընդգրկման համար • Ուղարկել հարցաշարերը: Փոստով ուղարկելու և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում պատասխաններն անվճար հետ ուղարկելու ծրար տրամադրել (նամականիշով և հասցեագրված նամակ, անվճար առաքվող փոստի հասցե և այլն)՝ առավել մեծ թվով պատասխաններ ստանալու համար • Գրանցել և հրապարակել ստացված պատասխանները
<p>Ուժեղ կողմեր</p>	<ul style="list-style-type: none"> • Ավելի քիչ անձնական բնույթ է կրում, քան հարցազույցները կամ հեռախոսով հարցումները, սակայն առանց անունների շփումը կարող է խրախուսել ավելի անկեղծ պատասխաններ • Հարմար է թե՛ որակական և թե՛ քանակական տվյալների դեպքում • Լայն տարածքում սփռված հարցվողների հետ շփվելու արդյունավետ միջոց է • Տեղեկատվություն է տրամադրում այն անձանց, ովքեր հակված չեն մասնակցելու կազմակերպվող հանդիպումներին կամ սեմինարներին • Հնարավորություն է ընձեռում ընդլայնել հասցեների ցուցակը • Կարող է օգտագործվել վիճակագրական ստուգման համար • Հնարավորություն է ընձեռում արդյունքներն արտածել ըստ ենթախմբերի • Հարցվողներին թույլ է տալիս հարցաշարը լրացնել իրենց նախընտրած ժամին • Նույնքան ծախսատար և աշխատատար չեն, որքան հարցազույցները և հեռախոսով հարցումները, քանի որ ավելի մեծ ընտրանք են ապահովում, ինչպես նաև՝ ընդհանուր ծախսերի ավելի ցածր մակարդակ:

Թույլ կողմեր	<ul style="list-style-type: none"> • Ոչ բավարար թվով պատասխաններ ստանալու դեպքում արդյունքները կարող են շեղվել • Մասնակցությունը խթանելու համար հետադարձ ծրարներ տրամադրելու կամ անվճար առաքվող փոստի հասցե բացելու անհրաժեշտություն կա • Հարցվողների շրջանում գրագիտության բարձր մակարդակ է ենթադրում
--------------	---

Մեթոդ	Հարցումներ, ուսումնասիրություններ
Նկարագրություն	<p>Հարցումների կատարումը բնակչության որոշակի հատվածից տեղեկատվություն հավաքելու մեթոդ է: Այն կարող է կիրառվել բնակչության լայն շրջանակից կամ այդ շրջանակի մասին ընդհանուր տեղեկություններ կամ թիրախային խմբերի մասին կոնկրետ տեղեկատվություն հավաքելու համար: Հարցումները կարող են նպատակաուղղված լինել քանակական (փաստեր և թվեր) և/կամ որակական (կարծիքներ և արժեքներ) տեղեկատվության հայթայթմանը: Հարցումներ կատարելու համար օգտագործվում են հարցաշարեր, որոնք կարող են լրացվել առերես հարցազրույցների ժամանակ, ինքնուրույն, գրավոր ձևով լրացնելու համար համար նախատեսված ձևեր, հեռախոսով հարցումներ կամ հաղորդակցման էլեկտրոնային միջոցով կատարվող հարցումներ (տե՛ս նաև հարցաշարերի և պատասխանների թերթիկների մասին հատվածները):</p> <p>Ծավալուն պատահական ընտրանքի վրա հիմնված հարցումները բարձր մակարդակով իրականացնելու համար սովորաբար մեծ ծախսեր են պահանջվում: Պատահական ընտրանքի սկզբունքն իրավիճակային հարմարությամբ կիրառելու և կամավորների ներգրավելու դեպքում փոքրածավալ հարցումների կազմակերպման ծախսերը կարող են համեմատաբար մատչելի լինել, սակայն ստացված արդյունքների ընդհանրացումը տվյալ խմբի շրջանակներից դուրս կարող է անհնարին լինել:</p> <p>Հարցումների նպատակը որևէ կոնկրետ խնդրի կամ պլանավորման փաստաթղթի վերաբերյալ տեղեկատվություն հավաքելն է: Հարցումների արդյունքներն ամփոփում են ժողովրդագրական տեղեկատվություն և/կամ մարդկանց որևէ կոնկրետ խմբի տեսակետները:</p> <p>Հարցումների նախապատրաստման և իրականացման համապատասխան քայլերն են՝</p> <ul style="list-style-type: none"> • Պարզել հայտնի տեղեկատվության և այլուր արդեն իրականացված կամ նախատեսվող հարցումների շրջանակները՝ նույն աշխատանքն իրականացնելուց խուսափելու համար, սահմանել նոր հարցման շրջանակները • Պլանը կամ ծրագիրը մշակող թիմի կամ համապատասխան իրավասու մարմինների հետ քննարկել հարցերի շեշտադրումները • Որոշել տեղեկատվության հայթայթման ձևերը (տե՛ս հարցաշարեր և պատասխանների թերթիկների մասին

	<p>հատվածը)</p> <ul style="list-style-type: none"> • Ընտրել թիրախային լսարանը: Ինչպե՞ս է որոշվելու պատահական ընտրանքը: Ինչպե՞ս կարելի է ապահովել տվյալ խմբի տեսանկյունների ընդհանրացվելիությունը: • Կատարել փորձնական հարցում՝ հարցերի դրյուրըմոնելիությունը և պարզությունը ստուգելու համար • Իրականացնել բուն հարցումը • Ամփոփել և վերլուծել արդյունքները, պատրաստել զեկույցը • Ձեկույցի արդյունքները ներկայացնել հարցվողներին, համապատասխան մարմիններին և լրատվամիջոցներին
Ուժեղ կողմեր	<ul style="list-style-type: none"> • Ապահովում է ստուգելի տվյալներ • Հարցումներն իրազեկման մակարդակի բարձրացման միջոց կարող են ծառայել • Պատշաճ ձևով կազմակերպելու դեպքում դրանցում կարող են ընդգրկվել լայն հասարակայնության կարծիքները ներկայացնելու համար անհրաժեշտ բավականին ընդգրկուն շրջանակներ կամ թիրախային խմբեր • Ստացված արդյունքներից հնարավոր է արտածել բազմազան տեղեկատվություն
Թույլ կողմեր	<ul style="list-style-type: none"> • Կարող է ծախսատար լինել հարցան շրջանակներում մեծ թվով մարդկանց ընդգրկելու դեպքում • Հարկավոր է զգույշ լինել, որպեսզի հարցերը պարզ ձևակերպված լինեն և թյուրըմբռնման պատճառով արդյունքները շեղված չլինեն • Հարկավոր է զգուցությամբ որոշել ընտրանքը՝ հետևելով, որ դա ներկայացնի առավել լայն համախմբի կարծիքները • Նշանների օգնությամբ լրացվող հարցումների արդյունքների վերլուծումը արագ և հեշտ է, սակայն հավաքվող տեղեկատվության մանրամասները կարող են սուղ լինել
Գործնական կիրառման օրինակներ կամ լրացուցիչ տեղեկատվության հիմնական աղբյուրներ	<p>Միացյալ Թագավորություն, «Քաղաքացիների դերը. Մոտեցումների և մեթոդների ուղեցույց» (Էդիինբուրգ, Միացյալ Թագավորություն, Շոտլանդական տեղական իշխանությունների համաժողով (COSLA), 1998). Ձեռնեղված է http://www.dundee.gov.uk/dundee/uploaded_publications/publication_285.pdf կայքում:</p> <p>ԱՄՆ բնապահպանության գործակալություն, ՌՊՎՕ ⁶⁸ շրջանակներում հանրության մասնակցության ձեռնարկ (1996), գլուխ 5 (հանրության մասնակցության գործողություններ), զետեղված է http://www.epa.gov/epawaste/hazard/tsd/permit/pubpart/chp_5.pdf կայքէջում:</p> <p>ԱՄՆ տրանսպորտի դեպարտամենտ, «Տրանսպորտին առնչվող որոշումների կայացման շրջանակներում հանրության մասնակցության ապահովման մեթոդներ», զետեղված է http://www.fhwa.dot.gov/reports/pittd/surveys.htm կայքէջում:</p>

Մեթոդ	Հասարակական լսումներ
Նկարագրություն	Հասարակական լսումները առաջարկի վերաբերյալ տեսակետների և տեղեկատվություն ներկայացնելու և փոխանակելու պաշտոնական միջոց են: Ֆորմալ հասարակական լսումները սովորաբար

	<p>համատեղվում են մասնակցության ներգրավման ավելի ոչ պաշտոնական մեթոդների, օրինակ՝ ոչ պաշտոնական հանդիպումների և քննարկումների հետ:</p> <p>Հասարակական լուսմներ կազմակերպելուց առաջ խորհուրդ է տրվում անդրադառնալ հետևյալ կարևոր կետերին.</p> <ul style="list-style-type: none"> • Հստակ սահմանել հասարակական լուսմների նպատակը և քննարկման ենթակա հարցը • Նկարագրել, թե գործընթացի ամբողջական համատեքստում ի՞նչ կշիռ ունեն հասարակական լուսմները: Հարկավոր է հատուկ խստապահանջությամբ հստակեցնել, թե ներկայացված տեսակետներն ու տեղեկատվությունը որքանով կարող են ազդել վերջնական արդյունքների վրա • Որոշել, թե հասարակական լուսմների կազմակերպման խնդրանք/պահանջ ստանալու դեպքում ի՞նչ ընթացք պետք է տրվի այդ պահանջին/խնդրանքին: • Հասարակական լուսմների մասին հայտարարել հանրային ծանուցագրերի միջոցով • Հանրային ծանուցագրի օրինակ ուղարկել հասարակական լուսմներ անցկացնելու պահանջ/խնդրանք ներկայացրած բոլոր անձանց • Ամենայն մանրամասնությամբ կազմել շահագրգիռ կողմերի ներկայացումների ժամանակացույցը և հետևել, որ զեկուցողներն իրենց խոսքն առանց ընդհատումների կարողանան ավարտել նախատեսված ժամանակահատվածում • Պատրաստել և հրապարակել հասարակական լուսմների մասին հաշվետվություն կամ դրանց արձանագրությունը
<p>Ուժեղ կողմեր</p>	<ul style="list-style-type: none"> • Լուսմների ընթացքում հանրության ներկայացուցիչները, համաձայն նախօրոք պայմանավորվածության, կարող են իրենց տեսակետները ներկայացնել առանց այլոց կողմից հերքումների • Հնարավոր է համակարգված ձևով վերլուծել առկա ապացույցներն ու փաստերը • Մտացված դիտողությունները գրանցվում և հրապարակվում են • Լավ կազմակերպված լինելու դեպքում այլ շահագրգիռ կողմերի հետ հանդիպման օգտակար միջոց կարող է լինել • Ցույց է տալիս, որ պատասխանատու մարմինը խորհրդակցությունների և տեղեկատվության փոխանակման գործընթացների շրջանակներում բոլոր հետաքրքրված անձանցից տեսակետների ընդունման պատրաստակամություն է դրսևորում
<p>Թույլ կողմեր</p>	<ul style="list-style-type: none"> • Չի նպաստում երկխոսության ծավալմանը • Կարող է ստեղծվել մրցակցային կամ բախումային մթնոլորտ • Մարդիկ կարող են վարանել հասարակական լուսմներին իրենց կարծիքը հրապարակավ արտահայտելուց, տարբեր շահագրգիռ կողմեր կամ բարձրագույն անձինք կարող են լուսմները շեղել ի շահ իրենց նեղ նպատակների • Փոքրամասնական խմբերի և հրապարակավ ելույթներից խուսափող անձանց ներգրավումը դյուրին չէ • Թեև պարզ է թվում, սակայն սա ամենաբարդ և

	<p>ամենաանկանխատեսելի մեթոդներից է</p> <ul style="list-style-type: none"> • Կարող է լիարժեք խորհրդակցության փոխարեն սահմանափակվել որպես տեղեկատվության տրամադրման միջոց ծառայելով
--	--

68 «Ռեսուրսների պահպանման և վերականգնման մասին» օրենք (RCRA՝ ՌՊՎՕ)

Մեթոդ	Սեմինարներ
Նկարագրություն	<p>Սեմինարը համակարգված ֆորում է, որի շրջանակներում մասնակիցները խմբով (կամ խմբերով) աշխատում են որևիցե հարցի կամ ՌԲԳ քայլի գնահատման շուրջ: Սեմինարի նպատակն է՝ մասնակիցներին համախմբել համակարգված միջավայրի պայմաններում (այսինքն՝ մեծ ու փոքր խմբերով աշխատանքներ, քննարկումներ և անդրադարձեր)՝ փորձելով լուծել առկա խնդիրները և համաձայնության գալ գնահատման վերաբերյալ՝ ընդամենը տեղեկատվություն ներկայացնելու և հարցերին պատասխանելու փոխարեն: Սեմինարները կարող են նաև հատուկ նպատակաուղղված լինել որոշակի շահառու խմբի ներկայացուցիչների, օրինակ՝ ՀԿ-ների կամ որևիցե մի ոլորտի փորձագետների:</p> <p>Բոլոր մասնակիցներին սեմինարի աշխատանքներում ներգրավելու համար անհրաժեշտ է, որ ինչ-որ մեկը վարի այն: Սեմինարները մասնակցային միջոցներ են, որոնք առավելագույն արդյունք են ապահովում սահմանափակ թվով մասնակիցների ընդգրկման դեպքում:</p> <p>Սեմինարի շրջանակներում կարելի է կիրառել տարբեր մեթոդներ, այդ թվում՝ կիզակետային խմբեր և ռազմավարական նպատակների համատեղ ձևավորում:</p> <p>Սեմինարի արդյունքներն ամփոփվում են հաշվետվությունում, որտեղ ներկայացվում են տվյալ հարցի կամ առաջարկի շուրջ քննարկված տեսակետերը, առաջարկները կամ բոլոր մասնակիցների համատեղ ուժերով մշակված և փոխհամաձայնեցված եզրակացությունները:</p>
Ուժող կողմեր	<ul style="list-style-type: none"> • Չափանիշների քննարկման կամ այլընտրանքային տարբերակների վերլուծության գերազանց մեթոդ • Խրախուսում է փոքր խմբերի և անհատների անմիջական շփումները • Դժվար հարցադրումներին պատասխանելու են հրավիրվում թիմի մի խումբ անդամներ • Խրախուսում է քննարկման արդյունքների համար հավաքական պատասխանատվության զգացումը, դրանք դարձնելով ավելի վստահելի • Ապահովում է մասնակիցներից ստացվող պատասխանների, դիտողությունների առավելագույն քանակ: Դժվար հարցադրումների դեպքում կարելի է ապավինել թիմի այլ անդամների աջակցությանը: • Նպաստում է խնդրի հանգուցալուծման համար հանրության պատասխանատվության ամրապնդմանը (տե՛ս ստորև բերված հղումը IAP2-ին)

	<ul style="list-style-type: none"> Ապահովում է մտքերի բաց և առավել անկեղծ փոխանակում՝ նպաստելով փոխըմբռնման մթնոլորտի ստեղծմանը: Արդյունավետ և նպատակահարմար ձևաչափ է բարդ տեխնիկական հարցերի առավել մանրակրկիտ քննարկումների համար: Կարող է նպատակաուղղված լինել շահառուների հատուկ ընտրված խմբերի:
Թույլ կողմեր	<ul style="list-style-type: none"> Թշնամաբար տրամադրված մասնակիցները կարող են դեմ արտահայտվել կամ դիմադրել իրենց գնահատմամբ «բաժանի՛ր և տիրի՛ր» սկզբունքով փոքր խմբերի բաժանման գաղափարին Քննարկումները համակարգող անձինք պետք է նախապես իմանան, թե հանրության կողմից ներկայացված դիտողություններն ինչպես են օգտագործելու Փոքր խմբերով քննարկումների համար սովորաբար պահանջվում են համակարգողներ, քննարկում վարողներ (տե՛ս ստորև բերված հղումը IAP2-ին) Արդյունավետության նկատառումներից ելնելով՝ քննարկումներում կարող են ընդգրկվել սահմանափակ թվով մասնակիցներ, հետևաբար շահերի ամբողջական շրջանակը չի կարող ներկայացվել:
Գործնական կիրառման օրինակներ կամ լրացուցիչ տեղեկատվության հիմնական աղբյուրներ	<p>Հանրության մասնակցության միջազգային ընկերակցություն IAP2 Հանրության մասնակցության մեթոդաբանական ձեռնարկ (2000), գետեղված է http://www.iap2.org/ կայքէջում:</p>

Մեթոդ	Խորհրդատու հանձնաժողով
Նկարագրություն	<p>Խորհրդատվական հանձնաժողովները սովորաբար փորձագիտական խմբեր, կառավարական կամ ոչ կառավարական կազմակերպություններ են, որոնք տվյալ ոլորտում փորձագիտական գիտելիքներ ունեն կամ հետաքրքրված են տվյալ պլանի կամ ծրագրի աշխատանքներով: Խորհրդակցությունների ընթացքում այս հանձնաժողովները կարող են պլանի կամ ծրագրի վերաբերյալ խորհուրդներ տալ, առաջարկել համապատասխան փոփոխություններ կամ հանձնարարել որոշակի գործողությունների նախաձեռնում:</p> <p>Թեև իրենց գործառնություններով նման են արագ արձագանքման հանձնախմբերին, խորհրդատու հանձնաժողովները շարունաբար գործող կառույցներ են, իսկ արագ արձագանքման հանձնախմբերը, որպես կանոն, ստեղծվում են կարճաժամկետ հիմունքներով և հատուկ կենտրոնանում են կոնկրետ առաջարկի մշակման հարցերի շուրջ:</p> <p>Խորհրդատվական հանձնաժողովները հատկապես օգտակար են բարդ, վիճահարույց կամ կարևոր պլանների կամ ծրագրերի մշակման և գնահատման գործընթացներում համայնքի ներկայացուցիչներին, հատկապես անհրաժեշտ փորձառություն ունեցող մարդկանց,</p>

	<p>ներգրավելու տեսանկյունից:</p> <p>Հանձնաժողովները լոբբիստական խմբեր չեն, դրանք հասարակական կարևոր գործառույթ են իրակացնում և չեն սահմանափակվում առանձին անդամների սեփական շահերի նեղ շրջանակով:</p> <p>Հանձնաժողովներն ավելի բարձր արդյունավետություն են ապահովում, եթե անդամների գործառույթները և առաջադրանքները սահմանվում են նախքան անդամակցության մասին որոշումներ ընդունելը: Բացի այդ, կարևոր է հաստատել անդամների ընտրության չափանիշներ: Հանձնաժողովը պետք է ապահովված լինի անհրաժեշտ ժամանակով ու միջոցներով նախագծի մշակման ողջ ժամանակահատվածում կամ հանձնաժողովի գործունեության ողջ ընթացքում:</p> <p>Հանձնաժողովը պետք է իրազեկ լինի առաջընթացի, խորհրդակցությունների արդյունքների, պլանի կամ ծրագրի մշակող և որոշումների կայացնող մարմինների եզրակացությունների, ինչպես նաև քաղաքականության այն փոփոխությունների կամ ընթացիկ խնդիրների մասին, որոնք կարող են ազդել հանձնաժողովի խորհրդի կողմից տրամադրվող խորհրդատվության կամ դերի վրա:</p>
Ուժեղ կողմեր	<ul style="list-style-type: none"> • Խորհրդատու խորհուրդները լրացուցիչ խորհրդատվություն և ուղղորդում են ապահովում • Իրենց աշխատանքով կարող են նվազեցնել շահային խմբերի կողմից ներկայացվող քննադատությունները • Դրանց ներգրավումն ընկալվում է որպես մասնակցային գործընթացի սկզբունքներով առաջնորդվելու հավաստիք և շահագրգիռ կողմերին ցույց է տալիս, որ որոշումների և արդյունքների վրա որոշակի սահմաններում ազդեցություն գործելու հնարավորություններ կան:
Թույլ կողմեր	<ul style="list-style-type: none"> • Հանձնաժողովի անդամների շրջանում շահերի բախումներ կարող են լինել • Կարող է ժամանակատար և ծախսատար լինել: Ընթացիկ գործունեությունը սահմանելու, դեկավարելու և վերահսկելու հարցերում հարկավոր է զգուշավորություն դրսևորել: • Տարակարծիք կամ տարբեր կարգավիճակ, գիտելիքներ կամ փորձառություն ունեցող անդամների դեպքում գործունեության կամ քննարկումների համակարգման կարիք կարող է լինել:

Հավելված Բ1.1

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ, ԿՈՎԿԱՍԻ
ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅԻ
ԱՌԱՆՁԻՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ
ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՕՐԻՆԱԿ

I. ՌԲԳ Հրահանգի դրույթների համաձայն ՌԲԳ պահանջող պլանների և ծրագրերի բացահայտում

I.1. Արդյո՞ք «պլան» և «ծրագիր» տերմինները սահմանված են ազգային օրենսդրությամբ: Եթե այո, ապա ներկայացրեք այդ սահմանումները/հսկացությունները.

I.2. (Մտորև բերված աղյուսակի օգնությամբ) առանձնացրեք տվյալ երկրում Արձանագրության կիրառության շրջանակներին համապատասխանող ազգային և ենթազգային (օրինակ, շրջանային (ռայոն) կամ մարզային (область)) պլաններն ու ծրագրերը:

Հատվածներ	Թվարկե՞ք յուրաքանչյուր հատվածին առնչվող բոլոր ռազմավարական փաստաթղթերը (անկախ նրանից, թե դրանք կոչվում են պլաններ, ծրագրեր, քաղաքականություններ, ռազմավարություններ և այլն) տրված յուրաքանչյուր ոլորտում/բաժնում, որոնք «օրենսդրական, կանոնադրական կամ վարչական դրույթների համաձայն կազմվել կամ ընդունվել են կառավարման ցանկացած մակարդակում գործող համապատասխան իրավասու մարմինների կողմից» (պլանների և ծրագրերի պարզեցված սահմանում, որը վերցրված է ՌԲԳ Հրահանգի հոդված 2.5-ից)	Համառոտ նկարագրեք դրանց հիմնական հատկանիշները (օրինակ, վերջին հինգ տարվա ընթացքում դրանցով նախատեսված պլանները կամ դրանց թիվը և օրենսդրության ընթացիկ և նախատեսվող փոփոխությունները)
Գյուղատնտեսություն		
Անտառապահություն		
Ձկնաբուծություն		
Էներգետիկա		
Արդյունաբերություն		
Հանքարդյունաբերության		
Տրանսպորտ		
Տարածքային զարգացում		
Ջրային ռեսուրսների կառավարում		
Հեռահաղորդակցության միջոցներ		
Զբոսաշրջություն		
Քաղաքային և գյուղական տարածքների պլանավորում կամ հողօգտագործում		
Այլ ազգային կամ ենթա-տարածաշրջանային փաստաթղթեր (օր. աղքատության հաղթա հարման ռազմավարության փաստաթղթեր)		

II. Ընթացիկ բնապահպանական գնահատման գործող դրույթների վերլուծություն

II.1. Նկարագրե՛ք ռազմավարական որոշումների համար անցկացվող բնապահպանական գնահատման ներկա/առկա կարգը՝ համաձայն տվյալ երկրում գործող նորմերի (ըստ ՇՄԱԳ-ի կամ բնապահպանական վերանայման պետական համակարգերի) և դրանք համեմատե՛ք գործնական կիրառության հետ:

- Ստուգագնան մեխանիզմը և կիրառման շրջանակները վերջին հինգ տարիների ընթացքում (կամ, նախընտրության դեպքում, երկու- երեք տարվա ընթացքում)։ քանի՞ փաստաթուղթ է վերանայվել նախքան պետական բնապահպանական գնահատման/ՌԲԳ-ի գործընթացին ներկայացնելը և դրանցից քանի՞սն են ենթարկվել պետական բնապահպանական գնահատման/ՌԲԳ-ի:
- ՌԲԳ զեկույցների բովանդակությունը, իրավական պահանջները + բնապահպանական գնահատման շրջանակների որոշման կարգը + հնարավոր մեթոդաբանական ուղղորդում կամ ՌԲԳ-ի զեկույցների նախապատրաստման չափանիշներ:
- Վերանայման պահանջներ. ո՞ր իրավասու մարմիններին է հնարավորություն ընձեռվում բնապահպանության զեկույցի մասին տեսակետներ ներկայացնել և արդյոք կա՞ն պետական բնապահպանական վերանայման համակարգի լրացուցիչ պահանջներ:
- Հանրային մասնակցության վերաբերյալ դրույթների նկարագրություն. ամփոփ նկարագրե՛ք տվյալ երկրում օրենքով ամրագրված պահանջները և ՌԲԳ-ի շրջանակներում հանրության մասնակցության վերաբերյալ ուղեցույցերի հղումները:
- Պլանի կամ ծրագրի կազմման գործընթացում ՌԲԳ զեկույցի եզրակացությունները և հանրության ներկայացուցիչներից ստացված կարծիքներն ընդգրկելու մեխանիզմներ:

II.2. Նկարագրե՛ք այս իրավական դաշտում հնարավոր հետագա փոփոխությունները (եթե կան այդպիսիք):

II.3. Վերլուծե՛ք գործող համակարգի հիմնական ուժեղ և թույլ կողմերը, և դրանց հետագա զարգացման և բարելավման հնարավորությունները:

III. Արձանագրության արդյունավետ իրականացման առաջնահերթ խնդիրների վերլուծություն

Արձանագրության արդյունավետ իրականացման առաջնահերթ խնդիրների վերլուծությունը պետք է արտացոլի տվյալ երկրում Արձանագրության գործնական իրականացման համար պատասխանատու բարձրաստիճան պաշտոնյաների կարծիքը:

Ինչպե՞ս արդյունավետ ձևով կազմակերպել հետևյալ գործողությունները	Խնդրում ենք նշել՝ 2 - առաջնային 1 - կարելու 0 - չի համապատասխանում	Ո՞ր կոնկրետ հասցերի դեպքում է աշակցության կարիք զգացվում:
Արձանագրության հոդված 2.6-ում ամրագրված ՌԲԳ-ի սահմանմանը համապատասխան՝ ՌԲԳ-ի իրականացում պլանի և ծրագրի մշակման գործընթացի շրջանակներում (օրինակ, ինչպես կարելի է ՌԲԳ-ն փոխկապակցել որոշումներ կայացնելու գործընթացին և այլն)		
4 - և 5 հոդվածներում ամրագրված պահանջների համաձայն՝ ՌԲԳ շրջանակներում ստուգագնման իրականացում (օրինակ, ինչպես կարելի է համատեղել պարտադիր և բացառական ցուցակները և երբ դիմել անհատական դեպքերի քննություն մեթոդին և այլն)		
Կազմակերպել ՌԲԳ-ի շրջանակների որոշում համաձայն հոդված 6		

-ի (օրինակ, երբ ձեռնարկել ջրջանակների որոշումը, ինչպես ընտրել հարմար /համապատասխան մեթոդներ հանրության և իշխանության, հետ խորհրդակցելու համար, ինչպես գրել ՌԲԳ-ի ուղեցույցի պայմանները և այլն.)		
ՌԲԳ-ի շրջանակներում շրջակա միջավայրի նախնական վիճակի ուսումնասիրությունների մշակում (համաձայն Հավելված IV, 2, 3 և 4 պարբերությունների համաձայն)		
ՌԲԳ-ի շրջանակներում բնապահպանական խնդիրների/ նպատակների ընդգրկում (Հավելված IV, 5-րդ պարբերության համաձայն)		
Հնարավոր էական բնապահպանական, այդ թվում՝ առողջական, հետևանքների վերլուծում (Հավելված IV, կետ 6-րդ պարբերության համաձայն)		
Պլանի կամ ծրագրի տարբերակների համեմատում (Հավելված IV, 8-րդ պարբերության համաձայն)		
ՌԲԳ-ի իրականացումից հետո մշտադիտարկման պլանի նախապատրաստում՝ 12 հոդվածի և Հավելված VI, 9-րդ պարբերության պահանջների համաձայն		
Անդրսահմանային ազդեցությունների վերլուծում (հավելված IV, 10-րդ պարբերության համաձայն)		
8-րդ հոդվածի համաձայն ՌԲԳ գեկույցի հանրային վերանայման կազմակերպում (օրինակ, ինչպես որոշել հանրության շահագրգիռ ներկայացուցիչներին, ինչպես իրագրել հանրությանը և հավաքել կարծիքները, ինչպես վերանայել հանրության կողմից ներկայացված կարծիքները և այլն.)		
9-րդ հոդվածի համաձայն բնապահպանության և առողջապահության իրավասու մարմինների հետ խորհրդակցությունների կազմակերպում (օրինակ, ինչպես որոշել համապատասխան մարմինները, ինչպես արդյունավետ խորհրդակցել նրանց նրանց հետ ՌԲԳ-ի շրջանակներում և այլն)		
10-րդ հոդվածի համաձայն անդրսահմանային խորհրդակցությունների նախաձեռնում (օրինակ, երբ ծանուցել, ինչ մակարդակում պետք է փաստաթղթեր փոխանակվեն, ինչպես կազմակերպել արդյունավետ անդրսահմանային խորհրդակցություններ)		
Որոշում կայացնողներին ՌԲԳ-ի համար պահանջվող ծախսերի և դրա ապահոված օգուտների բացատրության տրամադրում		
13-րդ հոդվածի համաձայն քաղաքականությունների և օրենքների նկատմամբ ՌԲԳ-ի կիրառում		
Արձանագրությունն իրագործելու նպատակով օրենքների կամ կանոնակարգերի մշակում		

IV. ՌԲԳ-ի բարեփոխումների հիմնական շահագրգիռ կողմերը

IV.1. Որոշե՛ք ՌԲԳ գործընթացի համար պատասխանատու հիմնական հաստատությունների շրջանակը (հիմնական պաշտոնյաների անունները և նրանց հետ կապ հաստատելու համար անհրաժեշտ տվյալները):

IV.2. Որոշե՛ք տվյալ երկրում ՌԲԳ / ՇՄԱԳ բարեփոխումներին կողմնակից հիմնական շահագրգիռ կողմերի ու ցանցերի շրջանակը (ՀԿ-ներ, ՇՄԱԳ կենտրոններ, մասնագիտական տեղեկագրեր և ամսագրեր և այլն), և քննարկե՛ք, թե այդ բարեփոխումների մշակման շրջանակներում տվյալ մասնակիցներն ինչպես են համագործակցում և թե ինչպես կարելի է ամրապնդել այդ համագործակցությունը:

V. Տվյալ երկրում ՌԲԳ-ի իրականացման կարողությունների զարգացմանը նպատակաուղղված անցյալ, ընթացիկ և նախատեսվող նախաձեռնությունները

V.1. Նկարագրե՛ք նախատեսված հիմնական գործողությունները, որոնք կառավարությունը մտադիր է իրականացնել, որպեսզի վավերացնի և կիրառի Արձանագրության պահանջները (փորձնական ուսումնասիրություններ, նոր օրենք, կանոնակարգեր և այլն):

V.2. Նկարագրե՛ք դրամատու կազմակերպությունների կողմից ֆինանսավորված աջակցության բոլոր նախկին և ընթացիկ ծրագրերը, որոնք առնչվում են ՌԲԳ ոլորտին:

V.3. Տվյալ երկրում ՌԲԳ-ի / ՇՄԱԳ-ի վերաբերյալ ի՞նչ դասընթացներ են կազմակերպվում կամ նախատեսվում (համալսարաններում, հանրային վարչարարության վերապատրաստման ծրագրերում և այլն):

V.4. Թվարկե՛ք ՀԿ-ների, խորհրդատվական և ուսումնագիտական հաստատությունների կողմից առաջարկվող համապատասխան այլ դասընթացներ:

VI. ՄԱԿ ԶԾ և ԵՏՀ նախագծի ամենաարդյունավետ շեշտադրումների առաջարկներ

Մահմանեք և ըստ առաջնահերթության թվարկեք, թե միջամտությունների կամ գործողությունների ո՞ր տեսակները առավել արդյունավետ կերպով կզարգացնեն ընտրված երկրներում Արձանագրության կիրառման, այդ թվում՝ ՌԲԳ փորձնական ծրագրերի մշակման, կարողությունները: Նախագծի շեշտադրումների առաջարկեր կազմելիս քննարկեք կարողությունների զարգացման հետևյալ տեսակները.

- Փորձնական ծրագրեր. ծրագրի ՌԲԳ-ի օժանդակող նախաձեռնություն (եթե սա առաջնահերթություն է, ապա նշե՛ք, թե ծրագրերի կազմման գործընթացի ո՞ր տեսակի համար է նման աջակցություն տրամադրվելու):
- Իրավական բարեփոխումների իրականացման աջակցություն (Արձանագրությունը կիրառելու համար նոր օրենքների կամ կանոնակարգերի մշակում):
- Ազգային ուղենիշների մշակում (որոնք ներկայացնում են ՌԲԳ մոտեցումը, կիրառման մեթոդները և այլն):
- Ուսումնական նյութերի մշակում և ուսուցանողների վերապատրաստման դասընթացների կազմակերպում:
- Իրազեկման քարոզարշավներ (բրոշյուրներ, թռուցիկներ, կայքի ստեղծում և այլն), որոնք քաղաքականություն մշակող, որոշում կայացնող կարևոր մարմիններին ու անձանց, նաև վարչական աշխատողներին բացատրում են ՌԲԳ-ի էությունը:

•
Հավելված F1.2

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ, ԿՈՎԿԱՍԻ
ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅԻ
ԱՌԱՆՁԻՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՊԱՐԶ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՕՐԻՆԱԿ

Ծանոթություն

Սույն հավելվածը ներկայացնում է Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի ընտրված չորս երկրներում ՌԲԳ Արձանագրության կիրառման ազգային ռազմավարությունների նախագծերի մշակման շրջանակը: Այս ազգային ռազմավարությունները օգնում են բացահայտել հետագայում Արձանագրության պահանջներն իրականացնելու համար համապատասխան երկրների կարողությունների զարգացման պահանջները:

Ռազմավարության մշակման գործընթացը

Յուրաքանչյուր ռազմավարություն մշակվել է հետևյալ անձանց և միավորների հետ խորհրդակցությունների միջոցով.

- Արձանագրության կիրարկման ազգային կիզակետային միավորներ, որոնց օգնությամբ այն կվերածվի ազգային ռազմավարության,
- Տվյալ երկրում հիմնական բնապահպանական գնահատումների մասնագետներ և ՀԿ-ներ,
- Գլխավոր միջազգային կազմակերպությունները, որոնք աջակցում են տվյալ երկրում ՌԲԳ համակարգի զարգացմանը:

Ռազմավարության առաջարկվող կառուցվածքը

I. Ընդհանուր տեղեկություններ

Ընդհանուր տեղեկությունների հատվածում ներկայացվել է հստակ և հակիրճ տեղեկատվություն հետևյալի մասին.

- Արձանագրությունն ազգային պետական իրավական համակարգ ներմուծելու նախատեսված ժամանակացույցը,
- Բացատրություն, թե տվյալ երկրի կառավարությունը ինչ ճանապարհով է իրականացնելու Արձանագրության ներմուծումն ազգային համակարգ, օրինակ, ՇՄԱԳ-ի վերաբերյալ առկա դրույթներին ընդլայնելու և խստացնելու միջոցով, որպեսզի դրանց շրջանակներում Արձանագրության դրույթներին համապատասխան ընդգրկվեն պլաններն ու ծրագրերը, պլանավորման գործընթացում ՌԲԳ-ի նոր պահանջներն ընդգրկելու կամ գնահատման բոլորովին նոր գործիք ներմուծելու միջոցով: Բացատրությունում ամփոփ ներկայացվել է, թե ինչու է ընտրվել այդ ուղին և ոչ թե ուրիշները:
- Ո՞ր իրավական փաստաթղթերում պետք է ընդգրկվեն Արձանագրության դրույթների պահանջները (օրինակ, նոր օրենքով կամ հրամանագրով, գործող օրենքների կամ հրամանագրերի փոփոխմամբ, ուղղորդող փաստաթղթերի միջոցով և այլն):

II. Երկրի կարիքների գնահատում

Ազգային կարիքների նախկինում իրականացված գնահատականները վերանայվել և թարմացվեն են՝ հիմնվելով ՌԲԳ Արձանագրության իրականացման համար պատասխանատու իրավասու մարմինների և անձանց հետ մանրամասն խորհրդակցությունների վրա: Տվյալ երկրի կարիքների գնահատման մեջ ամփոփված տեղեկատվությունն ամբողջացվել և պաշտոնապես հաստատվել է Արձանագրության համար ստեղծված ազգային կիզակետային միավորների կողմից:

III. Միջնաժամկետ ռազմավարություն

Տվյալ երկրում աշխատող թիմը մշակել է այդ երկրում ՌԲԳ-ի իրականացման կարողությունների զարգացման ընդհանուր երկարաժամկետ ռազմավարություն՝ ելնելով բնապահպանական գնահատման բարեփոխումների շահագրգիռ կողմերի հետ մանրամասն խորհրդակցություններից (Արձանագրության դրույթների իրականացման համար պատասխանատու իրավասու մարմիններ և անձինք, բնապահպանական գնահատման առաջատար մասնագետներ և ՀԿ-ներ): Ռազմավարության շրջանակներում

ընդգրկվել են բոլոր տեսակի կարողությունները՝ համակարգի, ինստիտուցիոնալ, անհատի կարողություններ, **գլուխ F1**-ի նախնական տարբերակում ամփոփված շրջանակի համաձայն: Ռազմավարությունը սահմանում է առաջիկա հինգ տարվա ընթացքում յուրաքանչյուր տեսակի կարողությունների զարգացման համար նախատեսվող իրատեսական թիրախներ և համապատասխան գործիքներ, որոնք կարող են կիրառվել միայն ազգային միջոցներով կամ սահմանափակ միջազգային օգնությամբ:

IV. Կարճաժամկետ առաջնահերթություններ

Ընդհանուր ռազմավարության մշակումից հետո առանձնացվել են մինչև 2008 թ. իրականացվելիք երեք կարևորագույն կարճաժամկետ գործողությունները: Այս առաջնահերթ գործողությունները մշակվել են նախագծերի ակնարկների տեսքով, որտեղ հստակ սահմանվել են.

- Թիրախային խմբերը, շահագրգիռ կողմերը և շահառուները,
- Առաջարկվող գործողությունների հերթականությունը,
- Տվյալ երկրում գործող դրամատու կազմակերպությունների և կարողությունների զարգացման իրականացվող աշխատանքների միջև կապերի ստեղծումը
- Բյուջեն:

V. Իրականացման միջոցառումները

Իրականացման միջոցառումները նկարագրող հատվածում ամփոփվել է հետևյալ տեղեկատվությունը.

- Ռազմավարության իրականացման վերահսկողության համար պատասխանատու հաստատություն,
- Ռազմավարության պաշտոնական կարգավիճակը և դրա պաշտոնական հաստատումը (օրինակ, բնապահպանության նախարարության կամ այլ համապատասխան մարմինի կողմից, ինչպիսին է կայուն զարգացման ազգային խորհուրդը),
- Ազգային մակարդակում դրա իրականացման համար անհրաժեշտ միջոցները հայթայթելու նպատակով հետագա աշխատանքների պայմանավորվածություններ (օրինակ, բնապահպանության նախարարության բյուջեն, դրամահավաք՝ հիմնական դոնորների հետ):